82
9-42

1014

Ժառանգը
Թ - 1881

отд. 14
№ 22А

ВОЗВРАТИТЕ КНИГУ НЕ ПОЗЖЕ
обозначенного здесь срока

~~932~~	~~23/XII-38~~			
~~872~~	~~17/I-39~~	1223	29/III-39	

9011



82
Ձ-42 Աչ

ՉԷՍՏԷՐՏՕՆԻ

800
133-ԱՂ 2

ԺԱՌԱՆԳԸ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՎԷՊ.

V·II

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ԳԻՒՏ ՔԱՀԱՆԱՅԻ ԱՂԱՆԵԱՆՑ

1001
908

Եթէ ցանկանում ես երջանկութիւն,
Աշխատիր, որ ինքդ ձեռք բերես:

ՏՓԽԻՍ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԷԼԵԱՆ ՓՈՂՈՑ, 5
1881

2003

Дозволено Цензурою. Тифлисъ, 31 Августа 1881 г.

Типографія И. Мартиросіанца, Орбеліан. ул., 5

ՆՈՐԻՆ ԲԱՐՁՐ ՍՐԲԱԶՆՈՒԹԵԱՆ

ՏԷՐ ՄԱԿԱՐ

ՎԻՃԱԿԱՒՈՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՆՈՐ—ՆԱԽԻՋԵՒԱՆԻ

ԵՒ

ԲԵՍԱՐԱԲԻՈՅ ՀԱՅՈՑ

ՈՐԴԻԱԿԱՆ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՄԲ

ՆՈՒԻՐՈՒՄԷ

ԹԱՐԳՄԱՆՈՂԸ.

ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ

Բազմերախտ բարերա՛ր.

Տոյն եմ գրաւոր աշխատութիւնս նուիրելով Ձերդ Սրբազնութեան պատուական անուան, սրբազան պարտականութիւն եմ համարում ինձ հրապարակաւ խոստովանել, թէ Ձեր հայրական խնամոց եմ պարտական իմ այս և նախընթաց աշխատութեանցս համար և թէ Ձեր քաջալերութեամբն է գոյացել և աճել սոյն վաստակը, որ այժմ յանուն Ձերդ Սրբազնութեան ընծայւում է Ձեր սիրելի ազգին: Սրբազնութեանդ հայրական յորդորները ստիպեցին ինձ առաջ բերել իմ չնչին աշխատութիւններս, որոնցից մէկը, „Զէյտէրտօնի ժառանգը“, միանգամայն մօտ Ձերդ Սրբազնութեան նշանաբանին, որ է սեպհական աշխատութեամբ ձեռք բերել ամենայն բարիք և երջանկութիւն, նուիրում է Ձեզ խորին երախտագիտութեամբ Ձեր խոնարհ որդին՝

ԳԻՒՏ ՔԱՀԱՆԱՅՆ ԱՂԱՆԵԱՆՑ:

ՁԷՍՏԷՐՏՕՆԻ ԺԱՌԱՆԳԸ

ԳԼՈՒԽ Ա.

ՆՕՏԱՐԻ ԶԱՐՄԱՆԱԼՈՒ ՊԱՏՃԱՌԸ.

Այն առաւօտը, որտեղից սկսւում է մեր պատմութիւնը, յայտնի նոտար պ. Պօունսէրբիի տանը խորին լռութիւն էր տիրում: Այս լռութեան պատճառը գուցէ դուք համարէք պ. Պօունսէրբիի գցած երկիւղը իւր ստորադրեալների վերայ, կամ այս վերջինների ջերմեռանդ պարապմունքը: Բայց չէ, կը սխալուէք: Եթէ գործակատարները զբաղուած լինէին՝ գրիչների խազխազոց կը լսուէր, մինչդեռ սենեկում ոչինչ ձայն չը կար: Ամենքը, յետին գրագրից սկսած մինչև գլխաւոր գործակալը, որ մի չափահաս, ճաղատ, ծանրաբարոյ մարդ էր, նստած էին անշարժ, գրիչները ականջների ետևն ամրացրած և գլխները դարձրած սենեկի աջ կողմը: Նոցանից ոչ ոք ձայն չէր հանում, բայց նոցա դէմքերի արտայայտութիւնից պարզ նկատւում էր, որ այնպիսի մի անցք էր պատահել այնտեղ, որպիսին չէր յիշում նաև ամենահին գործակատարը:

Բայց սակայն ի՞նչ անսովոր հանգամանք էր դադարեցրել պարապմունքը պ. Պօունսէրբիի գրասենեկում: Այո, ըստ երևութին մի շատ հասարակ բան.

սենեկի աջ կողմը լսում էր մարդու ոտնաձայն. լուսամուտից մինչև դուռը լսում էր տասներկու քայլ, յետոյ կանգ առնում և ապա դարձեալ տասներկու քայլ վերադարձին—և այլն: Այդ պ. Պօունսէբըլին էր, որ ման էր գալիս իւր առանձնասենեկում:

Բանն այն է, որ դեռ տասներկու ժամին քառորդ պակաս էր, իսկ այդ միջոցին պ. Պօունսէբըլի նման ճիշտ մարդու շրջելը իւր սենեկում միանգամայն անսովոր բան էր: Ընդհակառակն բոլոր ծառայողները գիտէին, որ նոտարը, նախաճաշելուց յետոյ, իւր աղջիկ Լաուրայի հետ, որ մի քնքոյշ ութնամեայ մանուկ էր հրաշալի մազերով և որի ուրախ խօսակցութիւնը մոռացնել էր տալիս նորան իւր գործակատարներին, փոքր ժամանակ զբօսնում էր Գրին-Պարկում, որտեղից վերադառնում էր ճիշտ 12 ժամին, ոչ յետոյ և ոչ էլ առաջ: Մինչև այդ ժամանակ գոնէ ոչ ոք չէր կարող ասել, թէ նա շեղուել էր այդ կանոնից, ահա թէ ինչու այդ կարգը խախտելը այդպիսի շփոթութեան մէջ ձգեց գործակատարներին, որոնք կարծում էին, թէ նա եթէ ոչ թագուհու, գոնէ մի որ և է մանդարինի *) է սպասում: Դիցուք թէ պատահում էլ էր նորան սպասել իրանից պակաս ճշտութիւն պահպանող խնդրատուներին, բայց այն դէպքերին նա ոչինչ անհամբերութեան նշան չէր ցոյց տալիս, այլ հանգիստ նստում էր իւր կաշուէ բազկաթոռի վերայ գրասեղանի առաջ և թղթեր էր կարդում: Երբէք նորա քայլերը արձագանք չէին գտնում նորա վաղեմի մենարանում և բազմաթիւ կաղնէ տախտակների վերայ կանոնաւոր կերպիւ շարած հաստափոր գրքերը անշուշտ խիստ զարմա-

*) Այսպէս են անուանում եւրոպացիք չինական աստիճանաւորներին:
Ծ. Հ. Թ.

նում էին այս անգամ իրանց տիրոջ արարմունքի վերայ:

Ի՞նչն էր արդեօք ստիպել այս անգամ պ. Պօունսէբըլին շեղուել իւր սովորութիւնից:

Եթէ դուք կամենում էք գտնել այնպիսի մարդիք, որոնք ոչինչի վերայ չեն զարմանում, որոնեցէք այդպիսիներին յիսուն տարեկանի մօտ նոտարների մէջ: Նոքա իրանց կեանքում տեսած են լինում այնքան չար ու բարի, հաւատարմատար են եղած լինում բազմատեսակ գործերի մէջ և լուծել են կամ աշխատել են լուծել այնքան կնճռոտած հանգոյցներ խճճուած թէ լաւ և թէ վատ մարդկանց ձեռքով, որ հազիւ թէ մի բան կարողանայ նոցա զարմանալի թուալ: Բայց որովհետև պ. Պօունսէբըլին արդէն քառասուն և ինն տարեկան էր և արդէն քսան տարի է պարապում էր իրաւաբանական գործերով, հասկանալի է ուրեմն, որ դժուար թէ այնպիսի մի գործ գտնուէր, որպիսին պատահած չը լինէր նորան:

Սակայն այժմ նա բաւական յուզուած էր և այդ կարելի էր եզրակացնել նորա արագ քայլերից, ճակատից հոսող յորդ քրտինքից և անդադար անհանգիստ կերպով ժամացուցին նայելուց:

Վերջապէս տասներկուսին հինգ րոպէ պակաս նա կանգնեցաւ, ակնոցներն ուղղեց և նստաւ գրասեղանի առաջ: Առանձնասենեկում խորին լռութիւն էր տիրում, որ միայն խանգարւում էր լուսամուտներում ճանճերի բզզոցով և սև մարմարինէ ժամացուցի ճօճելովը, որ զարդարուած էր ծերունի Սատուրնոսի պատկերով, աչքերը շարժուն և աւազաչափ ժամացոյց ձեռքին: Նոտարը արկղից մի նամակ հանեց, որ կրում էր արտասահմանեան դրոշմ, բաց արաւ ու սկսաւ ուշադրութեամբ կարդալ: Ահա ինչ էր գրած նորանում սովորական ու խոշոր ձեռքով:

„Տէր, ես Ձեզ դիմում եմ, որովհետեւ Ձեզ ինձ ներկայացրին, ուպէս մի մարդ, որ կարող է լաւ գլուխ բերել այն գործը, որը ես կամենում եմ Ձեզ յանձնել: Քառասուն տարուց աւելի է, ինչ որ ես թողել եմ Անգլիան և բնակուել եմ Հնդկաստան, ուր անշուշտ կը մնայի մինչև մահս, եթէ մահը հետզհետէ չը խլէր ինձանից նախ կնոջս, իսկ այնուհետեւ բոլոր զաւակներս ու թոռներս: Այս հանգամանքը ցանկութիւն ծնաւ իմ մէջ դարձեալ տեսնելու իմ հայրենի երկիրս:

„Օտարութեան մէջ գտնուելով՝ ես այնուամենայնիւ յարաբերութիւն ունէի անգլիացի ազգականներիս հետ, որոնք ճշտութեամբ հաղորդում էին ինձ իրանց ընտանիքներում պատահած բոլոր երեւելի դէպքերը. ինչպէս օրինակ, ծնունդը, պսակը, մահը և այլն: Այսպիսով ես տեղեկացայ իմ հանգուցեալ կրտսեր եղբայր Ժօֆֆրէյ Չեստէրտօնի աղջկայ՝ Կլարա Ամելիայի ծնունդը, նորա պսակուելը Դիլլի Բժիշկ Էդուարդ Մօլլօյի հետ, նոցա զաւակ Ալֆրէդի ծնունդը և վերջապէս պ. Մօլլօյի մահը, որ պատահեցաւ սոյն թուի Ապրիլի 2-ին: Նոյն միջոցով ես գիտեմ իմ կրտսեր քրոջ Մարիամ Չեստէրտօնի աղջիկ Սէսիլիայի ծնունդը. նորա ամուսնանալը կապիտան Գէորգ Միտլտօնի հետ, նոցա զաւակ Ռօբէրտի ծնունդը և վերջապէս կապիտան Միտլտօնի մահը, որ էր անցեալ տարուայ Դեկտեմբերի 28-ին:

„Այսպիսով տեսնում էք որ մնացել են երկու կին բոլորովին նոյնանման դրութեան մէջ. երկու այրիներն էլ համարեա անապահով և նոցանից երկուսն էլ մի մի զաւակ ունին, իւրաքանչիւրը մօտ 12 տարեկան:

„Այժմ ես կամենում եմ, որ իմ երկար ժամանակուայ ու ազնիւ աշխատութեամբ ձեռք բերած հարստութեանս ժառանգը լինի արենակից ազգականս.

բայց, միեւնոյն ժամանակ, ես չեմ ցանկանում, որ ինձ շրջապատէր ամբողջ խումբ ժառանգների, ինչպէս առհասարակ պատահում է այն մարդոց, որոնք մի բան թողնելու են իրանցից յետոյ: Ես միայն մի ժառանգ պէտք է ունենամ և իմ դուռս անպայման կերպով փակ պէտք է լինի միւս բոլոր ազգականներիս համար: Ես նոցա կարօտութիւն չեմ զգում և նոքա մինչև այժմ առանց ինձ էլ կառավարւում էին: Այսպէս ուրեմն, տեսէք, թէ ինչ եմ կամենում յանձնել Ձեզ:

„Նամակիս օրինակը Դուք կուղարկէք ինչպէս քրոջաղջկաս, նոյնպէս և եղբօրաղջկաս, որոց հասցէները գրուած են այստեղ և որոշեցէք նոցա մի օր, որքան կարելի է վաղ, որ նոքա գան հանդիպեն Ձեր գրասենեկում: Իւրաքանչիւրին ծախսի համար 50 ֆունտ ստեռլինգ ուղարկեցէք: Ճանապարհին նոքա մտածելու ժամանակ կունենան, թէ արդեօք կարող են թէ ոչ ընդունել իմ պայմանները, որոնք հետեւեալներն են.

„Նոցանից մէկի զաւակը ինձ եմ որդեգրում: Նա իմ անունը կը կրէ, կը դաստիարակուի իմ տանը, իմ հաշուով և իմ առաջնորդութեամբ և կը ժառանգէ իմ բոլոր կարողութիւնս: Նորա մայրն էլ իմ տանը կը բնակուի, ուր և տանտիկնութիւն կանէ, ինչպէս օրինակ կինս կամ աղջիկս: Սորա փոխարէն ես իրաւունք կունենամ պահանջել նոցանից լիուլի հոգացողութիւն իմ մասին, նոյնպէս և նոցա յարգանքն ու հնազանդութիւնը, այնպէս որ նոցանում գտնեմ ես այն ընտանիքը, որ դժբաղդութիւն ունեցայ կորցնել: Եթէ նոքա՝ երկու ազգականներս էլ կընդունեն այս պայմանները, որ շատ և շատ հաւանական է, այն ժամանակ ստիպեցէք նոցա վիճակ գցել, որովհետեւ կրկնում եմ, որ ես ցանկանում եմ միայն մի ժառանգ ունենալ: Այն տղան, որին չի յաջողի վիճակը, միան-

դամայն օտար պիտի թուայ ինձ. այս արդէն վճռուած բան է: Ազգակիցներիցս նա, որ վիճակահանութեամբ բաղտ կունենայ իմ տանտիկինս լինելու, Ձեզանից կը ստանայ տոման կցած թուղթը, ուր բացատրած են իմ ապագայ բնակատեղում՝ Լօնդօնում տուն գնելու պայմանները: Նա պիտի հոգայ տան կահ կարասիքի ու ծառաների ընտրութեան մասին: Վերջապէս, նա ինձ պիտի դիմաւորէ որդեգրիս հետ ՚ի միասին Սօութ-համպտօնում, ուր ես կը հասնեմ Սեպտեմբերի սկզբին դուրս եկող շոգենաւով: Անսահման վարկ կը գտնի նա Կօուտտս գրասենեկում և ոչինչ ծախս չը պէտք է խը-նայել թէ տանս յարմարաւոր կարգաւորութեան և թէ ինձ դիմաւորելու համար: Եթէ, բանէ, մանուկը մե-ռաւ նախ քան իմ գալը, նորա մայրը այնչափ թոշակ կը ստանայ, որ բաւականանայ ապրել ինչպէս իրան յարմար կը թուայ: Իսկ միւս ազգականս իւր զաւակի հետ միասին կը ժառանգէ առաջինի իրաւունքները:

„Խնդրեմ չը մերժէք շնորհակալութիւնս, որ կա-ռաջարկեմ Ձեզ երբ կը գամ և ներէք ինձ Ձեզ տուած անհանգստութեան համար:

Մնամ խորին յարգանօք
Պ. ՉԷՍՏԷՐՏՕՆ.
Կալկաթա":

ԳԼՈՒԽ Բ.

ՉԷՍՏԷՐՏՕՆԻ ԺԱՌԱՆԳԸ:

—Սա արդարև անգլին գործ է, ասաւ ինքն իրան նօտարը և նորից նամակը դրաւ արկղի մէջ.—Կալկա-թայում պատրաստած Չէստէրտօնի մետաքսեայ և բամբակեայ գործուածները բոլոր աշխարհին ծանօթ

են: Մատաղահաս կինը, ով էլ որ լինի, բժշկի թէ զի-նուորականի կին, անշուշտ պէտք է յաճախ դիմէ ինձ խորհուրդ հարցնելու, որովհետև սովոր չէ նա հարիւր հազար ֆունտ ստերլինգներով գործ ունենալ: Եւ որովհետև բանկիր Կօուտտսից պէտք է ծախսի փող ստանայ կամեցածի չափ, ուրեմն անշուշտ հարիւր հազարների հետ գործ կունենայ. Բայց ինչ այլանդակ մարդ է թւում նա ինձ: Ես չեմ կարծում, թէ նա հա-ճելի ընկեր լինի մարդուն. Նորա նամակի ձևից երե-ւում է, որ համբերող էլ չը պէտք է լինի հակառա-կորդին. կամ, գուցէ, նա մոռանում է, որ սպայների հետ չէ խօսում: Այսպէս թէ այնպէս, այսուամենայ-նիւ այն կինը, որին կընկնի վիճակը, մեծ բաղտի մէջ կընկնի: Սակայն ես յոյս ունեմ, որ կը յաջողի ինձ հա-մոզել պարոնին, որպէս զի միւս տղայի համար էլ մի բան յատկացնէ, ապա թէ ոչ չափազանց մեծ տարբե-րութիւն կը լինի նոցա մէջ: Արդէն կէսօր է. նոքա եր-կուսն այստեղ պէտք է լինեն. ես ինքս նոցա գրեցի, որ այսօր 12 ժամին անշուշտ այստեղ լինեն. ահա զանգն էլ քաշում են:

—Տիկին Լիտտլտօնն է, ասաւ ծառան:

Նօտարը վեր կացաւ և այնպէս յարգութեամբ ողջունեց, ինչպէս, գուցէ, կարելի էր ողջունել Չէս-տէրտօնի ապագայ ժառանգուհուն:

—Տիկին Մօլլօյն դեռ ևս չի եկել, տիկին, ասաց նա,—չէ՞ք կամենայ մինչև մի փոքր նստել. գործին ձեռք տալուց առաջ՝ պէտք է սպասել նորան:

Այրին սաստիկ ալեկոծութեան պատճառաւ ան-կարող լինելով խօսակցութիւնն սկսել՝ նստաւ մի բազ-կաթոռի վերայ:

Նօտարը նստաւ նորա հանդէպ և լուռ ու մունջ նայում էր նորան:

Տիկին Ալիտալտօնը գեղեցիկ, բայց խարտեաշ մազերով կին էր և ըստ երևոյթին եօթ ութ տարով փոքր էր երևում իւր սեպհական տարիքից, որ, ինչպէս որոշ նշանակուած էր պ. Չեստէրտոնի նամակի մէջ, երեսուն և հինգ տարեկան էր: Նորա դէմքի գծագրութիւնը արտայայտում էր թոյլ, համարեա մանկական բնաւորութիւն և առհասարակ մեղմ կերպարանք ունէր—իսկ այժմ նորա դէմքը երկիւղի ու յուսոյ մի անորոշ խառնուրդի արտայայտութիւն էր կրում: Երբեմն նորա կապտագոյն աչքերը վառւում էին ուրախութեան ճառագայթներով, երբեմն նորա ճակատի վերայից կասկածի ստուեր էր անցնում և նա ծանր կերպով յեցաւ բազկաթոռի թիկունքին:

—Գուցէ միմիայն դուք էք կամենում վիճակ հանել, ասաց վերջապէս նոտարը, մի քանի րոպէական լռութիւնից յետոյ:

Բայց իսկոյն զանգի ձայն լսուեցաւ և երկուսի աչքերն էլ հետաքրքրութեամբ ուղղուեցան ժամացոյցի վերայ և ապա դրան կողմ: Ժամը 12-ից հինգ րոպէ անց էր:

—Տիկին Մօլլօյն է, ասաց ծառան յայտնելով Չեստէրտոնի միւս ազգականուհու գալուստը:

Նա մտաւ սենեակը բոլորովին խաղաղ ու անվրդով, մինչդեռ, սորա հակառակ, պ. Պօունսէրբին նայում էր անհանգիստ կերպով: Աստուած գիտէ, թէ ինչեր կային նորա սրտում, սակայն նորա դէմքը ամենևին չէր արտայայտում ներքին դրութիւնը: Եւ այդ դէմքը շատ ազդու էր. երևում էր, որ նորա տէրը լաւ գիտէր իրան պահել: Նա գունատ էր և կարծես տըխուր. բայց չը նայելով սորան, նորա մեծ ու գորշ աչքերը ուրախութիւնից փայլեցան, երբ տեսաւ հօրաքեռ աղջկան իրան դիմաւորելիս:

—Իմ անգին Սևիլլա, գոչեց նա, երկու ձեռքը մեկնելով դէպի նա:

Տեսնելով իւր հակառակորդին՝ տիկին Ալիտալտօնի աչքերում կարծես մի վայրկեան թշնամութեան ստուեր անցաւ, բայց շտապով չքացրեց իւր այդ զգացմունքը և կարելւոյն չափ քաղցրութեամբ գրկելով նորան՝ գոչեց.

—Մենք միշտ բարեկամ կը լինենք, Կլա՛րա,—այդպէս չէ՞, ինչ էլ որ պատահի:

—Իհարկէ, քաղցրութեամբ պատասխանեց Կլարան—ինչ կարող է պատահել մեր մէջ: Տղադ Լօնդօնումն է: Նա և Ալֆրէդը հազիւ թէ միմեանց ճանաչեն. դեռ նոր էին խօսել սկսում, երբ միմեանցից բաժանուեցան: Խեղճ Սեւիլլա. ով կը կարծէր, թէ այսպէս սևերով պիտի տեսնէինք միմեանց:

Այս խօսքերի վերայ նորա ժպիտը անցաւ, նա սեղմեց ազգականուհու ձեռքը և դառնալով նոտարին՝ ասաւ.

—Ներողութիւն եմ խնդրում, տէ՛ր, արդէն տաս տարի է ինչ որ մենք չենք տեսնուել: Այժմ մենք բոլորովին պատրաստ ենք ձեզ լսելու:

Նոտարը իւր աթոռը մօտեցրեց սեղանին և բաց արաւ Չեստէրտոնի նամակը:

—Տիկիննե՛ր, ահա իսկական նամակը, որի պատճէնը պատիւ ունեցայ ուղարկել Ձեզ:

Երկուսի հաճութեան նշանից յետ՝ նա շարունակեց.

—Որովհետև պ. Չեստէրտոնը գրում է, թէ ինքը կը գայ այստեղ Սեպտեմբերի ամսին և այժմ արդէն Յուլիսի քսանն է, ուրեմն այնքան ժամանակ է մնում, որ հազիւ թէ կարելի է նորա ցանկութիւնները բոլորն իրագործել: Այս պատճառով ահա ես, կարծեմ կը ներէք,

որ միայն ութ օր մտածելու ժամանակ տուի։ Այժմ մնում է միայն, որ վիճակ ձգենք, ինչպէս այս ցանկանում է ձեր ազգականը, եթէ միայն դուք ևս, տիկիններ, համաձայն էք սորան։ Դուք, ի հարկէ, արդէն գիտէք այն պայմանները, որոնք բացատրուած են նամակի մէջ և ես կը ցանկայի իմանալ ձեր որոշմունքը։

—Ես իմ որդուս հետ համաձայն եմ, վճռաբար ասաւ տիկին Լիտըլտոնը։

Նոտարը գլուխ տուաւ։

—Իսկ դո՞ւք, տիկին, դարձաւ նա տիկին Մօլլօյին։ Նա շատ տժգոյն էր։

—Տէր, ասաւ նա դողդոջուն ձայնով, ես խնդրում եմ, որ յայտնէք հօրեղբօրս իմ խորին շնորհակալութիւնս իւր բարի դիտաւորութիւնների համար, բայց... բայց ես չեմ կարող ընդունել նորա պայմանները։

Պ. Պօունսէրբիի բազմամեայ փորձառութիւնը այս անգամ ծանր հարուած կրեց։ Նորա բերանից ակամայ աննշան բացականչութիւններ դուրս թռան և նամակը ձեռքից վայր ընկաւ գետին։

Սեսիլեան անակնկալ ուրախութիւնից ու հիացումից վեր թռաւ նստած տեղից, բայց այս զգացմունքը մի վայրկեան տևեց միայն. Նա իսկոյն մօտ վազեց դէպի իւր ազգականուհին։

—Բայց, Կլարա, դուք չէք մտածել, դուք լաւ չէք կշռել այս ամէնը, գոչեց նա։ Ես ինձ վնաս եմ խօսում, բայց, ես կարծում եմ, որ պարտական եմ այսպէս անել։ Կարելի՞ է այսպիսի բաղտաւորութիւնից հրաժարուել։ Ի՞նչպէս էք դատապարտում դուք ձեր որդուն. չէ՞ որ ձեր բոլոր եկամուտը վաթսուն ֆունտից աւելի չէ տարին։ Ի հարկէ, ես մեծ պատասխանատուութիւն եմ յանձն առնում, ընդունելով այսպիսի հարուստ տան տանտիկնութիւն և այն էլ այսպիսի

անկարգ ծերունու իշխանութեան ներքոյ, բայց ամէն ծնող պէտք է իրան զոհէ իւր զաւակի բաղտաւորութեան։ Ձեր վճիռը կարող է փոխուել, Կլարա, այսպէս չէ՞։ Վիճակ ձգենք։

Նոտարը շատ յուզուած էր։

—Տիկին, ասաւ նա, եթէ ձեր ազգականուհին այսպէս վեհանձնութեամբ աշխատում է 'ի վնաս իւր, թո՛յլ տուէք ուրեմն, որ ես էլ միանամ նորա հետ։ Մտածեցէք միայն, թէ ինչ բանից էք զրկում դուք ձեր որդուն։ Միթէ չէք վախենում, որ վերջը ստիպուէք զղջալ ձեր այս արածը։

1001/908

—Ես, անտարակոյս, այդպէս անել կը ստիպուէի, պատասխանեց տիկին Մօլլօյն. բայց ես յոյս ունիմ, որ շնորհիւ որդուս լաւ բնաւորութեան և այն դաստիարակութեան, որ ես, Աստուծոյ օգնութեամբ, կը տամ նորան, նա չի ցաւի իմ վճռի մասին։ Իսկ ինչ քեզ է վերաբերում, Սեսիլիա, աւելացրեց նա, վերցնելով ձեռքը իւր երկու ձեռքի մէջ ծածկելով, հաւատացնում եմ քեզ, որ ես երբէք չեմ մոռանայ քո մեծահոգութիւնը։ Դու, ինչպէս երևում է, չափազանց ցանկանում ես այս հարստութիւնը և միևնոյն ժամանակ կամենում ես ինձ միջոց տալ այն քեզանից խլելու։ Բայց իմ վճիռը անփոփոխ է։ Լսեցէք, ես չեմ ուզում, որ դու, կամ դուք, տէր, յանցաւոր համարէք ինձ. իմ բացասութիւնը հիմնուած է հաստատուն պատճառների վերայ։ Նախ և առաջ, խոստովանում եմ, որ ես փորձուել եմ. ես ձգտում էի դուրս գալ այս անտանելի աղքատութիւնից և իրագործել հանգուցեալ ամուսնոյս յոյսերը, որ մեծ ապագայ էր գուշակում իւր զաւակին։ Բայց յետոյ ես փոխեցի դիտաւորութիւնս, մի քանի անգամ նորից կարդացի ստացած նամակս և նորա մէջ այնքան դժուարութիւններ գը-

տալ, որ նորա հաստատապէս վախեցրին ինձ: Հօրեղ-բայրս, ինչպէս երեւում է նորա նամակից, այնքան համարձակութիւն չէ թոյլատրում ինձ, որ կարողանամ զաւակս հոգւով մարմնով նորան յանձնել: Մտքովս անցան այն բոլոր փորձանքները, որ պատճառում է հարստութիւնը. օրինակ, փափկութիւն, նենգութիւն և ուրիշ շատ բան, որոնք շատ փչացնում են արդէն ամբարտաւանած մարդուն էլ և մանաւանդ աւելի մանկան և որոնցից ես կարող չեմ լինել ազատել նորան իմ և նորա հայրագրի կարծիքների տարբերութիւնից, որ շատ հաւանական է: Եւ այն էլ Աստուած գիտէ, թէ ինչպիսի մարդ է վերջինս: Ի՞նչ արած, եթէ նա ցուրտ բնութեան տէր ու ինքնասէր կամ այսպիսի մի բան լինի: Ո՛չ, ես ոչ ոքի չեմ կարող զաւակս յանձնել. նորա հայրը միմիայն ինձ յանձնեց նորան: Ես լաւ եմ յիշում նորա այս խօսքերը, որ տուաւ մահուան անկողնում. „Կլա՛րա, տուաւ նա, ես միմիայն քեզ եմ հաւատում զաւակիս կրթութիւնը. միակ, հողագործ պատրաստիր նորան, եթէ միջոցներդ չը թոյլ տան կրթութիւն տալու. ինչ ուզում ես դուրս բեր նորան, միայն թէ ազնիւ ու աշխոյժ մարդ լինի: Ոչ ոքի չը հաւատաս նորա վերայ ունեցած իրաւունքդ“: Եւ ահա հնազանդւում եմ նորան:

Տիկին Կլատլտօնը նորան լսելիս՝ հետզհետէ ծանր կերպարանք էր ստանում, իսկ նոտարը թէպէտ այն պատճառները հիմնաւոր չէր գտնում հարստութիւնից հրաժարուելու համար, բայց չը կարողացաւ ծածկել իւր խորին յարգանքը դէպի այս մատաղահաս կնոջ այրականութիւնը:

Գրասենեկում գտնուողներից ոչ ոք չը նկատեց, որ յիշեալ երկու տիկիններին մտնելուց սկսած՝ լուսամուտի լայն վարագոյրները յաճախ շարժւում էին,

այնպէս որ կարծես բաց օդանցքից հողմը փչում էր նոցա վերայ: Այս շարժումը աւելի մեծացաւ տիկին Մօլլօյի բացատրութեան ժամանակ և, վերջապէս, երբ նա խօսքը թելը վերջացրեց, լուսամուտի անցքից լացի ձայն լսուեցաւ: Յետոյ վարագոյրները բարձրացան և շփոթուած դէմքով ու արտասուալից աչքերով մի փոքրիկ աղջիկ դուրս թռաւ, վրայ ընկաւ մատաղահաս կնոջ և իւր գլուխ ձեռներով գրկելով նորա ծնկները՝ իւր լացող դէմքը ու շիկագոյն խոպոպիկները ծածկեց նորա հագուստի ծալքերում:

—Լաուրա, ի՞նչ եղաւ քեզ, գոչեց պ. Պօունսէրբին և բարկացած քաշեց լացող մանկան ձեռքից:—Ի՞նչ ես անում այստեղ, աղջիկս, առանց իմ թոյլտուութեան: Միթէ դու չը գիտես, որ երբ ես միայնակ չեմ, չը պէտք է գաս այստեղ. իսկ դու թող էլ ես կացել:

—Խնդրեմ չը բարկանաք դորա վերայ, գոչեց Սեսիլիան, չը կարողանալով սառնութեամբ նայել մանկան լացին,—դա ոչինչ գաղտնիք չիմացաւ. ինչ որ մենք այստեղ խօսեցինք՝ ամենևին գաղտնիք չէր: Սակայն ես պէտք է մեկնեմ այստեղից. ես դեռ պէտք է բոլոր անցածը որդուս հաղորդեմ:

—Ես ձեզ կարող եմ մի քանի տներ առաջարկել, տիկին, և . . .

—Զորս ժամին ես կը վերադառնամ այստեղ, եթէ կամենաք որդուս էլ հետս կը բերեմ: Մնաք բարեաւ, սիրելի Կլարա, մնաք բարեաւ պ. Պօունսէրբի: Ո՛չ, ո՛չ, մի աշխատէք ինձ ճանապարհ դնել, աւելի լաւ է ձեր խեղճ աղջկան մխիթարէք:

Տիկին Կլատլտօնը դուռը բաց արաւ և շտապով դուրս գնաց:

—Հազար ներողութիւն, տիկին, դարձաւ նոտարը

Կլարային, որին, նորա կարծիքով, ձանձրացրել էր աղջիկը՝ սորա համար դա պատիժ կը ստանայ:

—Հայրիկ, ես մեղաւոր չեմ, վախենալով ու հեկեկալով ասաւ դստրիկը: Ես նստած էի լուսամուտի մօտ փոքրիկ բազկաթոռիս վերայ, որովհետև այնտեղ այնպէս լաւ է, կարծես մի փոքրիկ սենեկումն եմ, դու սուրճ էիր խմում, Հայրիկ, իսկ տիկին Մագգին թէյ էր պատրաստում. ես հետս վերցրի և Լիւսին, փոքրիկ տիկինս, գիտես: Նա շատ ինքնահաւան էր և ես նորան ասացի, որ 'ի զուր է նա անհանգիստ անում իւր մօրը, երբ կան և այնպիսի շատ աղջիկներ, որոնք ամենևին մայրեր չունին: Այդ միջոցին ես չը գիտեմ ինչու լաց եղայ. իսկ չետոյ քնեցայ: Եւ այն ժամանակ միայն զարթնեցայ, երբ Ժանը դուռը բաց արաւ և ասաւ թէ մի կին է եկել:

—Դու իսկոյն պէտք դուրս գնայիր, նկատեց պ. Պօունաէրրին, որի բարկութիւնը արդէն զիջել էր:

—Ես չը համարձակեցայ, Հայրիկ, և քաշուեցայ մի անկիւն: Ես գիտութեամբ ականջ չը դրի, բայց շատ բան լսեցի ակամայ և երբ այս տիկինը (և ցոյց տուաւ տիկին Մօլլօյին) ասաւ, որ չէ վախում աղքատութիւնից և ինքն է ուզում իւր որդու մասին հոգս քաշել, ես խիստ ցանկացայ սորան համբուրել. ես յանկարծ չափազանց սիրեցի սորան. և ճշմարիտ, որքան ցաւալի է, որ նա այնպէս աղքատ է և որ սորա որդին պէտք է գիւղացի կամ մշակ դուրս գայ,—և ես իսկոյն լաց եղայ: Եւ Լաուրան զգալով, որ արտասուքները նորից ցայտում են աչքերից՝ դէմքը ծածկեց իւր խոպոպիկներով:

Մի քնքոյշ ձեռք շոյեց նորա գլուխը: Լաուրան աչքերը բաց արաւ և նայեց Կլարայի քնքոյշ ու քաղցր դէմքին, որը քաջալերեց իրան. նա իւր թաթիկներով պինդ գրկեց նորա վիզը և սիրով համբուրեց:

—Տիկին, ներեցէք այս ձանձրացնող մանկան, ալեկոծուած ասաւ նոտարը:

—Ես շատ սիրում եմ մանուկներին, ասաւ Կլարան, նստեցնելով մանկան իւր ծնկան վերայ: —Բայց ես չը պէտք է խլեմ ձեր թանկագին ժամանակը, տէր. ես ձեզ միայն մի քանի խօսք կասեմ. շատ հաւանական է, որ հօրեղբայրս բաւականութիւն ստանալով իմ հօրաքեռ աղջկաս հոգացողութեամբ՝ չի ցանկանայ նեղութիւն տալ իրան իմ և իւր միւս թոռան վերայ մտածելով. բայց եթէ, բան է, մի բան հարցնէ իմ մասին, ասացէք խնդրեմ, որ իմ հայրս միշտ խորին յարգանքով էր յիշում նորան, վաղուց և ես մանկութիւնից սովորել եմ սիրել նորան և ասացէք, որ ես շատ կը ցաւիմ, եթէ նա վատ կողմից նայէ իմ արածի վերայ:

Չէ թէ միայն կասեմ այդ նորան, վճռաբար վրայ բերաւ նոտարը,—բայց յոյս էլ ունիմ, տիկին, որ, թէպէտ և չը որդեգրէ նա քո որդուն, գոնէ անպատճառ կը հոգայ նորա ապագայի վերայ: Մինչև անգամ, հաւատացած կացէք, որ ես բոլոր ուժովս կաշխատեմ, որ նա ձեզ նպաստ նշանակէ:

—Ներեցէք, տէր, բայց դուք իմ միտքը չը հասկացաք: Ես վճռապէս մերժում եմ նորա օգնութիւնը և չեմ ընդունում: Իմ բոլոր ցանկացածս այն է, որ հօրեղբայրս առանց որ և է թշնամական զգացմունքի յիշէ իւր եղբօր աղջկան ու թոռանը: Իսկ ինչ վերաբերում է, մեր յարաբերութիւններին, նա արդէն պարզ յիշել էր նամակում իւր ցանկութիւնը, որ մենք օտար լինենք միմեանց համար:

Պ. Պօունաէրրին վերին աստիճանի զարմացած էր: Ոչ ոք չէր կարող ասել, թէ նա արծաթասէր բնութիւն

ունէր, բայց ըստ սովորութեան—ինչ ասում են, որ սովորութիւնը երկրորդ բնութիւն է—նա սովոր էր կեանքում առաջին նշանակութիւնը տալ փողին, երկրորդը նորան՝ ով որ իշխում է փողին և վերջապէս երրորդը նորան՝ ով նորա գործադրութիւնը գիտէ: Այդ րոպէին նա դէպի այն աղքատ ու միևնոյն ժամանակ անարծաթասէր կինը այնպիսի յարգանք էր զգում, որ իւր գլուխը մոռացել էր:

—Բայց, տիկին, շտապով գոչեց նա,—կը ներէք համարձակութեանս, եթէ ես խնդրեմ ձեզանից, որ ծանօթացնէք ինձ ձեր գաղափարների ու միջոցների հետ: Եթէ ես մի բանով կարող եմ ձեզ օգտակար լինել, ես . . . .

—Շնորհակալ եմ, շնորհակալ, ձեր բարութեան համար, տէր. իմ միակ միջոցս տարեկան վաթսուն ֆունտ թոշակս է, ուստի և ստիպուած եմ շատ աշխատել, բայց որովհետև մեր փոքրիկ քաղաքում գործ չը կարողացայ գտնել, ուստի որոշեցի այստեղ՝ Լօնդօն մնալ: Առաջ ես կացել եմ այս քաղաքում և գիտեմ, որ այստեղ աժան կարելի է ապրել. մանաւանդ որ այստեղ հեշտ է պարապմունք գտնել, որ ինձ միջոց կը տայ դաստիարակելու զաւակս:

—Քանի՞ տարեկան է ձեր որդին և արդէն ի՞նչպիսի կրթութիւն ունի ստացած, տիկին:

—Տասներկու տարեկան է և արդէն աւելի շատ բան գիտէ, քան որքան կը ներէ նորա հասակը: Նա ծանօթ է ֆրանսերէն լեզուի, թուաբանութեան, պատմութեան և աշխարհագրութեան հետ: Ես աշխատեցի նոյնպէս մի փոքր գերմաներէն սովորցնել: Միմիայն լատիներէն լեզուի մէջ փոքր ինչ յետ մնաց, բայց այդ էլ նորա՝ խեղճ տղայիս մեղը չէ: Դիլում լաւ ուսումնարան չը կայ և նորա հայրը ինքը յանձն առաւ նորա

կրթութիւնը. բայց շուտով հօր հիւանդութիւնը և յետոյ մահը վերջ դրին մեր բոլոր յոյսերին:

—Դժուար թէ ձեր յոյսերը նորա կրթութիւնը շարունակելու մասին նորոգուին, տիկին, դա շատ դժուար է: Եթէ նա լաւ ձեռք ունի, չէ՞ք կամենայ, որ ես նորան ինձ մօտ ստորին գրագրի պաշտօն տամ. մի քանի ամսից յետոյ եթէ արժանի կը դատուի ռոճիկ կը նշանակեմ նորան, իսկ այնուհետև կամաց կամաց կարող է բարձրանալ. այս գործը ուրիշ պաշտօններից պակաս չէ:

Տիկին Մօլլօյի բարկութիւնը եկաւ:

—Կրկին անգամ շնորհակալ եմ ձեզանից, տէր, բայց ես չեմ կարող ընդունել ձեր բարի առաջարկութիւնը: Ես իմ որդուս համար հրաժարուեցայ հարստութիւնից, որ կարող էր հեշտացնել նորա դաստիարակութիւնը, ահա թէ ինչու այժմ աւելի պարտական եմ համարում ինձ չը թողնել նորան առանց ուսման: Ես արդէն ինձ խօսք եմ տուել, որ հայրութիւն էլ անեմ նորան, մայրութիւն էլ:

Նոտարը մի փոքր վիրաւորուեցաւ:

—Ես հաւատացած եմ, տիկին, ասաւ նա մտերմական քաղաքավարութեամբ, որ դուք չէք կշռել ձեր ձեռնարկութեան բոլոր դժուարութիւնները, բայց յոյս ունիմ, որ կը յաղթէք նոցա, որ ես հոգւով ցանկանում եմ: Եւ նա խորը գլուխ տուաւ:

Այս գլուխ տալը հասկանալը շատ հեշտ է: Դա նշանակում է՝ մենք այլ ևս ոչինչ չունինք միմեանց հաղորդելու. ժամանակ է տեսակցութեան վերջ տալու:

Կլարան տեղից վեր կացաւ, Լաուրաին զգուշութեամբ դուրս հանեց ծնկների միջից, բայց կանգնեցնելով յատակի վերայ, դեռ ուշանում էր, կարծես էլի մի բան ունենար ասելու: Վերջապէս նա մի երկ-

չոր հայեացք ձգեց պ. Պօունսէքըրին վերայ ու ասաւ.

—Դուք ինձ հարցրիք թէ ինչ եմ մտադիր անել և որքան ես հասկացայ ձեզ, կամեցաք ինձ օգնել: Ես լաւ եմ դաստիարակուած. ես առաջ դաստիարակում էի շատ աղջիկներին և ձեզանից շատ շնորհակալ կը լինէի, եթէ ինձ համար մի քանի աշակերտներ գտնէիք:

Լաուրան պատասխանելու դժուարութիւնից ազատեց իւր հօրը.

—Ա՛ս, հայրիկ, ես. ես արդէն եօթ և կէս տարեկան եմ ու դեռ ոչինչ չը գիտեմ: Հարցրէք տիկնոջ, թէ չէ՞ր կամենայ արդեօք իմ ուսուցչուհին լինել:

—Բայց քեզ սովորեցնում է տիկին Մագգին, նեղն ընկած պատասխանեց հայրը:

—Նա ինձ միմիայն Անգլիերէն է սովորեցնում, թէյ է շինում և փոքրիկ կողովիս բանալին է կրում:—Ա՜խ, չը գիտեմ ինչ եղաւ այն. այս, յիշում եմ, Մօպսին վերցրեց խաղալու: — Բայց նա ինձ ֆրանսերէն չէ սովորեցնում, իսկ ծառատունկում զբօսնող ուրիշ բոլոր փոքրիկ աղջիկները վարժուհիներ ունին, հայրիկ. նոքա բոլորն էլ ինձանից խելօք են: Ա՜խ, ես անպատճառ կամենում եմ այս տիկնոջ մօտ սովորել, որովհետև սա իւր որդուն ամէն բան ուսուցել է:

Նոտարը նայեց տիկին Մօլլօյին: Սա գունատ էր և պ. Պօունսէքըրին տեսաւ, թէ ինչպէս դողում էր նորա ձեռքը, որ դրուած էր բազկաթոռի թիկունքին: Երևում էր, որ նա դեռ ևս այնչափ սովոր չէր օգնութիւն խնդրելուն:

—Եւ երբ մտածում է մարդ, թէ ինչքան կը թեթևանար նա . . . . մտածեց նոտարը և նորից կարեկցութիւն ու յարգանք զարթեցաւ նորանում դէպի այն կինը:—Միևնոյն է, ես հօ շուտով պիտի ստիպուէիմ ուսուցչուհի գտնել Լաուրայիս համար, իսկ սա

ինչքա՜ն է վատ ուրիշից. մտածեց նա, մանաւանդ որ խեղճ այրին այսպէս քաղցրութեամբ է նայում սորան և ինչպէս երևում է այսքան սիրում է մանուկներին:—Այս բոլորը մտածելուց յետոյ՝ նա նորից գլուխ տուաւ, բայց առաջուանից բոլորովին տարբեր կերպով և քաղցրութեամբ ասաւ.

—Յիրաւի, չէ՞ք կամենայ, տիկին, այս փոքրիկ չարին սովորեցնելու պաշտօն ստանձնել և ձեր ժամանակից օրը երկու ժամ սորան բաժին տալ: Բանն այն է, որ տիկին Մագգին այլ ևս կարող չէ սորան ուսումն տալ, ուրից, ճշմարիտն ասած, Լաուրան մի փոքր յետ է մնացած, որովհետև ես վախենում էի սորա թոյլ բնաւորութիւնից: Բայց այժմ արդէն ժամանակ է սորա կանոնաւոր պարապման և ես ուրախ կը լինեմ, եթէ դուք կը համաձայնէք հոգալ սորա մասին:

Լաուրան սկիւռի նման վեր թռաւ աթոռի վերայ իւր հօր վզին փաթաթուելու համար, որին փոքր էր մնացել որ խեղդէր իւր ձեռներով և ամենաքնքոյշ անուններ տալ նորան, որպիսիք միայն կարողանում էր մտաբերել: Յետոյ դառնալով տիկին Մօլլօյին՝ ասաւ.

—Դուք համաձայն էք, այնպէս չէ՞. դուք ինձ շատ էք սիրում, այո՞:

Կլարան ոյժ չունենալով որ և է բառ արտասանելու՝ քնքշութեամբ գրկեց այս սիրունիկ մանկան:

ԳԼՈՒԽ Գ,

ՈՐ ԾԱՆՕԹԱՑՆՈՒՄ Է ՄԵԶ ԱԼՖՐԷԴԻ ՀԵՏ:

Տիկին Մօլլօյն ու նորա որդին վարձեցին բնակարան մի փոքրիկ ու աննշան հիւրանոցում, Լօնդօնեան կամրջին մօտ Սուրրէյեան կողմը, ուր խմբուած էր գըր-

պանը դատարկ այցելուների բոլոր կացարանները: Ինչպէս Չեստէրտօնի նամակը չէր, որ ստիպեց Կլարային թողնել իւր ծովեզրեայ տնակը գաւառական քաղաքում: Իւր ամուսնու մահուան առաջին ծանր օրերից յետոյ՝ այս քաջ կինը իւր ոյժերը ժողովեց և համարձակ սկսաւ սպասել իրան գալիք վիճակին: Կշռելով իւր դրութեան լաւ և վատ կողմերը, նա եզրակացրեց, որ աշխատանք և որդու դաստիարակութեան միջոցներ որոնելու համար՝ այդ փոքրիկ քաղաքում մնալը անօգուտ էր. պէտք էր այնպիսի տեղ գտնել, ուր հնար լինէր գտնել լաւ ուսումնարան և արդիւնաւոր աշխատանք: Կլարան միմիայն հեռաւոր ազգականներ ունէր, այս դէպքում նորա համար միևնոյն բանն էր, ուր էլ որ տեղափոխուէր. բայց նա դեռ չը պսակուած ժամանակ երկար ապրած լինելով Լօնդօնում՝ լաւ ծանօթ էր նորան և մտածեց, որ ամենից լաւ տեղը նա է իւր և որդու համար բաղտ որոնելու: Ուստի և անյապաղ սկսաւ գործերը կարգի դնել. միքանի պարտքեր վճարեց և վաճառեց այն ամէնը, ինչ որ աւելորդ էր այն կեանքի համար, որ նա մտադիր էր վարել: Իւր գործերը արդէն վերջացրել էր, երբ պ. Պօւնսէրբիի նամակը ստացաւ:

Կարող էք զգալ նորա յուզմունքը: Չքաւորութեան, զրկանքի, անխոնջ աշխատանքի և ոյժը հատած ժամանակ, գուցէ նաև աղքատութեան փոխարէն այնպէս մօտիկ ժպտում էին նորան՝ հարստութիւն, փայլուն կեանք, որդուն ապահով ապագայ.... արդարև ուրախալի յուզմունք պիտի պատճառէր: Բայց միւս կողմից իւր զաւակը միանգամայն անծանօթ մարդուն յանձնելը, նորան հարստութեան բոլոր փորձանքներին ենթարկելը, որոնք գուցէ հարիւր անգամ աւելի զօրաւոր են աղքատութեան փորձանքներից, արդեօք զարհուրելի չէ՞ր այս: Ինքը ղեկավարելով իւր որդուն՝

նա յոյս ունէր, որ ամէն դժուար հանգամանքներում կարող էր նորան ազնիւ մարդ դուրս բերել, բայց ինչպէս իմանար, թէ ինչ դեր պիտի ունենար ինքը իւր որդու նոր և անծանօթ հօր ժամանակ: Նորան վախեցնում էր այս օտարական—ազգակիցը: Եթէ սա միայնակ լինէր կամ հիւանդ, օգնութեան կարօտ և այս բանի համար վարձ չը վճարէր, Կլարան, առանց երկար մտածելու, կ'ընդունէր առաջարկութիւնը, բայց այժմ իւր տուած հարստութեան փոխարէն պահանջում էր նորա հոգացողութիւնը և կարծես փողով էր առնում նորա որդուն:

Նոյն իսկ այս վերջին „վաճառքը“ Կլարան ապօրինի գործ էր համարում և որոշեց մերժել առաջարկութիւնը: Այս բոլորը անձամբ նոտարին բացատրելու համար միայն շտապեց գնալ Լօնդօն, ուր առանց այդ էլ մտադիր էր տեղափոխուել և ահ մենք հանդիպեցանք նորան պ. Պօւնսէրբիի գրասենեկում:

Իւր բացակայութեան ժամանակ հիւրանոցի մի համարում սեղանի առաջ նստած էր տասներկու տարեկան մի տղայ և ջանասիրութեամբ պարապում էր տետրը ձեռին: Նա թողեց մի վայրկեան պարապմունքը, մտածմունքի մէջ ընկաւ, ճակատը սրբեց, թէք ընկաւ աթոռի թիկունքին ու յետոյ նորից սկսաւ նոր եռանդով պարապել:

Վերջապէս յաղթական ձայն դուրս թռաւ նորա բերանից, արագութեամբ գրիչը ճրճռացրեց թղթի վերայ և յետոյ բաւականութեամբ ձգեց թանաքամանի վերայ:

—Ջա՛ն, շինեցի, ասաց նա:—Յիրաւի ես շատ չարչարուեցայ, բայց սորա փոխարէն մայրս շատ կ'ուրախանայ: Ոտանաւորները, Ասիայի քարտէզը, Գրաքրա–

ների (*) պատմութիւնը և գումարման երկու գործողու-թիւնները բոլորն էլ պատրաստել եմ: Մնում է միայն անպիտան լատիներէնի մի դաս. բայց այն միայնակ չեմ կարող սովորել. սրա համար շուտով ես ուսում-նարան կը մտնեմ: Խիստ սրտով ուզում եմ, որ մայրիկս չէր դառնար մեր Դիլը: Միթէ այս անպիտան սենե-կում բնակուելու համար արժէր Լօնդօն գալ: Երկու ժամն է. ինչ տաղտուկ ժամացոյց է այս, կափարիչով ու չոր սիւներով, սիւներ ունէ, կարծես եկեղեցի է. ինչի՞ համար է այս եկեղեցին. երևի 'ի պատիւ ձան-ձրութեան: Ահա, մէկը գալիս է. անշուշտ մայրիկս է:—Եւ տղան շտապով դուռը բաց արաւ, ու պատա-հեցաւ տիկին Մօլլօյին:

—Ես շատ պարապեցի, մայրիկս և բոլորը վեր-ջացրի: Այսօր զբօսնելու կերթանք, չէ՞, եթէ միայն դու չես յոգնել, 'ի հարկէ, որովհետև ես ամենևին չեմ ուզում, որ դու յոգնես: Նստիր բազկաթոռի վերայ և հանգստացիր:

Եւ առաջ քաշեց բազկաթոռը դէպի մայրը, իսկ ինքը նստաւ նորա մօտ փոքրիկ աթոռի վերայ և քաղցրութեամբ նայում էր նորան, մինչդեռ վերջինս ուղղում էր ճակատին հաւաքուած որդու շականակա-գոյն գանգուր մազերը:

---

*) Գրակքոս (Տիբերիոս և Կայիոս—Սեմպրոն.) երկու եղբայրներ էին, հռովմէական նշանաւոր ազգատոհմից. երկուսն էլ պերճախօս և անուանի. ընտրուեցան տրիբուններ մէկը 133 Թ. Ն. Ք. զՔրիստոս և միւսը 123 Թ. Ն. Ք. զՔրիստոս: Առանց երկիւղի մաքառեցին ժողովրդեան իրաւունքի համար և օրէնքներ առաջարկեցին հողերը բաժանելու և մշակելու համար. բայց սպանուեցան իրանց դէմ բարձրացրած խռովութեան ժամանակ:

Ծ. Հ. Թ.

Այս գանգուրները մեծ գեղեցկութիւն էին ըն-ծայում Ալֆրէդին. շատ շատ կտրում էին նորա մազերը, բայց շուտով բուսնում էին խիտ ալիքա-նման մանուածքով, նման հին ժամանակուայ ար-ձանների մազերին: Այս գեղեցիկ մազերի առաջնա-կողմը աչքի էր ընկնում նորա լայն ու դէպի վեր բարձրացած ճակատը, որ կրում էր արեգակի այ-րուածքի ու ծովային հողմերի հետքեր: Նորա մուգ-յօնքերը գեղեցիկ աղեղներ էին կազմում, աչքերը—մեծ, փայլուն աչքերը—նայում էին կենդանի, վստահ և ու-րախ: Այս բոլորի հետ նաև ուղիղ և սակաւ ինչ բարձր քիթը և խելօք ու ծանրաշարժ բերանը՝ Ալֆրէդի դէմքը առաջին հայեացքով հաճելի ու համակրական էին ցոյց տալիս: Նա բարձրահասակ չէր, բայց չափազանց ամրակազմ էր և միևնոյն ժամանակ գեղեցկակազմ. ծովային առողջարար օդը դարձրել էր նորան ուժեղ, իսկ մարմնամարզական պարապմունքը՝ թեթևաշարժ տղայ, որ, սակայն, չէր արգելում նորան ջանասիրու-թեամբ դասերով պարապել և սիրել այն հերոսներին, որոց հանդիպում էր նա գրքեր կարդալիս:

—Ես արդէն բոլորովին հանգստացայ, ասաց մայրը, բաներդ դարսիր և գնանք զբօսնենք:

—Ջան, գոչեց Ալֆրէդը և սկսաւ շորերը փոխել, բայց ո՞ւր գնանք, Բուկինհամի պալատը, բնագիտա-կան պարտէզը, բրիտանական թանգարանը թէ վեստ-մինիստրեան աբբայութիւնը... Ես այժմ անհամբերու-թեամբ կամենում եմ տեսնել Լօնդօնը, բայց ո՛չ իսկ իւր պատկերներից:

—Դու այդ բոլորին էլ կարող ես ծանօթանալ, մենք այստեղ պիտի ապրենք. դեռ այժմ պէտք է մի բնակարան գտնենք և որքան կարելի է շուտով:

—Աւելի լաւ. այս սենեակը շատ վատ է. մանա-

ւանդ, որ պէտք է վաթսուն ու վեց աստիճան բարձրանանք այստեղ մտնելու համար, ինչս եմ համարել:

—Կարող է պատահել, որ մեր նոր բնակարանը աւելի բարձր լինի սորանից. Լօնդօնում այնպիսի բարձր տներ կան, որպիսիք դու մեր քաղաքում չես էլ տեսած: Դէհ, պատրաստ ես:

—Ի՜նչքան ուրախ ես, մայրիկ, ո՜րքան սիրում եմ, երբ դու այդպիսի կերպարանք ունիս. արդեօք մի լաւ բան հօ չես լսել:

—Ի՞նչպէս ես համարձակւում դու, փոքրիկ լրտես, դէմքիս վերայ մտքերս կարդալ. ես մի աշակերտուհի գտայ և այս է ինձ ուրախացնում:

Տղայի դէմքը տխուր ձև ստացաւ:

—Ի՞նչ եղաւ քեզ, հարցրեց նորան մայրը, թեքուելով դէպի նա:

—Ոչինչ, բայց ինձ համար ցաւ է, որ ես փոքր եմ: Խոստանում եմ քեզ, որ երբ ես կը մեծանամ, չեմ թողնի, որ քեզ դասերով ծանրաբեռնես:

—Հա՛, 'ի հարկէ, ես յոյս ունիմ քեզանից և գիտեմ, որ դու օգտակար մարդ կը դառնաս:

Նոքա ցած իջան սանդուխից. որդին մտածելով, թէ երբ պիտի մարդ դառնայ, իսկ մայրը խորհելով իւր արածի մասին և սրտի խորքում ասելով. „Այո, ես համոզուած եմ, որ այն արի, ինչ որ արժան էր“:

ԳԼՈՒԽ Գ.

ՏՈՒՆԸ ԿԱՐԳԻ ԵՆ ԳՑՈՒՄ:

Կլարան կարողացաւ բնակարան գտնել Կէննինգտօնեան ճանապարհի մօտ մի տան վերնայարկում: Նա երկու սենեակից էր բաղկացած միայն, այնպէս որ Ալ-

փրէդը հարցրեց. իսկ աղախինը ո՞ւր պիտի քնէ: Երբ լսեց, որ մայրը ինքն էր կամենում վերջինիս պարտականութիւնները կատարել՝ ոչինչ չասաւ, բայց ծանր կերպարանք առաւ և սկսաւ մտածել, թէ ի՜նչպէս անէ, որ օգնէ նորան: Սկսաւ յատակը մաքրել, մինչդեռ մայրը արշինով չափում էր լուսամուտները, դռները ու վառարանի մէջ եղած տարածութիւնը տեղաւորելու համար իւր մնացորդ կահկարասիքը, որ նա սպասում էր Դիլլից: Եթէ նա ինքը միայն լինէր, արտաքին գեղեցկութեան այնքան ուշք չէր դարձնի: Ամուսնու մահը ծանր հարուած տուաւ նորան. նա կարող էր մի նշանաւոր այրի թագուհու հետ միասին ասել. *) „այժմ ամէնը ոչինչ է ինձ համար, ինչպէս նաև ոչինչ է ամէն բան“:

Բայց նորա կեանքը միմիայն իրան չէր պատկանում, այլ բոլորը յետ դրած ունէր որդու համար: Նորա պատճառով ամէն տխուր յիշատակ ու ցաւ պէտք է մոռացութեան տրուէր: Այրիանալով՝ նա ինքն իրան ասաւ. „այս կեանքում այժմ իմ գործս այն է, որ իմ որդուս մարդ շինեմ. ես երկուսիս համար բաւական ոյժ պիտի ունենամ“: Այսպէս մտածելով նա սկսաւ իրականացնել իւր մտածմունքները:

Մերժելով որդուն հարստութիւն խոստացող վիճակարկութիւնը և որոշելով նորան ոչ ոքի ձեռքը չը ձգել, նա ամէնից առաջ պէտք է ծածկէր նորանից այս, թէ նա կարող էր Չէստէրտօնի ժառանգ դառնալ: Բայց դեռ բոլորը այս չէ: Շատ անգամ, տղան փողոցում զբօսնելով մօր հետ հիանում էր փառաւոր տների ու փայլուն կառքերի տեսքով և յաճախ, թէպէտ առանց որ և է նախանձի, գոչում էր. „Ո՛հ, ո՜րքան բաղդաւոր են սոցա տէրերը“: Ամէն անգամ, երբ մայրը

*) Տես Շէքսպիրի «Համլէտ» դրաման:

լսում էր այս խօսքերը, նորա սիրտը կսկծում էր, բայց ոչ թէ խղճի խայթոցից, որի առաջ նա մեղաւոր չէր, այլ երկիւղից: Ի՞նչ անեմ, մտածում էր նա, եթէ զաւակս սովորէ իրան անբաղդ համարել: Եւ նա երդուեցաւ հեռացնել նորանից այն բոլոր հանգամանքները, որոնք կարող էին արծաթասէր դարձնել իւր զաւակը. բայց այս հանգամանքները առաւել շատ են, քան սովորաբար կարծում են մարդիկ:

Ամէնից առաջ նա սկսաւ կարգի դնել իւր նոր, խղճուկ սենեակները այնպիսի հոգացողութեամբ, որպիսով երեսուն տարի առաջ սկսել էր վերանորոգել իւր ամուսնու նախկին դատարկ բնակարանը, որի անկարգութեան համար վերջինս ինքն իրան յանդիմանում էր և որից, ինչպէս ինքն ասում էր, նա կարողացաւ փոքրիկ պալատ պատրաստել: Այժմ այս պալատը օտարի ձեռքին էր: Բայց ի՞նչ հարկաւոր է անցեալի վերայ մտածել, այժմ ապագայի վերայ պէտք է խորհել:

Կահ կարասիքը ուղարկուեցան և Ալֆրէդը մեծ չարչարանքով արկղերը և այլ բաները բանալուց յետոյ՝ նկատեց, որ իրանց նախկին կարասիներից շատերը չէին բերուած. Նա ոչինչ չասաց այս մասին մօրը ցաւ չը պատճառելու համար, բայց սա գուշակեց նորա միտքը և ուրախ ձեւանալով ասաց.

—Մեր այստեղի բնակարանը առաւել փոքր է քան Դիլէնը և տեղ չէինք ունենայ մեր առաջուայ բոլոր կահկարասիքի համար. բայց կը տեսնես, որ մնացորդն էլ շատ և շատ բաւական կը լինի մեզ:

—Դու միշտ հետս լինես, իսկ ուրիշ ոչինչ բանի հետ գործ չունիմ, ասաւ նա, գրկելով մօրը և յետոյ մտաւ խոհանոցը մեխեր ամրացնելու զանազան իրերի համար: Այդ միջոցին մայրը վրայ հասաւ:

—Ի՞նչ լաւ փոքրիկ հիւսն ես, ասաւ նա. շատ լաւ ես նայում մեր խոհանոցին: Ի՞նձ տուր այդ կասկարանները. տես, արծաթի պէս փայլում են դոքա: Տեսնո՞ւմ ես, որ այժմ մենք այլ եւս չունինք այն մեծը, որով այնքան պարծենում էր մեր խոհարարուհին, բայց երբ մենք մեր գործը վերջացնենք, խոստանում եմ, որ այս փոքրի մէջ էլ շատ համեղ հրուշակ կը պատրաստեմ:

—Ի՞նչ, մի՞թէ դու կերակուր պատրաստել էլ գիտես, զարմացած գոչեց Ալֆրէդը:

—Հ՞ը, ես ամէն բան գիտեմ, կատակով ասաւ մայրը—արի մէկ տես ինչպէս եմ կախել վարագոյրները:

Տղան գնաց նորա ետեւից և խիստ հիացաւ: Մինչեւ որ սա մեխերով էր աշխատում, մայրն էլ պարապ չէր մնացած. պատերը ծածկել էր մուգ տեղ և պայծառ ծաղիկներ ունեցող գեղեցիկ կտորով:

—Սոքա մեր վարագոյրներն են, գոչեց նա,—բայց ի՞նչպէս շինեցիր դու այս:

—Դոքա առաջ երկայն ու նեղ թուացին և ես մի կողմից կտրեցի, միւսին աւելացրի ու ահա, ինչպէս տեսնում ես, կարողացայ բոլոր պատերն էլ ծածկել:

— Հիանալի է. փառք Աստուծոյ, որ այժմ չէ երեւում այն կարմիր ու դեղին չերտաւոր անճոռնի թուղթը:

—Տեսա՞ր, դու որ ուզում էիր վեց պէննանոց լաւ թուղթ կպցնել. աւելի լաւ է, օգնես ինձ կարասիքը տեղաւորելու: Դաշնամուրը այստեղ կը դնենք, սեղանը մէջ տեղ, այստեղ աթոռները, բազկաթոռները վառարանի կողքերին, հին գրասեղանը լուսամուտների մէջ տեղ, իսկ սորա վերայ փոքրիկ արձաններն ու թղթակալը (presse—papier). Ծաղկամաններն էլ պէտք կը գան. վաղը մեզ քանի մի տեսակ ծաղիկ կը բերեն:

Գրքերը սեղանի վերայ դարսիր, քո աշխատութեան տեղը այս կը լինի: Սենեկի խորքն էլ շատ պէտքական է մեզ. այնտեղ կը դնենք քո փոքրիկ պահարանը, արկղը, լուացարանը և այստեղ էլ ցերեկը անկողին կը դարսենք, իսկ գիշերուայ համար առանձին տեղ կը պատրաստեմ քեզ քնելու համար. սենեկի ներքնամասի դուռը կը փակուի, այնպէս որ ոչ ոք չի իմանայ անգամ, թէ ինչ կայ այնտեղ: Տես, այսպիսի լաւ բնակարան դու դեռ երբէք ունեցած չես:

—Ճշմարիտ է, ճշմարիտ, ուրախ ուրախ պատասխանեց նա,—իսկ քեզ:

—Հը՛, ես աւելի լաւը կունենամ. ես իմ սենեակը կը զարդարեմ լաւ չթով. ես կ՚ունենամ վարագոյրներ ինչպէս լուսամուտների, նոյնպէս և դռների վերայ, պատկերներ, փորագիր տեսարաններ, փոքրիկ արձաններ, միով բանիւ իմ նախկին բոլոր զարդերը: Իշխանական տուն կը դարձնենք մեր տունը և այցելուները անգամ չեն ապականի մեր գործերը, որովհետև այսքան աստիճաններ բարձրանալուց յետոյ՝ անկարելի է որ նոցա ոտներէ բոլոր ցեխը չը մաքրուի. ահա քեզ և մի օգուտ այսպէս բարձր տանը կենալու:

—Եւ ինչ սիրուն տեսարան է այստեղից. տեսէ՛ք այն բլուրները նոյնքան գեղեցիկ են, որքան և ծովը:

—Այո, նոքա աւելի գեղեցիկ կը լինին մանաւանդ, երբ ծաղիկներ կը բուսնեն. մեր պարտիզի ծաղիկները ծովային հողմերից շուտով թառամեցան: Բայց տես այստեղ ինչ լաւ ներքնատախտակ ունի դրսից լուսամուտը, կարծես պատշգամբ լինի. սորա վերայ կարելի է փոքր ինչ մամուռ դնել և այդտեղ էլ ծաղիկներ կունենանք:

—Շատ գեղեցիկ, մայրիկս, ես էլ քո առաջին պարտիզպանը կը լինիմ: Մենք այստեղ երջանիկ կը

լինենք: Ա՜խ, երանի թէ հայրիկս էլ մեզ մօտ լինէր:

Տիկին Մօլլօյն պինդ գրկեց նորան և ասաւ.

—Նա այստեղ է, նա տեսնում է մեզ և միշտ սիրում է մեզ. դու այնքան պիտի աշխատես, որ նորա սիրոյն արժանի լինես:

—Այո, ես այդ խոստանում եմ, տխուր ու ծանր դէմք առնելով պատասխանեց տղան:

Նոքա այդպէս միմեանց գրկած մնացին մի քանի րոպէ, բայց մայրը չը կամեցաւ երկար ժամանակ տխրութեան անձնատուր լինել և նոյնը զօրացնել երեխայի մէջ. նա քաղցրութեամբ յետ մղեց նորան և ուրախ կերպով ասաւ.

—Գործի կենալու ժամանակ է. դարձեալ վեր առ քո մուրճը և մեխեր զարկ շորերիդ համար, իսկ ես կերթամ ճաշ պատրաստելու: Լսում ես, հինգը զարկում է—ճիշտ ժամանակն է: Գոգնոցս, խնդրեմ, տուր:

Արժէր տեսնել Տիկին Մօլլօյին և նորա որդուն ճաշին սեղան նստած ժամանակ: Կասկած չը կայ, որ առաջին յարկում բնակողների ճաշը առաւել ճոխ էր ու հարուստ, բայց լաւ էր թէ վատ՝ դա դեռ հարց է: Ընտիր կերպով պատրաստել էր մարգարտահատիկներով արգանակ, պարարտ ու լաւ ծեծած կոտլէտ, իսկ աղցանը ամենապատուական էր: Արդարև չը կայ աւելի համեղ կերակուր այն մօր պատրաստած կերակրից, որ ցանկանում է փաղաքշել իւր սիրելի որդուն:

Սփռոցը բամբակի պէս սպիտակ էր. արծաթները փայլում էին, բաժակները բիւրեղի պէս փայլում էին և Ալֆրէդը, որ նստած էր բաց լուսամուտի հանդէպը, կարողանում էր տեսնել հարևան այգու կանաչազարդ ծառերի կատարները, ուր հնչում էին դեղձանիկների ու թուխկատարների (синица) ուրախ երգի ձայները:

— Կարծես այսօր տօնախմբութիւն է, ասաւ մայրը,— և մէկին հրաւիրել ես:

— Ես քեզ եմ հրաւիրել, դու էլ ինձ. իսկ դալով տօնախմբութեան, պէտք է ասել, որ այն էլ դժուար չէ. պէտք է միայն հրաշալի ուտել և միմեանց կենաց խմել: Եւ վերջապէս երբ դու հետս ես՝ ինձ համար միշտ տօնախմբութիւն է. այստեղ ինձ շատ հաճելի է թւում, թէ տեսարանը, թէ ահա այն թռչնակների երգերը, թէ սենեակները և թէ ամէնից աւելի, դու, անգին, սիրելի մայրիկս. ասաւ ու գնաց համբուրելու նորան:

— Որովհետև դու արդէն ոտի վերայ ես, ասաւ մայրը, իբրև պատասխան նորա քաղցրիկ խօսքերին,— ուրեմն այստեղ բեր ինձ հրաշալին ու այն փոքրիկ շիշը: Դէհ, քո կենացը, սիրելիս: Աստուած օրհնէ քեզ և դէպի բարին առաջնորդէ. մենք միասին կ'աշխատենք և ես հաւատի եմ, որ դու ինձանից յետ չես մնայ:

— Այո, հաւատացէք, որ այո: Քո կենացը: Երբ ես կը մեծանամ, կը տեսնես, որ . . .

— Ի՞նչ կը տեսնեմ հարցրեց նա, քաղցրութեամբ նայելով որդու աչքերին:

— Կը տեսնես, որ ես յիշողութիւն ունիմ . . . . յիշողութիւն—բայց ոչ դաս սովորելու յիշողութիւն, այլ քո ինձ համար բոլոր արածները սրտումս պահելու յիշողութիւն: Ես կը յիշեմ նորա համար, որ այս բոլորի փոխարէնը հատուցանեմ:

— Ահա ճաշն էլ վերջացրինք և խոհարարը կերթայ ամանները լուալու:

— Իսկ սեղանապետը սեղանը կը հաւաքէ: Ջրշիշը ես դնեմ, սփռոցը և այս բոլորը ես պահեմ: Չէ, մի վախիր, ոչինչ չեմ կոտրի, կը տեսնես, թէ ինչ լաւ եմ անում այս բոլորը:

— Դէհ, արդէն ամէն բան վերջացրինք: Այժմ աւել քսիր սեղանին, սփռոցը տար պահիր ու անձեռոց փըուլը, որ, տես, այն անկիւնում փաթաթած է: Առաջ սա մեր սեղանատունն էր, իսկ այժմ հիւրասենեակ կը լինի — շատ դժուար է փոխելը:

— Դու կատարեալ կախարդ ես: Դէհ, այժմ ինչ պիտի անենք:

— Այժմ գնանք զբօսնելու այն ծառաստանը, ահա այն ծառերի տակ: Շրջանակդ էլ վերցրու, եթէ միայն գլորելը չես մոռացել:

— Ո՛չ, ես այդ չեմ մոռացել, ծիծաղելով ասաւ Ալֆրէդը:

Մի ժամից յետոյ նա վազվզում էր ծառաստանի մէջ, երբեմն շրջանակը պտտցնելով, երբեմն փոսերի ու ջրանցքների վերայից թռչկոտելով և յաճախ վազում էր մօրը տեսնելու, որ քաջալերում էր նորան իւր ժպիտներով: Կողմնակի անցորդներն անգամ շլացած նայում էին այդ տղայի գրաւիչ ու կենդանի դէմքին և ուրախ աչքերին: Նոցանից մի քանիսը, նկատելով նստարանի վերայ նստած սևազգեստ տիկին Մօլլօյին, ցաւակցութեամբ ինքն իրանց ասում էին. „Որքան ջահել է այս կինը և արդէն այրիացած. գոնէ էլի լաւ է, որ Աստուած նորան մխիթարելու համար պարգևել է այսպիսի գրաւիչ դէմք ունեցող զաւակ:“

Բաւական երկար թռչկոտելուց յետոյ՝ Ալֆրէդը հարցրեց իւր մօրը.

— Ե՞րբ պիտի գնանք տուն:

— Այո, սիրելիս, արդէն ժամանակը ուշ է:

— Դու ասացիր, թէ այսօր տօն է, վաղուց ես կամենում եմ խնդրել քեզ, որ այսօր մի բան նուագես ինձ համար. գիտեմ, չես մերժի, այնպէս չէ՞:

Մայրը իբրև պատասխան գլխով համաձայնու-

թեան նշան տուաւ և երկուսն 'ի միասին վերադարձան տուն։ Ալֆրէդը չ'երևակայեց անգամ, թէ որքան մեծ վիշտ պատճառեց մօրը իւր խնդիրը, որին խօսքով պատասխանելու ոյժ անգամ չունէր։ Նա մտաբերեց այն երեկոն, երբ իւր ամուսնու մօտ նստած էր դաշնամուրի առաջ. փոքրիկ Ալֆրէդը լուսամուտի մօտ այգումն էր խաղում. գիշերուայ թագուհին՝ լուսինը տխուր նայում էր ծովի հայելու մէջ. շուրջը ամէն ինչ լաւ էր և խաղաղ։ Այն ժամանակ նա իրան այնպէս երջանիկ էր զգում, որ իւր հոգին կարծես մտնում էր այդ խաղի մէջ, կարծես շնորհակալութիւն էր անում Աստծուն և բնութեանը իւր երջանկութեան համար։ Մթնեցաւ. երեխան պառկեց քնեց, իսկ նորա հայրն ու մայրը դեռ երկար ժամանակ թափառում էին այգում, խօսում էին անցեալի մասին, հազար տեսակ նախագծեր էին պատրաստում ապագայի, իրանց որդու դաստիարակութեան և այլ բաների մասին։ Սակայն հեռաւոր առաւօտ հայրը չը վերկացաւ անկողնից և դորանից յետոյ էլ ամենևին չը վերկացաւ. ջերմը բռնեց նորան, որ և գերեզման դրաւ խեղճին։ Այժմ Կլարան այրի էր, մէն մինակ իւր որբ որդու հետ նաև առանց մի օրինաւոր ապրելու միջոցի։ Նա սկզբում իրան փոքր ինչ անզօր զգաց, արտասուքը խեղդեցին նորան, բայց ինքն իրան ոյժ տուաւ այս անգամ էլ, ինչպէս անում էր ամէն այսպիսի դէպքերին։ Նա համարձակ բարձրացաւ սանդուղքը, գլխարկը դրաւ սեղանի վերայ և նստաւ դաշնամուրի առաջ։ Լուսինը նոյնքան լաւ էր լուսաւորում, որքան և յիշեալ երեկոյին։—Ա՜խ, երանի թէ նա այստեղ լինէր, մտածեց Կլարան։—Բայց միթէ նա այստեղ չէ. միթէ այն ննջեցեալների հոգիները, որոց մենք սիրում ենք, մեզ վերայ չեն շրջում։

Այսպիսի մտածմունքներով ոգևորուած նա սկզբում թոյլ էր նուագում, բայց յետոյ աւելի ու աւելի ուժեղացրեց. նա մինչև անգամ երգեց և նորա քաղցր ձայնից չէր լսւում արտասուքի ձայնը. ցանկացած արիութիւնը նա արդէն ստացել էր։

Երբ այս վերջացրեց՝ Ալֆրէդը բռնեց նորա ձեռքը։

—Շնորհակալ եմ, մայրիկ, շնորհակալ եմ, սիրելիս, ասաւ նա։—Կարծեմ, որ քո նուագածը բոլորն էլ հասկացայ թէ ինչ էր. բոլոր այդ միջոցին ես խիստ լաւ լաւ բաներ էի մտածում։ Երբ ես հարկաւոր զգամ, կամ երբ ինչից և իցէ ինձ տարաբաղդ համարեմ, անպատճառ քեզ կը խնդրեմ, որ մի բան նուագես կամ երգես։

—Լաւ, պատասխանեց նա,—սա շատ լաւ միջոց է. հարկաւոր է միայն որոշել, թէ ո՛ր եղանակը ինչին է օգնում. կամ գուցէ սա միևնոյն է, ինչպէս նշանաւոր խաբեբայի այն հռչակաւոր դեղահատը, որ օգնում է ամէն տեսակ հիւանդութեան։

—Դու ինձ ծաղրում ես, բայց ես գիտեմ, որ դու հասկանում ես ասածս. միմիայն քո երգերն են, որ ինձ ստիպում են բարի լինել. ուրիշներից ես այնքան համարձակութիւն եմ ստանում, որ աշխարհումս ոչնչից չեմ վախենում. մի քանիսը օգնում են ինձ աղօթելու, իսկ ոմանք էլ յիշեցնում են ինձ…հայրիկս։ Ի՛նչէ, դու տխրում ես, երբ ես նորան մտաբերում եմ։

—Ո՛չ, սիրելիս, նա մտքիցս ամենևին չէ անցնում։

—Ո՛հ, այո, իմիցս նոյնպէս. բայց երբ խիստ շատ եմ մտածում նորա մասին, լացս գալիս է, բայց քեզ չեմ կամենում ցաւ պատճառել։

—Յիշել ու ցաւել կարելի է նորա վերայ, բայց լաց լինել ո՛չ երբէք, զաւակս։ Յիշիր նորա բարութիւնը, քաջութիւնը և վեհանձնութիւնը. յիշիր, որ դու երբէք

լսած չես նորանից մի չար կամ անձնասիրական խօսք և աշխատիր նմանել նորան—ահա թէ ինչ եմ խնդրում քեզանից: Մենք պէտք է աշխատենք, իսկ սորա համար հարկաւոր է համարձակութիւն և քաջութիւն և ոչ թէ արտասուք:

Դեռ շատ երկար խօսեցաւ մայրը աշխատասիրութեան ու ազնուութեան վերայ, իսկ զաւակը լսելով այն ամէնը՝ պատասխանեց նորան խոստանալով՝ սէր, անձնանուիրութիւն և հպատակութիւն: Երբ տասնեմի ժամը լրացաւ, երկուսն էլ հանդարտ և յոյսերով լիքը գնացին քնելու: Մայրը, չը նայելով իւր մեծ վշտին հանգստացաւ ամուսնու մասին, սրտի խորքից գոհութիւն տուաւ Աստծուն իւր ջերմեռանդ աղօթքով:

ԳԼՈՒԽ Ե.

Պ. ՋԷՍՏԷՐՏՕՆԻ ԳԱԼՈՒՍՏԸ:

—Ռադլէյի հիւրանոցը, շուտ, գոչեց մի մատաղահաս կին, կառք նստելով Սուտհամպտոնեան իջևանում:—Շո՛ւտ արի, նստիր, Ռօբէրտ. չէ, ուշանում ենք:

—Իսկ ծանրո՞ցը, մայրի՛կ. փայտէ ձիս էլ կորւում է:

—Դորա մասին մի մտածիր, փոխարէնը ուրիշ կառնեմ քեզ համար. ծանրոցի համար շուտով յետ կը դառնանք: Վախենում եմ, որ այսօր մօրեղբայրս գայ, իսկ տունը դեռ ևս պատրաստ չէ. Լոնդոնի բանւորները չափազանց դանդաղ են գործ շինում: Կառապա՛ն, չը գիտե՞ս, Հնդկաստանի փոստային նաւը եկե՞լ է թէ ոչ:

—Փոստայի՞ն, տիկի՛ն:

—Այո՛, այո՛, „Ռաջիա՛ն“, կարծեմ դեռ ևս հասած չը պէտք է լինի:

—Դեռ չի եկել, բայց նշանը տուած է գալու. մակընթացութիւնն արդէն սկսուած է և մի ժամից յետոյ բաւական ջուր կը լինի նորա համար:

—Մի ժամից յետո՞յ: Կառապա՛ն, շտապիր գնա՛, աւելի վարձ կը տամ: Ահա՛ և հիւրանոցը. շատ լաւ: Սպասիր ինձ, ես իսկոյն դարձեալ կ՚երթամ:

Տիկին Վիտտլտօնը վախենալով, թէ մի գուցէ մօրեղբայրը սպասէ իրանց, կարգով ման եկաւ ամբողջ հիւրանոցը, ընտրեց ամենալաւ սենեակներ, այնուհետև կառքով շտապեց դէպի իջևանը ծանրոցը բերելու, որ հազիւ տեղաւորուեցաւ վարձած սենեակներում: Ազախինը իմանալով, որ նա մի նշանաւոր մարդու է սպասում, շտապով յայտնեց, թէ „Ռաջիա“ն նաւահանգիստն է մտնում:

—Ողորմա՛ծ Աստուած: Շո՛ւտ, Ռօբէրտ, ո՞ւր ես դու:

—Այստեղ եմ, անհոգութեամբ աղաղակեց Ռօբէրտը, որ այդ ժամանակ յետ էր անում իւր փայտեայ ձիու պարանը:

—Տե՛ս, այդպիսի չնչին բաներով պարապելու ժամանակ է՞: Կառապա՛ն, որքան կարող ես շտապով տար մեզ նաւահանգստի մօտ:

Կառապանը հարուածեց ձիաներին, որոնք նախ արշաւեցին, բայց յետոյ հանդարտ, սովորական ընթացքով սկսան անցնել հարթ քարայատակի վերայ, ուշ չը դարձնելով մտրակի անդադար հարուածներին: Տիկին Վիտտլտօնը կարծես տենդի մէջ էր:

—Տէր Յիսուս, գոչեց նա, ուշանում ենք: Շորերս փոխելու միջոց անգամ չունեցայ: Ռօբէրտ, գլխարկս ուղի՞ղ է ծածկած: Ա՜խ, դու հօ այսպիսի բաներից ոչինչ չես հասկանում: Հանդարտ նստիր, մինչև ես

փողպատդ կ'ուղղեմ: Այժմ մազերդ սանրիր, բաճկոնակդ ուղղիր, քղանցներդ հարթիր: Ա՛յդպէս: Դու պիտի աշխատես հաճելի երեւալ մօրեղբօրը. դա շատ կարեւոր բան է:

—Լաւ, մայրիկ. բայց ես ի՞նչ պէտք է ասեմ նորան:

—Ես կը խօսեմ, իսկ դու լռիր, եթէ որ նա բան չը հարցնէ. իսկ եթէ կը հարցնէ, ամէն հարցին պատասխանիր ինչպէս հարկն է:

—Ես պէտք է համբուրեմ նորան, թէ ոչ:

—Ճշմարիտն ասեմ, ինքս էլ չը գիտեմ. գուցէ առաւել լաւ լինի, որ դու սկզբում նորա ձեռքը համբուրես. իսկ յետոյ դու գիտես:

—Նա միթէ եպիսկոպոս է, ծիծաղելով ասաւ Ռօբէրտը:

—Դու կատակներ չափազանց շատ ես սիրում. հասկացի՞ր, որ այս գործը ծանր խնդիր է. եթէ դու մօրեղբօրդ չը դուր գաս, այն ժամանակ նա մեզ կարտաքսէ եւ այնուհետեւ ի՞նչ պիտի անենք մենք:

—Մի՛ բարկանար, մայրիկ, ա՛յ կը տեսնես, թէ ինչպէս միանգամայն կը փոխուեմ ես մօրեղբօր մօտ: Դու այսօր անդադար նախատում ես ինձ, սակայն չէ՞ որ այժմ արձակուրդ է, կարելի է և չարութիւն անել:

—Բայց միթէ ես չեմ թողնում քեզ որ խաղաս. չէ՞ որ փայտեայ ձի գնեցի քեզ համար:

—Այդ դեռ բաւական չէ, մայրիկս, առաջ դու ամբողջ օրերով խաղում էիր հետս, իսկ այժմ միշտ ուրիշ մի մտածմունք ունիս:

—Բաւակա՛ն է, բաւական, սիրելիս, դու քու օգուտդ չես հասկանում: Օ՛հ, վերջապէս հասանք, շուտ գնանք. շոգենաւը եկաւ և ճանապարհորդները արդէն դուրս են գալիս:

Եւ որդու ձեռքից բռնելով սկսաւ դէպի նաւահանգիստը շտապել, ճեղքելով ահագին բազմութիւն ճանապարհորդների, հանդիսականների, վաճառականների ու մշակների եւ իւրաքանչիւրի երեսին նայելով՝ կարծես պ. Չէստէրտօնին ճանաչելու համար: Իսկ նորան ճանաչելը դժուար չէր: Ո՞վ կարող էր լինել այն բարձրահասակ և ամրակազմ անգլիացին, որ կանգնած էր ծովեզերքում դիզած ահագին կոյտ ծանրոցի մօտ և որը անհամբերութեամբ այս ու այն կողմ նայելով որոնում էր իւր ուշացող ազգականներին, եթէ ոչ մօրեղբայր Չէստէրտօնը. ո՞վ կարող էր այնպէս տաք հագնուիլ սեպտեմբերեան պայծառ արեւի տակ, եթէ ոչ անգլոհնդկացին, և ո՞ւմ, վերջապէս, կարող էր պատկանել ուսին կապիկ նստած շոկոլադագոյն հնդկացին, եթէ ոչ նորան: Տիկին Լիտլտօնը առանց ամենեւին շփոթուելու՝ վազեց նորա մօտ.

—Մօրեղբա՛յր, սիրտ առնելով ու Ռօբէրտին առաջ հրելով՝ գոչեց նա, սա իմ զաւակս է:

—Ո՛ւշ է, բարեկամ, ուշ է, պատասխանեց պ. Չէստէրտօնը, իւր իմաստուն ու սեւ աչքերը ձգելով Ռօբէրտի վերայ: Վերջինս կարմրեցաւ և գլուխը կախ ձգեց:—Ես չեմ սիրում, որ ինձ սպասել տան: Ծանրոցս արդէն տասներկու րոպէ այստեղ ծովեզերքումն է դարսած: Գոնէ սենեակ բան վարձե՞լ ես հիւրանոցում:

Տիկին Լիտլտօնը վիրաւորուած մի քանի խօսք արտասանեց բռնակալների, ձիաքարշ երկաթուղու և այլոց վերաբերութեամբ: Սակայն մօրեղբայրը ընդհատեց.

—Լա՛ւ, լա՛ւ, ասաւ նա, բայց ես դոցանով չեմ զբաղուի ինքս: Մագխդխմդ:

Շոկոլադագոյն հնդկացին իսկոյն մօտ վազեց:

—Ծանրոցը կը հասցնես Ռադլէյ հիւրանոցը:—

Կառք ունիս, քեռայրջիկս: Լա՛ւ, գնանք: Ի՞, ուրեմն սա է ժամանցս, այո՞: Հայրս, տղաս, արի մի տեսնեմ քեզ:

Նա Ռոբերտին ծնօտից բռնեց ու բարձրացնելով նորա գլուխը՝ ուշադրութեամբ նայեց նորան մի քանի րոպէ: Այս հայացքից նա, ըստ երևոյթին, բաւականութիւն ստացաւ և այս անհիմն չէր: Ռոբերտը չափազանց գեղեցիկ տղայ էր, քնքոյշ ու վայելուչ կազմուածքով, աղջկայ նման, ոսկենման ու գառան պէս գանգուր մազերով, մեծ կապոյտ աչքերով ու փոքր ինչ էլ կոր քիթ ունէր: Նորա մոյգ կարմիր լի շրթունքները ամէն րոպէ պատրաստ էին ժպտելու և միշտ մեծ յօժարութեամբ ծիծաղում էր նա: Եւ այսպէս նա իւր տարիքից աւելի մեծահասակ էր թւում, որովհետև իւր հասակակիցներից մեծ մասից բարձր էր հասակով: Մեր նկարագրած րոպէին, երբ պ. Չէստէրտօնի աչքերին նայեց՝ ամենևին նորա ծիծաղը չեկաւ և բացի դորանից, ճշմարիտ ասած, նա վախեցաւ կարկեց, որ, նորան այնպէս թւաց թէ, մեծ ցանկութիւն ունէր թաչելու իւր մազերի վերայ:

—Լուսնթագը վկայ, որ գեղեցիկ տղայ է, ասաւ վերջապէս պ. Չէստէրտօնը դառնալով տիկին Լիտըլտօնին:—Սակայն դու ազգականներիցս ո՞րն ես, Կլարա՞ն թէ Սէսիլեա՞ն:

—Ես Սեսիլեան եմ, մօրեղբայր. իսկ զաւակիս անունը Ռոբերտ է, Ռոբերտ Լիտըլտօն: Նորա հանգուցեալ հայրը արտիլերի կապիտան էր...

—Այո՛ և որքան ես յիշում եմ, նա անցեալ տարուայ Դեկտեմբերի 28-ին մեռաւ: Այսպէս ուրեմն վիճակը քե՛զ ընկաւ:

Սեսիլեան գլխով համաձայնութեան նշան տուաւ: Սա չը կամեցաւ պատմել նորան ճշմարիտ եղելութիւնը, ինչպէս չը հաղորդեց և իւր որդուն:

—Շատ լաւ, այժմ կառք նստենք: Ռադլէյ հիւրանոցը տա՛ր, հրամայեց պ. Չէստէրտօնը, նստելով կառքի մէջ. իւր ծնկան վերայ նստացրեց կապիկը, Սեսիլեային իւր մօտ, իսկ Ռոբերտին դիմացը: Մագի-գիտագը ոտով գնաց ծանրոցի ետևից:—Ես շատ ժամանակ չեմ մնայ այստեղ. սակայն իմ քառասնամեայ բացակայութեան ժամանակ ամէն բան փոխուել է այստեղ: Ես քանի տարեկան էի միայն, երբ այստեղից բաղտ որոնելու դուրս գնացի: Այժմեան երիտասարդները այդ հասակում տանը նստած սպասում են, որ բաղտը ինքն իրան գայ իրանց մօտ: Այսպէս չէ՞, տղա՛ս:

Ռոբերտը չը պատասխանեց. նորա ուշադրութիւնը աւելի ու աւելի էր գրաւում կապիկը: Սակայն Պ. Չէստէրտօնը պատասխանի կարիք էլ չունէր. նա ինքն իւր համար էր խօսում:

—Յոյս ունիմ, որ քաղաքում ամէն ինչ իւր կարգով կը տեսնեմ, շարունակեց նա,—թէպէտ և ես գալուս համար օր չ'որոշեցի, բայց իմ պատուէրները այնքան որոշ էին, որ տարակուսելու տեղիք չէր մնայ քեզ:

—Նօտարը, մօրեղբա՛յր, շտապով պատասխան տուաւ Սեսիլեան,—առաջարկեց ինձ մի քանի բնակարան քաղաքի այն մասում, ուր դուք ցանկութիւն էիք յայտնել կենալու և նորա հետ միասին ընտրեցինք ձեզ համար մի յարմար ու գեղեցիկ տուն Կէնսինկտօնեան այգիներին մօտ: Նորա հետ կայ այգի, կառատուն, բակ, միով բանիւ, ամէն բան, ինչ որ հարկաւոր է: Նորոգումը այսօր երեկոյին պիտի վերջանայ, բայց յոյս ունիմ, որ ամէն բանից գոհ կը լինէք դուք:

—Շատ լաւ. հենց որ կ'երթանք՝ կառք ու ձիաներ կը ձեռք բերենք: Ռոբերտ, ձի սիրո՞ւմ ես դու:

—Օ՛հ, շատ եմ սիրում, մօրեղբա՛յր: Մայրիկս ձեր հաշուով մի փայտեայ ձի առաւ ինձ համար:

—Ի՞նչ, փայտեայ ձի՛: Առաջնկայ շաբաթն իսկ դու մի ընտիր ձի կունենաս և անպատճառ պիտի ձի նստել սովորես: Ես ցանկանում եմ, որ դու լաւ ձի նստող դուրս գաս: Իմ ազգականս ամէն բանում ինձ պատիւ պիտի բերէ: Է՛հ, մարմնամարզութեան մէջ ինչպէս ես:

—Անցեալ տարի այդ ուսարկայից առաջին մրցանակը ես ստացայ:

—Կեցցես, բայց Հրացան ձգել էլ տեղեակ ես թէ չէ:

—Ի՞նչ էք շտապում, մօրեղբայր, սա դեռ տասներկու տարեկան է միայն, երկիւղից խօսեց Սեւիլեան:

—Տասներկո՜ւ. սա տասնեՀինգ տարեկան ուժ ունի: Աւելի լաւ. Նշանակում է շուտով մենք սորան մարդ կը դարձնենք: Ես չեմ սիրում այն երիտասարդներին, որոնք անդադար վիզը ծուած նստած են գրքի առաջ: Ամէնից առաջ մարդս պէտք է առողջ, ուժեղ և ճարտար լինի:—Ռօբէրտի աչքերը ուրախութիւնից փայլեցան: Կրթութեան այս եղանակը, երեւում էր, որ նորա սրտովն էր:

—Իսկ պարապմունքներն ինչ անէ, Հարցրեց մայրը:

—Իւր պարապմունքները, 'ի Հարկէ, կը շարունակէ: Որքան գիտէ այժմ:

—Արդէն յաջողութեամբ անցաւ վեցերորդ դասատունը և Հոկտեմբերին կը փոխէ Հինգերորդ:

—Հինգերորդ, վեցերորդ. ես այդ եւրոպական անուններից ոչինչ չեմ Հասկանում: Հինգերորդում ի՞նչ են անցնում:

—Լատիներէն, յունարէն...

Պ. Չէստէրտօնը քրթմնջաց:

—Ֆրանսերէն, անգլիերէն, գերմաներէն...

—Ա՛յ, դա լաւ է. ճանապարՀորդութեան Հա-

մար լաւ է, վաճառականութեան Համար էլ: Ուրի՞շ:

—Պատմութիւն, աշխարՀագրութիւն...

—Պատմութիւնը կարող է օգուտ բերել. իսկ ինչ վերաբերում է աշխարՀագրութեան, երկաթուղիները՝ ցամաքի և շոգենաւերը ծովի վերայ աւելի շատ կ'օգնեն, քան բոլոր ուսուցիչները: Ուրի՞շ.—

—Թուաբանութիւն, գրականութիւն...

—Առաջինը շատ և շատ կարեւոր է. նա կարողէ ամբողջ կեանքում օգնել մարդուն, իսկ ինչ երկրորդին է վերաբերում...արՀամարՀական կերպով ուսերը վերքաշեց և դորանով վերջ տուաւ իւր մտքերին:

—Այնուամենայնիւ, մօրեղբայր, սաստիկ տրտմելով ասաւ Սեւիլեան,—ամենանշանաւոր մարդոց որդիքը այս գիտութիւններն են սովորում. և եթէ դուք ցանկանում էք, որ ձեր բարեկամը չ'արատաւորէ ձեր անունը Հասարակութեան մէջ, ուրեմն պիտի թոյլ տաք սորան շարունակելու իւր պարապմունքները: Միթէ դուք ուրախ չէք լինի, երբ ուսումնարանում տարեկան Հանդէսի ժամանակ Ռօբէրտ Լիտոլտօնը ծափաՀարութիւն կը ստանայ:

—Ռօբէրտ Չէստէրտօն պէտք է ասէք: Հարստութեանս Հետ անունս էլ եմ տալիս սորան: Առաջին պայմանը անՀրաժեշտ կապ ունի և երկրորդի Հետ: Լաւ, թող սա շարունակէ իւր պարապմունքները, միայն անպատճառ մրցանակները ինքը պիտի ստանայ:

—Ես արդէն ամէն տարի ստանում եմ, գոչեց Ռօբէրտը: Եւ նա ճշմարիտ էր ասում: Թէպէտ և 'ի բնէ շատ էլ ընդունակ չէր, բայց Հայրը մանկութիւնից Հասկացրել էր, որ ուսումը ոյժ է և բացի դորանից նա շատ ինքնաՀաւան էր և այդ բանը ստիպում էր նորան աշխատել այն աշակերտաց թւում դասուելու, որոնց, մրցանակներ բաժանելու ժամանակ, տարեՀանդէսին

ներկայ եղած ամբողջ խումբ ծափահարում էր: Սոյն այս ինքնահաւանութիւնը շատ անգամ ինքն իրան կարծել էր տալիս ինչպէս մի գիտուն, խելօք ու ամենալաւ ձի նստող երիտասարդ:

Այստեղ մեր երիտասարդ ընթերցողներին նկատենք,—հաւանում են նոքա այս տղայի մտածմունքները թէ ոչ—որ ինքնասիրութիւնը մինչև այնտեղ լաւ է, երբ դեռ որոշեալ սահմանից չէ անցել: Իւրաքանչիւր մարդ, որ և իցէ մի բարձր կամ նշանաւոր բանի հասնելով, որ աւելի է իւր սպասածից, անպատճառ պէտք է յիշէ հետևեալ խօսքերը, որ մի գերի ասել է հռովմայեցի բռնաւորին. «յիշիր, որ դու ոչ այլ ինչ ես, եթէ ոչ մի մահկանացու»:

Ռօբէրտը իւր փայլուն ապագայի վերայ մտածելիս ինքն իրան մոռանալով, յանկարծ ձեռքը կապկի ագու վերայ դրաւ, որ յատակի վերայ իւր տիրոջ շուրջը պտոյտներ էր անում: Սորան անհաճոյ թուեցաւ այսպիսի բարեկամութիւնը, որը գուցէ և մտադրած վիրաւորանքի տեղ ընդունեց (ո՞վ գիտէ, թէ ինչ էր անցնում կապկի մտքում) և թաթը բոլոր ուժով վեր բարձրացնելով՝ ապտակ զարկեց փոքրիկ մեծամտին: Ռօբէրտը բարձր ճիչ արձակեց:

—Ի՞նչ եղաւ քեզ, անբաւական կերպով հարցրեց պ. Չէստէրտօնը:

—Կապիկը.

—Ի՞նչ արաւ կապիկը. Մօկօն ընտիր ընկեր է և եթէ քեզ հարուածել է, նշանակում է, որ դու ձանձրացրել ես դորան: Արժէ՞ միթէ այսպիսի չնչին բանի համար գոռալ. ուրեմն դու կաթնակեր ես և ոչ թէ տղամարդ:

Ասաւ ու բարկացած ձգուեցաւ կառքի անկիւնը ու ամենևին այլ ևս մի բառ չասաւ. Ռօբէրտն էլ լռեց, սակայն խիստ բարկացած էր Մօկօի վերայ, որին իբրև վրէժն առնելու համար գաղտնի կերպով երեսը ծամածռում էր. շփոթուած ու վիրաւորուած տիկին Չէստէրտօնն էլ ահ ու դողով մտածում էր նորա վերայ, որ մօրեղբայրը վերջի վերջոյ իւր ժառանգին կաթնակեր անուանեց:

ԳԼՈՒԽ Զ.

Պ. ՊՕՈՒՆՍԷՐԲԻԻ ՆԱԽԱՍԵՆՆԵԿՈՒՄ:

Պ. Պօունսէրբիի նախասենեկում միևնոյն ժամանակ բացուեցաւ երկու դուռ. մինը նորա առանձնասենեակից, իսկ միւսը սեղանատանից. այս միջոցին ականջները սրած գործակատարները, որոնք այժմ, ինչպէս և միշտ, բոլոր իրանց չը վերաբերող գործի մասին եղած խօսակցութեանց ականջ դնելու սովորութիւնն ունէին, լսեցին հետևեալ երկու խօսակցութիւնները.

—Այո, տիկին, ես այս գործը շուտով կարգի կը գնեմ և չեմ կասկածում, որ նոյն իսկ այնպիսին կը գտնեմ, որպիսին ձեզ հարկաւոր է:

—Ամենից առաջ, պէտք է որ նա լաւ սովորութեանց տէր լինի. վնաս չունի, թէ մեծ զարգացում չունենայ, բայց 'ի հարկէ նա իմ որդուց աւելի պէտք է գիտենայ:

—'Ի հարկէ, տիկին, այս պայմանը միջոց է տալիս ինձ աւելի շուտ կատարելու ձեր պահանջը. խիստ շատ կան աղքատացած արիստոկրատներ, որոնք թէպէտ և բարձր կարգի մէջ են պտոյտ գալիս, սակայն նիւթապէս անապահով լինելու պատճառով ուրախութեամբ կ'ընդունեն ձեր առաջարկութիւնը:

—Միայն թէ, խնդրեմ, շատ շուտ. մօրեղբայրս սպասել չէ սիրում:

Այս խօսակցութիւնը տեղի ունեցաւ նախասենեկի դռանը խոնարհութեամբ ողջունող պ. Պօունսէրբիի և ապարանջաններով ու մատանիներով զարդարած տիկնոջ մէջ:

—Մինչև վաղը, սիրելիս, խօսեց մի թոյլ կանացի ձայն սեղանատնից:

—Մինչև վաղը, իմ պատուական, անգին ուսուցչուհիս, մայրիկս, պատասխանեց մի մանկական սուր ձայն: Սակայն թողէք ինձ, որ մի անգամ էլ համբուրեմ ձեզ:

—Լաւ միտդ պահիր, Լօուրա, որ դու խելօք աղջիկ պէտք է լինես և պէտք է կատարես տիկին Մագգիի բոլոր պատուէրները:

—Ես ամէն բան կանեմ, ինչ որ կուզէք, որովհետև կամենում եմ ամէն բանի մէջ հնազանդել ձեզ. վաղն էլ եկէք. ողջունեցէք իմ կողմից ձեր որդուն— սրտով ուզում եմ ծանօթանալ նորա հետ:

—Նա շատ զբաղուած է դասերով և ժամանակ չունի հիւր գնալու մատաղ օրիորդներին. մնաս բարեաւ, Լօուրա:

Այս ասելով տիկինը դուրս գնաց նախասենեակը և դէմ առ դէմ խփուեցաւ վերոյիշեալ տիկնոջ:

—Կլօրա, աղաղակեց վերջինը, բարկացած մեկնելով ձեռքը:

„Գուցէ թէ դորան ես պարտական քո բաղտաւորութեան համար, ձայն էր տալիս նորան իւր խիղճը,— իսկ դու դեռ ես հօրեղբօրդ ոչինչ չես ասել նորա երեխայի մասին և մինչև անգամ մի տող բան անգամ չես գրել իրան“: Սեսիլիան իրան մեղաւոր էր զգում:

—Շատ գործ ունենալը կրակ է ճշմարիտ, ասաւ նա,—չես կարողանում մինչև անգամ մտածել այն ամէնի մասին, ինչ որ հարկաւոր է:

Կլարան պարզութեամբ և քաղաքավարի կերպով, առանց ամենևին շփոթութեան, սեղմեց նորա ձեռքը: Սորան հաճոյ թուեցաւ, որ իւր հօրաքրոջ աղջիկը, իսկ այժմ մի նշանաւոր տիկին, ընդունեց իւր մօտ իբրև դաստիարակչուհի:

—Ո՜րչափ ուրախանում եմ քեզ տեսնելով, շարունակեց Սեսիլիան:—Ես այն աստիճան զբաղուած եմ, որ մի փոքր ժամանակ չը գտայ քեզ մօտ գալու. ո՞րտեղ ես կենում:

Կլարան տուաւ նորան իւր հասցէն:

—Եթէ դու այժմ տուն ես գնում, ես կը տանեմ քեզ մինչև այնտեղ: Իսկ ճանապարհին կը խօսենք:

Նստեցան մի փառաւոր կառք, որ դռան առաջ սպասում էր Սեսիլիային:

—Դու ինձ առողջ ու աշխոյժ ես երևում, ասաւ նորան Կլարան. իսկ ի՞նչպէս է քո որդին:

—Նա շատ լաւ է. այժմ կարծեմ ձիով մանգալիս կը լինի, սովորում է նոյնպէս մարմնամարզութիւն և զինախաղ և առհասարակ ուրախ կեանք է անցկացնում: Բայց բացի այս կրթութիւններից ՚ի հարկէ որ իւր պարապմունքներն էլ չը պէտք է մոռանայ, ուստի քեռուս խնդրեցի, որ մի դաստիարակ վարձէ նորա համար, որ օգնէ նորան դասերը պատրաստելու: Եւ յանձնեցի պ. Պօունսէրբիին, որ մի յարմար երիտասարդ գտնէ այդ պաշտօնի համար:

—Ալֆրէդն էլ գնում է ուսումնարան և շատ սէր ունի դէպի ուսումը. բայց վախենում եմ, որ յետ մնայ իւր ընկերներից: Ո՜րքան ցաւում եմ, որ ես լատիներէն լեզուն ամենևին չը գիտեմ:

—Ես հաւատացած եմ, որ դու կարող ես նորան սովորցնել. դու միշտ այդպէս ընդունակ ես եղել: Իսկ ի՞նչ ես շինում դու ինքդ:

—Ես աշխատում եմ ապրուստ գտնել: Անչափ շնորհակալ կը լինէի քեզանից, եթէ պատահած ժամանակ կարողանայիր մի քանի աշակերտ գտնել ինձ համար: Պ. Պօունսէբըլին իւր աղջիկը յանձնեց իմ հոգատարութեան: Նա մի զմայլելի և շատ մտքաբաց երեխայ է. և բացի դորանից երկու աշակերտուհի էլ ուրիշ ունիմ: Առ ժամանակ այսքան էլ բաւական է ինձ. բայց Ալֆրէդը կը մեծանայ, հետը միասին ծախսերն էլ կ'աւելանան. պէտք է ապագայի համար էլ մտածենք . . . Սակայն, ահա մեր տունը. Ներս կը մտնես ինձ հետ:

—Ի հարկէ կը մտնեմ: Ա՜խ, արդէն չորս ժամը զարկեց: Ուրեմն այլ ևս չեմ կարող. քեռիս սպասում է ինձ այժմ: Մնաց ուրիշ անգամ, Կլարա՛, մնաս բարեաւ:

Կլարան սկսաւ բարձրանալ վերև, իսկ Սեսիլիան հեռացաւ կառքով: Կարճ միջոցում երկուսն էլ տուն հասան, բայց մինչև որ Ալֆրէդը նստելով իւր մօր առաջ քաղցրութեամբ խօսում էր նորա հետ իւր դասերի մասին՝ պ. Ջէստէրտօնը հետևեալ խօսքերով ընդունեց Սեսիլիային:

—Զօրսից անց է, բարեկամ:

Ինքն ըստ ինքեան այս խօսքերը միայն անժխտելի փաստ էին, բայց Սեսիլիան բոլորովին ուրիշ մըտքով հասկացաւ: Նորա խելքով նշանակում էր. դու ինձ սպասել ես տալիս, իսկ ես չեմ սիրում ուրիշի սպասել. դեռ պէտք է որ շորերդ էլ փոխես, որովհետև ես սիրում եմ, որ ինձ հետ զբօնողները շքեղ հագնուած լինեն և նոյն իսկ այդ պատճառով խնդրեցի քեզ, որ սևերդ փոխես: Դու չես աշխատում, որ արժանի լինես իմ հոգատարութեան Ռօբերտի ու քո մասին:

Կարելի է Սեսիլիայի եզրակացութիւնները անհիմն էին ու չափազանց մեծացրած. կարելի է պ. Ջէս-

տէրտօնը մտքովն էլ չէր անցկացրել այս բոլորը. բայց ես ենթադրում եմ, որ Սեսիլիան մասամբ արդար էր իւր եզրակացութիւնների մէջ, ուստի և իսկոյն սկսաւ արդարանալ:

—Դեռ ժամի չորսը նոր զարկեց. իսկ շոր փոխելու հարկ չը կայ, որովհետև ես շատ վաղ եմ հագնուել, որպէս զի չը սպասել տամ ձեզ: Ես իմ կարծածից աւելի երկար մնացի Նօտարի մօտ. այնտեղ պատահեցայ իմ բարեկամ Կլարային, Կլարա Ջէստէրտօնին, տիկին Մօլլօյին մարդու կողմից. արդեօք ճանաչում էք դուք նորան:

—Հա՛, ուղի՞ղ էք ասում, անտարբեր կերպով վրայ բերաւ քեռին:

—Նա շատ աղքատ է, քեռի՛ս, և ստիպուած է դասատուութիւնով պարապել, իւր որդուն՝ այն հրաշալի տղային դաստիարակելու համար: Դուք, քեռի՛ս, որ այդպէս բարի էք ամէնքի համար, անշուշտ չէք գլանայ նորա համար էլ մի բան:

„Դուք, որ այդպէս բարի էք ամէնքի համար“ խօսքերը լոկ կեղծաւորութիւն պէտք է կարծել, որովհետև դեռ ևս Ջէստէրտօնը ոչնչով չէր արտայայտել իւր բարութիւնը: Սեսիլիան անշուշտ յիշել էր այն առածը, թէ „քաղցր լեզուն օձը ծակից հանել է“ և այժմ օգուտ քաղելով հանգամանքից աշխատում էր հանել նպատակին. սակայն սխալուեցաւ. այնպիսի օձեր կան, որոնք շատ հազիւ են դուրս գալիս բնից և քեռի Ջէստէրտօնը այդպիսիներիցն էր: Խօսքը վերջացրեց Սեսիլիան ու տխուր, գլուխը կախած, կանգնեց:

Մի քանի րոպէաչափ լռութիւնից յետոյ խիստ պարոնը ասաւ նորան.

—Նա էլ քեզպէս գիտէ նամակս բովանդակու-

թիւնը։ Ձեզ երկուսիդ էլ յայտնի է, որ միայն մի տղայի որդեգրեցի ինձ և միայն մէկին ձեզանից վերցրի իմ հովանաւորութեան տակ։ Միւսին չը վիճակուեցաւ այդ բաղդը, ուրեմն ես նորան չեմ էլ ճանաչում. այսպէս կը պատասխանես նորա խնդրին և առաջարկութեանը, որ անում է ինձ քո միջոցով։

—Նա ինձ ոչինչ բան չէ խնդրել, գոչեց Սեսիլեան. դուք Կլարաին չէ՞ք ճանաչում, քեռի՛ս։

—Եթէ այդպէս է, ուրեմն չեմ հասկանում, թէ դու ինչի համար ես աշխատում։ Սակայն, շտապենք, գնանք։

Սեսիլեան հառաչելով քեռու և Ռօբերտի հետ կառք նստաւ, իսկ կառավարի կողքին էլ նստաւ Մագերլագը իւր հնդկական հագուստով, մորակը ձեռքին, ծնկան վերայ նստացրած կապիկը, որ ամէն րոպէ տեսակ տեսակ ծամածռում էր իւր դէմքը։

Կառքը արդէն բաւական տարածութիւն անցել էր, երբ պ. Չէստէրտօնը դարձաւ իւր ուղեկցին ու ասաւ.

—Վերջապէս եթէ նա օգնութեան կարօտ է, դու ինքդ էլ այժմ բաւական փող ունիս. իսկ ես չեմ ցանկանում նորա հետ որ և է գործ ունենալ։

ԳԼՈՒԽ Ը.

ԵՐԿՈՒ ԱԶԳԱԿԱՆ ՏՂԱՅՈՑ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ։

Չորսին հինգ րոպէ պակաս էր, երբ մի գեղեցիկ կառք կանգնեցաւ Կլափամի մեծ ուսումնարաններից մէկի դռանը։ Կառքից դուրս եկաւ մի երիտասարդ, որ անհոգութեամբ սանձը ձգելով իւր փոքրիկ կառավարի ձեռքը, որ համարեա թէ չէր երևում ահագին գլխարկի տակ, սկսաւ սալայատակի վերայ անցու-

դարձ անել, սպասելով աշակերտների դուրս գալուն։

Բայց սակայն եթէ այս պարոնը տղաներից մէկի մօտ էր եկել, ինչու ուրեմն նոյն իսկ կառքի մէջ չէր սպասում, ուր աւելի հանգիստ կարող էր լինել։ Շատ հեշտ է բացատրել այս. մարդս նստած ժամանակ այնքան լաւ չէ կարող ցոյց տալ իւր ձևերը, հասակի գեղեցկութիւնը, գեղեցիկ անդրավարտիքը, ոտների շարժողութեան գեղեցիկ ձևերը, որքան կարող է անել այդ այն մարդը, որ ծխաքարշը բերանում և ձեռնափայտը ձեռքին բռնած, փայլուն կօշիկներով ճրճռալով զբօսնում է քարայատակի վերայ։

Ադոլֆ Լեւզֆիշը խիստ պարծենում էր իւր արտաքին յատկութիւններով և „ֆրանտ“ էր բառիս բուն նշանակութեամբ, կարծելով, որ ինքը ստեղծուած է իւր մերձաւորների տեսութեան զուարճութիւն պատճառելու համար։ Ահա թէ ինչու նա այժմ սպասում էր իւր աշակերտ Ռօբէրտ Չէստէրտօնին (նախկին Միտլտօն) ոչ թէ կառքի մէջ նստած, այլ սալայատակի վերայ։

Թէ ով էր այս յարգոյ պարոն Ադոլֆը և ինչպէս դարձաւ Ռօբէրտի դաստիարակ—երկու խօսքով կարելի է ասել։ Նորա ծնողները իրանց մահից յետ մեծ կարողութիւն թողին, որ նա շատ շուտով վատնեց։ Երբ բոլոր փողը հատաւ, իսկ փող այնուամենայնիւ հարկաւոր էր, սկսաւ միջոցներ որոնել, թէ ինչպէս կարելի էր աւելի քիչ աշխատանքով ձեռք բերել այն։ Շատ ման եկաւ երկրէ երկիր, արտաքին գրաւիչ ձևեր ընդունեց և սովորեց պարելու զանազան ձևերը։

Պ. Պօունսէրբին, որին ժողովարանում առաջարկել էին նորան, տեսաւ, որ նա բոլոր պահանջած յատկութիւնները ունէր պ. Չէստէրտօնի ժառանգի դաստիարակը լինելու համար։

Ահա՛ թէ ինչ պատճառով չարգելի Ադոլֆը
կոտրտում էր այժմ նոյն իսկ աշակերտների ծնօղների
ու քոյրերի առաջ, որոնք նոյնպէս, ինչպէս և ինքը,
սպասում էին դասերի վերջանալուն: Հարուստ մարդու
տանը ապրելը, ուրիշ ոչինչ գործ չը շինել բացի՝ տը-
ղային զինավարժական դահլիճից ձիավարժութեան
կրկէս տանելը, այստեղից մարմնամարզարանը, իսկ
մարմնամարզական վարժարանից կլասիկական ուսում-
նարանը և միևնոյն ժամանակ յարգանք վայելել և
մեծ գումար էլ ստանալ—արդարև վատ բան չէր այս-
պիսի մի ազնիւ պարոնի համար: Բայց այնուամենայ-
նիւ նա չէր մերժի փոխել իւր այսպիսի վիճակը, եթէ
պատահէր, օրինակի համար, մի հարուստ այրի կամ
լաւ կարողութիւն ունեցող մի մատաղ օրիորդ, որ հա-
մաձայնէր պսակուել նորա հետ:—Ամէն մարդ իւր
կամքի տէրն է:

Ժամի չորսը խփեց և տղայքը գոռում գոչումով
սկսան ուրախ ուրախ դուրս վազել ուսումնարանից,
խօսել, աղմուկ անել և բարձրաձայն ծիծաղել: Նոցա
հետ դուրս եկաւ նաև Ռօբերտը, որ երևի թէ արդէն
բոլորովին ընտելացել էր իւր նոր կեանքին. Նա պայու-
սակը ձգեց ծառային, սեղմեց Ադոլֆի ձեռքը և նըս-
տաւ կառքի մէջ. չարգելի Լիւզփիւը մտրակեց ձին և
շուտով հեռացաւ կառքը զարմացած տղայոց աչքերից:
„Այս նոր ընկերն ով է. ա՜յ քեզ բաղտաւոր մարդ“,
մտածում էին նոքա:

Իսկ մի տղայ սև բաճկոնակով, որ թևի տակ
բռնած ունէր մի նոր կաշուէ պայուսակ, չը խառնուե-
ցաւ միւս աշակերտների խմբի հետ, այլ շտապով
անցնում էր փողոցում: Նա դեռ բոլորովին խամ էր
և ուսումնարանում ծանօթներ չունէր և բացի դոցա-
նից շտապում էր հասնելու մի սևազգեստ տիկնոջ, որ

սպասում էր նորան դիմացի անկիւնում: Երբ հասաւ
նորան, երկուսն էլ իրար համբուրելով գնացին միասին,
տղան անդադար խօսելով, իսկ տիկինը քաղցրութեամբ
ականջ դնելով նորան: Այսպիսով վերջինս իմացաւ, որ
դասատանը ընդամէնը երեսուն և եօթն աշակերտ
կային, որոնք բոլորն էլ փոքր ինչ նորանից առաջ էին
մտել ուսումնարան, որ ուսուցիչը բաւական խիստ էր,
որ, սակայն, բացի իրանից մի նորեկ էլ կար—Ռօբէրտ
Զէյտէրտօն, գեղեցիկ մազերով, կապոյտ աչքերով և
դուրեկան դէմքով մի տղայ, որ նա (Ալֆրէդը) սաստիկ
ցանկանում էր խօսել նորա հետ, որովհետև նա էլ
ծանօթներ չունէր, բայց այս ցանկութիւնը անցաւ,
երբ տեսաւ, թէ ո՛րպիսի պատուական կառքի մէջ նըս-
տաւ Զէյտէրտօնը:

Տղան նոյնպէս ասաւ իւր մօրը, որ դասը շատ
դժուար էր, այնպէս որ երկու ժամ շարունակ անխոնջ
պարապելով, դեռ էլի լաւ չէր հասկացել, բայց դա
մի մեծ ցաւ չէ, որովհետև յետոյ ուսուցիչը շատ լաւ
բացատրել էր նորան, այնպէս որ միւսներից պակաս չէր
իմացել, մինչև անգամ նաև Զէյտէրտօնից, որին հէշտ
էր թւում այդ դասը:—Սակայն հասկանալի է այս
բանը, որովհետև նա առաջ ուսումնարանումն էր,
վեցերորդ դասարանից դուրս եկաւ—իսկ ես իմ ջանքս
պէտք է կրկնապատկեմ, որովհետև Դիլլի ուսումնարա-
նում շատ քիչ բան են սովորցրել, որ այստեղ պէտքա-
կան լինէր:

Տիկին Մօլլօյն ականջ էր դնում իւր որդուն և
սրտանց ուրախանում էր նորա կայտառութեան և ու-
րախութեան համար, սակայն չասաւ նորան, թէ ճոխ
կառքով գնացող նորեկը իւր բարեկամն էր:

„Դժուար թէ օգտակար լինի նորա հետ մօտիկ
ծանօթութիւնը“, մտածեց նա:

Երեկոյեան պարապմունքներից յետոյ Ալֆրեդը վերադարձաւ առաւօտուանից աւելի գրգռուած:

—Ի՞նչ ես կարծում, մայրի՛կ. Զէստէրտօնը այսօր ինքը մօտեցաւ ինձ, գրկեց ու ասաւ, որ մենք միմեանց բարեկամներ ենք: Զարմանալի չէ՞ այս: Նա ասաւ, թէ իւր մայրն է ասել այդ իրան և մինչև անգամ կամենում էր մեզ մօտ գալ, բայց նորա դաստիարակը շտապով տարաւ տուն: Արդեօք իրա՞ւ է, որ նա իմ բարեկամս է: Ինչո՞ւ դու ինձ առաջ չասացիր:

—Այդ պէտք է որ ուղիղ լինի, բայց նորա իսկական անունը Ռօբէրտ Ալտալտօն է: Նորա հանգուցեալ հայրը ռմբաձիգ զօրքի աստիճանաւոր էր, իսկ նորա մայրը իմ հօրաքեռ աղջիկն է: Նորան որդեգրեց իւր (մօր) քեռին՝ պ. Զէստէրտօնը, որի անունն էլ կրում է այժմ. ահա թէ ինչու ես չասացի, թէ նա մեր բարեկամն է, երբ այսօր առաւօտ մենք խօսում էինք նորա մասին:

—Իրա՛ւ, ասաւ Ալֆրեդը, բայց ես ամենևին չէի ցանկայ հօրս անունը ուրիշ անուան հետ փոխել: Սակայն, նա որ ցանկացաւ մեր տուն գալ, ինչու ուրեմն չասաւ թէ մօրն էլ կը բերէ:

—Նա շարունակ զբաղուած է իւր քեռու՝ ծերունի պարոնի համար գործ չինելով: Եւ բացի դորանից մեզանից շատ հեռու է. նա բնակվում է քաղաքի արեւմտեան ծայրին: Ռօբէրտի հետ բարեկամաբար վարուիր, բայց նորա հետ շատ սերտ ընկերութիւն չանես. դու գիտես, որ չենք կարող ապրել այնպէս, ինչպէս նա և նորա մայրը:

—Այո՛, ես այդ հասկանում եմ, վրայ բերաւ Ալֆրեդը,—բայց և այնպէս շատ ուրախ եմ, որ ես էլ ունիմ մի բարեկամ տղայ:

Հոկտեմբերը շատ տխուր ամիս էր խեղճ Ալֆրե-

դի, հետևապէս և նորա մօր համար: Մի անգամ, երբ հարցաքննողը աշակերտներին տարաւ դահլիճը նոցա շարադրութիւնների եզրակացութիւնները կարդալու, Ալֆրեդը խիստ վրդովուած հետևեցաւ նորան: Սկզբում կարդացած մի քանի անունները ոչինչ տպաւորութիւն չը թողին նորա վերայ. նա գիտէր, որ իւր շարադրութիւնը ամենևին լաւերի տեսակից չէր և ինքը սպասում էր, որ իւր ազգը բաւական ներքև գրուած պէտք է լինի: Բայց երբ արդէն քսաներորդ ազգը կարդացին, նա ականջները սրեց. քսան և հինգերորդին նա ալեկոծուեցաւ. յոյս չունէր թէ այդ աստիճան վատ լինէր իւր աշխատութիւնը: Կարդացուեցան քսանևութերորդն էլ, քսանևիններորդն էլ, երեսներորդն էլ. Ալֆրեդի գոյնը թռաւ, գլուխը սկսաւ պտոյտ գալ և ականջներն սկսան խշխշալ:

—Երեսունևեօթներորդ—Մօլլօյ, ասաւ վերջապէս հարցաքննողը: Ալֆրեդը ձեռքերով փակեց իւր դէմքը:

Դասերի մնացած ժամանակը նա այնպէս շփոթուած էր, որ չը նայելով իւր բոլոր ջանքին չէր կարողանում ուշադրութեամբ լսել ուսուցչի ասածները և երբ վերջինս առաջարկեց նորան կրկնել իւր պատմածները, նա բոլորովին շփոթուեցաւ և չը կարողացաւ պատասխանել: Սորա հետևանքն այն եղաւ, որ ուսուցիչը սպառնաց տեղափոխել նորան ստորին դասատուն:

Մայրը, որ այս անգամ էլ սպասում էր նորա դուրս գալուն ուսումնարանից, սկզբում չը հարցրեց նորա տխրութեան պատճառը. բայց երբ հանգիստ տուն տարաւ, ձեռքից բռնեց ու քաղցրութեամբ ասաւ.

—Անշուշտ մի որ և է բան պատահել է քեզ, այդպէս չէ՞, սիրելի՛ս:

Սրտի տխրութիւնը արտաքուստ էլ ունեցաւ իւր

ներգործութիւնը. Նա փաթաթուեցաւ մօր վզին և հեկեկալով աղաղակեց.

—Վերջինն եմ, վերջինը, մայրիկ, ես վերջինն եմ:—

Բայց շուտով փոքր ինչ հանդարտուեցաւ և պատմեց բոլոր անցքը, աւելացնելով, թէ իրան մեծ ցաւ է, որ Չեստերտօնը առաջինն է դասատան մէջ: Նա մեզ ամէնքս վայր գցեց. Նորա աշխատութիւնները միշտ ընտիր էին լինում, բայց անպատճառ ինքը չէր պատրաստում նոցա, այլ տանը դաստիարակը օգնում էր նորան:

Տիկին Մօլլօյն կտրեց որդու խօսքը ու խիստ կերպով ասաց.

—Դա վատ մտածմունք է, Ալֆրէդ. ես քեզ չեմ յանդիմանում, որ դու վերջինն ես, և ոչինչ համեմատութիւն չեմ դնում քո և ազգականիդ մէջ. դժուար բան չէ, որ քեզանից լաւ սովորէ, բայց այս բանը դեռ ամենևին չէ արդարացնում քո նախանձը: Նախանձը նոյնչափ կ'օգնէ քեզ լաւ պարապելու, որքան և արտասուքդ: Դե՛հ, այժմ աչքերդ սրբիր և գնանք ճաշելու: Ես քեզ խոստանում եմ, որ շուտով այնքան կը սովորեմ քերականութիւնից, որ կարող կը լինեմ օգնել քեզ:

Ալֆրէդը ժպտաց, երբ մտածեց, թէ իւր մայրը լատիներէնի ուսուցիչ պիտի դառնայ և փոքր ինչ սիրտ առաւ: Սակայն նորա տխրութիւնը նորոգուեցաւ, երբ գրիչը ձեռին նստաւ լատիներէն վարժութիւն գրելու, որից մի բառ անգամ չէր հասկանում: Մայրը եկաւ օգնելու և երկուսը միասին բոլոր բառերը մէկ մէկ գտնելով բառարանում և վերլուծելով, սկսան աշխատել: Տիկին Մօլլօյն վերջապէս իմացաւ թէ բանն ինչումն է և երեկոյեան դէմ մի բան դուրս բերին: Ալֆրէդը հիացած էր:

—Ես ասում եմ, որ դու ամէն բան գիտես, կախարդ ես ինչ ես, աղաղակեց նա:

Հետևեալ օրը նա այնպէս լաւ պատասխանեց թուաբանութեան և պատմութեան դասերը, որ նորան թոյլ տրուեցաւ վեցերորդ դասատանը շարունակել: Բայց ամէն մի նոր վարժութիւն լատինական լեզուից յուսահատութիւն էր պատճառում նորան, մայրն էլ աշխատում էր օգնել և միևնոյն ժամանակ սիրտ տալ նորան: Մայրը փոքր առ փոքր սկսաւ անհանգիստ լինել. ինչ պէտք է անէր, եթէ յիրաւի ինքը չը կարողանար պարապել նորա հետ. այն ժամանակ տղային կ'արձակէին ուսումնարանից և իւր զոհաբերութիւնները ոչինչ օգուտ չէին տալ: Էլ ինչի՞ էր թողել իւր փոքրիկ քաղաքը, ուր ամէնքը սիրում էին ու ճանաչում նորան և ընդ նմին իւր թանկագին յիշատակները: Այնտեղ նա այնքան կրթութիւն կարող էր տալ իւր որդուն, որ բաւական կը լինէր մի որ և է գրասենեակ մտնելու: Արդեօք այս պահանջը չափազանց չէ՞ր նորա կողմից: Կասկածն ու երկիւղը կտոր կտոր արին նորա սիրտը, մինչդեռ դրսից աշխատում էր իրան հանգիստ ցոյց տալ, որպէս զի իւր ուրախութեամբ և ժպիտներով քաջալերէ Ալֆրէդին:

„Սորան ուսուցիչ է հարկաւոր“, մտածեց նա—„բայց որտեղից վճարեմ նորան. այստեղ ապրուստը շատ թանգ է և ես ոչ մի հնարքով չեմ կարողանում տնտեսութիւն անել: Ձմեռը մօտենում է, հետն էլ ցուրտը: Ա՜խ, երանի թէ կարողանայի մէկ կամ երկու աշակերտ էլ գտնել“:

Միւս օրը, երբ Ալֆրէդը վերադարձաւ ուսումնարանից, ուրախութեամբ տեսաւ, որ իւր մայրը նստած է քարդեահի մօտ և կարում է մի պատուական գործ. Նորան շատ դուր եկաւ այս բանը, որովհետև գիտէր, որ

իւր մայրը ձեռագործ աւելի էր սիրում, քան թէ ան-
ձեռոցների ափներ կարելն ու պղնձներ լուանալը: Բայց
այս անգամ չը նկատեց, որ մայրը նստած էր քար-
գեահի մօտ մինչև ճրագներ վառելը. Նա այդ գործը
պատրաստում էր ծախու համար, որ այդպիսով փող
վաստակէ:

ԳԼՈՒԽ Ը.

ՍԱՆԴՈՒԽԻՑ ԳԼՈՐՈՒԵԼԸ:

—Արդէն ինն ժամն է, սիրելիս. շուտ կը վեր-
ջացնես:

—Այո, մայրիկ. մնաց միայն պատմութիւնը: Սա
ինձ չէ վախեցնում, այլ միայն այս անիծեալ լատի-
նական լեզուն: Ես բոլոր ջանքս գործ եմ դնում, որ
դասատանը բարձր տեղ բռնեմ, բայց շատ դժուար է
այս բանը ինձ համար:

Ալֆրէդը խեղդեց իւր մէջ հառաչանքը և գնաց
ննջարանից մոմ բերելու:

Թ'րխ, Թրմխ, Թ'րխ. զարհուրելի աղմուկ բարձրա-
ցաւ սանդուխի վերայ, կարծես թէ տասը չաղթանդամ
գիւղացիք իրանց կոպիտ կօշիկներով բարձրանում էին
սանդուղից. սորան հետևեցաւ մետաղեայ ջարդի զնգ-
զնգոց, կարծես պղինձ գլորուելիս լինէր սանդուղից
կամ այսպիսի մի ուրիշ բան: Այնուհետև տիկին Մօլլօյն
ու նորա որդին լսեցին ծանր հառաչանքի և ախուվա-
խի ձայներ:

—Հա՛, երևի ծերունին է, ծիծաղելով ասաւ Ալ-
ֆրէդը:—Սովորաբար նա քթի տակ գիտէ խօսել, այն-
պէս որ ոչինչ որոշ բան չես հասկանալ, իսկ այսօր
կարծես ձայն է հանել, լսո՞ւմ ես: Նա ինձ շատ չէ դուր

գալիս. նա միշտ վազվզում է իւր սենեկում, ինչպէս
որ մուկը իւր բնի մէջ, և փախչում է պատասխանից,
երբ իրան մէկը ողջունում է:

—Բաւակա՛ն է, ժամանա՛կ է այդպիսի յիմար բա-
ներ խօսելու, պէտք է տեսնել թէ ինչ է պատահել նո-
րան. լոյս տուր, խնդրեմ:—Եւ տիկին Մօլլօյն գնաց
օգնելու ծերուկին:

Դեռ ևս մինչև այդ ժամանակ տիկինը պարզ տե-
սած չէր նորա երեսը, որովհետև նա, ինչպէս շատ
ուղիղ ասում էր Ալֆրէդը, մկան պէս վախենում էր
մարդուն երևալուց. սակայն այսքանը միայն գիտէր,
որ նա իրանց հարևանն էր, որովհետև երկուսի տան
դռներն էլ բացւում էին միևնոյն սանդուղի ծայրին
և որ նա ապրում էր մին մէնակ: Երբէք ոչոք չէր գա-
լիս նորա մօտ, այնպէս որ անկասկած նա ինքն էր
իւր անկողինը փռում և կերակուր պատրաստում: Ամէն
առաւօտ վաղ նա դուրս էր գնում տանից պտուկը և
կողովը ձեռքին և քառորդ ժամից յետ վերադառնում
էր տուն. երբեմն նա գալիս էր տուն մի ահագին կա-
պոց գրքեր թևի տակ բռնած և շատ անգամ էլ նորա
վերարկուի գրպաններից դուրս էին երևում երկու եր-
կայն թղթեայ ծրարներ, ինչպէս լեռնական մարդու
ատրճանակներ: Նորա արտաքին տեսքը երեք խօսքով
կարելի է նկարագրել. նա փոքր էր, կորամէջք և եր-
կայնավիզ:

Երբ անցնում էր մարդու մօտից՝ քթի տակով
դառը նախատինք էր թափում ամբողջ մարդկութեան
վերայ, չնայելով սորան, նորան սիրում էին և միքա-
նիսը մինչև անգամ յարգութեամբ ողջունում էին,
որի համար նա կարծես չափազանց զայրանում էր:

Երբ տիկին Մօլլօյն լապտերը ձեռքին դուրս գնաց
սանդուխի գլուխը, նորա ծերունի հարևանը, որ գլո-

ուել էր մինչև Հինգերորդ յարկի տափարակը, աշխատում էր սիւների օգնութեամբ բարձրանալ և միևնոյն ժամանակ այնպիսի անէծքներ էր դուրս թափում բերանից, որոնք պարզ ցոյց էին տալիս նորա Հոգւոյ վրդովմունքը և Համբերութիւնից դուրս գալը:

Երբ լոյսը նկատեց՝ նա զարմացած յետ նայեց և սկսաւ տարակուսած նայել տիկնօջ ու տղային:

—Վախում եմ, որ վիրաւորուած լինէք. չեմ կարող որ և է կերպով օգնել ձեզ:

—Վիրաւորուած եմ, այսինքն, չէ թէ միայն վիրաւոր եմ, այլ ես բոլոր մարմնով ջարդուածի պէս եմ: Դուք դեռ երիտասարդ էք, տիկին, այդ շատ լաւ է ձեզ Համար: Սակայն, կը գայ ժամանակ, երբ դուք էլ կը ծերանաք և կը տեսնէք ծերութեան բոլոր սքանչելիքները—tarda senectus: Ձեր տներն էլ նոյնպէս սոսնձած կ'երևան և նոյնպէս կը գլորեն ձեզ սանդուղից, ինչպէս և այս ապուշ ծերունուն, որ այժմ ընկած է ձեր առաջ: Այո, այս բոլորը կարող է պատահել, եթէ դուք կը չմարանաք ու կապրէք մինչև ծերութեան Հասակը: Օ՛Հ, ո՜Հ. բայց սակայն չեմ կարող ոտքի կանգնել:

—Թոյլ տուէք, որ ես օգնեմ ձեզ, ասաւ Կլարան: Նա լապտերը վայր դրաւ գետնին և ձեռքը մեկնեց ծերունուն. Ալֆրէդն էլ շտապեց, օգնութիւն Հասաւ երկուսին և շուտով ծեր փիլիսոփան ոտքի կանգնեցաւ:

—Ո՛Հ, ասաւ նա:—Շատ, շատ շնորՀակալ եմ, տիկին, քեզ էլ, մատաղ: Մեծերին յարգելը, majores natu, աստուածներին Հաճելի է: Ես չը գիտեմ, թէ ինչ կը լինէր իմ Հալը, եթէ դուք չ'օգնէիք ինձ. անշուշտ ես գիշերը պէտք է անցկացնէի sub Sove frigido, այսինքն, սանդուղի վերայ, որովՀետև ես փորձով գիտեմ, որ մարդ չը պէտք է յոյս դնէ իւր նմանների

օգնութեան վերայ: Սակայն կան բացառութիւններ, շատ քիչ բացառութիւններ, բայց այնուամենայնիւ կան, այս պատճառով էլ նոքա մեծ գին ունին:

Նա խօսում էր խիստ շտապով, կակազելով և այնպէս շարժելով ձեռքերը, որ քիչ էր մնում նորից ցած գլորուէր: Նա թեք ընկաւ պատին, բայց Ալֆրէդը տուն վազեց և շուտով աթոռ բերեց նորան:

—ՇնորՀակալ եմ, փոքրիկ բարեկամս, puer egregia indole, ինչպէս ասում է քերականութիւնը: Ես օգուտ կը քաղեմ քո բարեսրտութիւնից և կը խնդրեմ որոնել իմ բանալին և մոմակալը, որոնք ինձ Հետ ցած թափուեցան:

—Հա՛, ուրեմն նոցա ձայնն էր որ լսեցինք, ծիծաղելով ասաւ տղան,—զնգ, զնգ. ես իսկոյն կը գտնեմ:

Ալֆրէդը վազէվազ ցած գնաց, իսկ նորա մայրը իրանց պաՀարանից բերեց փոքր ինչ խերէս և ջուր:

—Խմեցէք այս, պարո՛ն, ասաւ նա,—այդպիսի Հարուածից յետ սա շատ օգտակար է ձեզ:

—Դուք շատ բարեսիրտ էք, տիկին, արդարև, շատ բարեսիրտ էք. ես մինչև անգամ ուրախ եմ, որ ինձ այս փոքրիկ դժբաղտութիւնը պատաՀեցաւ, որովՀետև դա ինձ ցոյց տուաւ, թէ դեռ աշխարՀիս երեսին կան մարդիք, որոնք ընդունակ են կարեկցութիւն ցոյց տալ այնպիսի քայքայուած ծերունուն, որպիսին ես եմ: Ձեր և ձեր սիրելի որդու կենաց: Բարի զաւակները իրանց մայրերի փառքն են կազմում:

Ալֆրէդը վերադարձաւ ձեռքին բռնած բանալին, փլօրէնտինի դեղնապղնձից շինած մոմակալը և մի քանի կտոր եղած մոմը:

Ծերունին ինչպէս և իցէ վառեց բերած մոմը և մի կերպ ամրացրեց մոմակալի մէջ:

„Կը տեսնենք, թէ ինչպէս նա կը սղմէ մեր ձեռքը“—ասաց Ալֆրէդը ինքն իրան:

Բայց ծերունու մտքովն անգամ չանցաւ այս. նա բանալին դրաւ կողպէքի մէջ և յետ նայելով ասաց.

—Բարի գիշեր, տիկին, բարի գիշեր ձեզ, generose puer: Այլ ևս անհանգիստ մի լինէք, խնդրեմ: Հազար ներողութիւն անհանգստութիւն պատճառելուս համար և հազար շնորհակալութիւն ձեր բարութեան համար:—Եւ դուռը բաց չարաւ, մինչև որ տիկին Մօլլօյն չը մտաւ իւր սենեակը:

—Ա՛յ քեզ տարօրինակ ծերուկ, ասաց Ալֆրէդը ծիծաղելով:—Նա սպասում էր, որ մենք մտնենք, անշուշտ վախենում էր, թէ ներս կը թափուենք նորա սենեակը:

—Երևի նորան կեանքի մէջ շատ փորձանքներ են պատահել և հէնց այդ պատճառով այսպէս զգոյշ է նա. ծերերի մէջ շատ է պատահում այսպիսի դէպքեր:

—Այո, այո, գիտեմ. les vieux gens sont soupçonneux, ասում է ֆրանսերէն ընթերցարանը. ես այդ անգիր գիտեմ: Ա՛խ, ինչպէս եմ ուզում լատիներէնն էլ նոյնպէս իմանալ:

ԳԼՈՒԽ Թ.

ՊՐՕՖԷՍՍՕՐ ՊԱՍՍՄՕՐԸ:

Միւս առաւօտ Ալֆրէդը ուսումնարան գնալիս կանգնեցաւ ծերունու տան դռան մօտ և սկսաւ ականջ դնել: Բայց 'ի զուր. ոչինչ չէր լսւում և նա ստիպուեցաւ գնալ ուսումնարան առանց մի որ և է բան իմանալու իւր հարևանի մասին: Տուն վերադառնալիս—

այժմ նա միայնակ եկաւ—ամէնից առաջ հարցրեց ծերունու մասին:

—Ոչինչ չը գիտեմ, ասաց տիկին Մօլլօյն,—թէպէտ և ամբողջ օր տանից չեմ դուրս գնացել:

Ալֆրէդը ուզեցաւ գնալ և դուռը բաղխել, բայց տիկին Մօլլօյն թոյլ չը տուաւ, վախենալով, որ այսպիսով մի գուցէ ձանձրացնէ նորան: Վերջապէս նա սկսաւ վախենալ, թէ ծերունին հիւանդացած կը լինի, և թոյլ տուաւ Ալֆրէդին գնալ և իմանալ նորա դրութիւնը:

Ալֆրէդը կամաց բաղխեց. պատասխան չը կար: Աւելի ամուր բաղխեց. դարձեալ լռութիւն: Վերջը նա դուռը հրեց, ոչ թէ նորա համար, որ բացուի, այլ առաւելապէս բարկութիւնից և բացուեցաւ նորա առաջ մի մութ նախադաւիթ:

Չիմանալով թէ որ կողմ գնայ, նա տարակուսած կանգնած էր և արդէն ուզում էր յետ դառնալ, երբ յանկարծ մի բարձր ձայն հարցրեց „ո՞վ կայ“. և այսպիսով կենդանի մարդու ներկայութիւնը երևեցաւ: Ալֆրէդը գնաց այն կողմ, որտեղից լսել էր ձայնը:

Ծերունին պառկած էր շորով ծածկուած մի փոքրիկ մահճակալի մէջ: Սենեակը բաւական մեծ էր և գուցէ լոյս էլ լինէր, եթէ չը լինէին լուսամուտներից կախած խիտ սարդի ոստայնը և կեղտոտ վարագոյրները, որոնք այն աստիճան մուգ գոյն էին բռնել, որ կորցրել էին իրանց բնական գոյնը: Յատակը կարծես հարիւր տարի չէր աւելուած, իսկ գրքերը, որոնք մեծ քանակութեամբ դարսած էին թարեքների վերայ, միանգամայն ծածկուած էին թօզով: Վառարանի վերայ դրած էր ժամացոյցը, որի սլաքը, ինչպէս երևում էր տժգոյն ապակու միջից, կանգնած էր անշարժ: Այսպիսի անկարգութիւն Ալֆրէդը երբէք չէր տեսած:

—Ո՞վ է, նորից հարցրեց Ծերունին, կիսով չափ վերկենալով անկողնի մէջ։

—Ես եմ, ձեր հարեւանի տղան։ Տեսնելով, որ դուք այսօր տանից դուրս չ'եկաք, վախեցանք, որ մի գուցէ երեկուայ փորձանքի պատճառով հիւանդացած լինէք և մայրս ուղարկեց ինձ, որ իմանամ, թէ որ և է բանի կարիք հօ չունիք։

—Նա շատ քաղցր է դէպի ինձ, շատ քաղցր է, դու էլ, իմ փոքրիկ բարեկամս, նոյնպէս քաղցր ես դէպի ինձ։ Արդարև, ես ստիպուած եմ տանը մնալ։ Այսօր ես չը կարողացայ վերկենալ և մինչև թէթևութիւն զգամ պէտք է պառկեմ։ Ոչ մի տեղս վնասուած չէ, միայն ընդհանրապէս խիստ ջարդուած եմ։ Դէհ, բայց որովհետև նախաճաշս ինքն իրան չի գալ ինձ մօտ և որովհետև դու այդպէս առոյգ ու առողջ ես, այդպէս ամրակազմ ու քաջ մարմնով և հոգւով—mens sana in corpore sano,—ուստի ես խնդրում եմ քեզ կաթնամանս վերցնել, որ կը գտնես դրան ետև և չորս պէննի այն վառարանի վրայից. նոցանով կ'առնես ինձ համար կաթ, հաց և ուղեղից շինած ամլէճ, 'ի հարկէ եթէ մայրդ ոչինչ չի ասի դորա համար։

—Կ'երթամ և թոյլտուութիւն կը խնդրեմ։ Իսկոյն յետ կը դառնամ։

Բայց նա իսկոյն չը վերադարձաւ, այլ սպասեց, մինչև որ տիկին Մօլլօյն պատրաստեց մի աման արգանակ և կարկանդակ։ Յետոյ նա նորից մտաւ ծերունու սենեակը, հպարտութեամբ ձեռքին բռնած մի մաքուր ափսէ և մի աման տաք արգանակով։

—Մայրս թոյլ տուաւ, որ գնամ ուր որ կը ցանկաք, բայց նա կարծում է, որ սառը կաթը և ուղեղից պատրաստած ամլէճը ձեզ այնչափ օգտակար չեն, որքան որ տաք արգանակը. ուստի խնդրում է, որ ըն-

դունէք այս կերակուրը։ Տեսէ՛ք, արգանակը բոլորովին պատրաստ է։ Թողէք, ես ձեզ կ'օգնեմ։—Եւ պատասխանին չը սպասելով՝ Ալֆրէդը ափսէն դրաւ սեղանի վերայ, արգանակը լցրեց նորա մէջ և գդալ տուաւ ծերունուն։

—Ահա՛. բայց համբերեցէք բարձը ուղղեմ։ Չէ՞ք կարող շուռ գալ։ Ուրեմն ես ափսէն կը բռնեմ, որպէս զի դուք տեղից չը շարժուէք։

Ծերունին լուռ էր և տարակուսած։

—Ի՞նչ ակնկալութիւն ունին սոքա ինձանից, որ այսպէս պատւում են ու հոգում իմ մասին, մտածում էր նա և նայում տղային։ Լոկ այս հայեացքը բաւական էր նորա բոլոր կասկածները փարատելու համար։ Նա ձեռքը դէմ տուաւ անկողնին ու սով ընկած մարդու պէս սկսաւ ուտել արգանակը։

—Ես որքան ուրախ եմ, որ երեկ մոռացայ դուռը փակել, ասաւ նա կարճատև լռութիւնից յետոյ,—երևի ճակատագիրն է ուզեցել այդպէս—sic fata ferebant. Ասա քո մօրը, սիրելիս, որ նա ընդունէ իմ շնորհակալութիւնս։ Շնորհակալութիւն. մի հազուագիւտ բան մեր ժամանակը. սակայն միշտ այդպէս է եղել և պէտք է ենթադրել, որ այդպէս էլ կը լինի։ Ինչ և իցէ, բայց դու յայտնիր նորան իմ անկեղծ յարգանքս։

—Այժմ ուղեղից շինած ամլէճի փոխանակ ես ձեզ կատլէտ կը բերեմ։ Մայրս տասը րոպէի մէջ շինում է այն. գնում եմ բերելու։

Նա դուրս վազեց և մի տաս րոպէից յետ ծերունին կերաւ տաք և համեղ կատլէտ։

—Դուք ինձ կատարեալ որկրամոլ դարձրիք, ասաւ նա, երբ Ալֆրէդը խոհարար տղայի պէս անձեռոցը առաջը կապած ծիծաղաշարժ ձևով կանգնած էր նորա առաջ։

—Ես այսպէս ուտելու սովորութիւն չունիմ: Ա՜յս ինչ է. գինի էլ ես բերել: Քո կենացը. ենթադրում եմ, որ մի փոքր աւելի լաւ պէտք է դուրս գայ այն մարդկանցից, որոնք սովորաբար լինում են այս յիմար աշխարհում:

Ալֆրէդը ժպտաց. նա ոչ աշխարհը այդչափ յիմար էր կարծում և ոչ էլ մարդոց այդպէս վատ: Այժմ նա թողեց իւր ծերունի հարևանին և սկսաւ դասերը կրկնել:

Երեկոյին նա ընթրիք բերաւ ծերունուն: Սա առաւել լաւ էր թւում այժմ և այս անգամ աւելի սիրով ընդունեց նորան և առաւօտուանից աւելի ջերմ շնորհակալութիւն արաւ:

Տղան երկար չը սպասեց. նա պէտք է պատրաստէր իւր դասերը: Նստեց իւր գրասեղանի առաջ և ծանր ախ քաշելով բաց արաւ բառգիրքը: Տիկին Մօլլօյն էլ իւր ձեռագործը վեր առաւ և սկսաւ վերջացնել մի տեսակ վայրի թռչուն: Ալֆրէդը ուշադրութեամբ խորասուզուեցաւ լատիներէնի մէջ, երբ յանկարծ դուռը կամաց բաղխեցին: Նա վազեց բաց արաւ և . . . տեսաւ ծերունի հարևանին:

Վերջինս սովորականից աւելի զգուշութեամբ էր հագնուած. վրայից հագած համազգեստը, որ վերևից ներքև կօճկած էր, մաքուր սրբուած էր. վզին փաթթած ունէր սև մետաքսէ թաշկինակ, իսկ սովորական փէսկի փոխարէն գլխին ծածկած ունէր մի հնաձև բարձր գլխարկ:

Տիկին Մօլլօյն ողջունեց և առաջարկեց փափուկ բազկաթոռ, կարծելով, թէ փոքր ինչ կը նստէ:

—Ձեր շնորհիւ միայն ես այսօր վերկացայ անկողնից, պատասխանեց նա—և հասկանալի է ուրեմն, որ առաջին տեսութիւնս ձեզ պէտք է լինէր: Դուք

այստեղ խիստ լաւ էք տեղաւորուել, շարունակեց նա, նայելով չորս կողմը,—մինչև անգամ կարծես նոյն սենեակը չը լինի. ես սորան նոյնպէս ամայի դրութեամբ եմ տեսել, ինչպէս որ իմն է:

—Այս բոլորը մայրս կարգաւորեց, ասաւ Ալֆրէդը: Բոլորը դորա շնորհքն է, դա ամէն բան գիտէ:

—Տարաբաղդաբար ոչ ամէն բան, ասաւ նա. լատիներէն չեմ կարողանում սովորել:

—Լատիներէն, գոչեց ծերունին, դառնալով դէպի նա: Բայց ի՞նչ հարկ կայ ձեզ լատիներէն իմանալու:

—Որդուս կը սովորցնէի, որ նա յետին աշակերտը չը լինէր դասատան մէջ, դառնութեամբ ասաւ տիկին Մօլլօյն:

—Յետի՞ն. սա յետի՞նն է. չեմ կարծում: Չէ, տիկին, այսպիսի տղան կարող չէ յիմար լինել, մէկ աչքերին նայեցէք, խնդրեմ: Ծեր Պասմօրը լաւ խոտբաղիմաց է (physionomiste): Այս փոքրիկ գլուխը (այս միջոցին նա ձեռքը քսեց Ալֆրէդի գլխին) բոլոր կլասիկները հասկանալու ընդունակ է, սկսած „De Viris»ից մինչև Կիկերօնը, Հոմերոսն ու Դեմոսթենէսն էլ հետը: Ի՞նչպէս կարելի է ուրեմն, որ սա յետինը լինի: Գուցէ կամակոր է այդ:

—Ո՛հ, չէ, ամենևին կամակոր չէ, ասաւ Ալֆրէդը, արտասուք թափելով աչքերից: Ես ամէն բան, ինչոր կարելի է, անում եմ, բայց դարձեալ յետ եմ մնում և և ոչ մի կերպ չեմ կարողանում առաջ գնալ:

Կլարան չէր կամենում, որ իւր որդին անընդունակ համարուէր և սկսաւ բացատրել, թէ ինչ կերպով նա այդպէս յետ մնաց: Ծերունին գլխով համաձայնութեան նշան էր տալիս և վերջապէս նա մօտեցաւ սեղանին:

—Թոյլ տուր տեսնեմ վարժութիւններդ, բարե-

կամս: Մի անգամ ես հին լեզուների պրօֆէսսօր էի և կարծեմ որ բոլորովին մոռացած չը պէտք է լինեմ հին աշխատութիւններս: Դէ՜հ, տեսնենք: Բացատրիր այս բանը ինձ:

Այսպիսով խրախուսելով Ալֆրէդը նորից սկսաւ կրկնել այն երկար պարբերութիւնը, որ մի ժամ առաջ մեծ դժուարութեամբ թարգմանել էր:

Ծերունի պրօֆէսսօրը ամէն մի բառի վերայ կանգնեցնում էր նորան, պարզ ու արագ հասկացնում էր նորա նշանակութիւնը և այն ժամանակ միայն շարունակում էր, երբ համոզւում էր, որ տղան բոլորը հասկացել է:

Լատիներէնից յետոյ յունարէնն սկսեցին: Դասն աւարտելուց յետոյ՝ ծերուկը վերցրեց քերականութիւնը և հարցաքննեց Ալֆրէդին առաջին կանոններից: Ժամը տասն էր արդէն, երբ նա գիրքը վայր դրաւ ձեռքից:

—Սա վատ է պատրաստուած, բայց խիստ ընդունակ է, ասաւ հարևանը տիկին Մօլլօյին և ես կ՚աշխատեմ օգնել այդ բանին: Վաղը դասերից յետ ինձ մօտ արի, սիրելիս, միասին պարապենք: Դու իմ բացատրութիւնները հասկանում ես: Դէ՜հ, շատ լաւ: Ես քեզ վերցնում եմ իմ հովանաւորութեան տակ և խոստանում եմ, որ հետևեալ քննութիւնների ժամանակ այլ ևս յետինը չես լինի:

Կլարան զգալով իրան բաղտաւոր և սիրտ առած հատուկտոր շնորհակալութեան խօսքեր էր արձակում բերանից և ուրախութիւնից քիչ էր մնում որ լաց լինէր, իսկ Ալֆրէդը բոլորովին մոռանալով ձեռքին բռնած մոմը, ասաւ.—Օհ, պարո՛ն, ես զգում եմ, որ դուք ինձ նոր կեանք շնորհեցիք:

—Զարժէ դորա մասին խօսել, դաժան կերպով ասաւ պ. Պասմօրը և վերկացաւ տեղից:

—Եթէ դուք կարծում էք, որ ծերունի արջի համար կեանքը իւր մենաւոր որջի մէջ հաճելի է, ուրեմն հաւատացած կացէք, որ նա շատ ուրախ է, եթէ դէպք ունի մի որ և է բարի գործ գործելու: Իսկ այս դէպքը ուշ է պատահում մարդուն, տիկի՛ն, շա՜տ ուշ: Դուք շատ լաւ գիտէք, որ ամենաչնչին ազնուութիւն ունեցող մարդն անգամ չի կամենայ գործ ունենալ անպիտանների հետ. իսկ այսպիսիներ աշխարհում խիստ շատ կան: Բոլոր մարդկային սէրը այն թօկին անգամ չարժէ, որով հարկաւոր էր նորան կախել: Եւ եթէ երբէք յաջողի այդ աւազակների խմբի մէջ գտնել մի հազուագիւտ բացառութիւն, պէտք է երջանիկ և շնորհակալ լինել: Այսպէս ուրեմն, ցտեսութիւն, այսօր այսքանս բաւական է—sat prata biberunt:

Ծերունին գնաց: Ալֆրէդը մնաց իւր մօր հետ միայնակ:

—Օ՛հ, մայրիկ, որքա՜ն երջանիկ եմ, ասաւ նա, ընկնելով նորա գիրկը:

—Աստուած քաղցր աչքով է նայում մեզ վերայ, պատասխանեց տիկին Մօլլօյն, սեղմելով որդուն իւր կրծքին:

ԳԼՈՒԽ Ժ.

ՄԵՆՔ ԾԱՆՕԹԱՆՈՒՄ ԵՆՔ ԿՕՇԻԿ ՍՐԲՈՂԻ ՀԵՏ.

Այն փողոցներից մէկում, որտեղից անցնում էր Ալֆրէդը ուսումնարան գնալիս, կար մի ուսումնարան փոքրիկ տղայոց համար: Ամէն առաւօտ նա պատահում էր սոցանից շատերին մի ձեռքին գրքեր, իսկ միւսով ճաշի կողովը բռնած: Իրանց ճաշը նոքա հետները տանում էին այն պատճառով, որովհետև ամբողջ

օրը մնում էին ուսումնարանում: Երեկոյեան անցնելիս նա տեսաւ, թէ ինչպէս գոռում գոչումով այդ տղայքը դուրս եկան փողոցը, ուր նոցա սպասում էր մի ամբողջ խումբ պատռտուած շորերով փողոցային տղայք: Մեծ ու փոքր տղայք ու աղջիկներ, ամէնքն էլ ցնցոտիներով, նիհար, գունատ, տկար, ձեռք էին մեկնում և ողորմագին խնդրում.—մի կտոր հաց շնորհեցէք:

Եւ կողովները բացւում էին ու այն աշակերտները, որոնք բոլոր հացը կերած չէին, մի մի կտոր բաժանում էին սոված մանուկներին: Չնայելով, որ երբեմն հաց մնացած չէր լինում, բայց և պանիր կամ ուրիշ կակուղ ուտելիքն էլ խեղճերը ագահութեամբ էին կուլ տալիս. ամէն մէկը նոցանից աշխատում էր աւելի մեծ կտոր հաց դուրս բերել և ուշադրութիւն գրաւել, աղաղակելով.—ինձ. ինձ, պարոն, ես ամբողջ օրը ոչինչ չեմ կերել:

Նոցա մէջ կար մի տղայ, հասակով Ալֆրեդից քիչ փոքր, որին հազիւ երբեմն հասնում էր մի չնչին կտոր հաց: Բայց և այնպէս հէնց որ զանգի ձայնը իմաց էր տալիս, թէ ուսումնարանում պարապմունքը վերջացաւ, իսկոյն թողնում էր իւր խոզանակն ու նստարանը (նա կօշիկ սրբող էր) և կանգնում էր դռան մօտ: Բայց դուռը բացուելուն պէս նորա ուժեղ և հասակաւոր ընկերները յետ էին մղում նորան և երբ հաց բաժանելը աւարտւում էր, նա տխրած վերադառնում էր իւր տեղը: Ալֆրեդը յաճախ նայում էր նորան և նկատում էր, որ նա օրէցօր աւելի գունատւում է և նիհարում և ցանկանում էր մի բանով օգնել նորան: Փող առաջարկել չէր կամենում, որովհետև տղան ողորմութիւն չէր խնդրում, նա ունէր պարապմունք: Բայց մի անգամ, երբ Ալֆրեդը նկատեց, թէ նա մի պատառ հաց անգամ չը ստանալով՝ արտասուալից դէմքով դառնում

էր իւր տեղը՝ Ալֆրեդը չը կարողացաւ զսպել իրան և տուաւ նորան երեք պէննի:

—Շնորհակալ եմ, պարոն, ասաւ տղան և փոքրիկ աթոռը առաջ քաշելով դէպի Ալֆրեդը՝ խոզանակը վեր առաւ, որ նորա կօշիկը մաքրէ: Ալֆրեդը փոքր ինչ զարմացաւ, բայց մտածելով, թէ նա առանց վաստակելու չէ կամենում փողը վերցնել, թոյլ տուաւ, որ իւր կօշիկները մաքրէ, չնայելով աշակերտների ծաղրելուն, որոնք նորան անուանում էին հպարտ, պճնասէր և հարցնում էին, թէ մի՞ գուցէ այդ օրը ճաշի չինաց դեսպանի մօտ պէտք է լինի: Երբ կօշիկները մաքրած վերջացած էր, Ալֆրեդը կամաց կամաց հեռացաւ, նայելով, թէ փոքրիկ կօշիկ սրբողը կերթա՞յ հացավաճառի մօտ. բայց նա տեղից չը շարժուեցաւ:

Միւս օր Ալֆրեդը դարձեալ եկաւ: Առաջուայ պէս նա տեսաւ, թէ ինչպէս թշուառ տղան մօտեցաւ աւետեաց դռանը, ինչպէս նորան յե̄տ մղեցին և խեղճը ոչինչ չը ստացաւ: Այս բանից տխրած Ալֆրեդը ինքը գնաց հացատուն, հաց առաւ և բերեց տուաւ տղային:

—Օ՛հ, շնորհակալ եմ, տէր, ես խիստ սոված եմ, ասաւ նա և խեղճի աչքերը ուրախութիւնից սկսան փայլել:

Ալֆրեդը քիչ մնաց աղաղակէր, երբ տեսաւ, թէ որպիսի ագահութեամբ նա վրայ ընկաւ հացին:

—Մի՞թէ դուք այսօր ոչինչ չէք վաստակել, որ հաց չէք առել ձեզ համար, հարցրեց նա:

Տղան զարմացած նայում էր:

—Չեմ վաստակե՞լ. ո՜հ, չէ, վաստակել եմ տասն և չորս պէնս, բայց այդ փողը իմս չէ: Դա պատկանում է Գրէնւիլին և Մարթային: Խեղճ իմ Մարթա, նա ապէտակ հաց չունի: Ես քիչ կը պահեմ նորա համար և

երբ Գրէնինին նայելիս չի լինի՝ նա կուտէ: Ինձ այսքանն բաւական է, ահա քանի օր է, որ այսչափ էլ չէի ունեցել:—Եւ նա մնացածը դրաւ գրպանը:

—Ուրեմն, այն փողերը, որ դուք վաստակում էք, ձեզ չե՞ն պատկանում, հարցրեց Ալֆրէդը:—Բայց եթէ դուք ամբողջ օրը այստեղ էք լինում կանգնած, ուրեմն էլ ե՞րբ էք ճաշում:

—Ես տանից դուրս գալիս նախաճաշում եմ: Եթէ նախընթաց օրը շատ եմ լինում վաստակած, Գրէնինին տալիս է ինձ արգանակ. իսկ եթէ վաստակածս քիչ է լինում, միայն չոր հաց է տալիս: Երեկոյին գնում եմ և ընթրում, բայց ամբողջ օրը սարսափելի սոված եմ մնում: Ահա այս պատճառով խնդրում եմ աշակերտներից իրանց ուտելիքի մնացորդը. միայն շատ հազիւ է ձեռքս բան ընկնում. ուրիշները ուժեղ են ինձանից և յետ են մղում ինձ:

—Խեղճ տղայ, ուրեմն դուք ոչ հայր ունիք և ոչ մա՞յր:

—Հայրս մեռաւ. նա թիթեղագործ էր, կտուրից վայր ընկաւ ու մեռաւ—այն ժամանակ ես դեռ շատ փոքր էի: Մայրս մեռաւ, երբ ես չորս տարեկան էի: Ես յիշում եմ նորան, ո՜րքան սիրում էր նա ինձ . . . Այնուհետև ես ապրում եմ Մարթաի ու Գրէնինիի մօտ:

—Մարթան ո՞վ է:

—Մարթան իմ քոյրն է. նա շատ բարեսիրտ է և ես չափազանց սիրում եմ նորան: Նա էր հոգում իմ մասին, երբ ես շատ փոքր էի:

—Իսկ այժմ ինչ է շինում նա:

—Ա՜խ, նա հիւանդ է և պառկած անկողնում: Գրէնինին նորան շատ է հայհոյում և անուանում է ծոյլ, որովհետև նա այնքան թոյլ է, որ չէ կարողանում աշխատել: Նա երբեմն փորձում է գուլպաներ

կարկատել, բայց նստել չէ կարողանում: Այս պատճառով Գրէնինին ընթրիք չէ տալիս նորան:

Ալֆրէդը սարսափած էր: Կօշիկ մաքրող տղան խօսում էր այնպէս հանդարտ, որ կարծես այս բոլորը խիստ հասարակ բաներ էին և ձեռքը խփելով այն գրպանին, որի մէջ դրած ունէր հացը, ուրախ ուրախ աւելացրեց.

—Հը՛, այսօր նա պատուական ընթրիք կունենայ և սոված չի քնի:

—Իսկ դո՞ւք, հարցրեց Ալֆրէդը:

—Է՛հ, ինձ բաւական է: Որովհետև ես վաստակել եմ տասնեչորս պէնս, ինձ այսօր ընթրիք կը տան: Շնորհակալ եմ ձեզանից, տէր: Դուք անշուշտ երջանիկ էք. դուք շատ փող կ'ունենաք:

Ալֆրէդը գնաց դէպի տուն խորին մտածմունքի մէջ թաղուած.—Հարուստ եմ, ես հարուստ եմ... Այո, համեմատելով այն խեղճ տղայի հետ, որ այդպէս տանջւում է սովից, որ ստիպուած է այդքան ձախորդութիւններ տանել և որ չունի մի սիրող մայր, նորա հետ համեմատելով՝ ես հարուստ եմ: Նորա տատը զարհուրելի կին պէտք է լինի, մտածում էր Ալֆրէդը ինքն իրան:—Սակայն գուցէ նա էլ առողջ չէ և անշուշտ այնպէս պառաւ պէտք է լինի, որ աշխատելու կարողութիւն չը պէտք է ունենայ: Այս բանը ես կասեմ մօրս. բայց որովհետև նա առանց այդ էլ խիստ շատ է մտածում մեր ապրուստի մասին, ուստի փող չեմ ուզի նորանից: Չէ, աւելի լաւ է, որ ոչինչ չ'ասեմ:

Եւ, ճշմարիտ, նա ոչինչ չասաց. բայց տիկին Մօլլօյն զարմացած մնաց, երբ տեսաւ նորա դէմքի խորհրդաւոր արտայայտութիւնը, որ բոլորովին անսովոր դրութիւն էր նորա համար: Նա նկատեց, որ Ալֆրէդը վերջին ժամանակները այլ ևս չէր թափում ճաշից յե-

տոյ հացի կտորները, որոնցով սովորաբար նա կերակրում էր լուսամուտի մօտ հաւաքուող թռչուններին։— Ալֆրէդը տնտեսութիւն է անում, մտածեց նա։— Պէտք է գովել նորան խնայողութեան համար։

Սակայն նորա գովասանքը անսովոր կերպով ընդունուեցաւ։ Ալֆրէդը կարմրեցաւ, շփոթուեցաւ և վերջապէս խոստովանեց, որ բոլոր կեղևները աւելացնում էր իւր նախաճաշին, որ նա, շատ անգամ առանց ձեռք տալու, տանում էր փոքրիկ կօշիկ սրբող տղային. և պատմեց նորան ամէնը։ Հասկանալի է, որ այնուհետև թոյլ տուեցաւ նորան բաց աշկարայ տանել իւր սանին մի մեծ կտոր հաց, հետն էլ մի կտոր թարմ ու ընտիր պանիր։

Ցունվարի մի ցուրտ օր Ալֆրէդը իւր մօր հետ գնում էր ուսումնարանից։ Երբ նոքա մտան այն փողոցը, ուր կանգնած էր կօշիկ սրբողը, լսեցին բարձր ձայներ։ Նոքա շտապեցին առաջ և տեսան գոռում գոչում բարձրացրած ահագին բազմութիւն, որի միջից խիստ արագութեամբ դուրս վազեց մի շքեղ կառք. որա մէջ նստած էր Ռօբէրտը։ Աղմուկի պատճառով միայն քանի մի նախադասութիւն լսեցին նոքա.

—Խեղճ տղայ.

—Այս մեծամիտները ամենևին զգացմունք չունին։

—Ինչ որ խօսեց քթի տակ, հէնց կարծում է իւր փողերը ամէն ցաւին դարման կանեն։

—Ի՛նչ, նոքա մինչև անգամ նեղութիւն չը կրեցին իմանալու, թէ ինչ են արել։

Վերջապէս Ալֆրէդը կարողացաւ ճեղքել ամբոխը և անցնել։

—Ա՛խ, մայրիկ, աղաղակեց նա,—սա այն փոքրիկ կօշիկ սրբող տղան է. և վազելով նորա մօտ՝ բերեց նորան տիկին Մօլլօյի մօտ։

Խեղճ տղան բոլորովին թաթախուած էր արեան մէջ։ Նա նստած էր եղել իւր նստարանի վերայ, սպասելով թէ մի գործ գտնէ, երբ յանկարծ փողոցում մի կառք էր անցել, որ կառավարելիս էր եղել մի երիտասարդ պարոն և որ, ինչպէս երևում է, գործին ծանօթ չէ եղել ինչպէս հարկն է։ Այդ միջոցին խեղճ տղայի խողանակներից մինը վայր է ընկել ճանապարհին. Նա կամենալով վերցնել փոքր ինչ առաջ է վազել և պատահել է կառքին, որ ճանապարհից դուրս գալով վազելիս է եղել սալայատակի վերայ։ Անիւը դիպել էր նորա գլխին և չափազանց վիրաւորել էր ձեռքը։

Երիտասարդ պարոնը կամեցել է կանգնեցնել կառքը. բայց հետը նստած է եղել մի ուրիշ հասակաւոր մարդ, որ արգելել է նորան այդ և ասել է.

—Քեռին ձեզ է սպասում, այս սրիկան կարող է տասը շիլլինգի դեղ առնել և առանց մեզ լաւանալ.— և շպրտել է նորան տաս շիլլինգ ու ձիաները մտրակել։

—Ռօբէրտն է, մայրի՛կ, բարկացած ասաւ Ալֆրէդը։

Տ. Մօլլօյն սեղմեց վիրաւորուած տղայի ձեռքը։— Ինչքա՛ն է փոխուել, մտածում էր նա,—ո՞վ կը մտածէր այդ բանը։—Յետոյ նայեցաւ տղայի վէրքերին և ուշադրութիւն չը դարձնելով հետաքրքիր ամբոխին, որ զարմացած նայում էր, թէ ինչպէս մի պատուաւոր տիկին խնամում էր մի արհամարհուած աղքատին, տարաւ նորան շատրուանի մօտ, վէրքը լուաց և իւր թաշկինակով կապեց նորա ձեռքը։ Յետոյ տարաւ նորան դեղատուն։

—Այս խոնաւ վիրակապը շուտ շուտ պէտք է փոխել, ասաւ դեղավաճառը — և մի քանի օր ձեռքը պէտք է հանգիստ թողնել։

Տղան մեռածի պէս դեղնեց։—Գրէննին կը սպանէ

ինձ, գոչեց նա։—Ես չեմ կարող տանը մնալ պարապ։ Ո՛հ, 'ի սէր Աստուծու, առանց դորան բժշկեցէք ինձ։ Ինչ կամենաք արէք, միայն թէ թողէք որ աշխա-տեմ։

—Բայց, տղաս, ասաւ տիկին Մօլլօյն,—չէ՞ որ տաս շիլլինգ ստացար, տատդ անշուշտ թոյլ կը տայ, որ մի քանի օր տանը մնաս։

—Ա՜խ, հա՛, ես փողերը մոռացայ։ Բայց վաղը... տղան չաւարտեց իւր խօսքը։ Նա գլուխը թեքեց ու սկսաւ հեկեկալ։

—Ուզո՞ւմ ես ես էլ հետդ կը գամ, հարցրեց Կլարան։—Ես տատին կասեմ, որ դու մեղ չունես այս բանի մէջ։

Տղան տարակուսեցաւ։

—Տիկին, չարժէ անհանգիստ անել ձեզ. նա ձեզ կանպատուէ։ Ա՜խ, սակայն որքան կուրախանայ Մարթան ձեզ տեսնելու վերայ։

—Դէհ, ուրեմն գնանք տեսնենք Մարթային, ա-սաւ Կլարան և գնաց փոքրիկ կօշիկ սրբողի հետ, որ ձախ ձեռքով բռնեց իւր նստարանը, իսկ տասը շիլլինգը, որ գտել էր, այսպէս ասել, իւր արեան գնով, դրաւ գրպանը։

Ալֆրէդը ինքն իրան միտք էր անում մի լաւ վրէժն առնել պառաւ կնոջից, եթէ նա կը համար-ձակուի վիրաւորել իւր մօրը։ Նա նայեց իւր երկու բռնցքին, կարծես հաւաստիանալու նոցա ուժեղու-թեանը, որ սակայն դեռ ևս չէր փորձել։

Ճանապարհին կօշիկ սրբողը պատմեց, թէ նորա տատը վաթսուն տարեկան է և թէ նա պարապում է ներքնակներ ծախելով. որ նա ամէն օր գանգատւում է, թէ ինքը ստիպուած է թոռներին պահել, մանա-ւանդ հիւանդ Մարթային և առհասարակ ասում է,

թէ որովհետև նորա հիւանդութիւնը անբուժելի է, աւելի լաւ կը լինի, եթէ նա շուտով մեռնի։

—Բայց ես չեմ կարծում թէ այդպէս լինի, ասաւ տղան։—Ես կը ցանկայի, որ նա վերկենար, որպէս զի կարողանայի հոգս տանել նորա մասին. եթէ ես բա-ւականին փող ունենայի, նորա համար ամէն բան կառնէի, ինչ որ հարկաւոր է։ Երբ Գրէննին քնած է լինում, ես ու Մարթան խօսում ենք և նայում երկնքին։ Նա ինձ պատմում է, թէ Աստուած այն-տեղ է, երկնքում, աստղերի ետև. թէ նա տեսնում է ինձ և կը հոգայ իմ մասին, եթէ ես մեղք չը գործեմ։ Մարթան ասում է, թէ երբ նա կ'երթայ երկինքը, այնտեղից կը տեսնէ ինձ և թէ ես լաւ տղայ պէտք է լինեմ, որովհետև նա կը տեսնէ այնտեղից իմ բոլոր վատ գործերը, որոնք չեն թողնի, որ նա երջանիկ լինի դրախտի մէջ։ Ես նորան խոստանում եմ ամէն բան, ինչ որ ցանկանում է, որովհետև ես նորան շատ եմ սիրում, իսկ ինձ բացի նրանից ոչ ոք չէ սիրում։ Բայց թէ ես ինչ պէտք է անեմ, երբ նա կերթայ, այդ չը գիտեմ. դորա մասին ես շատ եմ մտածում, բայց ոչինչ չեմ կարողանում հասկանալ։

Ալֆրէդը սարսափեցաւ և նայեց մօրը, կարծես ու-զում էր տեսնել, թէ մի՞ գուցէ նա էլ հիւանդ է և պէտք է շուտով գնայ։ Տիկին Մօլլօյն հասկացաւ նորա միտքը և հանգստացնելու համար՝ սեղմեց նորա ձեռքը։

Կօշիկ սրբողը կանգնեց մի աղքատիկ տեսքով տան առաջ՝ մի խուլ և նեղ փողոցում։

—Շատ բարձր է, ասաւ նա, ցոյց տալով սան-դուղը։

—Ոչինչ, ասաւ տիկինը,—դու առաջ գնա, մենք էլ քո ետևից կը գանք։

Նոքա բարձրացան մի խոնաւ, լպրծուն, ցեխոտ և որդնակեր սանդուղի վերայից, որ նորանոր պտոյտներով բարձրանում էր վեր և կարծես ծայր չունէր:

Ալֆրէդի Ճակատը քրտինքով ծածկուեցաւ այն ապականուած օդը ծծելուց և այն խռպոտ աղաղակներից, որ լսւում էր ցեխոտ սենեակներից, որոնց մեծ մասամբ բաց դռները բացւում էին սանդուղի վերայ: Այս ապականութիւնը տեսնելով, նրանց պայծառ և ուրախ սենեակները, որոնք իւր մօր շնորհիւ փառաւոր դրութեան մէջ էին, այժմ թւում էին նորան իբրև մի ծաղկաւէտ դրախտ. մտածելով այն պայմանների մասին, որոնք շրջապատում են այս տան թշուառ բնակիչներին, նա համարեա ամաչում էր իւր բաղտաւոր կացութիւնից:

Փոքրիկ կօշիկ սըրոզը կանգնեց վերջապէս ամենավերին յարկում և բախեց դուռը, որ հազիւ էր կանգնած իւր ժանգոտ կոճակների վերայ:

—Ո՞վ է, հարցրեց մի կոպիտ ձայն:

—Ես եմ, տատիկ, բաց արէք դուռը:

—Ի՞նչ, դո՞ւ ես, Յակոբ, ծոյլ անպիտան, այս ժամանակ ի՞նչ գործ ունես այստեղ: Գնա՛ դարձեալ աշխատիր, թէ չէ իմ թերմաշ աւելով դուրս կանեմ քեզ, անպիտան ծոյլ:

—Բաց արէք դուռը, տատիկ, հետս մի տիկին կայ, դողալով խօսեց տղան:

—Դուռը շտապով բացուեցաւ և ծեր կինը երևեցաւ դռան շէմքում: Ալֆրէդը յետ քաշուեցաւ զզուանքից: Աղքատիկ հագուստը և տգեղ դէմքը չէր, որ զարթեցրին նորանում այս զգացմունքը: Նա շատ էր տեսել խեղճ ձկնավաճառ կանայք, մէջքները կռացած և դէմքերը հասակից և հիւանդութիւնից խօթացած. Նոքա գալիս էին խորհուրդ հարցնելու իւր հօր—բժշկի

մօտ. բայց այդ բոլոր ցնցոտիների մէջ նոքա պահպանում էին մի ազնիւ կերպարանք, որ յարգանք էր զարթեցնում դէպի նրանց ծերութիւնը, իսկ նոցա գլխներին մաքուր փաթաթած թաշկինակները այնպիսի գրաւիչ և կարեկցութիւն շարժող դիրք էին տալիս նոցա, որ Ալֆրէդը երբեմն ողջունում էր նոցա այս կերպ խօսքերով „բարի լոյս, մայրիկ“: Սակայն այժմ նորան ոչ մի կերպ չէիք կարող ասել տալ մայրիկ անունը առաջին կանգնած պառաւին: Սա հագած ունէր մի պատռտած, կեղտոտ շապիկ և մի կարճ վերնաշապիկ, որ կապած ունէր պարանով: Գլուխը զարդարած էր մի թերմաշ, երբեմն կարմիր, իսկ այժմ բոլորովին կեղտոտած թաշկինակով. այս գլխի փաթթանը ծածկած ունէր ամբողջ Ճակատը համարեա մինչև յօնքերը, որոնք խիտ կերպով կախ էին ընկած նորա փոքրիկ, թափանցիկ ու սև աչքերի վերայ: Բերանում երեք ատամից աւելի չունէր, իսկ երկայն հաստաջիլ ձեռքերը աւելների պէս դուրս էին ընկած թևքերի միջից:

Այս ախորժելի երևոյթը առաջ վայրենաբար նայեց Յակոբին, իսկ յետոյ դարձաւ տիկին Մօլլօյին և այդ միջոցին նորա ամբողջ դէմքը ծամածռուեցաւ մի քաղցր ժպիտով:

—Օ՛հ, պատուական, բարի տիկին, խոնարհ և կարեկցական ձայնով ասաւ նա,—արդարև մի բարի գործ է, որ եկել էք այստեղ մեզ խեղճերիս տեսնելու: Նայեցէք, ինչպէս աղքատ եմ ես. ես կարողութիւն չունիմ աշխատելու և դեռ երկու զաւակ էլ ունիմ կերակրելու: Ճշմարիտ է, ամէն մի քրիստոնեայ պարտական է օգնել ինձ:

—Ես բերել եմ ձեր թոռան, սառնութեամբ պատասխանեց Կլարան, որովհետև սորան հաճելի չը թուեցաւ պառաւի սուտ խոնարհութիւնը.—Խեղճի

վրայից կառք անցկացաւ, որից խիստ վիրաւորուեցաւ, բայց այնպէս էլ չէ, որ մի որ և իցէ վտանգ ունենայ:

Պառաւը կատաղի կերպով դարձաւ տղային.

—Դու, ծոյլ շրջմոլիկ, գոչեց նա,—չես կարողանում ինքդ քեզ պաշտպանել: Գիտութեամբ այդպէս ես արել, որ չ'աշխատես, մինչդեռ մենք այստեղ սովից մեռնում ենք: Ցիմար, կառքում մարդիկ չը կային նստած, պէտք է նոցա կանգնացնէիր և փոխարէնը փող պահանջէիր:

—Նոքա տաս շիլլինգ տուին ինձ, տատիկ, ահա բոլորը:

—Տաս շիլլինգ, գոչեց պառաւը, մի փոքր մեղմացած փողի անունը լսելուց, որ նա ագահութեամբ խլեց նորանից:—Տաս շիլլինգ. սա ի՞նչ փող է հացի, մսի, փայտի ու առհասարակ ամէն բանի այսպիսի թանգութեան ժամանակ:

—Նա մանաւանդ օղի, չը կարողանալով իրան զսպել՝ նկատեց Ալֆրէդը, որի հոտը զգացել էր նա այս յարգելի պառաւի մօտից: Իսկ սա, երևի թէ չը լսեց այդ նկատողութիւնը, շարունակեց:

—Բայց կարելի է նոցա գտնել և մենք նոցանից կը պահանջենք ինչ որ հարկն է: Դու չը հետևեցիր նոցա:

—Չը կարողացայ, շշնջաց խեղճ Յակովը:

Պառաւը ձեռքը բարձրացրեց, որ խփէ, բայց յիշելով որ տիկին Մօլլօյն այնտեղ է, փոխանակ խփելու ձեռքը տարաւ աչքերի մօտ և սկսաւ ուժով արտասուք հանել աչքերից, դառնութեամբ ողբալով իւր վիճակը:

—Ես կը գտնեմ կառքի տէրերին, ասաւ նորան Կլարան,—և կարծում եմ, որ վարձատրութիւն կը ստա-

նամ նոցանից ձեզ համար. բայց միայն երեխան տանը պէտք է մնայ, մինչև որ բոլորովին կը լաւանայ: Այստեղ մի շիշ գեղաջուր կայ, որով պէտք է թրջել ու կապել վէրքը. եթէ կամենում էք, որ ես խնամք ունենամ ձեզ վերայ, իւր ժամանակին դեղը փոխեցէք ու կապեցէք դորա ձեռքը:

—Օ՛հ, Մարթաս, իմ սիրելի Մարթաս կը կապէ ձեռքս, գոչեց Յակովը:

Կլարան յետ նայեց դէպի այն կողմը, ուստեղից լսում էր ձայնը և տեսաւ հեռու անկիւնում մի ծալովի մահճակալ, որի վերայ պառկած էր տասնեհինգ թէ տասնվեց տարեկան մի օրիորդ: Նա փոքր ինչ բարձրացաւ տեղից՝ Յակովի վիզը գրկելու համար և քնքշութեամբ համբուրելով նորան ասաւ.

—Խեղճ տղաս, ի՞նչ սաստիկ ես վիրաւորուել:

—Սա իմ թոռն է, ասաւ պառաւը, երբ Կլարայի դէմքի վերայ կարեկցական արտայայտութիւն նկատեց,—Սա այն հաստկումն է, որ կարող էր ինքը իւր համար ապրուստ գտնել, բայց հիւանդ է. բարակացաւ ստացաւ, որ, բժիշկների խօսքին նայելով, գերեզման պիտի տանէ սորան, այնպէս որ այժմ մի ծանր բեռն է դարձած ինձպէս մի խեղճ կնոջ համար:

Այս միջոցին մօտ եկաւ Յակովն ու ասաւ.

—Ներեցէք, տիկին, բայց Մարթան շատ ցանկանում է ձեզ մօտից տեսնել:

Կլարան տղայի հետ մօտեցաւ մատաղահաս օրիորդի անկողնին: Մարթան չէր խօսում. այլ նայում էր այցելու տիկնոջ իւր մեծ մեծ, բայց աղօտ, հանգած աչքերով. վերջապէս բռնեց նորա ձեռքը և սկսաւ համբուրել:

—Ի՞նչ է պատահել քեզ, աղջիկս, ասաւ Կլարան, աշխատելով ձեռքը դուրս կորզել նորանից:

—Խօսք չեմ գտնում ես ձեզ այնպէս շնորհակալութիւն անելու, ինչպէս հարկն է: Ո՜հ, որքան բարեսիրտ էք դուք, պատասխանեց Մարթան: Դուք հոգում էք իմ սիրելի փոքրիկ եղբօրս մասին, այդ բանը մինչև այժմ ոչ ոք չէ արել. ես նայում եմ ձեր դէմքին, որ կարողանամ յիշողութեանս մէջ պահել և որպէս զի յետոյ կարողանամ պատկերացնել իմ առաջ:

—Երանի՜ թէ կարողանայիք մի բան ստանալ մեզ համար բարեգործական ընկերութիւնից, մօտենալով նոցա աւելացրեց պառաւը: Ես շատերին գիտեմ, որոնք աւելի հարուստ են և այնտեղից նպաստ են ստանում. ընկերութիւնը արդարադատ չէ այդ մասին:

—Ես ընկերութեան չեմ պատկանում, ասաց տիկին Մօլլօյն,—բայց կ՚անեմ ձեզ համար այն, ինչ որ կարող եմ. միայն չը մոռանաք այն բոլորը, ինչ որ ասացի ձեզ տղայի վերաբերութեամբ. ես շուտով էլի կը գամ:

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԳՈՐԾԱԴՐԵԼԸ ԼԱՒ Է ԼՈԿ ԳՈՐԾԱԴՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒՑ

Հասկանալի է, որ Ռօբէրտը ոչ ոքի մօտ չէր պարծենում իւր առաւօտեան քաջագործութեան համար, սակայն փոքրիկ կառավարը, ուրախանալով խօսակցութեան առիթ գտնելու վերայ, ամէն բան մանրամասնաբար պատմեց ծառաներին. այսպիսով մինչև երեկոյ պ. Ջէստէրտօնի ականջին հասաւ, թէ իւր ազգականը կառքը քշել է, վիրաւորելով մի տղային և հազիւ հազ կարողացել է խոյս տալ իրան շրջապատող ամբոխից:

Քեռին զայրացաւ: Սեսիլիան մի քանի խօսք շշնջաց այդպէս արագ քշելու վնասակարութեան մասին, բայց պարոնը ընդհատեց նորա խօսքը և ասաց, թէ այդ բանը վտանգաւոր է միայն յիմարների և ապուշների համար. թէ շատ անախորժ բան է, որ Ռօբէրտը այդ հասակում մի փոքրիկ երկձի կառք էլ չէ կարողանում կառավարել, մինչդեռ Ամերիկայում նորանից շատ աւելի փոքր տղայք կարողանում են կառավարել ամբողջ քառաձի կառքեր և թէ, վերջապէս, նա ցանկանում է, որ իւր ժառանգը արժանի լինի իւր անուանը, և ոչ թէ խայտառակուի, ինչպէս մի կաթնակեր մանուկ: Բարեբաղդաբար յարգելի դաստիարակը ընդհատեց այս մենախօսութիւնը և պատմեց նորան գործի բոլոր հանգամանքը: Պարոն Ջէստէրտօնը փոքր ինչ զիջաւ բարկութիւնից և մի քանի տաք գովասանական խօսքեր ասաց Ռօբէրտի դաստիարակին:

—Ա՜յ սա այնուամենայնիւ խելօք մարդ է. սա չէր համաձայնի կառքը կանգնացնել, այնպէս որ այժմ վիրաւորուած երեխայի բարեկամները չեն ձանձրացնի մեզ վարձատրութիւն խնդրելով:

Երբ նա այս խօսքերն ասաց, ծառան մի նամակ բերեց Սեսիլիային, որ, երբ կարդաց, շատ կարմրեց:

—Այդ էլ ինչ բան է, հարցրեց պարոն Ջէստէրտօնը և պատասխանի չը սպասելով՝ խլեց նամակը Սեսիլիայի ձեռքից և կարդաց: Ազնուութիւն ասած բանը չը կար պարոնի առաքինական յատկութիւնների մէջ, և վերջապէս, նա գուցէ իւր սեպհականութիւն էր համարում այն ամէնը, ինչ որ կապ ունէր իւր ժառանգի, կամ նորա մօր հետ:

Տոմսակը Կլարայից էր. նա պարզում էր ամէն բան, ինչ որ գիտէր Ցակովլի վիրաւորուելու մասին և խնդրում էր իւր քոյրացեղից օգնելու փոքրիկ, կօշիկ

որբուղ, տղային, որ զրկուած էր աշխատելու կարողութիւնից մի քանի օրով: Ցնծելով նոյնպէս և նորա հիւանդ քրոջը՝ աւելացնում էր.

—Եթէ որ դու անձամբ կարողանայիր այցելել այդ թշուառ ընտանիքին և երբեմն երբեմն փող տալ, այդ աւելի լաւ կը լինէր, քան եթէ միանգամից մեծ գումար տաս, որովհետև ես շատ չեմ հաւատում պառաւին և զարմանք չէ, որ նա բոլոր փողը չէ թէ որդւոց, այլ իւր վերայ ծախսէ:

Պ. Չէստէրտոնը բարկութիւնից քիչ էր մնում տրաքուէր:

—Այնտե՞ղ գնաս, աղաղակեց նա, այնպէս ուժով շարժելով ձեռքը, որ Մօկօն, որը քնած էր նորա ծնկան վրայ, վայր թռաւ և փախաւ թաք կացաւ վարագուրի ետև:—Գնաս այն խեղճերի մօտ, որ այնտեղից ամէն տեսակ հիւանդութիւն հետդ բերես: Յոյս ունիմ, բարեկամ, որ ձեր խոհեմութիւնը թոյլ չի տալ ձեզ, որ գնաք այնտեղ: Վերջի վերջոյ ես տեսնում եմ, որ վիճակը առաւել խոհեմ կնօջն է ընկել. իսկ այն խելացնորը ոչինչ հասկացողութիւն չէ ունեցել կեանքի մասին: Ես հեթանոս չեմ, ես քրիստոնեայ եմ, յոյս ունիմ (արդեօք նա չէ՞ սխալւում, իմ մատաղ ընթերցողներ)—ես գիտեմ, որ հարուստները պէտք է օգնեն աղքատներին, բայց ամէն բան էլ մտածելով պէտք է լինի: Ուղարկեցէք նորան փող, լսո՞ւմ էք, հէնց իսկոյն ուղարկեցէք. թող նա ինքը բաժանէ և հիւր գնայ այն աղքատների ոջը. բայց գրեցէք նորան, որ չը համարձակի նոցա իմ հասցէս յայտնել, հասկացա՞ք:

Երբ այս տեսարանը կատարւում էր հարուստ տանը, Ալֆրէդն ու նորա մայրը նստած էին իրանց սենեկում վառարանի առաջ և սպասում էին պարոն Պասմօրի սովորական այցելութեան: Բնական է, որ

նոցա խօսակցութեան առարկան փոքրիկ՝ կօշիկ մաքրողն էր:

—Ո՞րքան անբաղդ է նա, մայրիկ. խեղճ, միակ մի քոյր ունի, որ սիրում է իրան, նա էլ շուտով կը մեռնի: Մի՞թէ ոչինչ չէ կարելի անել նորան ազատելու համար: Նա շատ գրաւիչ դէմք ունի. ես նորան միայն հեռուից տեսայ և անշուշտ մօտ կերթայի հետը խօսելու, եթէ այն պառաւը չը լինէր: Անկարելի բան է, որ այդպիսի չար կինը նոցա տատը լինէր. գուցէ նա գողացել է այդ երեխայոց, որովհետև կարելի՞ բան է թոռների հետ այդպէս վարուել:

—Ես այժմ քեզանից աւելի չը գիտեմ նոցա մասին, սակայն շուտով մենք աւելի մանրամասն տեղեկութիւններ կունենանք: Ես բոլոր անցքը պատմեցի պարոն Պասմօրին և նա խոստացաւ իմանալ այն ամէնը, ինչ որ կարելի է:

Այդ րոպէին զանգը քաշեցին:

—Ահա ինքն էլ եկաւ, գոչեց Ալֆրէդը, վազելով դուռը բանալու:

Յիրաւի, եկողը պարոն Պասմօրն էր, որ իսկոյն մտնելուն պէս գրպանից յիշատակարանը հանեց ու տուաւ.

—Տիկի՛ն, ահա այն տեղեկութիւնները, որոնք ձեզ հարկաւոր են: Այրի Գրէննի Գարնէտը պարապում է բուրդ գզելով. նա շատ վատ վարք ու բարքի տէր է և շատ քիչ է աշխատում, իսկ չափազանց խմում է: Նորան օգնում են մի քանի բարեգործական ընկերութիւններ, որովհետև նա ասում է, թէ պէտք է պահէ իւր երկու թոռներին. բայց իսկապէս ամենևին չէ հոգում նոցա մասին և բանից դուրս է գալիս, որ նոքա են իրան պահում և ոչ թէ ինքը նոցա, որովհետև նոքա իրանից աւելի շատ են վաստակում. ողորմու-

թևն էլ երեխայոց պատճառով են տալիս նորան:

—Միթէ չիրաւի նոքա պառաւի թոռներն են, աղաղակեց Ալֆրէդը:

Ծերունի Պասսմօրը դառնութեամբ ժպտաց.

—Հա՛, ես գիտեմ թէ ինչու ես հարցնում դու այդ բանը, պատանեակս. դու կարծում ես, որ ամէն մայր քո մօր նման է: Սխալւում ես, բարեկամ, սխալւում ես. Հազարի մէջ մէկը դուրս չի գալ մօրդ պէս— rara avis. աշխարհումս բարբարոս մայրեր աւելի շատ կան, քան խելապէս լաւ ծնօղներ, ահա բանն ինչումն է, Ալֆրէդ:

—Է՛հ, էհ, էհ, պարո՛ն, աղաղակեց Կլարան,— դուք երևի նկարագրում էք բոլոր մայրերին նոյն իսկ Մէդէայից (*) սկսած: Ներեցէք, որ ես չեմ հաւատում, թէ չիրաւի դուք այդքան բարկացած էք ամբողջ մարդկութեան վերայ. դուք ինքներդ ձեր բոլոր ժամանակը ուրիշներին օգնելով չէք անցկացնում. ուրեմն ինչ էր պատճառը, որ աշխատեցիք այն խեղճերի մասին այսքան տեղեկութիւններ հաւաքել:

—Հը՛, հը՛, սկսաւ պարոն Պասսմօրը,—թողնենք այս խօսակցութիւնը: Հա՛, բժշկին տարայ նոցա տուն: Մարթա Գարնէտը տասնևվեց տարեկան է միայն, բայց արդէն թունդ բարակացաւ ունի, այնպէս որ յոյս չը

(*) Մէդէա. Կողքիսի թագաւորներից մէկի աղջիկը, հրաշակաւոր վհուկ հին ժամանակ, որ օգնեց Արգոնաւորդաց առաջնորդ Յասոնին ոսկեգեղմը կախարդական հնարքով յափշտակելու և ամուսնացաւ նորա հետ: Երբ նա թողեց իրան, ինքը իւր ձեռքով մորթեց նորանից ունեցած իւր բոլոր զաւակներին և օդաթռիչ կառքով փախաւ Աթէնք:

Ծ. Հ. Թ:

կայ դոնէ կարճ ժամանակ տեղից վերկացնելու. խեղճ աղջիկ: Սակայն, շատ չի տանջուի, նա շատերից երջանիկ է. ինչ պէտք է տեսնէ նա այս աշխարհում:

Ոչ ոք մի ձայն չը հանեց և ծերունին շարունակեց.—Ես խօսեցի ոստիկանական վերատեսչի հետ Յակոբ Գարնէտի մասին: Այժմ նա լաւ տղայ է, գոնէ ոչ ծոյլ է և ոչ գող. բայց լաւ հետևանք չի ունենալ, եթէ այն պառաւի վատ օրինակը երկար ժամանակ աչքի առաջ կունենայ: Պէտք է նորա ճանկերից դուրս խլել տղային և մի բան սովորցնել նորան: Բայց ինչպէս անենք այս. կան մարդիք, որոնց ինքը բաղտը ստիպում է որ վատ լինեն. և վերջապէս այդ մեր գործն էլ չէ:—Հայդա, տղա՛ս, գործդ ցոյց տուր:

Պէտք է խոստովանենք, որ Ալֆրէդի միտքը այս անգամ շատ ցրուած էր և որ առանց պրօֆէսօրի օգնութեան դժուար թէ կարողանար մի բան շինել: Հէնց որ պարապմունքը աւարտեցին, սանդուղի կողմից մեծ աղմուկ լսուեցաւ:

—Այս անգամ արդէն ես չեմ գլորւում, ծիծաղելով ասաւ Պասսմօրը:

—Այսպէս ուշ ով պէտք է լինի, մտածեց Ալֆրէդը և հետը բացաւ դուռը:

Ներս մտաւ նշանազգեստ հագած մի ծառայ:

—Տիկին Մօլլօյն այստեղ է կենում, հարցրեց նա ծանրութեամբ:

—Մայրս է, ասաւ Ալֆրէդը, գլխով ցոյց տալով իւր մօրը:

Ծառան այն աստիճան խոնարհեցաւ, որ քիչ էր մնում գլխարկը վայր ընկնէր գլխից:

—Ձեզ նամակ եմ բերել տիկին Լիտտլտօնից, տիկին: Գազը շատ վաղ են հանգցրել ձեր սանդուղի վերայ և ձեր դռնապանը շատ ծոյլ է, շարունակեց նա թափ-

տալով իւր կապոյտ Թղթէ անդրավարտիքը, որից երեւում էր, թէ նա ցած էր գլորուել սանդուղից:

Կլարան ոչինչ չը պատասխանեց այս նկատողութեան, այլ կարդալով իւր ազգականուհու նամակը, շտապով մի քանի խօսք գրեց այցատոմսի վերայ և տուաւ ծառային:

—Տուէ՛ք այս տիկին Լիտալտոնին. տղաս լոյս կը տայ ձեզ սանդուղի վերայ:—Եւ ձեռքի նշանով արձակեց նորան:

—Սակայն սա շատ հպարտ է եղել. և ես կարծում եմ, որ միշտ այսպէս բարձր չէ ապրել սա, ցած գնալիս մրմնջում էր ծառան:

—Ի՞նչ, լա՞ւ բան է, մայրի՛կ, հարցրեց Ալֆրէդը, երբ դարձաւ և դուռը փակեց:

—Նա ինձ ուղարկել է հինգ ֆունտ ստերլինգ մեր խեղճ բարեկամի համար և յանձնել է ինձ տնօրինել, ինչպէս արժան կը դատեմ:

—Ես կարծում եմ, որ նա ինքն էլ կարող էր գնալ նոցա մօտ, մրնջաց ծերունի Պասմորը:

—Օ՛հ, ինչ լաւ բան է, աղաղակեց տղան,—վաղը մենք կերթանք նոցա մօտ, ճշմարիտ չէ՞:

—Այո՛, եթէ միայն դասերդ լաւ կը պատրաստես: Այսօր կարծես մի առանձին մտադրութեամբ չես պարապել:

—Ճշմարիտ է, բայց շուտով կ՚իմանամ, ահա կը տեսնէք:

Եւ իրաւ, նա շուտով պատրաստեց դասերը. իսկ երբ նոցա հարևանը գնաց տուն և Ալֆրէդը պառկեց քնելու, նորա մայրը, որ միւս սենեկում աշխատում էր, լսեց, որ նա պտոյտ էր գալիս անկողնում և երկար ժամանակ չը կարողացաւ քնել: Վախենալով, թէ մի՛ գուցէ հիւանդ լինի, մտաւ նորա մօտ:

—Ի՞նչ է պատահել, որդի՛ս, համբուրելով հարցրեց նորան:

—Հարուստ մարդիկ շատ երջանիկ են, որովհետև նոքա աղքատներին շատ փող կարող են տալ, հառաչելով ասաւ նա:

—Իսկ մե՞նք, վրայ բերաւ տիկին Մօլլօյն.—մի՞թէ մենք ոչինչ չենք կարող տալ նոցա:

—Ես երբեմն երբեմն հաց և երկու պէնս փող եմ տալիս, բայց դա ի՞նչ բան է:

—Բայց, ազնիւ Ալֆրէդս, լաւ յիշողութիւն չունիս. մտածի՛ր փոքր ինչ—մի՞թէ քո ամենալաւ զուարճութիւնները փողո՞վ ձեռք բերիր: Մերձաւորին կարելի է նպաստել զանազան և խիստ շատ տեսակ միջոցներով. երբեմն մի կարեկցական հայեացք կամ մի քաղցր խօսք շատ աւելի թանգ արժէ փողից: Յիշի՛ր առաքեալի խօսքերը տաճարի դրանը նստած կաղին. „ոսկի և արծաթ չունիմ, բայց ինչ որ ունիմ՝ տալիս եմ քեզ„—և հիւանդը առողջացաւ: Նոյն օրը, երբ դու այնպէս անձնուրացութեամբ թոյլ տուիր, որ Յակովբը կօշիկներդ մաքրէ, վախենալով, թէ մի՛ գուցէ ողորմութեամբ ստորացնես նորան, աւելի մեծ վարձք արիր, քան իմ բարեկամ Սեսիլիան, իւր ուռած փքած ծառայի ձեռքով այժմ այս, նոցա համար ոչինչ արժէք չունեցող, հինգ ֆունտ ստերլինգի դրամատոմսն ուղարկելովը:

Ալֆրէդը փաթաթուեցաւ իւր մօր վզին:

—Օ՛հ, մայրի՛կ, մայրի՛կ. ինձ համար այնպէս սովորական են դառել քո բարութիւնները, որ չեմ էլ գնահատում, ինչպէս որ հարկն է: Դու հոգացիր խեղճ Յակովբի մասին. դու չամաչեցիր նորա վէրքը լուանալ փողոցի աւազանում, ահագին բազմութեան առաջ. դու նորան տարար տուն, որպէս զի 'ի զուր տեղը չը ծեծէ նորան իւր չար տատը: Այո՛, ես այժմ հասկա-

նում եմ, որ իսկ և իսկ այս է ողորմութիւնը: Դու ինձ կօգնես, որ ես էլ մի բանով օգտակար լինեմ խեղճ Յակովբին ու Մարթային, այդպէս չէ՞: Ա՜խ, արդարև, կեանքը երբեմն տխրալի է: Գուցէ պարոն Պասսմօրը ճշմարիտ է ասում: Եթէ Մարթան այդպէս ջահել մեռնի, էլ ինչ օգուտ ուրեմն, որ նա կեանք ունեցաւ:

Տիկին Մօլլօյն բոլորովին ծանրութեամբ նայում էր որդուն:

—Այժմ ես ոչինչ չեմ տալ քեզ, սիրելիս, բայց շուտով մենք կերթանք Մարթայի մօտ և գուցէ այն ժամանակ կը համոզուես, որ Աստուած 'ի զուր չէ պարգևել նորան նոյն իսկ այդ սակաւ տարիներն էլ:

ԳԼՈՒԽ ԺԲ.

ՈՐԲԵՐ

—Գնա՞ւմ ենք Մարթաի և Յակովբի մօտ, հարցրեց Ալֆրէդը, վերադառնալով ուսումնարանից և մտնելով այն սենեակը, ուր նորա մայրը ինչ որ շոր էր փաթթթում և կապում:

—Այո և հէնց այժմ. գլխարկս թող ծածկեմ: Այս կապոցը պէտք է դու տանես:

—Իսկ մէջն ինչ կայ, կարելի՞ է տեսնել: Ա՜խ, այս իմ հին կինամոնագոյն վերնազգեստս է:

—Սա արդէն փոքր կը լինի քեզ, երբ մենք սևերը կը փոխենք. կը տանենք Յակովբի համար, հետն էլ հին գուլպաներն ու շապիկները:

—Ուրեմն էլի մի քանի բան կարող ենք տալ նորան, օրինակ, իմ հին գորշագոյն անդրավարտիքը, կապոյտ բաճկոնակը, վերնազգեստը....

—Ոչ, չի կարելի. տատը կարող է այդ բաները ծախել, և հէնց այդ պատճառով ես էլ ճիշտ այնքան եմ վերցրել, որքան հարկաւոր է Յակովբին հագնելու համար. դեռ տեսնենք, գործ կածէ՞ նա այդ շորը թէ ոչ: Այստեղ կայ նոյնպէս մի քանի կապ նորա ձեռքերը փաթթելու համար և հագնելիք՝ Մարթայի համար: Առ այժմ այսքանս բաւական է:

Ալֆրէդը կապոցը ուսին դրած քաջութեամբ տանում էր, չը նայելով փողոցային տղայոց ծաղրելուն, որոնք զայրացնելու համար առաջարկում էին նորան կառք վարձել իւր ծանրոցը բարձելու համար:—Բոլորն այս է, ինչ որ կարող եմ տալ, ասում էր նա ինքն իրան,—ես ոչ ոսկի ունիմ և ոչ արծաթ. մինչև անգամ այս բաներն էլ իմը չեն,—և նա շատ ուրախ էր, որ իւր հպարտութիւնը զոհում էր մի բարի գործի համար:

Նորա սիրտը սկսաւ աւելի թունդ բաբախել, երբ հասաւ ամենավերին յարկը մութ սանդուղի ծայրին և բաղխեց այրի Գարնէտի տան դուռը, որ ամենևին չէր տրամադրուած բարեգործութեան:

—Ներս եկէք, լսուեցաւ մի ցած ձայն և Ալֆրէդը դուռը բաց արաւ:

Նոքա մտան ներս թէ չէ, Մարթաի աչքերի մէջ լոյս ցոլաց և երեսը այնպէս ուրախ ժպտաց, որ տղան համոզուեցաւ, թէ մինչև անգամ առանց փողի էլ կարելի է զուարճութիւն պատճառել խեղճ մարդկանց:

—Օ՛հ, տիկին, որքա՜ն բարեսիրտ էք — դարձեալ եկել էք ինձ տեսութեան, ասաւ նա,—Յակովբը լաւ է, բայց դեռ չէ կարողանում խօսանակ բռնել: Տատս տանը չէ:

—Բարև ձեզ, սիրելիս. տեսնեմ հիւանդին, նորա ձեռքի համար դեղ եմ բերել:

—Շնորհակալ եմ, տիկին: Ահա ձեր և ձեր որդու

թաշկինակները. ես լուացի և ցամաքացրի անցեալ գիշեր։

—Ի՞նչպէս, անկողնո՞ւմ։

—Այո, ինչ վնաս ունի։ Յակոբը թասով տաք ջուր և սապուն բերեց. յետոյ ողորկիչ ու տախտակ տուաւ. ես միայն ստիպուեցայ ծունկ չոքել և այդ պատճառով էլ դոքա շատ լաւ դուրս չեկան. յոյս ունիմ, որ կը ներէք ինձ։

—Շատ շնորհակալ եմ, զաւակս. բայց միայն ուղիղ եմ ասում, որ 'ի զուր էք նեղութիւն տուել ձեզ. այդ բանը ծանր է ձեզ համար։ Այսօր ի՞նչպէս էք զգում ձեզ։

—Չը պէտք է տրտնջալ, շատ լաւ եմ։ Ես գիտեմ, որ առանց տանջուելու չը պէտք է մեռնեմ, բայց, գոհութիւն Աստուծոյ, դեռ չեմ կարող ասել, թէ խիստ եմ տանջւում։

—Ձեր բնակարանը այստեղ շատ վատ է, ասաւ Կլարան, նայելով ճղճղած պատերին ու դռներին և կոտրուած լուսամուտներին, որտեղից ահագին հոսանքներով մտնում էր ցուրտը։

—Մարթան լաւ չը հասկացաւ նորա միտքը և կարմրեցաւ։

—Այստեղ մեծ անկարգութիւն է տիրում, վրայ բերաւ նա։—Բայց ես ինչ որ կարող եմ այն եմ անում։ Ամէն անգամ, երբ կարողանում եմ փոքր ինչ տեղից վերկենալ, հաւաքում եմ բոլորը և ստիպում եմ Յակոբին, որ առաւօտները յատակը սրբէ, եթէ տատս շատ վաղ չէ ուղարկում նորան։

—Ես այդ չեմ ասում, ընդհատեց Կլարան,—այլ կարծում եմ, որ ձեզ համար այստեղ շատ ցուրտ է և խոնաւ. ձեր տատը պառաւ է և զբաղուած, իսկ եղբայրդ շատ փոքր է, այնպէս որ ոչ ոք չունիք խնամող։ Իմ կարծիքով կարելի էր ձեզ հիւանդանոց տանել, ուր շատ լաւ են հոգում և...

Յակոբը, որ շփոթուած ականջ էր դնում Կլարային, այս խօսքերի վերայ պինդ գրկեց քրոջը, կարծես ուզում էր բռնել նորան, եթէ նա կամենար տեղից վերկենալ և աղաղակեց.

—Հիւանդանոց. օհ, մի գնար այնտեղ, մի թողնիր ինձ այստեղ։ Ես քեզ խոստանում եմ, որ ինչպէս խնդրել ես ինձ, քաջ լինեմ, երբ դու կերթաս երկինքը, բայց ինձ մի թողնիր հիւանդանոց գնալու համար, մի թողնիր ինձ միայնակ, մինչև որ Աստուած չէ խլել քեզ ինձանից։

—Դուք, տիկին, տեսնո՞ւմ էք, որ հիւանդանոցը լոկ նոցա համար է, որոնք բարեկամներ չունեն. ես չեմ կարող թողնել սիրելի եղբօրս. երբ ես մեռնեմ, այնուհետև ոչ ոք չի տալ նորան ազնիւ և բարի խորհուրդներ և միայն գուցէ իմ յիշատակը կը կարողանայ ազատ պահել նորան չար գործերից։

Նա իւր նիհար ձեռքերը դարսեց եղբօր ուսերին, որը այնպէս կպել էր նորան, կարծես ուզում էր պաշտպանել աներևոյթ թշնամու դէմ, որ երբ սպառնում էր կեանքը խլել նորանից։ Ալֆրէդը տխրութեամբ նայում էր դոցա. նորա բարի սիրտը համարեա նոյնքան էր տանջւում, որքան և Յակոբինը։ Բայց նա այժմ այլ ևս չը հարցրեց, թէ ինչու էր Մարթային կեանք պարգևած այս աշխարհիս մէջ։

—Պէտք է յուսալ, որ գարնանը լաւ կը լինէք. ձեր հասակում միշտ յոյս կայ առողջանալու։ Ես ձեզ և եղբօրդ համար քանի մի կտոր տաք շոր եմ բերել, բերել եմ նաև փող երեխային վիրաւորող կառքի տիրօջից։

—Օ՛հ, տիկին, որքան բարեսիրտ էք. ես հաւա-

տացած եմ, որ դուք մեր փոխարէն խնդրել էք. բայց բոլորը միասին մի՛ տաք մեզ, ապա թէ ոչ շատ շուտ կը ծախսուի:

Յետոյ աւելացրեց նա ցածր ձայնով.

—Տատս շատ պառաւ է և շատ գործ ունի. բացի դրանից նորա խելքն էլ բոլորովին տեղը չէ,—փող տուած ժամանակ նա միշտ գնում է գինետուն, որտեղից խմած հարբած է տուն գալիս: Այդ ժամանակ սովորաբար ծեծում է Յակովբին և ես հալ չեմ ունենում դորան պաշտպանելու—և այդպիսի դէպքերից յետոյ ես միշտ վատ եմ զգում ինձ:

—Հասկանում եմ ձեր ասածները, ասաւ Կլարան, նորա ձեռքը սեղմելով,—ես նորան քիչ քիչ կը տամ և խոստանում եմ ձեզ, որ կը հոգամ եղբօրդ մասին, երբ...Սակայն ես կարծում եմ, որ այդ դեռ ուշ կը լինի:

Մարթան վերառաւ նորա ձեռքը և դառն շնորհակալութեամբ համբուրեց:

—Օ՛հ, տիկին, ես միշտ յոյս եմ ունեցել, որ Աստուած չի թողնի մեզ: Ես շատ էի աղօթում և սպասում էի, որ հրեշտակը կը գայ մեզ օգնելու այնտեղից—և նա ցոյց տուաւ երկինքը, որի մի փոքրիկ կտորը երևում էր նորա անկողնից աղօտ ապակու միջից:—Հրեշտակն եկաւ—այդ հրեշտակը դուք էք:

—Ես մի հասարակ մահկանացու մարդ եմ, սիրելի Մարթա, անում եմ միայն այն, ինչ որ կարող եմ: Սակայն ի՞նչպէս էք ժամանակ անցկացնում, երբ որ Յակովբը տանը չէ լինում:

—Գուլպայ եմ գործում, երբ միայն գործելիս ցաւ չեմ զգում, իսկ երբ չեմ կարողանում գործել, ուղղակի մտածում եմ:

—Ոչ մի գիրք չունի՞ք, որ կարողանաք կարդալ:

Մարթան կարմրեց:

—Ես կարդալ չը գիտեմ, տիկին: Սկզբում, երբ մայրս մեռաւ, ստիպուած էի խնամել եղբօրս, իսկ երբ սա մեծացաւ, այն ժամանակ էլ ես հիւանդացայ, ուստի և ժամանակ չունեցայ ուսումնարան գնալու: Բայց երբէք ձանձրութիւն չեմ զգում: Մտածում եմ, նայում եմ երկինքին, նորանում անցնող ամպերին, որոնք գեղեցիկ կերպով փոխում են իրանց ձևն ու գոյնը. շատ անգամ աշխատում եմ ինձ պատկերացնել, թէ ինչ կայ նորա ետևը: Երբ գիշերը քունս չէ տանում, սիրում եմ աստղերին նայել. նոքա մէջ այնտեղից են երևում և կամաց կամաց անցնում են միմեանց մօտից, կարծես ասում են միմեանց. բարի գիշեր, Մարթա. արխայնի՛ր, շուտով մեզ մօտ կը լինես: Նոքա անյայտանում են միայն այն ժամանակ, երբ լուսանում է և այն կողմից երկինքը դառնում է վարդագոյն. և լուսանում է: Տեսա՞ք, տիկին, որ ես ոչ ցերեկը և ոչ գիշերը միայնութիւն չեմ զգում:

Հէնց որ նա խօսքը վերջացրեց, դուռը յանկարծ բացուեցաւ և ներս մտաւ այրի Գարնէտը, օրօրուելով և երեսը կարմրած:

—Յակո՛վբ, գոչեց նա խռպոտ ձայնով,—այստեղ ի՞նչ ես շինում: Գնա բանի՛ր, ծոյլ անպիտան: Հա՛, դու համարձակւում ես այստեղ նստել ձեռքերը ծալած, երբ ես եզան նման աշխատում եմ ձեզ համար:

—Տատի՛կ, ասաւ Մարթան,—դուք գիտէք, որ Յակովբը հիւանդ է և բանել չէ կարող: Տիկինը լաւ լուրեր է բերել մեզ համար:

—Օհ, այստեղ մարդ է եղել: Ա՛խ, սիրելի տիկին, Աստուած թող օրհնէ ձեզ: Մենք այսօր ընթրիք անգամ չունենք...

—Ուրեմն ի՞նչ եղաւ այն տասը շիլլինգը, որ երէկ

Յակովբը բերեց, խիստ կերպով հարցրեց տիկին Մօլլօյն:

—Ծախսեցի, տիկին: Մենք պարտք ունէինք և վճարեցի, որովհետև ես ազնիւ կին եմ. ես չեմ ցանկանում ձրի ուտել հարևաններիս հացը. երեխայոց պահելն էլ շատ թանգ է նստում, — հաւատացէք թանգ է նստում, սիրելի տիկին:

—Ես ինքս էլ կարծում եմ, որ սոքա մի խիստ ծանր բեռ են քեզ համար, ուստի և կաշխատեմ տեղաւորել սոցա մի որ և է բարեգործական հաստատութիւն. այնտեղ փոքր ինչ լաւ կը լինի սոցա դրութիւնը:

Յարգելի պառաւը սկսաւ ողբալ:

—Խլեն ինձանից թոռներիս, իմ որդուս երեխայոց. ո՜հ, ով կը համարձակէ այդ անել, իմ ձեռքով կը սպանեմ նորան:

Ալֆրէդը կանգնեց նորա և իր մօր մէջ տեղը, որովհետև պառաւը կատաղաբար վրայ ընկաւ իր աւելին:

Կլարան նշանացի ցոյց տուաւ, որ չը վախենայ:

—Եթէ այդքան սիրում էք սոցա, պէտք է որ հոգս տանէք սոցա մասին և ոչ թէ այն անէք, ինչ որ հիմայ դուք անում էք, ասաւ նա խիստ ձեւով, — չը պէտք է խմելու վերայ վատնել այն փողերը, որ տալիս են ոչ թէ ձեզ, այլ սոցա համար: Ես երբեմն երբեմն կը գամ այստեղ և եթէ կը տեսնեմ, որ իմ բերած բաներից մինը պակաս է, այլ ևս ձեզ չեմ օգնի և ձեր մասին կը գանգատուեմ ոստիկանութեան:

„Ոստիկանութիւն“ և „այլ ևս ձեզ չեմ օգնի“ խօսքերը հրաշալի ներգործութիւն ունեցան. պառաւը ահուդողով յետ քաշուեցաւ և սկսաւ արդարանալ:

Կլարան ականջ չը դրաւ նորան, ողջունեց երե-

խայոց և փոքր ինչ փող թողնելով՝ դուրս գնաց, ասելով, որ վաղը կը գայ տեսնելու թէ ինչ է արել այն փողը:

ԳԼՈՒԽ ԺԳ,

ՈՐԻ ՄԷՋ Կ'ԻՄԱՆԱՆՔ ՇԱՏ ԲԱՆԵՐԻ ՊԱՏՃԱՌԸ.

Տիկին Մօլլօյն ամէն օր այցելում էր խեղճերին և ամէն անգամ նկատում էր, որ Յակովբը լաւանում է: Երբ արդէն նա կարողացաւ աշխատել և յաճախ այցելութիւններն այնքան անհրաժեշտ չէին, միանգամ Ալֆրէդը թոյլտուութիւն խնդրեց մօրը, որ գնայ ուրախացնէ Մարթային, որ այժմ դարձեալ յաճախ մենակ էր մնում տանը:

Կլարան չը բացասեց. այլ թոյլ տուաւ, որ երբ կամենայ գնայ նորա մօտ: Նա գիտէր, որ թէպէտ այսպիսով փոքր ինչ ժամանակ է կորցնում որդին, բայց այնուամենայնիւ դասերը, թէպէտ քիչ ուշ, բայց նոյնպէս լաւ, կը պատրաստէր, ինչպէս և առաջ:

Եւ վերջապէս միթէ պէտք էր կորած համարել այդ ժամանակը: Մարթայի մօտ նա սովորում էր համբերութիւն, նեղութիւններն անտրտունջ տանել և հաւատալ Աստծուն. իսկ միթէ հոգու և սրտի կրթութիւնը աւելի բարձր չէ մտաւոր կրթութիւնից: Ի՞նչ աւելի մօտ կը լինէր քրիստոնէութեան, քան մերձաւորին օգնելը կարողութեան չափ: Ուրիշին լաւութիւն անելով՝ մի և նոյն ժամանակ քեզ ես լաւութիւն անում: Ծերունի Պասմօրը ասում էր, թէ անշահասէր գործին նուիրուելը՝ անձնազոհութեան կատարելագործուած ձևն է: Եւ պէտք է խոստովանել, որ եթէ այս այսպէս է, Աստուած տայ ուրեմն, որ

մարդկանց մէջ աւելի շատ անձնապահութիւն լինի:

Ռուբէնն և բանից դուրս էր գալիս, թէ Ալֆրէդը կռթնում էր Մարթայի մօտ, որ նորանից շատ քիչ բան գիտէր:

Նա միշտ զուարճութեամբ ընդունում էր տղային և յաճախ հարցափորձ էր անում Լոնդոնի արտաքին փոփոխութեան մասին այն օրից, երբ նա կորցրել էր տանից դուրս գալու կարողութիւնը: Բնութիւնից էլ ընդունած լինելով գննողութեան շնորհք, Ալֆրէդը այժմ սկսաւ շահեցնել այդ ընդունակութիւնը հիւանդի օգտի համար, այնպէս որ մանրամանաբար կարողացաւ պատմել նորան, թէ որտեղ է տուն շինւում, եկեղեցի նորոգւում, խանութը կրպակների փոխարկւում և այլն: Միանգամ տեսնելով, թէ ինչ կենդանի հետաքրքրութեամբ է նա լսում իւր պատմածները մի փոքրիկ Սավօյեացու և սպիտակ մկան մասին, այնուհետև դիտութեամբ սկսաւ աւելի բան կարդալ, որպէս զի նիւթ ունենայ նորան պատմելու: Մի անգամ նորա մտքովն անցաւ, որ վատ չէր լինի, եթէ Մարթային կարդալ սովորցնէր, եթէ միայն ոյժ կունենար նա դաս առնելու:

Այս նպատակով ինքը իւր սեպհական փողով այբբենարան գնեց նորա համար: Մեծ զուարճութեամբ տեսաւ, որ Մարթան ջերմ փափագով սկսաւ սովորել, շուտով բոլոր այբբէնը սովորեց և սկսաւ արդէն գիր կապել, բայց երևում էր, որ այս աշխատանքը շատ էր յոգնեցնում նորան: Միանգամ, մի ամբողջ երես՝ բա, գա, դա և այլն կարդալուց յետոյ հազաց և թուլացած ընկնելով բարձի վերայ՝ տխուր ժպիտով ասաւ.

—Շնորհակալ եմ ձեզանից, Ալֆրէդ, բայց երևում է, թէ իմ սովորելու ժամանակը անցել է, դուք ինքներդ տեսնում էք այս:

Փոքրիկ ուսուցիչը խիստ շարժուեցաւ և սրտասուքը աչքերին տխրութեամբ այբբենարանը գրպանը դրաւ, որովհետև Ցակոբի համար թողնել անօգուտ էր, պատճառը որ նա առաւօտները վաղ էր գնում, իսկ գիշերը վերադառնում էր քնելու ժամանակ:

Ձմեռն անցաւ, եկաւ ապրիլը և նորա հետ էլ գարնան արձակուրդները: Լատիներէնից Ալֆրէդը այս անգամ տասներկուերորդ տեղն էր բռնում. առաջին մրցանակը համարեա բոլոր առարկաներից դարձեալ Ռօբէրտին ընկաւ: Սակայն Ալֆրէդը այլ ևս չէր նախանձում վերջինիս. այլ ևս չէր նախանձում, ոչ նորա ուսուցչին, ոչ կառքին, ոչ նորա յարգանքին դասատանը, ոչ էլ այն հարստութեանը, որի ժառանգն էր նա: Ինչի՞ց յառաջացաւ այս փոփոխութիւնը: Գարնէտի ընտանիքին այցելելը սովորցրեց նորան աւելի խորը նայել գործին և երջանիկ համարել իրան այդ մռայլ վերնայարկի խեղճ բնակիչների հետ համեմատելով: Եւ մի այնպիսի ուսուցիչ էլ ունէր այժմ, որին ոչ ոքի հետ չէր փոխի և որը ասում էր, թէ թէպէտ միանգամից առաջինը լինել շատ լաւ է, բայց առաւել լաւ է սեպհական աշխատանքով քայլ առ քայլ բարձրանալ սարը, ամէն անգամ տեսնելով, որ առաւել ու առաւել մօտենում է գագաթին: Գիտէ՞ք, թէ ինչ երջանիկ գիշերներ էր անցկացնում նա այն փոքրիկ գեղեցիկ սենեակում, իւր սիրելի մօր ու պարոն Պասմօրի ընկերակցութեամբ: Տիկին Մօլլօյն սովորաբար կար էր անում, ինքը պարապում էր, իսկ ծերունի հարևանը մտածում էր, վառարանի մէջ ածուխները շարժելով և սպասելով, մինչև որ տղան կը կարօտէր իւր օգնութեան:

Գործը վերջացնելուց յետոյ նոքա սովորաբար խօսակցում էին: Ծերունի պրօֆէսօրը կարևոր բաներ

շատ գիտէր և պատմում էր նոցա այնպէս լաւ, որ Ալֆրէդը երբէք չէր յոգնում լսելուց: Սակայն նորան շատ չէր դուր գալիս, երբ ծերունին հարուածում էր բոլոր մարդկային ցեղը ընդհանրապէս: Այդպիսի դէպ-քերում սովորաբար վիճում էր նորա հետ և յաճախ հերքում էր նորա խօսքերը իւր միամիտ երեխայական տրամաբանութեամբ:

—Մայրս ու Մարթան բարեսիրտ են, ապացուցա-նում է նա, հայրս բարեսիրտ էր, դուք ինքներդ էլ նոյնպէս,—ուրեմն, նշանակում է, բոլոր մարդիկը չար չեն: Ես էլ բոլոր ուժս գործ եմ դնում, որ լաւ լինեմ,— և ահա կաւելանայ նաև մէկը, որ ձեր ասածի նման չէ:

Պրօֆէսօրը ժպտաց, իսկ տիկին Մօլլօյն գրկեց իւր որդին:

Իսկ տիկին Լիտտլտօնը, խեղճ թիթեռի նման, պտտում էր քեռի Չէստէրտօնի չորս կողմը և շատ տխուր էր անցկացնում իւր օրերը: Պարոն Չէստէրտօնը նոյն-պէս գործունեայ էր, ինչպէս էր և երեսուն տարի շա-րունակ, բայց որովհետև այժմ նորա վերայ պարտք չէր դրած հարիւրաւոր աշխատող ձեռքեր կառավարելը, ինչպէս որ անում էր իւր կալուածներում Հնդկաստանի մէջ, ուստի և չը գիտէր թէ ինչով զբաղուի, կամ, աւելի պարզ, „ինչպէս անցկացնէ ժամանակը“: Նրխտասար-գական կրթութիւնը չէր սովորցրել նորան բաւակա-նութիւն գտնել մտաւոր պարապմունքների մէջ և եր-բէք գրքի երես չէր տեսնում, եթէ մէջը վաճառակա-նութեան վերաբերեալ բան չէր լինում. գիտութեան հրաշալիքները չէին գրաւում նորան: Նա անդամ էր մի ժողովարանի, բայց այնտեղի խօսակցութիւններն էլ անօգուտ էին թւում նորան: Հասկանալի է, որ մէկը պէտք է գրաւէր նորա ուշադրութիւնը, և այդ մէկը, բնականաբար, Սէսիլիան էր երեւում: Խեղճ կինը

ամէն տեսակ հնարաւոր զբօսանքներ էր հնարում իւր զառամեալ մանկան համար, որին զբաղեցնելը առա-ւել դժուար էր, քան Լիւդովիկոս XIV-ին: Բայց խեղ-ճին ամէն անգամ չէր յաջողւում և նորա ջանքերը շատ անգամ փոխարինւում էին պարոն Չէստէրտօնի բարձ-րաձայն և ձանձրացնող տրտունջներով: Նա ամէն լաւ օրին գնում էր նորա հետ այգին զբօսնելու. հա-մարեա ամէն երեկոյ տանում էր նորան թատրոն և այսպիսի հասարակական զուարճութեան տեղեր: Քեռին շատ սիրում էր այս վերջինները, ինչպէս նաև աշխարհիս նորութիւնները, որոնք նորա ահագին հա-րստութեան պատճառով այնպիսի յարգանք էին շնորհել նորան: Շաբաթուայ մէջ մի օր նա մինչև ան-գամ նշանակել էր իւր մօտ ծանօթներին հաւաքելու: Այդ օրը Սէսիլիայի համար կատարեալ տանջանք էր լինում. այս բոլորը կարգադրելու համար սա փոքր ինչ պառաւ էր: Կարճ յիշողութիւն ունենալով՝ միշտ վախենում էր թէ մի գուցէ բան մոռանայ և, յիրաւի յաճախ մոռանում էր, որի պատճառով նորա դէմքը շարունակ անհանգստութիւն էր արտայայտում: Շատ անգամ նա զարմանում էր, թէ ինչ ահագին գումար է ծախսել մի անգամից և չէր կարողանում հաշիւ պա-հել: Այն ինչ այս փողերը ամենևին անձնական զուար-ճութիւն չէին տալիս նորան և մինչև անգամ չէր գործ դրւում բարի գործի համար, որով ինքը անձամբ միջոց չունէր պարապելու: Քեռի Չէստէրտօնը ժլատ չէր. շատ անգամ մի երեկոյթի համար տալիս էր յիսուն ֆունտ ստերլինգ. բայց անօգուտ էր համարում աղքատներին օգնելը. աղքատութիւնը Անգլիայում թեթև էր թւում նորան:

Վերջապէս Սեսիլիան վեց ամսուայ մէջ մի կէս ժամ ազատ ժամանակ գտաւ իւր բարեկամ Կլարային

ացնէլու համար. այդ միջոցին աշխատեց սովորել նորան, որ փոքր ինչ փող ընդունէ իրանից: Վիրաւորուելով Կլարաի բացասութիւնից, որին նա խոստովանեց, թէ այդ նուէրը թոյլ է տուած, բայց ոչ թէ առաջարկուած հօրեղբօրից, նա մեղադրեց քրօջը աւելորդ հպարտութեան մէջ և ասաւ, թէ ազգականների մէջ նեղանալ չը պէտք է լինի. նախատեց նորան նաև ուղղու շահերը արհամարհելու համար,— Բայց ամէնը 'ի զուր էր: Այնուհետև նա միտքը դրաւ էլ ամենևին չը գնալ իւր քրօջ մօտ:

Այն ինչ Ռօբէրտը բաւական խաղաղ ընթանում էր իւր ճանապարհով և իւր ընդունակութեան ու յաջողակութեան շնորհիւ տակաւին առաջին տեղն ունէր բռնած դասատան մէջ: Սկզբում նա չիրաւի խիստ շատ էր պարապում և չէր ծանրաբեռնուում ոչ մի դասերով, որովհետև հայրը մանկութիւնից սովորցրել էր նորան աշխատել, իսկ մենք գիտենք, որ լաւ թէ վատ սովորութիւնը մի օրուայ մէջ չէ բնաջնջում լինում: Բացի դորանից Ռօբէրտը սիրում էր յառաջադիմութիւն և ամէն մի նոր յաղթանակ տանելիս նոր հպարտութիւն էր աւելանում նորան: Եւ իրաւ, եթէ գաւառական ուսումնարանում ընկերների ծափահարութեամբ մրցանակ տանելը հաճելի բան էր, որչափ եւս առաւել Լօնդօնի ուսումնարանի դահլիճում ահագին խմբուած հասարակութեան առաջ: Այս բանն աւելի էր զարթեցնում Ռօբէրտի մէջ աշխատութիւն: Բաղդաւոր էր նա, որ իւր ազատ կամքով էր պարապում, որովհետև տանը ոչոք չէր օգնում նորան այդ բանի մէջ և չէր ստիպում աշխատել: Մայրը ժամանակ չունէր հետևել նորա պարապմունքներին, որովհետև նա կարծես յորձանքի մէջ էր ապրում: Որդուն միայն նախաճաշի ժամանակ էր տեսնում և այդ միջոցին էլ

նորա գլխաւոր հոգս այն էր, թէ տղայի վարքը հաճելի թուար քեռուն, որ միշտ հեշտութեամբ չէր յաջողում: Նա գիտէր, որ մնացած ժամանակը հսկում է նորա վերայ դաստիարակը, որը միշտ աշխատում էր հաճոյանալ տան մեծին և այնպէս դաստիարակել իւր սանիկը. աւելի բան էլ չէր ցանկանում:

Իսկ ինչ վերաբերում է նոյն իսկ յարգելի Ադոլֆին, պէտք է ասել, որ սա շատ չէր անհանգիստ լինում հըսկելու աշակերտի վերայ, այլ աւելի լաւ էր համարում ուսումնարանից բերելուց յետոյ շրջագայել պարոն Ջէստէրտօնի ընտիր ձիով, կամ վերջինիս հետ գնալ ձիարշաւ, ուր ուղեկցում էր նոցա նաև Ռօբէրտը ձի նստած էն: Մենք արդէն ծանօթ ենք Ջէստէրտօնի հայեացքի հետ գիտութեանց մասին, այդ պատճառով մեզ հասկանալի է, թէ ինչու նա ամենևին չէր ստիպում իւր ժառանգին դասերը պատրաստել և մինչև անգամ աւելի յաճախ կը տանէր իւր հետ, եթէ մի զօրաւոր պատճառ արգելք չը լինէր—և մենք շուտով կը տեսնենք, թէ ո՛րն է այդ պատճառը:

Մէկը կար, որին քեռի Ջէստէրտօնը նախադաս էր համարում իւր ժառանգից: Եւ ուրեմն, Ռօբէրտը թըշնամի ունէր: Բայց մի վախենաք, երբեմն թշնամի ունենալն էլ օգտակար է, սիրելի ընթերցողնե՛րս:

Այս թշնամին Մօկօն էր: Ինչու համար կապիկին դուր չէր գալիս իւր տիրոջ ժառանգը: Գուցէ նորան համարում էր իւր ախոյեանը ժառանգութեան, կամ գոնէ հայից յետոյ բերող շաքարի հացի վերաբերութեամբ: Այսպէս թէ այնպէս, բայց այսքանը միայն յայտնի է, որ ժառանգի չէկ խոպոպիքները անփախչելի փորձանք էին ներկայացնում Մօկօի համար: Հէնց որ կապիկը տեսնում էր տղային, իսկոյն տեղից վեր էր թռչում, թռչում էր նորա ուսին և իւր մագիլները

ցցում էր իւր զոհի գանգրահեր գլխին. և բացի քեռի Ջէստէրտոնից ոչ ոք չէր կարողանում վերջ դնել այս կատակին: Մինչև անգամ զբօսնելու ժամանակ էլ Մօկօն շատ անգամ Ռօբէրտի գլխարկը վայր էր գցում թօզոտ ճանապարհին: Ամէն օր նոր նոր չարութիւններ և զուարճութիւններ էր հնարում նա. և որովհետև կապկի երեւակայութիւնը անսպառելի է, ուստի և Ռօբէրտը չէր կարողանում հակաճառել նորա հետ, չը նայելով որ միշտ պատրաստ էր վրէժխնդիր լինել իւր թշնամուն: Ռօբէրտն ու Մօկօն միմեանց պատահում էին թէ չէ, անկասկած կռիւ պէտք է պատահէր: Քեռին կռիւ ու վէճ չէր սիրում, ուստի որոշեց, որ Ռօբէրտը տանը նստէ, երբ որ Մօկօն զբօսնելիս լինի իւր հետ: Այս պատճառով ժառանգն այդ տարին կապկի շնորհիւ նոյնպիսի եռանդով պարապեց, ինչպէս և իւր հօր ժամանակ և մինչև անգամ կարելի է ասել, թէ յատկապէս Մօկօի շնորհքն էր, որ Ռօբէրտը ստանում էր առաջին մրցանակները ուսումնարանում:

ԳԼՈՒԽ ԺԳ.

ՊԱՐԻ ԴԱՍԸ:

—Հայրիկ, ասաց Լաուրան, իւր վարդագոյն մատով մի ամսաթիւ ցոյց տալով օրացուցի մէջ,—գիտես, որ այս օրը ես ութ տարեկան կը լինեմ:

—Այդ ո՞ր օրն է, սիրելիս, հարցրեց պարոն Պօունսէրբին, առանց հեռացնելու աչքը լրագրից:

—Ապրիլի 28-ը. միթէ չես յիշում. հը՛, ծննդեանս համար չես տալու մի որ և է զուարճութիւն:

Եւ աղջկայ ոսկեգոյն խոպոպիքները ընկան նօտարի ակնոցների ու լրագրի մէջ տեղը: Վերջինս ստի-

պուեցաւ ընդհատել կարդալը և աղջկան նստացնելով ծնկան վերայ՝ հարցրեց.

—Ի՞նչ ես կամենում, փոքրիկ բռնաւորս:

—Ես մի շատ օգտակար բան եմ ցանկանում: Տիկին Մօլլօյն ասաւ, թէ ամենալաւ զուարճութիւնները նոքա են, որ մենք մեր սեպհական աշխատանքով ենք ձեռք բերում, բայց միթէ ես արժանի չեմ, որ մի պարահանդէս կազմես ինձ համար:

Այս որ ասաւ, հանեց ձեռագործի կողովից թաշկինակ, որի մի անկիւնում գեղեցիկ կերպով դուրս կըտրած և կարած էր իւր հօր անուան սկզբի տառերը:

—Ահա, հայրիկ, տես նշանը—ամբողջ այբբենը կարող եմ այսպէս կարել. այս ես եմ կարել: Տիկին Մօլլօյն շուտով կը սովորցնէ ինձ ոսկեթելով կարել: Այժմ նայիր, թէ ինչպէս եմ գրում:

Արդարև թէ գլխագրերը և թէ հասարակ տառերը շատ գեղեցիկ և մտադրութեամբ էր գրուած: Լաուրան մի մի համբոյր ստացաւ թէ վայելչագրութեան, թէ թաշկինակի և թէ այն ստանաւորի համար, որ նա հասկանալով պատմեց և թէ բազմապատկութեան աղիւսակի համար: Յետոյ նա թռաւ վազեց դաշնամուրի մօտ, վերառաւ աթոռի վերայ դրուած բազմաթիւ նօտաներից, որ նա գիտութեամբ դարսել էր, և բոլորովին կանոնաւոր մի քանի երգ ածեց:

Նօտարը հիացած էր:

—Դեհ, ասաց նա,—տեսնում եմ, որ չեմ սխալուել քեզ տիկին Մօլլօին հոգացողութեան յանձնելու մէջ. դու, արդարև, պարգևի արժանի ես: Դեհ, ուրեմն ինքդ ընտրիր այն քեզ համար:

—Ա՜խ, հայրիկ, ես կը ցանկայի մի երեկոյ մանկական պարահանդէս կազմել և իմ բոլոր բարեկամներիս հրաւիրել:

—Շատ լաւ, դա շատ դժուար բան չէ. բայց միայն պէտք է, որ փոքր ինչ վաղ վերջանայ, որովհետեւ դու գիտես, որ երեխայքը երկար չեն կարող նստել:

—Այո, հայրիկ. ութումն ցերեկով կ՚սկսենք. ժամի տասներկուսից մինչեւ վեցը կամ եօթը. բաւական ժամանակ կունենանք պարելու:

—Լաւ. մենք կը պատրաստենք թէ—ա—օթէան էրէկոյ, սա ինձ էլ շատ է դուր գալիս: Այս է քո բոլոր ուզածը:

—Ես կուզէի, որ ամէնքը պարի շոր ունենային հագած. սա շատ կարեւոր է. ես էլ գեղեցիկ գոյնի շոր կը հագնեմ. այդպիսի շոր ունիմ:

—Շատ գեղեցիկ, այդ էլ կարելի բան է, պատասխանեց պ. Պօունսէբըրին փոքր ինչ մտածելուց յետոյ:—Տիկին Մագգին հրաւիրագրեր կը գրէ և կ՚աւելացնէ մէջը, որ երեխայք պարի շորով գան, եթէ նոցա հաճելի կը լինի այս: Ես կարծում եմ, որ հարկաւոր չէ տպագրած հրաւիրագրեր:

—Օ՛հ, ՚ի հարկէ, չէ, ծիծաղելով ասաւ Լաուրան.—բայց մի բան էլ կը ցանկայի ես. դու ասացիր, որ շատ գոհ ես տիկին Մօլլօյից, նորա համար, որ նա այսպէս լաւ է սովորցնում,—թոյլ տուր որ նորա որդուն էլ հրաւիրեմ, որ գոնէ մի անգամ նա էլ ուրախանայ, այս բանը մօրն էլ շատ հաճելի կը լինի: Թոյլ տուր, աղնիւ հայրիկս, ես աւելի երջանիկ կը լինեմ:

Լաուրաի ձայնից աղաչանք էր նկատւում: Պարոն Պօունսէբըրին փոքր ինչ յուզուեցաւ:

—Բայց, Լաուրա, դա շատ հեշտ բան չէ. մտածիր, որ նա մի հասարակ դաստիարակչուհի է, իսկ մեզ մօտ կը գան մեր այցելուների որդիք և նոյն իսկ իրանք այցելուներն էլ, որոնցից շատերը շատ հարուստ և նշանաւոր մարդիք են. դու այնքան փոքր չես, որ չը հասկանաս այս բանը:

Սակայն Լաուրան ուղիղ չը հասկացաւ նորա ասածը:

—Հայրիկ, եթէ համաձայնէիր վիճակ հանելուն, չէ՞ որ նա էլ կարող էր հարուստ լինել. այն ժամանակ կը հրաւիրէիր նորան:

—Լաւ, ծննդեան տօնիդ պատճառով այդ զուարճութիւնն էլ պարգեւում եմ քեզ, դու արժանի ես դորա. բայց միայն, տես, շարունակիր նոյնպէս լաւ ու աշխատասիրութեամբ սովորել:

Տիկին Մօլլօյն, այդ օրը շատ էլ գոհ չէր Լաուրաից, որ շատ յուզուած էր. շուտ շուտ մտածում էր, հարիւրաւոր այնպիսի հարցեր էր առաջարկում, որոնք ոչինչ կապ չունէին պարապմունքի հետ, գիրքը դնում էր իւր առաջ ոտների վերայ և ցոյց էր տալիս, իբրեւ թէ կարդում է. ամենաչնչին ճռնչոցի վերայ յետ էր նայում դէպի այն դուռը, որտեղից պէտք է դուրս գար հայրը: Վերջապէս սա էլ ներս մտաւ:

Շնորհակալութիւն անելով ուսուցչուհուն իւր աղջկայ յառաջադիմութեան համար, նա շատ քաղաքավարի կերպով հրաւիրեց նորան մասնակցել Լաուրաի տօնախմբութեան:

Տիկին Մօլլօյն կարմրեցաւ այդ շնորհակալութեան վերայ, իսկ նորա առաջարկութեանը պատասխանեց, թէ մեծ ուրախութեամբ կընդունէր այն, եթէ սգաւոր չը լինէր:

—Իսկ ձեր փոքրիկ տղան, տխրութեամբ ասաւ Լաուրան,—յոյս ունիմ, որ կը թոյլ տաք նա գայ, ես շատ ուզում եմ նորան տեսնել:

Նստարն էլ ասաւ, թէ երեխայի համար սուգ պահելը միտք չունի և խնդրեց, որ տիկին Մօլլօյն իւր հետ ճաշի բերէր նորան իւր աղջկայ հետ ծանօթանալու համար:

Կլարան, վոքր ինչ մտածելուց յետոյ, համաձայնեցաւ: Ճշմարիտ է, որ Ալֆրէդը պէտք է սովորէր հասարակութեան մէջ մտնել դուրս գալ, բայց դեռ ևս յաջող դէպք չէր ունեցել այդ բանի համար: Եւ ինչո՞ւ պէտք էր զրկել նորան այն զուարճութիւնից, որ բացի օգուտից ոչինչ վնաս չէր տալ նորան. վերջապէս ապագայում կարող էր նորան պէտք գալ նոտարի հետ ծանօթութիւնը, որ այնքան նշանաւոր ծանօթներ ունէր:

Երեկոյեան նա շատ գոհ մնաց իւր որոշմունքից. Ալֆրէդը այնպէս քաղցր և քաղաքավարի վարուեցաւ, որ բոլորովին ապշեցրեց նոտարին: Նա մի քանի անգամ տեսել էր Ռօբէրտին, բայց սա այնպէս գրաւիչ և համբերող չէր թուացել նորան, ինչպէս Ալֆրէդը: „Ո՜րքան ցաւում եմ, որ սա չէ ժառանգը.“ մտածում նա:—Ալֆրէդը բոլոր ժամանակ աշխատում էր զբաղեցնել իւր նոր ծանօթին. նորան այնպէս ուրախ պատմում էր ծիծաղաշարժ դէպքեր, ծաղրաշարժ խմբեր էր կազմում նորա թիթեղեայ գազաններից ու մարդկանցից, այնպէս որ աղջիկը ծիծաղից թուլանում էր և ասում էր, թէ իւր ամբողջ կեանքում այդպէս ուրախ չէ եղել:

Նա մտածում էր, թէ իւր կողմից ո՞րպիսի զուարճութիւն բերէ Ալֆրէդին և միտքը դրաւ, որ իւր ծննդեան օրը ամէնից աւելի ուշադրութիւն դարձնէ նորա վրայ: Յանկարծ նորա մտքովը մի բան անցաւ:

—Դուք պարել գիտէ՞ք, հարցրեց նա:

—Փոքր ինչ, պատասխանեց տղան, առաջ ես շատ էի մանգալիս մանկական երեկոներում:

—Բայց գուցէ ամէն տեսակ պարել չը գիտէք, կամ կարելի է մոռացել էք. կուզէք կը սովորեցնեմ ձեզ, որ իմ ծննդեան օրը կարողանանք միասին պարել: Ես լաւ քարետախտակ ունիմ, նորա վրայ առաջին կարգում կը գրեմ ձեր անունը, գնանք:

Ասաւ և վեր թռաւ ու պարեց Ալֆրէդի հետ վալս, երգելով իւր բարակ ձայնով. բայց մի րոպէից յետոյ բոլորովին ուժից ընկնելով՝ կանգնեց:

—Շատ դժուար է միևնոյն ժամանակ և՛ երգել և՛ պարել, երաժիշտ է հարկաւոր մեզ, ասաւ նա:

Տիկին Մօլլօյն, որ խօսում էր նոտարի հետ, ժպտալով նայեց փոքրիկ պարողներին ու գնաց դաշնամուրի մօտ: Լաուրան բռնեց նորա ձեռքը:

—Այո՛, այո՛, սիրելիս, խնդրեմ ածեցէք մեզ համար վալս, մենք անպատճառ ուզում ենք պարել:

Եւ իրաւ շատ լաւ պարեցին. Լաուրան թեթև էր ինչպէս կախարդ, Ալֆրէդն էլ ձևացնում էր իրան ինչպէս մի յաջողակ կավալէր: Նա սահեցաւ յատակի վերայ և առանց թռչկոտելու կողմեց կանոնաւոր պա (*). սիրուն բռնել էր իւր օրիորդին և երբեմն հանաքով այնպէս ուժով պտտեցնում էր նորան, որ Լաուրան հազիւ կարողանում էր շունչ քաշել: Վալսից յետոյ պարեցին պօլկա, յետոյ մազուրկա և յետոյ ուրիշ նոր ձևի պարեր: Երբ Ալֆրէդը չէր իմանում պա՛ն, աղջիկը սովորեցնում էր և աշակերտը իսկոյն հասկանում էր նորան: Փոքրիկ տանտիկինը շատ գոհ մնալով՝ տուաւ նորան իւր քարետախտակը, որի վերայ Ալֆրէդը անթիւ անգամ գրեց իւր անունը: Ինքը Լաուրան դեռ չը գիտէր մանր տառով գրել:

—Ո՜րքան ուրախացայ, մայրիկ, ասաւ Ալֆրէդը, երբ ցած էր իջնում սանդուղից,—չեմ կարծում թէ սորանից աւելի ուրախ լինեմ նոյն իսկ նորա ծննդեան երեկոյին:

—Վա՛տ արի, որ կամեցայ նորան հրաւիրել, հայ-

*) Պարի մի ձև է:

ըսկ, նոյն միջոցին ասում էր Լաուրան իւր հօրը։ — Ես դեռ այսպիսի ընտիր պարընկեր չեմ ունեցել։

— Ճշմարիտ որ նա իսկ և իսկ մի փոքրիկ տղամարդ է և տիկին Մօլլօյն էլ շատ լաւ է պահում նրան։ Որքան ցաւում եմ ճշմարիտ . . . .

Նա չը վերջացրեց խօսքը, բայց միտքը դրաւ, որ աշխատէ հանգամանքից օգուտ քաղել և ծանօթացնել հօրեղբօրը իւր ազգականի հետ պարահանդէսի երեկոյին։

— Եթէ պ. Չէստէրտօնը լոկ միայն ծանօթ լինէր այս գրաւիչ տղայի հետ, անշուշտ կը հետաքրքրուէր սորանով։ Լաուրաս տօնախմբութեան կը հրաւիրեմ նորա ժառանգին, իսկ գուցէ որ ինքն էլ չի մերժի գալ այստեղ։

ԳԼՈՒԽ ԺԵ.

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

Լաուրա Պօունսէբըլին վեհանձնաբար ձգուած էր մի մեծ բազկաթոռի մէջ և սպասում էր հիւրերին։ Նա հագած ունէր վարդագոյն ատլասից կարած շոր, մազերը սանդրած էր միջնադարեան կերպով և առանձին փոշի էր ցանած վրէն, ծամերը զարդարած ունէր գեղեցիկ անկուածներով, իսկ շապիկը անուշահոտ ծաղիկներով։ Նա մենակ էր, որովհետև տիկին Մագգին տնտեսական գործերի ետևիցն էր, իսկ հայրը պարապում էր իւր առանձնասենեկում։ Երկար սպասելուց ձանձրանալով՝ նա գնաց հայելու մօտ, նայեց նորա մէջ ամէն կողմից և յետոյ վզից կախեց մանուշակի փնջիկներով լիքը կողովը, սկսաւ միայնակ պտտել սենեկում։ Յանկարծ դուռը բացուեցաւ և ներս մտաւ մի

փոքրիկ ծովագնաց, որ յարգութեամբ բարևեց նորան։

— Ալֆրէդ, աղաղակեց Լաուրան և մօտ վազեց, — ինչ լաւ, որ դու ամէնից վաղ եկար։

— Իմ այսպէս շուտ գալու պատճառն այն է, որ հեշտ բան չէր հիւրերով լիք սենեակ մտնել, որոնցից ես ոչ ոքին չեմ ճանաչում։

— Մի՞թէ դուք երբէք չէք պատահել նոցա զբօսնելիս անտառակում։

— Ես ուշ ուշ եմ գնում այնտեղ, ես միշտ մօրս հետ եմ զբօսնում։

— Ձեր մայրը այնքան բարեսիրտ է և այնպէս լաւ բաներ է պատմում, որ, ճշմարիտն ասած, նորա հետ զբօսնելը, իմ կարծիքով, աւելի ուրախալի պէտք է լինի ձեզ համար, քան թէ ընկերների հետ խաղալը։ Ահա, զանգը քաշեցին. գնանք սեղանատուն երեխայոց ընդունելու. երբ ամէնքս կը հաւաքուենք, նայելով հագուստներիս, զոյգ զոյգ ներս կը գանք հիւրասենեակը. ճշմարիտ չէ՞, որ շատ գեղեցիկ բան կը լինի։

Սակայն այդ մասաղ ընկերութիւնը չ'կարգադրեց Լաուրայի միտքը շորերի վերաբերութեամբ. ամէն մէկ տղայ իւր ճաշակով ընտրեց մի մի օրինակ, այնպէս որ Լուդովիկոս XIII-ի ժամանակուայ մարդը ընկերացած կը տեսնէիր Պլօրիանի ժամանակուայ հովուուհու հետ, նշանաւոր տիկնոջ՝ խեղկատակի հետ, չօտլանդացուն՝ թրքուհու հետ. բայց այս տեսարանը շատ ծաղրաշարժ դուրս եկաւ։

Առաջին զոյգը կազմեցին Ալֆրէդն ու Լաուրան, որ ամէն նրան հրաւիրողին պատասխանում էր, թէ արդէն հրաւիրուած է։ Չնայելով իւր հասարակ հագուստին՝ Ալֆրէդը գրաւիչ էր և գուցէ մասամբ այն պատճառով, որ նը գիտէր և չէր էլ մտածում այդ մասին։

Տիկին Մօլլօյն իմանալով, թէ բոլոր հիւրերը այդ երեկոյին պարի շորով պէտք է լինեն, փոքր ինչ տըխրեցաւ. բայց արդէն հրաւէրն ընդունել էր և հետեւապէս մի բան պէտք է յարմարացնէր: Քրքրելով իւր տան հանդերձանոցը, գտաւ մի կլէօնկի հարթ գլխարկ, որ խիստ նման էր ծովագնացների գործածած գլխարկին և որ մի տարի առաջ գնել էր Ալֆրէդի համար: Այս բանը առիթ տուաւ նորան ծովագնացի շորեր կարելու. շուտով պատրաստեց կապոյտ բրդեայ շապիկ, կուրծքը բաց թողնելով, որ այնտեղից երեւայ գեղեցիկ չերտաւոր բաճկոնակը. նորա լայն օձիքի վերայ կարած էր երկու մեծ խարիսխ: Երբ Ալֆրէդը հագաւ այդ շորը և իւր վայելչակազմ մէջքը ամրապնդեց կարմիր լանջապատով, շատ նմանեցաւ մի փառաւոր ծովագնացի: Համարեա միւս բոլոր տղայք անյարմար էին զգում իրանց՝ ժապաւէններով ու ոսկեթելերով զարդարած շորերը և թւում էր, որ նոքա առաջին անգամ էին հագնում այդ հագուստները. իսկ Ալֆրէդը այնպէս հանգիստ էր այդ շորերի մէջ, որ կարծես սովորական շորերն էր:

Հէնց որ հանդիսաւոր մուտքը վերջացաւ, իսկոյն հիւրասենեակի դուռը բացուեցաւ և ծառան յայտնեց.

—Պ. Չէստէրտօնն է, տիկին Լիտլտօնը և պ. Ռօբէրտ Չէստէրտօնը:

—Ահա նորին բարձրութիւն իշխան Ռաման է, լսուեցաւ մի տղայի ձայն, որի մէջ նկատւում էր փոքր ինչ բարկութիւն:

Ծառան պարզ բան է, որ ծանօթ չը լինելով հնդկական դիցաբանութեան հետ, զարմացած նայում էր նորան և վերջապէս մտածելով թէ յիրաւի տեսնում է իւր առաջ իշխան, ասաւ.

—Նորին բարձրութիւն իշխան Ռաման:

—Եւ Գանուման, շշնչաց Ռօբէրտը:

Իսկ իշխանին ուղեկցողը կատարեալ Գանումանն էր: Ռօբէրտը հրաւէր ստանալով, ցանկացաւ որ իւր հագուստը ամէնքի հագուստից լաւ լինի և բոլորովին տարբեր նոցանից: Քեռու առանձնասենեակում մի քանի փայտեայ փոքրիկ կիսարձաններ տեսնելով, որոնք հագնուած ու զարդարած էին Հնդկաստանի զանազան ցեղերի ներկայացուցիչների պէս, նոցանից ընտրեց իւր համար իշխանական հագուստ: Դիպա կտորից հագնելիք, ադամանդներ և ոսկեզօծ թագի պէս մի բան գտնել դժուար չէր. բայց նա կամեցաւ ձեւանալ Ռամա թագաւորի նման, երբ սա գնում է որոնելու իւր սիրուհի Սիտային, որին յափշտակել էր հսկայ Լանկան: Ռաման, ինչպէս ասում են, միայնակ չընկաւ ճանապարհ, այլ կապիկների թագաւոր հռչակաւոր Գանումանի հետ. ուրեմն Մօկօն պէտք եկաւ, որովհետեւ կարող էր նորանից լաւ ներկայացնել կապիկների թագաւորին: Քեռին սիրով թոյլ տուաւ, բայց Մօկօն շատ էլ համաձայն չէր այս անգամ նորա ճաշակի հետ: Թագը, տունիկը և գօտիկը իւր վրայ փորձել թոյլ տուաւ, իսկ երբ արդէն պէտք է հագցնէին նորան հնդկական զինակրի շորեր, բոլորովին շփոթուեցաւ և երկար ժամանակ անցաւ, մինչեւ որ կարողացան երբեմն քաղցրութեամբ, երբեմն սպառնալիքներով հնազանդեցնել նորան:

Իշխան Ռաման, Գանուման—կապիկը ժապաւէնից բռնած (որ, ՚ի միջի այլոց, չէ յիշուած պատմութեան մէջ, բայց որ այս դէպքում անհրաժեշտ էր համարուած), յաղթական կերպով մտաւ պ. Պօունէբրէի հիւրասենեակը, երեխայոց ուրախ, իսկ մասամբ վախեցած աղաղակների հետ: Մօկօն արդարեւ շփոթուած էր, բայց նորանից փախչելու պատճառ չը կար, որովհե-

տե, ինչպէս յայտնի է, փոքրիկ կապիկը արեւադարձ կենդանիների խմբին չէ պատկանում: Սակայն, ընթերցող օրիորդներս կը ներեն ինձ, եթէ ասեմ, որ ջահել աղջիկները (շատ անգամ նաև հասակաւոր կանայք էլ) երբեմն սիրում են փախչած ձևանալ, թոյլ կերպով աղաղակել և միևնոյն ժամանակ գեղեցիկ ջղային շարժողութիւններ անել: Գուցէ և այսպիսի վարժութիւններ անելով հայելու առաջ, տեսնում են, որ այդ սազում է իրանց: Դուք ինքներդ էլ անշուշտ երբեմն տեսած կը լինէք, թէ ինչպէս ձեր ծանօթներից մէկը ընկել է բազկաթոռի մէջ, գլուխը յետ է ծռել և թուլացած ձեռքերով քթին է մօտեցրել օդըկօլօնի սրուակը: Չը գիտեմ դուք ինչպէս էք կարծում, իսկ իմ կարծիքով աւելի լաւ է չանել այդ բանը. առողջ հայեացքով կեղծաւորութիւն և շինծու բաները մինչև անգամ ամենափոքր չափով՝ ծաղրալի են:

Իմ նկարագրած դէպքումն էլ երկիւղը շուտով անցաւ և նորան հետևեց մի թունդ ծիծաղ ծաղրաշարժ կապկի վերայ:

Մօկօն սկզբում շատ լաւ էր պահում իրան և ծանրութեամբ հետևում էր Ռօբէրտին, որին Լաուրան մանածեց բոլոր հիւրերի մէջ, ծանօթացնելով նորան ամենքի հետ իբրև Ռամա իշխանին իւր կապիկով. բայց յանկարծ գլխաւոր կառավարիչ Գանումանը, անշուշտ այդ հանդէսը չափազանց ձանձրալի համարելով՝ ժապաւէնը դուրս քաշեց Ռօբէրտի ձեռքից և մի քանի թռիչքով բարձրացաւ լուսամուտների մէջտեղ դրած սեղանի վերայ:

Խեղճ Մօկօի բաղտից հիւրասենեակը, չնայելով որ ցերեկ էր, շատ պայծառ լուսաւորուած էր և սեղանի իւրաքանչիւր անկիւնում մոմ էր վառած. ստացանից այրուեցաւ խեղճ Գանումանի տուտիկը: Ջերմութիւն

զգալով՝ նա թռաւ այնտեղից լուսամտի վարագուրի վրայ և բարձրանալով ծայրին կախ ընկաւ առջևի թաթերի վրայ և սկսաւ ողորմելի ձայներ արձակել:

Ամենքի աչքը նորա վրայ էր, բայց մինչև որ մէկը նոցանից օգնութիւն կանչէր, լսուեցաւ փոքրիկ ծովագնացի աղաղակը.—Օ՜հ, խեղճ փոքրիկ անասուն.—ասաց Ալֆրէդը և շտապով բարձրացաւ սեղանը, մոմերը հանգցրեց և Մօկօն թռցնելով՝ հանգցրեց նորա չորերը որ դեռ վառւում էր. յետոյ ցած թռաւ կապկի հետ, որին սկսաւ փաղաքշել և մխիթարել, որքան կարող էր:

Պարոն Չէստէրտօնը կապիկը վերառաւ ձեռքին, ինչպէս մի փոքրիկ երեխայ, և տեսնելով, որ միայն բուրդն է փոքր ինչ այրուել, դարձաւ Ալֆրէդին.

—Դուք քաջ տղայ էք, ասաց նա,—ճշմարիտ որ կատարեալ ծովագնաց էք: Ի՞նչ է ձեր նաւի անունը:

—„Սիրող մայր“, կապիտան, պատասխանեց տղան, ուղղուելով և իբրև իւր մեծաւորին՝ պատուելով:

Պ. Չէստէրտօնը ժպտաց:

—Հասկանում եմ: Սիրող մայրը կարող է իրան շնորհաւորել այսպիսի բարեկոյս և ջերմեռանդ ծառայողի համար: Նա, ով բարի սիրտ ունի, անշուշտ լաւ մարդ էլ կը դուրս գայ: Դուք այժմ փրկեցիք այս կապիկը, Աստուած տայ, որ ժամանակով մարդ ազատէք: Մօկօն շատ շնորհակալ է ձեզանից, տեսնո՞ւմ էք ինչպէս է փաղաքշում ձեզ:

Մօկօն իւր սև թաթը դրաւ տղայի ուսին:

—Յոյս ունիմ, որ փոքրիկ կապիկը ցաւ չէ զգում այժմ, նորան մօտենալով ասաց Լաուրան:—Ի՞նչ քաջ էք, պ. Ալֆրէդ: Գնանք պարենք միասին, դուք գիտէք որ ձեզ եմ խոստացել առաջին կադրիլը:

Նա տարաւ և կանգնեցրեց նորան vis-à-vis իշխան

Թամսի և երկայն խոպոպներ ունեցող շվեյցարական տիկնոջ հետ: Կադրիլից յետ պարեցին մազուրկա, որ սկսաւ Ռօբէրտը, որովհետև ինքը Լաուրան ընտրեց նորան: Ռօբէրտը առհասարակ շատ լաւ էր պարում: Նա պարելը մանկութիւնից էր սովորել և շուտ շուտ պարում էր իւր ընկերների մօտ պարահանդէսներում: Բայց այս անգամ շատ նեղացնում էր նորան երկայն ու ծանր հագուստը, որ ամէն պարողին էլ կը խանգարէր: Տարաբաղտաբար շրջազգեստը դէմ էր ընկնում ոտնե-րին, այնպէս որ շարունակ պարի կարգից դուրս էր գալիս: Մի քանի քայլ անելուց յետոյ՝ Լաուրան բարկացած կանգնեց:

—Մենք միմեանց չենք յարմարում, ասաւ նա:

—Այս անպիտան շորն է մեղաւորը, գոչեց Ռօ-բէրտը,—հաւատացնում եմ ձեզ, որ ես շատ լաւ պա-րել գիտեմ:

—Այո, բայց միայն համազգեստով, և ոչ թէ շրջազգեստով. աւելի լաւ է կերթամ ծովագնացի մօտ: Կը կամենա՞ք, Ալֆրէդ:

Ալֆրէդը ուրախութեամբ համաձայնեցաւ և երկու պատանեակները գնացին միասին, մինչդեռ Ռօբէրտը վիրաւորուած մօտեցաւ իւր մօրը և ասաւ, թէ ձանձ-րացել է այդտեղ, այնպէս որ աւելի լաւ է համարում տուն գնալ: Տիկին Լիտըլտօնը, արդարացի պէտք է ասել, իւր որդւով աւելի քիչ էր զբաղուած, քան նորա ազգական Ալֆրէդով, որի շարժուածքին առանձին ե-ռանդով հետևում էր: Նա միայն այդ մէկ անգամն էր տեսնում նորան, բայց այդ միանգամից ճանաչեց նորան և անպատճառ կամեցաւ ներկայացնել հօրեղ-բօրը: Կարլի հետ պատահած անցքը փոքր ինչ թե-թևացրեց գործը, բայց այնուամենայնիւ դեռ սիրտ չէր անում տանել նորան հօրեղբօր մօտ և ասել. „սա

ձեր ազգականն է, քեռիս“: Նա հնար էր որոնում այժմ, որ կարողանար պ. Չէստէրտօնի ուշադրութիւնը դարձնել Մօկօի ապառողի վերայ և դուրս քաշէր նո-րանից մի քանի խօսքեր, օրինակ. „սա շատ սիրելի տղայ է“, կամ „ծնօղները պէտք է պարծենան սորանով“: Սորանից յետոյ գործը շուտ առաջ կ’երթար:

Հետաքրքրականն այն է, որ Նօտարն էլ այդ մի-ջոցին պտոյտ պտոյտ էր անում Չէստէրտօնի չորս կողմը և միայն յաջող դէպքին էր մնում, որ Ալֆրէդին ծանօ-թացնէր նորա հետ: Բայց աշխատում էր, որ այս բանը ամենևին չը նկատէ Սեսիլիան: Նօտարը իւր փորձառութիւնից օգուտ քաղելով՝ այն եզրակացու-թեան հասաւ, թէ չը պէտք է մարդուն հաւատալ, երբ բանը ընկնում է փողի վերայ: Նա, ՚ի հարկէ, պէտք է թոյլ տար, որ Կլարան ժառանգութեան գործի մէջ իրան բոլորովին չեզոք ձևացնէր, բայց այս բանը լոկ բացառութիւն էր համարում, իսկ բացառութիւն-ները, ինչպէս քերականութիւնից յայտնի է, միմիայն հաստատում են կանոնը: Նա մինչև անգամ աւելի շուտ յանցաւոր կը համարէր նորան, քան թէ անշա-հասէր: Եթէ նորա տեսութիւնը իրաւացի լինէր, ապա ուրեմն ժառանգի մայրը թշնամաբար պէտք է վերա-բերուէր Ալֆրէդին:

Մինչև որ Ռօբէրտը խօսում էր մօր հետ տուն գնալու մասին, Մօկօն, իւր տէրոջ ծնկների վերայ նըս-տած, անշուշտ մտածում էր, թէ իւր բոլոր թշուա-ռութեան պատճառը իշխան Թամսն էր, ուստի շատ-պով թաթը խփեց նորա թագին, որ վայր ընկաւ իշ-խանի գլխից և շխկշխկոցով գլորուեցաւ յատակի վերայ:

—Ի՜չ, դու, զարշելի անասուն, բարկացած գոչեց Ռօբէրտը:

—Ամենևին էլ զարշելի չէ, վրայ բերաւ Չէստէր-

տօնը։—Սա իւր բարեկամներին ճանաչում է և ես գրազ կը գամ, որ ամենևին ձեռն էլ չէր տայ այն ծովագընացի գլխարկին։ Բայց, լաւ միտս եկաւ, պ. Պօունդըրբի, այդ տղայի ազգն ի՞նչ է։

—Սա շատ գրաւիչ տղայ է, իսկոյն պատասխանեց նոտարը.—և որբ է. մայրը, մի պատուական կնամարդ, շատ աղքատ է և դասատուութեամբ է իւր ապրուստը գտնում. նա դօքտոր Մօլլօյի այրին է։

—Կլարաի որդին է, սիրելի քեռիս, մէջ ընկաւ Սեսիլիան,—այդ զմայլելի երեխան՝ ձեր ազգականն է, տեսնո՞ւմ էք ինչպէս ամէնքին դուր է գալիս այդ տղան. պէտք է օգնել դորան, որ աշխարհում յաջողութիւն գտնէ։ Թոյլ կը տաք, որ բերեմ այստեղ։

Ասաւ և գնաց Ալֆրեդի ետևից, բայց պ. Չեստերտօնի խիստ հրամանը արգելեց նորան։

—Մնաք բարեաւ, սառնութեամբ ասաւ նա տանտիրոջ և սենեկից դուրս գնաց, տանելով իւր հետ Ռօբերտին ու շփոթուած Սեսիլիային։ Դուրս գնալիս նա նկատեց, որ նոտարն ու վերջինս տխուր հայեացք գցեցին միմեանց վերայ։

—Ուրեմն երևում է, որ այս ամէնը պատրաստուած է եղել առաջուց, մրմնջաց նա,—տղային էլ սովորցրած են եղել։ Նոքա մտածել են իմ որոշմունքս փոխել տալ. բայց կը տեսնեն, թէ ես այնքան պարզամիտ չեմ, որ այդպիսի ցանցի մէջ ընկնեմ։

ԳԼՈՒԽ ԺԶ

ՀԱՆՃԱՐԻ ԵՐԵԽԱՆԸ։

Այրի Գարնէտի տանը այժմ գործը դէպի լաւն էր փոխուել։ Կլարան շատ լաւ կարողացաւ գործածել Սեսիլիայի ուղարկած հինգ ֆունտ ստերլինգը։ Նա զգուշացաւ և փողերը պառաւին չը տուաւ, որ կարող էր փչացնել ու գինու արաղի տալ, այլ ամէն օր ուղարկում էր նոցա մի կողովով հաց, միս ու բանջարեղէն և փոքրիկ սայլակով փայտ կամ ածուխ։ Պատերի ու լուսամուտների բացուածներն ու ճեղքերը նա հրամայեց բարակ չուաններով կալնել և Մարթաի մահճակալի վերայ իւր հին վարագոյրներից մուրչաքթամի պէս մի բան շինեց։ Այսպիսով խեղճ որբերը այլ ևս ոչ ցուրտ էին զգում և ոչ սովածութիւն։ Պառաւը աւելի բարկանում էր ու շշնչում այն բանի վերայ, որ այդպէս խնամում էին այդ „ձրիակեր—իշխանուհուն“, բայց տեսնելով, որ տ. Մօլլօյի այցելութիւնը նրան էլ օգտակար է, երեսանց ջերմ շնորհակալութիւն էր անում նորան։

Իսկ Ռօբերտը մտքովն անգամ չէր անցկացնում, թէ ինչ դժբաղդութիւն էր պատճառել փոքրիկ կօշիկ սրբողին, բայց միանգամ յիշեց այս բանը, երբ մի օր, այն փողոցով անցնելիս, տեսաւ Ցակոլեին Ալֆրեդի հետ խօսելիս. Նա խիստ կարմրեցաւ այդ ժամանակ։ Իր մէջ Ռօբերտը շատ բարեսիրտ տղայ էր. խղճահարուեցաւ, կամեցաւ մէկ կերպով քաւել իւր մեղքը և հետևեալ օրը նա խօսեց դորա մասին իւր բարեկամ Ալֆրեդի հետ։ Իսկ սորա համար ոչինչ աւելի դուրեկան բան չը կար, քան թէ Մարթաի մասին խօսելը։ Սա պատմեց այդ ընտանիքի բոլոր պատմութիւնը և

Ռօբէրտը այնպէս շարժուեցաւ, որ իւր գրպանի բոլոր փողը տուաւ նորան այդ խեղճերին տալու համար:

—Մինչև վաղը սպասիր, ասաց նա Ալֆրէդին,— ես էլ քիչ փող կուզեմ մօրիցս և երկուսս միասին կ'երթանք այնտեղ. ես կամենում եմ Մարթաի հետ ծանօթանալ:

Բայց միւս օրը նա խիստ շփոթուած եկաւ ուսումնարան. նորա մայրը չէր համարձակել ընդդիմանալ քեռի Ջէստէրտօնին, որ արգելել էր տղային գնալ այնտեղ, գլխաւորապէս նորա համար, որ այնտեղ հիւանդ կար: Սակայն նա փող բերաւ և ասաւ, թէ Սեսիլեան առաջարկում է վարձ տալ, եթէ Յակոբին կը տան մէկ արհեստ սովորելու:

Բայց այրի Գարնէտը համաձայն չէր սորան, որովհետև մտածում էր, որ եթէ տղան հեռանայ իրանից, այլ ևս չի բերի իւր համար այն փողը, որ այժմ ստանում էր կօշիկ սրբելուց: Կլարան էլ չէր կամենում համաձայնել իւր բարեկամի առաջարկութեան, որովհետև չէր կամենում Յակոբին բաժանել Մարթաից. իսկ վճռել էր խնամք տանել նորա մասին վերջինիս մահից յետոյ:

Շատ բնական է, որ Ալֆրէդը Լաուրաի ծնընդեան երեկոյից յետոյ, երբ այլ ևս ուսումնարան չէր յաճախում զատկի տօնի արձակուրդների պատճառով, ցանկացաւ Մարթաին պատմել այդ նշանաւոր օրուայ բոլոր անցքերը: Բայց երբ նա մտածում էր նկարագրել Մարթաին երեխայոց զանազանաձև շորերը, բաւական խօսք չունէր դորա համար—մանաւանդ, երբ բանն եկաւ իշխան Ռոմաին և կայիկ—Գանումանին:

—Հասկանո՞ւմ էք, ասում էր նա,—դիպայից շըրջազգեստը այսպիսի ձևերով էր զարդարած, գլխարկը այսպիսի էր...

„Այսպիսի ձևերով“ և „այսպիսի“ խօսքերն ասելիս նա մատներով գծագրում էր օդի մէջ. բայց վերջիվերջոյ Մարթան դարձեալ շատ քիչ բան կարողացաւ հասկանալ նորա ասածներից:

—Փոքր ինչ սպասիր, ասաց նա վերջապէս և գըրպանից հանելով իւր ձեռատետրը, շտապով մատիտով գծագրեց իշխան Ռոմաի և նորա ուղեկցի պատկերները. փորձը յիրաւի շատ յաջող եղաւ:

—Շատ պատուական է, զարմացած աղաղակեց Մարթան,—դուք շատ գեղեցիկ էք նկարում: Պ. Ալֆրէդ, նկարեցէք խնդրեմ նաև ծաղիկներով զարդարած օրիորդին:

Սա փոքր ինչ դժուար էր և նորա նկարած Լաուրան խիստ նման չէր պարահանդէսի ժամանակուայ Լաուրաին. բայց Մարթան սորա վրայ էլ զմայլեցաւ:

Յետոյ տղան նկարեց իւր պատկերը ծովագնացի շորերով, յետոյ պաժին, բրէտօնական գիւղացուն և այլն:—Ալֆրէդը չափազանց ոգևորուեցաւ: „Սակայն ինչ ուրախ եմ նկարելիս“ մտածում էր նա,—և երեկոյեան անտառակում խաղալու ժամանակ, շատ չէր գլորում իւր շրջանակը, այլ շարունակ գրպանից հանում էր ձեռատետրը, որի մէջ նկարում էր անցորդներին, ձիաներին, ծառերի և ուրիշ շրջապատող առարկաների պատկերները:

Այս բանի վրայ, 'ի հարկէ, ուշադրութիւն դարձրեց մայրը: Նկարները, պարզ բան է, դեռ լաւ չէին, բայց նորան ապշեցրեց մտքի ճշտութիւնը և ձևերի պատշաճաւորութիւնը: Նա ցոյց տուաւ մի քանի սխալներ և հաճութեամբ նկատեց, որ այնուհետև այլ ևս չը կրկնուեցան նոյն սխալները: Երբ տղան տուն գնաց, իսկոյն ևեթ նստեցաւ իւր գրասեղանի առաջ և սկսաւ արտանկարել պատկերներ նկարչական գրքից:

Այդ օրուանից Ալֆրէդը այլ ևս ձեռք չը վերասաւ

մատիտից ու տետրակից, որի մէջ նկարում էր ամէն բան, ինչոր մտքովն անցնում էր: Երբ նա իւր նկարների տետրը ցոյց տուաւ Մարթային, սա հիացած մնաց իւր երիտասարդ բարեկամի աշխատասիրութեան վերայ: Մի անգամ հիւանդը այնպէս ուրախացաւ տեսնելով Յակոբի պատկերը, որը չերաւի նման էր նորան, որ Ալֆրէդը կտրեց այն պատկերը իւր տետրակից և կախեց Մարթաի անկողնի հանդէպի պատից. այս նորա առաջին յաջող գործն էր:

Ծերունի Պասմօրը նայելով տղայի նկարներին՝ գլուխը շարժեց:

—Մի զարմանաք, եթէ ձեր որդին այն կորստեան ճանապարհով գնայ, որ կոչւում է արուեստ:

Կլարան ժպտաց:

—Դարձեալ ամէն բան սև գոյնով է թւում ձեզ, պատասխանեց նա:—Եթէ Ալֆրէդը զուարճութիւն է գտնում նկարչութեան մէջ, դորանից դեռ չէ հետևում, թէ նա ցանկանում է կամ ընդունակութիւն ունէ գեղարուեստ դառնալու. եթէ չերաւի նորանում տաղանդ կայ, աւելի լաւ. տաղանդը, ինչպէս նաև գիտութիւնը, հոգեկան հարստութիւններ են: Իսկ ինչ վերաբերում է այն բանին, թէ այդ ճանապարհը վտանգաւոր է, միթէ դու կարծում ես թէ կարող ես տղային պատերազմել տալ այդ վնասակարութեան դէմ, եթէ փակես նորան մի արկղի մէջ մինչև այն ժամանակ, երբ արդէն սովորած կը լինի ինքն իրան կառավարել աշխարհիս մէջ: Այն մարդիք, որոնց հանգամանքներն իրանք յաջողումն լաւ մարդ դառնալ և փորձանքներից փախչել, դեռ չեն կարող երաշխաւորել, թէ նոքա երբէք չարութիւն չեն գործի: Ապա ուրեմն թողնենք, որ Ալֆրէդը վարժուի նկարչութեան մէջ և տեսնենք թէ ինչ դուրս կըգայ դորանից:

—Դուք ճշմարիտ որ չափազանց խեղճ կին էք, վրայ բերաւ Պասմօրը:—Մայրերից շատերը կարծես աշխատում են իրանց որդկերանց աւելի փչացնել, քան ինչպէս ստեղծուած են բնութիւնից ձեզպէսներին ցերեկ ժամանակ լապտերով պէտք որոնել. բայց ես արդէն այն էլ հասկանում եմ, թէ ինչու մարդկութեան բոլոր անդամները չեն փչացել:

Երբ ծերունի Պասմօրը դարձաւ այս նիւթին, էլ դժուար էր կանգնացնել նորան. բայց Կլարան չէր էլ մտածում դորա վերայ, որովհետև անմարդասիրական գաղափարները չէին մտնում Ալֆրէդի ականջում:

ԳԼՈՒԽ ԺԷ.

ՄՐՑԱՆԱԿՆԵՐ ԲԱՇԽԵԼԸ:

Օդի համարեա արևադարձային ջերմութիւնը չը խանգարեց պ. Չէստէրտօնին գնալ տեսնելու մրցանակներ բաշխելը: Հասկանալի է, որ նա սովորել էր Օստ—Ինդիայի սաստիկ շոգերին: Երբ նորա կառքը կանգնեց դռան մօտ, տեսաւ, որ իւր ազգականուհին ողջունեց մի տիկնոջ, որ փոխարէնը քաղաքավարութեամբ ու վայելչաբար պատասխանեց նորան: Յանկարծ նայելով այն տիկնոջ դէմքին, նա իսկոյն սաստիկ յուզուեցաւ և այս յուզմունքը մինչև անգամ չը կարողացաւ ծածկել: Նա և չը հարցրեց թէ ով էր այդ կինը, որովհետև ճանաչեց տղային, որ քաղցրութեամբ գլխով նշան էր տալիս Մօկօին: Նոքա իսկոյն մտան ուսումնարանի դռնից:

Սեսիլիային ձեռքից բռնելով՝ նա միւս հիւրերի հետ մտաւ դահլիճը, ուր պէտք է լինէր տարեկան հանդէսը և մի և նոյն ժամանակ քթի տակ խօսում էր.

—Ա՜խ, այս աչքերը,—ես սկզբում կարծեցի թէ իմ մօր կամ Ժօֆֆրէյի աչքերն եմ տեսնում: Խեղճ Ժօֆֆրէյ, շատ վաղ մեռաւ խեղճը. Նորա աչքերը զարմանալի կերպով նման էր մօրս աչքերին—նա էլ տուել է իւր աղջկան: Ի՜նչ ցաւում եմ, որ նա չէ....

Այդ միջոցին նորա մտածմունքը ընդհատեց տեսուչը, որ յարգութեամբ դառնալով ժողովրդեան, առաջարկեց հիւրերին նստել իրանց տեղերը: Պ. Չէստէրտօնին, իբրև ծերունի և հարուստ պարոնին, 'ի հարկէ, հանդիսականների առաջին կարգում նստացրին:

Մրցանակներ բաժանելը ամէն տեղ միատեսակ է լինում: Հանդիսաւոր երգեցող երաժշտական խումբ, խիստ ուսուցիչներ, իրանց համազգեստներով կոլոր սեղանի շուրջ նստած, վրդոված աշակերտներ, որոնք անհամբերութեամբ սպասում են նոյն տարուայ ուսումնարանական կարգապահութեան յետին ժամերի վերջանալուն. երբեմն հետաքրքիր և միշտ նոր ճառասացութիւններ և, վերջապէս, ամենահետաքրքրականը—պարգև ստանալուն արժանացածների անուանելը: Բարձր դասատանց աշակերտներին կանչելուց յետոյ, դէպի որը հասարակութիւնը միշտ աւելի կամ պակաս անտարբերութեամբ է վերաբերւում, սկսեցաւ առաջին դասատների բաղտաւորներին կանչելը:

—Լատինական թարգմանութիւնից — առաջին մրցանակը ստանում է Ռօբէրտ Չէստէրտօնը, հրատարակեց տեսուչը:

Ռօբէրտը հպարտ հպարտ գնաց բարձրացաւ նըշանակած տեղը:

—Ի՜նչ գեղեցիկ տղայ է, շշնչացին կանայք:

—Փոքր ինչ մեծ է իւր դասատան համար, ասաւ նոցանից մէկը, որի որդին բոլոր ընկերների մէջ ամենափոքրն էր:



—Ամենեւին չի էլ շփոթւում:

—Դա ապացոյց է, որ կատարեալ մարդ պէտք է դուրս գայ:

—Ի՞նչ քնքոյշ կազմուածք ունի—երեւում է որ բարձր դասի ընտանիքից պէտք է լինի:

—Լատինական վարժութիւնից—առաջին մրցանակը—Չէստէրտօնին, դարձեալ աւետեց տեսուչը:

—Ահա՛, տեսնո՞ւմ ես ինչ քաջ է, ասացին մայրերը, մինչդեռ Ռօբէրտը ստանալով մրցանակները երաժշտութեան ձայնի հետ մօտեցաւ բեմին, որ սա հագցնի նորա գլխին ուսուցչի տուած դափնեայ պսակը:

—Յունարէն լեզուից—առաջին մրցանակը - Չէստէրտօնին:—Այս անգամին բոլոր՝ ձեռնոցաւոր գեղեցիկ թաթիկները ծափահարութեամբ օդը թընդացրին եւ փոքրիկ օրիորդները բարձրացան աթոռների վրայ, որ աւելի լաւ տեսնեն այդ օրուայ հերոսին:

—Պատմութիւնից—առաջին մրցանակը—Ալֆրէդ Մօլլօյին, երկրորդը՝ Չէստէրտօնին:

—Ըհը՛, վերջապէս էլ առաջինը չէ, ձայնեցին տիկինները:

—Դա մէյ այն գրաւէչ մոյգ մազերով տղան է, Չէստէրտօնից ցած նստողը: Ա՜խ, ինչպէս ուրախացաւ նա:

—Աշխարհագրութիւնից—առաջին մրցանակը—Մօլլօյին, երկրորդը՝ Չէստէրտօնին:

Ալֆրէդը առանց ուշադրութիւն դարձնելու ծափահարութիւններին՝ վերցրեց իւր մրցանակները եւ ուրախ ուրախ բարձրացնելով գլխին, որպէս զի մայրը կարողանայ տեսնել, կամեցաւ իջնել իւր տեղից, երբ յանկարծ դարձեալ լսեց իւր անունը:

—Թուաբանութիւնից—առաջին մրցանակը—Մօլլօյին, երկրորդը՝ Չէստէրտօնին:

Նա շտապով յետ նայեց և տեսնելով որ ուսուցիչը սպասում է, որպէս զի գիրք տայ նորան և պսակ հագցնէ, ձեռքից բռնեց և շշնչաց.—Մօրս:

Ուսուցիչը ժպտաց: Նա գուցէ մտաբերեց, թէ ինչպէս շատ տարիներ առաջ իւր մանկութեան ժամանակ ինքը ուրախացրել է իւր մօրը առաջին ստացած պսակով և ցած գալով մրցանակները տուաւ տ. Մօլլօյին:

—Այս մրցանակները ձեզ են պատկանում, մայրիկ, ասաւ տղան համբուրելով նորան,—ես երբէք չէի կարող ստանալ սոցա, եթէ դուք չ'օգնէիք ինձ: Կը տեսնէք, որ միւս տարի պ. Պասմօրն էլ մրցանակներ կը ստանայ:

Հանդէսը մօտենում էր իւր վախճանին. սկսեցին նոր լեզուներից մրցանակ ստացող աշակերտներին կանչել:

—Գերմանական լեզուից—առաջին մրցանակը—Մօլլօյին:

—Օհօ, սա էլ յետ չը մնաց Չէստէրտօնից, բարձր ձայնով ասաւ մի գեղեցիկ կին և առաջին անգամ ինքը սկսաւ ծափ տալ, որին հետևեց և մնացած բոլորի ծափահարութիւնը:

—Դուք այստեղ էլի բարեկամ ունիք, քաղցրութեամբ հարցրեց տղային ուսուցիչը:

Ալֆրէդը համարեա ակամայ դարձաւ դէպի տ. Աշտօնը, որ չը ծածկեց իւր ուրախութիւնը նորա յաջողութեան համար: Սա տեսաւ նորան և ձեռքով կանչեց:

Ալֆրէդը փոքր ինչ վախով հետևեց ուսուցչին. բայց Սեսիլեան մրցանակը չը տուաւ նորան, այլ

գիրքն ու պսակը տալով պ. Չէստէրտօնին, ասաւ.

—Չէ՞ք կամենայ պսակել Մօկօի ազատողին, քեռիս. երկու ազգականներդ էլ պատիւ բերին այսօր ձեր անուան:

Քեռին բարկացած նայեց խեղճ Սեսիլիային:

—Ուժով չը պէտք է անել տաք ինձ այդ, ասաւ նա և մրցանակները յետ դարձնելով՝ երեսը շուռ տուաւ Ալֆրէդից:

Տղան թոյլ տուաւ, որ Սեսիլեան համբուրէ և պսակէ նրան, բայց տխուր յետ դարձաւ իւր տեղը:

Դուրս գնալիս նոքա ամէնքը դռներում դարձեալ հանդիպեցան միմեանց. Սեսիլեան նորից ողջունեց Կլարային, իսկ պ. Չէստէրտօնը, առանց նորան ուշադրութիւն դարձնելու՝ կառք նստեց:

ԳԼՈՒԽ ԺԸ.

ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐ

—Օհօ, մեր հերոսը դարձեալ պսակ է ստացել, աղաղակեց պ. Պասմօրը, դռնից ներս տանելով իւր գլուխը, որ ծածկած ունէր գիշերուայ մետաքսէ թասակով:

—Ի՞նչ նոր բան կայ, բարեկամ:

—Չորս մրցանակ առաջին կարգի. բայց որանից աւելի լաւն այն է, որ այժմ ես լատիներէնից վեցերորդ տեղն ունիմ բռնած և յունարէնից՝ երրորդը: Միւս տարի դոցանից էլ մրցանակներ կը ստանամ, ա՜յ կը տեսնէք. դուք այն ժամանակ կը գաք իմ հանդէսը տեսնելու:

—Ե՜ս, աղաւնեակս,—երբէք: Երաժշտութիւնը, ճառասացութիւնները, զարդարանքները—այս բոլոր

հանդէսները արդէն այնքան ձանձրացրել են ինձ կեանքիս մէջ, որ ես յօժար կամքով ամենևին այդպիսի բան չեմ ցանկանում աչքովս տեսնել։ Բայց այդ օրը, ինչպէս և այսօր, անշուշտ կը սպասեմ դռան մօտ մեր փոքրիկ պսակաւորի և նորա երջանիկ մօր հանդիսաւոր վերադարձին, որի ուրախութեանը ես հաճութեամբ եմ մասնակցում։ Լատիներէնի և յունարէնի մէջ յառաջադիմութիւն. հրաշք է, տղաս, հրաշք. generose puer sic itur ad astra. Առաջին մրցանակ պատմութիւնից. այդ էլ փառաւոր բան է, այդ էլ լաւ է։ Պատմութիւնը, ՚ի հարկէ, ուրախ գիտութիւն չէ. նա միայն յիշեցնում է մեզ մարդկութեան յիմարութիւններն ու խաբեբայութիւնները. բայց և այնպէս հարկաւոր է սովորել այն, որ աւելի լաւ ճանաչենք մերձաւորներին և չընկնենք նեղութեան մէջ։ Աշխարհագրութիւնից առաջին մրցանակը—վատ չէ։ Պէտք է գիտենալ երկրագունդը, որովհետև դա մեր ժամանակաւոր բնակարանն է։ Թուաբանութիւնից մըրցանակը—այո. պէտք է իմանալ հաշուելը, որպէս զի ուրիշին չը թոյլ տանք մեզ հարստահարելու և ոչ էլ մենք հարստահարենք ուրիշին ակամայ։ Գերմաներէն լեզուից մրցանակ. Էհ, ինչ մնաս, գերմանացիք ուսեալ մարդիք են և նոցա լեզուն քիչ չէ հարկաւոր նորան, ով փոքր ինչ աւելի բան է ուզում գիտենալ տղէտից։ Առհասարակ, եղբայր, դու քաջ ես. Ո՞վ կարող է վիճել դորա մասին։

Եւ նա օդի մէջ ցնցեց իւր ջղոտ ու չորացած բըռունցքը, կարծես թէ սպառնում էր դորանով երևակայական վիճող մարդուն. Ալֆրէդը ծիծաղեց։

—Այստեղ սանդուխի վրայ մի կանգնէք, ասաւ Կլարան,—գնանք մեզ մօտ, որովհետև այսօր միասին պէտք է ճաշենք, Ալֆրէդի յառաջադիմութիւնը տօ-

նելու համար։ Գնացէք սեղանատուն, իսկ ես մինչև շաքարեհաց կը պատրաստեմ։

—Այո, տիկին, միասին պէտք է ճաշենք, բայց միայն ձեր տանը չէ։ Ի՞նչ, զարմանո՞ւմ էք։ Էհէ, դուք իսկոյն դեռ աւելի կը զարմանաք. կը ճանաչէք ինձ։

Եւ նա բոլորովին գլուխը դուրս տարաւ դռնից, հպարտութեամբ ուղղուեցաւ և ձգուեցաւ։

—Օ՛հ, ինչ պճնասէր էք, գոչեց Ալֆրէդը։

—Հապա ինչ էիք կարծում,—այ մենք ինչպէս գիտենք, և ծաղրաբար ոտքը ոտքին դէմ տուաւ։—Հա՛, հա՛, հա՛, ես գաղտնի ապստամբութիւն եմ սարքել ձեր դէմ։ Մի պարոն հին ժամանակներում պրօֆէսոր էր, այս պատճառով էլ ծանօթ էր ուրիշ պրօֆէսորների հետ։ Այս պրօֆէսորներից մէկից նա իմացաւ, թէ նորան հետաքրքրող մի երիտասարդ մըրցանակներ պէտք է ստանայ, որի մասին նա խօսք տուաւ համրի պէս լռել, իսկ ծերունի Պասմորի խօսքը սուրբ է։ Եւ այսպէս երբ այդ պարոնը այս լսեց՝ վերառաւ խողանակը և սկսաւ մաքրել իւր անգործածելի թափած պատուական շորերն ու կօշիկները, որ, ինչպէս տեսնում էք, շատ լաւ յաջողեց նորան. իսկ այս բոլորը նա արաւ այն պատճառով, որ արժանի ընկեր լինի մի երիտասարդ տիկնոջ, որի հետ և որի որդու հետ նա պէտք է զբօսնէր քաղաքից դուրս։

—Քաղաքից դո՞ւրս, զմայլած գոչեց Ալֆրէդը։

—Այո, քաղաքից դուրս։ Մենք այնտեղ ծով չենք տեսնի, որի վերայ այդպէս սիրահարուած ես, gurgite vasto, բայց մենք կը բարձրանանք գետի շոգենաւով դէպի վեր մինչև Րիչմոնդի ծայրը։ Այնտեղ ես գիտեմ մի սքանչելի օթևան—հիւրանոց, ուր մի լաւ կը կշտանանք. յետոյ մենք ձուկ կ՚որսանք, կը զբօսնենք անտառակում և երեկոյին կը վերադառնանք այստեղ

հանգստանալու, եթէ միայն հարբած չենք լինի: Կարծեմ խօսք չունիք: Ես արդէն վաղուց մտածել էի այս հնարքը: Դէհ, ուրեմն գնամ գլխարկս բերեմ, որ գիտութեամբ այդ պատճառով ողորկել եմ, գրքերս կը պահեմ – իսկ այնուհետև՝ խոնարհ ծառադ եմ: Cras seria. Էլ այժմ ծանրութիւնը մի կողմ դնենք:

Պ. Պասսմօրը ծանր տանելով անշուշտ յունարէն և լատիներէն լեզուները չէր հասկանում, որովհետև նոցա մասին նա իսկոյն սկսաւ խօսել, երբ արդէն բարձրացան շոգենաւի տախտակամածի վրայ: Նա պատմեց Ալֆրէդին, թէ ինչպէս պէտք է պարապեն դոցանով արձակուրդի ժամանակ:

Կլարան ու նորա որդին մինչև անգամ մտքովն անգամ չէին անցկացնում, թէ այդ պատուական ծերունին սկսել էր նորից պարապել այն առարկաներով, որոնց հետ շատ էլ ծանօթ չէր, գիտութեամբ, որպէս զի հարկաւոր եղած միջոցին օգտակար լինի տղային: Ափերի և գետի գեղեցիկ տեսքը բազմաթիւ պարբերութիւններ յիշեցրին նորան Վիրգիլիոսից և ուրիշ հին բանաստեղծներից, որոնք երգել են բնութեան գեղեցկութիւնները: Ասում եմ հին, որովհետև նա արժանի չէր համարում իրան նորերի սովորելը:

Այդ իսկ օրը ընդհանուր համաձայնութեամբ որոշուեցան նաև արձակուրդների միւս պարապմունքները:

Ալֆրէդը ցանկացաւ պարապել երաժշտութեամբ, որ նա ստիպուած էր թողնել դասերի ժամանակը:

Նա չը մերժեց նաև դասական առարկաների պարապմունքն էլ, որովհետև հինգերորդումն էլ ցանկանում էր իւր տեղը բռնել:

Ծերունի Պասսմօրը առաջարկեց նոյնպէս չը մոռանալ անտառներում զբօսնելը, և այդ միջոցին խոստացաւ ծանօթացնել տղային բուսաբանութեան հետ:

Այսպիսի զբօսանքը, ինչպէս ինքն ասում էր, վաղ էր մտածել, բայց չէր իմանում, թէ հարկաւոր կը լինէր տ. Մօլլօյի համար, որը կարող էր շուտով յոգնել: Բայց այդ օրը տեսաւ, որ նա չէ յոգնում մանգալուց: Ծերունին ուրախացաւ որդու և մօր զուարճութեան վրայ և այնպէս աշխուժացաւ, որ կարծես թէ նորան մի նոր կաթիլ տուին երիտասարդական կեանքից: Նոքա զբօսնում էին ահագին ծառերի ստուերաշատ տերևների տակ, զուարճանում էին հողաբլուրից շրջակայքի տեսքով և բարձրանում էին բարձր բլրի վերայ, որտեղից, իբրև մառախուղի մէջ, հեռուից երևում էր Վինձօրի ամրոցը: Այնուհետև նոքա գետեզրի ուղղութեամբ գնացին դէպի մի առանձնացած փոքրիկ հիւրանոց: Այստեղ նոքա ճաշեցին, պտուղներ վայելեցին և թեթև գինի խմեցին այդ խնջոյքի պատճառի յառաջադիմութեան յարատևութեան և մէկմէկու կենաց համար: Զմայլելով արևի մայր մտնելու վերայ, ձուկ որսալով և ծաղիկներ հաւաքելով, նոքա չը նկատեցին անգամ, թէ ինչպէս մթնեցաւ, երբ արդէն ստիպուեցան շտապել դէպի շոգենաւը:

Այդ միջոցին վերկացաւ սաստիկ քամի, որից երկնքում հաւաքուեցան խիտ ամպեր. շուտով փոթորիկ պէտք է լինէր: Մեր ճանապարհորդները աւելի յարմար դատեցին գնալ Մօրտլէնեան կայարանը և այնտեղից երկաթուղիով գնալ քաղաք:

Անցնելով ծառերի մօտից, որոնք սարսափելի կերպով խշխշում էին և շարժւում, Կլարան յանկարծ կանգնեց և մի քանի քայլ յետ ու յետ գնաց:

— Ի՞նչ պատահեցաւ քեզ, մայրիկ, հարցրեց Ալֆրէդը:

— Կարծես ոտքը դրի բունի վրայ, որ իսկոյն վայր ընկաւ ծառից. յոյս ունիմ, որ մէջը թռչունի ձագեր

չէին լինի։—Նա կռացաւ ու վերցրեց և մթան մէջ ինչ-պէս և իցէ տեսաւ, որ իրաւի բուն էր, սակայն ոչ դատարկ։ Փաթթեց այդ բունը մի շորի մէջ և տարաւ կայարանը։ Այնտեղ տեսան, որ նորա մէջ երեք թռչունի ձագ կար, որոնցից երկուսը սատկած և մէկը միայն կենդանի էր մնացել վայր ընկնելիս։ Լապտերի լուսի վրայ այն խեղճը զարթնեց և կարծելով թէ լու-սացել է՝ կտուցը բաց արաւ, կարծես կերակուր էր խնդրում։

—Օ՛հ, լաւ թռչուն չէ՞ սա, ուրախ ուրախ ասաւ Ալֆրէդը։—Սա ի՞նչ թռչուն է։—Ա՛խ, սոված պէտք է լինի անշուշտ,—չէ՞ կարելի մի փոքր բան տալ ուտելու։

—Տանը լաւ կերակուր կը գտնենք սորա համար, իսկ այժմ մինչև փորձի համար հաց կը տամ. գուցէ որ ուտի, ասաւ տ. Մօլլօյն և ջրի մէջ թացանելով հացի փշուրը՝ դրաւ թռչունի բերանը։

—Ուտում է, ուտում է. կենդանի կը մնայ, ու-րախանում էր Ալֆրէդը։

—Մայրիկ, տուն պէտք է տանենք սորան չէ՞ և ընտանի դարձնենք. ո՛հ, ինչպէս սիրում եմ, երբ տանը թռչուն կայ։

Նոքա իրանց փոքրիկ գիւտը յաջողութեամբ տա-րան տուն, ուր զգուշութեամբ դրին նորան բամբակով լի կողովի մէջ։

Ալֆրէդը, քնելուց առաջ ողջունելով իւր մօրը, անակնկալ կերպով հարցրեց նորան.—մայրիկ, երբ քո բարեկամ Սէսիլիան տարաւ ինձ իւր քեռու մօտ և ասաւ. հարցրէք պստիկը սորան, սա ձեր բարեկամն է,—նա երեսը շուռ տուաւ ինձանից և ձեռները դարսեց գրպանի մէջ. այս բանը շատ անքաղաքավարի արար-մունք էր նորա կողմից։ Միթէ իրաւի ճշմարիտ է, որ նա իմ բարեկամս է։

—Այո, նա թէ՛ քեզ և թէ՛ Ռօբէրտի բարեկամն է։ Ռօբէրտին նա որդեգրեց, այսինքն իբրև որդի ընդու-նեց, իսկ ինձ ու քեզ աչքով անգամ չէ ուզում տեսնել, որովհետև վախենում է, թէ մենք ոչինչ չուզենք նո-րանից։

—Է՛հ, թող նա ապահով լինի, որ մենք նեղու-թիւն չենք տալ նորան. միթէ աղքատ է կարծում մեզ։ Թող Ռօբէրտը նորա որդին լինի, եթէ ցանկութիւն ունէ, իսկ ես աւելի ցանկանում եմ այն լինել, ինչ որ այժմս եմ։

—Ինձ թւում է, թէ պ. Զէստէրտօնը խիստ փչացնում է Ռօբէրտին. մայրը օգնելու ճար չունէ, որովհետև որդու վերայ ոչինչ ձայն չունէ, այլ բոլոր իրաւունքը նորան է տուել։

—Ճշմարիտ ես ասում, մայրիկ. Ռօբէրտը ինձ այժմ այնքան չէ դուր գալիս, ինչպէս առաջ. նա շատ շատ կամակորում է ընկերների հետ և շատ հպարտացել է։

—Նորան շատ չէ կարելի մեղադրել այդ բանի մէջ, սիրելիս, յանցաւորները նոքա են, որոնք այդպէս են մեծացնում նորան։

—Ես ցանկանում եմ, որ միմիայն դու դաստիա-րակես ինձ. այդ դէպքում մեղաւորը ես կը լինեմ, եթէ վատ մեծանամ. որովհետև ոչինչ վատ բան չես սո-վորցնի դու ինձ, այնպէս չէ՞։ Մնաս բարեաւ, մայրիկս։

—Այո, լաւ արի, որ մերժեցի, մտածում էր Կլարան՝ անկողին մտնելիս։

Միևնոյն երեկոյին պ. Զէստէրտօնը մեծ հացկե-րոյթ ունէր 'ի պատիւ Ռօբէրտի, որ հազիւ կէս գիշե-րին քաշուեցաւ իւր սենեակը, ուռած ու փքուած տկ-ճորի, պէս չափից աւելի կերակուր ուտելուց և հիւրերի շողոքորթութիւնները վայելելուց։

ԳԼՈՒԽ ԺԹ.

ԶՈՀԵՐ։

—Բարի լոյս, տիկին Մօլլօյ, ասաւ փոքրիկ Լաուրան տիկին Մագգիի հետ ներս մտնելով իւր ուսուցչուհու սենեակը։—Շատ ուրախ եմ, որ դուք տանն էք, որովհետև նախ քան ամառանոց գնալս ուզում եմ տեսնուել ձեզ հետ։

Կլարան համբուրեց իւր փոքրիկ աշակերտուհուն և նստաւ տիկ. Մագգիի մօտ, որ այնքան աստիճան բարձրանալուց՝ բոլորովին հեւում էր։

—Ի՜նչ լաւ սարքուել էք այստեղ, ասաւ Լաուրան,—ձեր լուսամուտի առաջ իսկ և իսկ փոքրիկ պարտէզ է. ի՛նչ գեղեցիկ և հոտաւէտ ծաղիկներ են։ Մեր տանը սենեակում միայն արմաւենի ունենք և գուտտապերչա առանց ծաղիկների. էլի կայ ինչ որ մի բոյս կարմիր տերեւներով. ես կարծում եմ, որ եթէ նա ծաղկէր, ծաղիկները կանաչ կը լինէին. և այդ շատ էլ գեղեցիկ չէր լինի։ Իսկ ի՞նչ են կոչւում ձեր այն ծաղիկները։

—Դոքա կոչւում են fleurs de France. դոքա շատ մեծ խնամք չեն ուզում, բայց ինչպէս տեսնում էք, շատ գեղեցիկ են։ Եթէ կը կամենաք Ալֆրէդը փունջ կը կապէ ձեզ համար։

—Այդտեղ անկիւնում ի՞նչ էք շինում, Ալֆրէդ, հարցրեց աղջիկը մօտենալով նորան։

—Ես կերակրում եմ սիրունիկիս, կուզե՞ս տեսնել։

—Թռչնի՜կ, աղաղակեց Լաուրան,—ախ, ի՛նչ լաւն է. համարեա ազէ ամենեւին չունէ և դեռ ի՛նչ կարճիկ թեւեր ունէ։ Ո՞րտեղից գտաք սորան. ի՞նչպէս է կոչւում։ Կարմիր և գորշ փետուրիկներ ունէ. շատ սիրուն թռչուն պէտք է լինի։ Լաւ պէտք է երգէ թէ ո՛չ։

—Մայրս կարծում է, որ դա խածկտիկ է, պատասխանեց Ալֆրէդը ծիծաղելով և չիմանալով, թէ նորա բազմաթիւ հարցերից դեռ ո՞րին պատասխանէ։—Դա շատ գեղեցիկ և երգող թռչուն է։ Մենք դորան գտանք Րիչմօնդի անտառակում ծառի տակ իւր բնի մէջ. ահա և բունը տեսնո՞ւմ էք։ Այժմ ես կը կանչեմ դորան և կը տեսնէք, որ կը թռչէ դէպի ինձ։ Կի-րի-կի, կի-րի-կի։

Թռչունը դուրս սլքուեցաւ Լաուրայի ձեռքից, թռաւ Ալֆրէդի մօտ և նստաւ նորա մատի վրայ։

—Ի՜նչ սիրելի բան է, գոչեց Լաուրան։—Կարո՞ղ է ինքը ուտել. ինչո՞վ էք կերակրում դորան։

—Ահա սորա պնակը. սա այժմ ինքն էլ կարող է ուտել, բայց միայն շատ ծոյլ է և անկարգ. այս պատճառով սորան աւելի դուր է գալիս, երբ փշրանքները ուղղակի գնում են իւր բերանը։

Լաուրան ինքը փորձեց կերակրել նորան և շուտով կարողացաւ օգուտ քաղել այն վայրկեաններից, երբ թռչունի բերանը բաց էր լինում. երբ թռչունը կշտացաւ և մտաւ իւր բունը, աղջիկը ձայն տուաւ կի—րի—կի. թռչունը դուրս թռաւ դէպի նա։

—Օ՛հ, նայեցէք, հիացած գոչեց նա,—սա ինձ էլ է ճանաչում, ինչպէս և Ալֆրէդին։ Ես էլ շուտով կ՚ուզէի մի այսպիսի թռչուն ունենալ։

Ալֆրէդը շատ առատաձեռն էր, երբ գործը վերաբերում էր այն բանին, որ ձեռք պէտք է վերցնէր իւր ունեցածից ուրիշների օգտի համար։ Քանի՛ քանի՛ անգամ նա իւր շոկոլադը կամ խնձորը տուել էր փողոցի տղայոց, երբ տեսել էր, որ նոքա ագահութեամբ նայելիս են եղել, իսկ ինքը բաւականացել է լոկ սե

հացով ու կարագով: Ուստի և այս անգամ էլ այսպէս պատասխանեց Լաուրային:

—Ի՞նչ վնաս, վերցրէք այս Թռչունը:

Օրիորդի աչքերը ուրախութիւնից փայլեցան: Նա սկզբում ձեռքը մեկնեց դէպի Թռչունը, բայց իսկոյն ետ յետ քաշեց:

—Ո՛հ, ոչ, ասաց նա,—ես չեմ կամենում զրկել ձեզ դորանից:

—Հաւատացնում եմ ձեզ, որ ամենեւին չեմ ցաւում դորան կորցնելուս վերայ. միմիայն լաւ պահեցէք և ինչպէս հարկն է սերմը փշրեցէք, որովհետև սա դեռ չի կարող կտուցով կոտրել:

Այդ միջոցին խառնուեցաւ խօսակցութեան մէջ տ. Մագգին:

—Բայց, Լաուրա ջան, չէ՞ որ չենք կարող մենք հետներս տանել դորան մեր ճանապարհորդութեան ժամանակ. աւելի լաւ է, որ դեռ այստեղ մնայ: Դու գիտես, որ մենք առաջ պէտք է գնանք հօրեղբօրդ մօտ, յետոյ մեծ մօրդ, յետոյ . . .

—Ախ իրաւ, ճշմարիտ է, տխրութեամբ խօսքը խլեց օրիորդը,—ուրեմն ի՞նչ պէտք է անեմ:

—Թող Թռչունը առ այժմ այստեղ մնայ, սիրելիս, ասաց տ. Մոլլօյն,—Ալֆրէդը մինչև աւելի լաւ կը վարժեցնէ դորան և երբ դու գաս, արդէն ամրապնդուած կը լինի և կ'երգէ. այնուհետև կը վերցնես քեզ համար:

—Դուք համաձա՞յն էք, Ալֆրէդ: Բայց միայն եթէ իմ վերադառնալուց յետոյ կ'ախոստաք այդ Թռչունը ինձ տալու համար, խոստացէք ինձ ճշմարիտն ասել, ապա թէ ոչ ինձ անախորժ կը թուայ, որ խլեմ ձեզանից դորան:

—Ոչ, այն ժամանակ աւելի լաւ կը լինի, որ ես

ինքս յօժարութեամբ տամ քեզ, որովհետև այնուհետև ես դարձեալ կ'սկսեմ ուսումնարան գնալ, և սա կարող է միայն խանգարել դասերս լաւ պատրաստելուն, որի համար ինձ կը պատժեն:

Տիկին Մոլլօյն ժպտաց: Ալֆրէդը միշտ այսպիսի միջոցներով հաւատացնում էր, թէ ինքը չէ ափսոսում իւր ունեցածից բաժանուելու վրայ, եթէ որ չէին ցանկանում վերցնել նորա, որոց ինքը ընծայում էր: Նա գրկեց Լաուրային և ցանկացաւ նորան ուրախ արձակուրդ:

Ալֆրէդը շարունակեց Թռչունին վարժեցնել. մինչև անգամ սովորեցրեց նորան մագլցել ճիւղերի վերայ (որ նա յարմարացնում էր փայտի կտորներից), ինչպէս որ մագլցում են Թութակները. Նա ցանկանում էր նուիրել Լաուրային՝ մի կրթուած Թռչուն: Չնայելով, որ այդ Թռչունը ուրիշ Թռչունների երգի ձայն չէր լսել, իւր բնազդման և մասամբ գուցէ տ. Մոլլօյի դաշնամուրի վրայ ածելու շնորհիւ՝ Նոյեմբերի վերջին արդէն շատ լաւ երգում էր: Ալֆրէդը չափազանց սիրում էր իւր սանիկին, և որովհետև մենք միշտ ցանկանում ենք երկար ժամանակ աչքի առաջ ունենալ մեր սիրելի էակների պատկերները, որոնցից բաժանւում ենք, նա իւր ձեռատետրը լցրեց Թռչունի նկարներով: Մի տեղ Թռչունը նկարած էր բերանաբաց և երկայնացած վզով, իբրև թէ երգում է. միւս տեղ ճիւղի վրայ նստած. յետոյ իւր բնի մէջ նստած, որը տեղաւորուած էր վանդակի մի անկիւնում. սերմ կտցահարելիս. քնած ժամանակ, գլուխը թևի տակ կոխած և այլն:

Արդէն Լաուրան կարող էր գալ. Թռչնիկը ամէն տեղ կար:

Մի անգամ Նոյեմբերի վերջին Ալֆրէդը գնաց Մարթային տեսութիւն: Խեղճ աղջիկը էլ առաջուայ

պէս չէր տանջւում, բայց հետզհետէ թուլանում էր, այնպէս որ առանց ուրիշի օգնութեան մինչև անգամ չէր կարողանում շուռ գալ միւս կողքի վրայ։ Բժիշկը, որին կանչել էր տիկին Մօլլօյն, գլուխը թափ տուաւ ու ասաւ.—Հազիւ թէ դա ձմեռուայ կէսն անցկացնէ։ Մեծ մայրը առաջուանից փոքր ինչ լաւ էր նայում նորա վրայ, որովհետև գիտէր, որ Մարթային կորցնելով՝ պէտք է կորցնէ իւր ստացած ողորմութեան մեծ մասը, և այս պատճառով պառաւը ուզում էր աւելի երկարացնել նորա կեանքը։

Յակովբը շարունակ էլի մաքրում էր անցորդների կօշիկները։ Ալֆրէդի մի քանի ընկերները տեսնելով, որ երբեմն երբեմն նա խօսում էր կօշիկ սրբողի հետ, աշակերտներին յատուկ կոպիտ ծաղրածութեամբ հարցնում էին նորան. չլինի՞ թէ քո եղբայրն է դա։ Բայց Ալֆրէդը, որ սիրում էր Յակովբին, ամենևին չէր վիրաւորւում այսպիսի խօսքերից և չէր կռւում նոցա հետ, այլ ուղղակի պատմում էր նոցա որբերի դրութիւնը։ Երեխայք, որքան էլ կռւասէր ու չար լինեն, մեծ մասամբ բարի սիրտ ունեն, այս պատճառով այս պատմութիւնը այնպէս ներգործում էր նոցա վրայ, որ շատ անգամ, երբ նոքա մէկ երկու պէնս աւելորդ ունէին, տալիս էին Յակովբին իրանց կօշիկները մաքրելու վարձ, որը այսպիսով կարողանում էր աւելի վաղ վերադառնալ Մարթայի մօտ, որովհետև առաջուանից շուտ էր վաստակում բաւականաչափ փող։

Ալֆրէդն ու նորա մայրը մի օր տեսան, որ Մարթան շատ ոգևորուած է։

—Օ՛հ, տիկի՛ն, աղաղակեց նա, երբ տեսաւ Կլարային։—Որ իմանաք թէ ինչ երջանիկ եմ այսօր։ Ես լսեցի Թռչունի երգելու ձայնը։

—Թռչունի՞ ձայն, սիրելի՛ս։ Բայց միթէ այդպէս

հազուագիւտ են այս տանիքների վրայ թռչունները։

—Ես շատ եմ տեսնում ճնճղուկներ և ծիծեռնակներ, միայն նա բոլորովին ուրիշ տեսակ թռչուն էր. հեռուից չը կարողացայ պարզ որոշել, ուստի և չեմ կարող ասել, թէ ինչ թռչուն էր. նա նստած էր դիմացի լուսամուտի վանդակափեղկի վրայ և երգում էր— ինչպէս գեղեցիկ էր երգում։

—Խեղճ Մարթա, և այդ բանը այդքան ուրախացնում է՞ ձեզ։

—Յոյս ունիմ, որ վաղն էլ կը գայ և ամէն օր կը գայ. նորա երգերը շատ բաներ են յիշեցնում ինձ։ Երբ ես փոքր էի, դեռ հօրս մահից և մօրս հիւանդութիւնից առաջ, մենք սովորաբար կիւրակի օրերը զբօսնում էինք քաղաքից դուրս։ Ո՜րքան առաջ է թըւում ինձ այդ բանը։ Իսկ երբ թռչունը երգում էր, այդ բոլորը պատկերանում էր յիշողութեանս առաջ, ինչպէս աչքիս առաջ կատարուող բան։ Ես աչքերս փակեցի և տեսայ կանաչ խոտ, բարձր ծառեր, կարկաչուն վտակներ։ Յակովբը քնած էր հօրս կռան վերայ. իսկ մայրս բռնել էր իմ ձեռքից և երբեմն երբեմն թեքւում էր՝ իմ փնջիկի համար որ և է մի գեղեցիկ վայրի ծաղիկ կտրելու։ Սա մի հրաշալի ժամանակ էր և թռչնիկը այս բոլորը նորից մտաբերեց ինձ։

Ալֆրէդը ականջ էր դնում մտածման մէջ խորասուզուած։ Ճանապարհին մինչև տուն լուռ էր և խառնիխուռն պատասխան էր տալիս մօր տուած հարցերին։ Տանը ողջունեց նորան ուրախ թռչնիկը։ Տղան բաց արաւ վանդակի դուռը և երբ թռչնիկը ուրախացած նստաւ նորա ուսին, քաղցրութեամբ ասաւ նորան.

—Ա՜խ, որքան ցաւում եմ, որ քեզ Լաուրային խոստացայ։

Կարծես դիտմամբ Հէնց այդ պատահական նկատողութիւնն անելիս՝ ինքը Լաուրան տ. Մագգիի Հետ, որ սանդուղի ներքեւ մեքենայի պէս ձայն էր Հանում, ներս մտաւ սենեակը:

—Ահա եկայ, սիրելի տիկին, ասաւ նա գրկելով Կլարային:—Ես այսօր առաւօտ եմ եկել գիւղից եւ ուղղակի ձեզ մօտ եմ գալիս: Ես շատ էլ չեմ պարապել արձակուրդներին, այնպէս որ այժմ արդէն ժամանակ է, որ սկսեմ դասերով պարապել: Ես շուտ շուտ մտաբերում էի ձեզ. առո՞ղջ էք եղել մինչեւ այժմ: Իսկ Ալֆրէդը:

—Թռչնիկն էլ առողջ է, աղաղակեց օրիորդը, վազելով դէպի Ալֆրէդը: Բայց ինչպէս զարմացաւ, երբ վերջինս շփոթուած կերպարանքով դիմաւորեց նորան:

—Ի՞նչ է եղել քեզ, Ալֆրէդ: Ա՛խ, իմա՛ւ, Հասկանում եմ. երեւի դուք մտաբերեցիք, որ ինձ էք խոստացել Թռչնիկը, ուստի եւ շփոթուած էք:

—Ամենեւին շփոթուած չեմ, միայն...միայն, ասացէք խնդրեմ, դուք սրտո՞վ էք ուզում այս Թռչունն ունենալ:

—Այդ կախուած է նորանից, թէ դուք ցաւո՞ւմ էք թէ ոչ դորանից բաժանուելու վրայ: Նորա շրթունքները դողում էին եւ աչքերից արտասուք Հոսեցաւ, որ ցոյց էր տալիս, թէ բոլորովին այն չէ մտածում, ինչ որ խօսում է: Ալֆրէդը նայեց նորան եւ փոքր մնաց, որ ինքն էլ լաց լինէր, միայն սիրտ առաւ ու ասաւ.

—Ահա բանն ինչումն է: Ես ճանաչում եմ մի խեղճ աղջկան, որ խիստ Հիւանդ է եւ Թշուառ: Նա երկար չի ապրի եւ մի բան չունի, որով զբաղուի կամ մխիթարուի: Նա իր խղճուկ սենեկի բաց լուսամուտից լսել է Թռչնիկի երգի ձայն եւ այս բանը ուրախացրել է նորան մի ամբողջ օր: Սակայն վաղը կարող է Թռչնիկը

էլ չը գայ եւ նա նոյնպէս միայնակ կը մնայ, ինչպէս էր առաջ: Ես կարծում եմ, որ եթէ մեր Թռչնիկը կարողանայ իր երգով մխիթարել նորան, նա այնպէս Թշուառ չի լինի: Բայց մի լա՛ց լինիր, Լաուրա, Մարթաի Համար ես որտեղից լինի մի ուրիշ Թռչուն կը գտնեմ:

—Չեմ լաց լինում, Ալֆրէդ, ասաւ օրիորդը աչքերը սրբելով,—այսինքն լաց եմ լինում, բայց այժմ ոչ թէ այս Թռչնիկի, այլ խեղճ Մարթաի Համար: Նորան տուէք Թռչնիկը: Օ՛Հ, ինչ լաւն է, ինչ գեղեցիկ գլուխ, կտուց, կարմիր ու գորշ փետուրիկներ ունէ: Մնաս բարեաւ, խեղճ Թռչնիկս, ես չեմ ուզում քեզ, ես տալիս եմ քեզ Մարթային—Մարթային, Հասկանո՞ւմ ես, սիրելիս: Քաղցր վարուիր նորա Հետ, երգիր նորա Համար սիրուն երգեր, որ նա երջանիկ լինի: Իսկ դուք, Ալֆրէդ, ե՞րբ կը տանէք սորան:

Ալֆրէդը նայեց իր մօրը:

—Մենք իսկոյն եկանք այնտեղից, իսկ եթէ մայրիկը կը կամենայ...

—Այո՛, աղաւնեակս, Մարթան շատ երջանիկ կը լինի, վրայ բերաւ տիկին Մօլլօյն:

—Ես էլ ուզում եմ գնալ այնտեղ, գոչեց Լաուրան,—ինձ էլ տարէք, խնդրեմ:

Այդ միջոցին խառնուեցաւ տ. Մագգին: Նա մի խելացի կին էր. ցանկացաւ իմանալ, թէ ազնի՞ւ ընտանիքի մէջ է բնակւում Մարթան, կամ այնտեղ գնացողին կողոպտուելու կամ սպանուելու վտանգ Հօ չկա՞յ եւ այլն: Կլարան, գիտենալով, որ այս այցելութիւնը ընտիր բարոյական ազդեցութիւն կունենայ իր աշակերտուՀու վրայ, ապաՀովացրեց տ. Մագգիին եւ նոքա ճանապարՀ ընկան: Լաուրան Թոյլ տուաւ Ալֆրէդին վանդակը տանել, միայն այն պայմանով, որ ինքը առաջարկէ Հիւանդին այդ Թռչնիկը:

Կարող էք երեւակայել, թէ որչափ զարմացան Մարթան ու Յակոբը այս անակնկալ այցելութեան վրայ:

—Մարթա՛, ասաց Լաուրան,—ահա երգող թըռչուն. Ալֆրէդը կրթեց սրան ինձ համար, բայց երբ ես իմացայ, որ ձեզ ուրախացնում է թռչունների երգը, կամեցայ ձեզ տալ. և ահա մենք երկուսս էլ բերինք սրան այստեղ: Դէհ, երգիր, Թռչնիկս:

Թռչնիկը շատ հասկացող էր, նա հնազանդեցաւ ու երգեց: Մարթան ուրախութիւնից լաց եղաւ:

—Սա ամէն ժամանակ ձեր մասին կը խօսէ ինձ հետ, ասաց նա երեխայից:—Ի՞նչքան բարեսիրտ էք դուք, օրիորդ. դուք մերժել էք այս թռչունը մի խեղճ հիւանդ աղջկայ համար, որին մինչև անգամ ամենեւին չէիք ճանաչում:

—Ես ամենեւին չեմ ցաւում դորա համար, ընդհատեց նորա խօսքը Լաուրան,—ահա՛ դորա համար սերմ. ձեր փոքրիկ եղբայրը կը խնամէ դորան, որովհետև ձեզ համար չափազանց դժուար կը լինի հոգալ դորա մասին: Ես դարձեալ շուտով կը գամ ձեզ մօտ. մնաք բարեաւ, Մարթա՛:

Նա շտապով ցած իջաւ սանդուղից և փողոցում ձեռքերով ծածկեց դէմքը ու լաց եղաւ:

—Ցաւո՞ւմ էք, որ բաժանուեցաք Թռչնիկից, սիրելի՛ս, հարցրեց նորան Կլարան:

—Ախ, ոչ,—բայց մեղքս գալիս են այդ խեղճերը: Ես ամենեւին մտքովս էլ չեմ անցկացրել, թէ կարող է մարդ այդպէս թշուառ լինել:

—Մի՞թէ չէի՞ր իմացել, սիրելի Լաուրա, որ Լօնդօնում աղքատ մարդիկ կան:

—Աղքա՛տ մարդիկ—ա՛խ, այո, ես գիտէի և մինչև անգամ երբեմն երբեմն փողոցում ողորմութիւն էի տա-

լիս նոցա, բայց ես չեմ երեւակայել, թէ նոքա այդպէս վատ են ապրում: Ես՝ էլ ամենեւին չեմ ուզում ոչ քաղցրեղէն, ոչ խաղալիքներ, այլ բոլորը կը տամ Մարթային:

—Բոլո՞րը. դա խիստ շատ է. բայց, սիրելի՛ս, երբ դու կը մեծանաս և երբ կունենաս քո սեպհական փողերը, յիշի՛ր, որ այն փողերը քո ցանկութիւնները և երեւակայութիւնը բաւականացնելուց առաւել լաւ բաների համար կարելի է պահել: Սակայն, տ. Մագդէն սպասում է քեզ. արդէն բաւական ուշ է, նա մանաւանդ չը պէտք է անհանգստութիւն պատճառես հօրդ:

ԳԼՈՒԽ Ի.

ՈՐԴԵԳՐՈՒԹԻՒՆԸ ՍԿՍՈՒՄ Է ՊՏՈՒՂՆԵՐ ԲԵՐԵԼ:

Դժուար է երեւակայել, թէ երբեմն ինչ մեծ փոփոխութիւն է պատահում մեր մէջ կարճ ժամանակուայ ընթացքում, ինչպէս դէպի լաւը, նոյնպէս, եւ առաւել, դէպի վատը: Ալֆրէդը շատ աշխատեց արձակուրդներին և դասերն սկսելիս հինգ առաջնակարգ աշակերտներից մինն էր: Նա չը վհատեցաւ սորանով, այլ, ընդհակառակն, աւելի ույժ ստացաւ և սկսաւ առաջուանից աւելի աշխատել, ինքն իրան խօսք տալով, որ ինչպէս և իցէ տարեկան մրցանակը ստանայ ծերունի Պասմօրի համար, որ այնպէս խնամքով օգնում էր նորան:

Ալֆրէդը գոռոզ չէր, բայց հպարտ էր և չէր կամենում առանց վարձատրութեան թողնել նորա մատուցած ծառայութիւնները. Նա գիտէր, որ զանազան եղանակով կարելի էր վարձատրել: Նա ուրախ էր, որ ոչինչ պարտական չէր պ. Ջէստէրտօնին, որովհետև ոչնչով չէր կարող վարձահատոյց լինել նորան. իսկ

Պատմօրի խորհուրդներն ու օգնութիւնը սիրով էր ընդունում, որովհետև տեսնում էր, որ նա բոլորովին վարձատրուած էր համարում նրան իր շնորհակալութեամբ և յառաջադիմութեամբ գիտութեան մէջ: Ծերունին ասում էր, թէ պրօֆէսօրի հպարտութիւնը կազմում են նրա աշակերտները, և ամենափոքր անզգոյշ յարաբերութիւնը վերջինների գործի հետ նրան վիրաւորանք է թւում:

Մինչև որ Ալֆրէդը այսպէս քաջութեամբ պատերազմում էր լատիներէն և յունարէն քերականութիւնների դժուարութիւնների հետ, նրա բարեկամ Ռօբէրտը աստիճանաբար իջնում էր այն հեշտ ու հանգիստ ճանապարհից, որ տանում է դէպի անգործութեան խորխորատը և աննկատելի կերպով ընկնում էր ծուլութեան և անհոգութեան մէջ:

Նա մտածում էր, թէ արձակուրդները լոկ հանգստութեան համար են միայն, ուստի և բոլորովին անձնատուր եղաւ անգործութեան, մանաւանդ որ իր յարգելի դաստիարակի կողմից էլ ոչինչ արգելք չէր գտնում դորա մասին: Ճշմարիտ է, արձակուրդների վերջը նա պատուական ձի նստել գիտէր և շատ շատ ձիարշաւներին յաճախելու պատճառով՝ մէկ տեսնելով կարող էր ինչպէս ձիաների, նոյնպէս և նոցա ծառայից տեսակն ու արժէքն իմանալ: Այնուհետև նա զգաց, որ իր աչքերը մթնում են և այս պատճառով երկար ժամանակ ակնոց գործ դրաւ, բայց նորա աշխատանքները յաջող հետևանք չունեցան, մուշտէկաւի մէջ յաջողակութիւն չունենալու պատճառով.—ախր ամէն բան միասին չի կարելի սովորել:

Արձակուրդից յետոյ նա զուարճութիւններից այնպէս յոգնել էր, որ ակամայ կամօք վերառաւ գիրքը ձեռքին: Մի ժամանակից յետոյ արդէն տեսաւ, որ

Ալֆրէդը բարձր էր իրանից: Այս բանը գրգռեց նորա ինքնասիրութիւնը և միտքը դրաւ աշխատել ինչպէս հարկն է. սակայն ասելը հեշտ է կատարելուց: Որպէս զի նորից դասատան գլուխն անցնէր Ռօբէրտը՝ պէտք է իւր բոլոր ոյժերը լարէր, բայց այս չէր կարող. առաջուայ պէս ուզում էր յառաջադիմութիւն, միայն փոքր աշխատանքով: Նա չէր հասկանում, թէ կատարեալ յաղթանակն այն է, որ ձեռք է բերւում մեծ աշխատանքով և առաջին իսկ պատահած դժուարութիւնը կանգնացրեց նորան:

Ռօբէրտը նկատելով, որ ինքը շարունակ վայր է իջնում դասատանը, վարուեցաւ այն աղուէսի պէս, որ ասաւ թէ „խաղողը բոլորովին խակ է“: Հարցնում եմ, դա լաւ է, թէ անյաջողութեան վերայ ողբալը: Իմ կարծիքով, սիրելի կարդացողներ, աղուէսը խելացի էր վարուած, եթէ, յիրաւի, անհնար էր խաղողը ձեռք ձգել. իսկ եթէ կարելի էր և հարկաւոր էր խաղողը ձեռք բերել, այդ դէպքում ես խորհուրդ կը տայի դառնալ այն խելօք ծնողին, որ կոչւում է հաստատամութիւն և որ ամէն տեսակ հնարք սովորցնում է ցանկացած նպատակին հասնելու համար: Ռօբէրտը երեսը շուռ տուաւ խաղողից, կամ ուրիշ խօսքով, ձեռքով էր անում առաջին տեղին դասատան մէջ և այդպիսով շուտով իջաւ տասներկուերորդ տեղը:

Աշնան ցրտերը սկսուելուն պէս խեղճ Մօկօն երկարաւ հազ ընկաւ. կլիման խիստ ցուրտ էր նորա համար: Բժիշկը յայտնեց, թէ բարակացաւ է ընկել և թէ հազիւ մինչև գարուն ապրի. Ճշմարիտ էլ, յունվարի սկզբին Մօկօն փոխուեցաւ իւր նախնիք—Գանումանի մօտ, Վիշնուի դրախտի մէջ: Մագիգխադը, որ նորա վերջին օրերը շատ շատ դուրս էր բերում նորան բաց օդի մէջ արեգակի տակ, երեխայի պէս վերմակի մէջ փաթթած

ձեռքին բռնելով, պատմում էր, թէ մի անգամ Մօկօն դուրս է սլացել նորանից և կախ է ընկել մի սևամազ տղայի վզից, որ կանչել է „Մօկօ“: Այս վերջին շնորհակալութիւնն էր կապկի իւր ազատիչ — Ալֆրէդ Մօլլօյին:

Մօկօի մահը վնասակար էր Ռօբէրտի համար: Այժմ քեռին էլ ոչ ոք արգելող չունէր նորան հետը կառքով ման ածելու, և պ. Ջէստէրտօնը արդէն առանց քաշուելու շատ շատ տանում էր իւր ազգականին զբօսնելու, թատրօնները, մանկական երեկոներին և այլն: Հասկանալի է, որ այսպիսի հանգամանքներում դասերն ու ուսումնարանը տղայի միտը չէին գալիս: Երբ հարկաւոր էր որ և է մի դժուար գրաւոր աշխատութիւն անել, յարգելի դաստիարակը ինքն էր կատարում, որ ինքը շուտով ազատուի, իսկ Ռօբէրտը հաճիւ կամակորում էր իւր ծառային, որ հագցնում էր նորան ուր և իցէ հիւր գնալու համար: Այսպիսով նորա ուսման թուանշանները աւելի ու աւելի անբաւարար էին դառնում: Երբ Սէսիլիան փորձում էր յանդիմանել նորան, քեռին ուսերը վեր էր քաշում և ասում էր.

—Իմ ժառանգս վարժապետ չը պէտք է դառնայ:

Քանի որ Ռօբէրտը յառաջադիմութիւն էր ցոյց տալիս մարմնամարզութեան, զինախաղութեան և ձիարշաւի մէջ, քեռին հանդիստ էր: Ռօբէրտը, ինքն էլ սիրելով այս զուարճութիւնները, հետզհետէ աւելի մօտենում էր քեռուն և աննշմարելի կերպով սովորութիւն էր շինում խաբել նորան ամէն բանի մէջ—'ի հարկէ շնորհակալութեան մտքով չէ, այլ այն պատճառով, որ նրան օգուտ էր այդպէս վարուելը: Այսպիսով նա թէ իւր ձայնին և թէ բոլոր շարժուածքին տուաւ մի տեսակ կատուի կեղծաւորութիւն, որ թէպէտ շատ հեռու էր անկեղծութիւնից, բայց արի

տես որ չափազանց դուր էր գալիս տ. Լիտըլտօնին:

—Ես շատ ուրախ եմ, ասում էր նա,—որ Ռօբէրտը աւելի համակրութիւն է ցոյց տալիս դէպի քեռին. դա ինձ ապահովում է ապագայի վերաբերութեամբ. ապա թէ ոչ ես միշտ վախենում էի, թէ իմ զոհողութիւնները 'ի զուր կ'անցնէին:

Նորա զոհողութիւնները՞ Միթէ այս խօսքով անուանում էր միայն որդու բաղտաւորութեան մասին իւր կրած անհանգստութիւնը և այն գիտակցութիւնը, որ նա սպասած քաղցրութիւնը չը տեսաւ իւր կեանքում:

Այն ինչ Լաուրան զուարճութիւններից ձեռք էր վերցնում, որ կարողանար փոքր ինչ փող յետ դցել Մարթաի համար: Յակոբը շարունակ կօշիկներ էր սրբում: Այրի Գարնէտը աւելի շատ շատ էր հարբում, իսկ ինքը Մարթան, աւելի ու աւելի թուլանալով, ամբողջ օրերն անցէր կացնում թռչնիկի երգին ականջ դնելով, մտածելով կանաչ մարգագետինների և անցեալ ուրախ օրերի մասին, որոնք այդ մնջօցին զարթում էին նորա յիշողութեան մէջ:

ԳԼՈՒԽ ԻԱ.

„The tomb is a nest, whence the
sou Takes wings like a dove“.

Գերեզմանը մի բոյն է, որտեղից հոգին
թևեր է առնում, տատրակի պէս:

—Յակոբը, սիրելիս, այսօր տեղ մի գնա, մնա՛ կաց այսօր, ասաւ Մարթան այնպիսի թոյլ ձայնով, որ հազիւ կարելի էր լսել:

—Մօտս կաց, բարկացած ծաղրեց Այրին:—Շատ լաւ ես ասում. էհ, լսէ, դու կը տաս սորա ապրուստի փողը. մէկ մուֆթա (ձրի) հացուտող էլ բաւական է տանը:

—Ես երկար չեմ ապրի, տատ ջան. Թող այսօր միայն այստեղ մնայ: Ես զգում եմ, որ վաղը չը պիտի կարողանամ դորան տեսնել:

—Այդ բոլորը դատարկ ցանկութիւններ են. քանի քանի անգամ միևնոյն բանը ասել ես ինձ. դու աւելի շատ կապրես, քան թէ կարծում ես: Դէհ, Յակօվը, ահա քո արգանակդ,—կեր ու շուտով գնա, արդէն ուշացել ես:

Տղան համը տեսաւ, բայց չը կարողացաւ ուտել. Նա շատ ծանր էր զգում իրան. գդալը վայր ընկաւ խեղճի ձեռքից:

—Հը՛, չէ՞ դուր գալիս քեզ այդ: Պարոնիս նայիր: Դէհ, շուտ լավիր, քեզ համար ուրիշ բան չունիմ պատրաստած, ծոյլ: Բայց տես հա՛, եթէ այսօր գոնէ երկու շիլլինգ չես բերել ինձ համար, ես քեզ ցոյց կը տամ, թէ ո՞րքան ամուր է իմ կրակախառնիչին:

Տղան արկղը վեր առաւ և գնաց դէպի դուռը, չը համարձակելով յետ նայել: Բայց երբ դռան նիգը բարձրացնելիս՝ նա լսեց թոյլ ձայնով իւր անունը „Յակովը", խողանակները վայր թափուեցան նորա ձեռքերից, վրայ ընկաւ քրօջ անկողնին և սկսաւ սաստիկ գրկել նորան, քաղցր սիրոյ խօսքեր շշնջալով նորա ականջում:

—Գնա՛, սիրելիս. միշտ բարի և ազնիւ կացիր, ասաւ նա:—Ես արդարև իրաւունք չունիմ քեզ այստեղ պահելու. սիրտդ պինդ պահիր, մնաս բարեաւ:

Յակովը գնաց: Այրին ուտելով թէ իւր և թէ նորա բաժինը, գլխին թաշկինակ փաթաթեց և ինքն էլ գնաց, թողնելով Մարթային միայնակ:

—Խեղճ իմ Յակովը, մրմնջաց հիւանդը, անշարժ պառկած և աչքերը փակած:

Նա այնպէս գունատ էր, որ մեռած կարելի էր համարել, եթէ նորա երկայն արտևանունքներից երբեմն երբեմն չը թափուէին արտասուքի կաթիլներ նիհար այտերի վերայ: Բաւական երկար ժամանակ մնաց այդպէս կէս—քնի մէջ:

Նա զարթեցաւ թևերի թափահարելու ձայնից և միևնոյն ժամանակ մէկ ինչ որ փափուկ ու տաք բան քսուեցաւ նորա դէմքին:

—Այս դու ես, իմ սիրուն Թռչնիկ, ասաւ նա բացանելով աչքերը:—Ես շատ սիրում եմ քեզ, դու ինձ յիշեցրիր իմ սիրելի մանկութիւնս: Մի անգամ էլ երգիր. ինձ համար շուտով ամէն բան կը վերջանայ:

Թռչնիկը ուրախ ուրախ նստաւ նորա մատի վրայ ու երգեց. այդ միջոցին սանդուղի վրայ ոտնաձայն լսուեցաւ և յետոյ մէկը դուռը բաղխեց:

—Ներս եկէք, ասաւ Մարթան:—Ես նախազգացի, որ այսօր պէտք է տեսնէի քեզ, պ. Ալֆրէդ. ինչ ուրախ եմ, որ եկաք:

—Մայրիկս փոքր ինչ յետոյ կը գայ, պատասխանեց տղան:—Շա՞տ ժամանակ է որ մէնակ էք. չէ՞ք ուզում որ և իցէ մի բան: Ասացէք, ինչո՞վ կարող եմ ուրախացնել ձեզ:

—Շնորհակալ եմ, մի առանձին բան չեմ ուզում: Երևում է շատ եմ քնել, որովհետև այժմ կարծես մութն է:

—Ո՛չ, դեռ տասերկու ժամն է և բոլորովին լոյս. երկնքումն էլ ամպի նշոյլ չը կայ: Գիշերս փոքր ինչ ցրտեց և շաղրուանի մօտ այնպէս գեղեցիկ սառոյցներ են կազմուել, որ կարծես բիւրեղ լինին: Բայց ահա մայրս էլ գալիս է—նա Թռչունի համար սերմ է բերում:

Տիկին Մօլլօյն ներս մտաւ: Երբ հիւանդին նայեց՝ նորա դէմքը շատ ծանր տեսք ստացաւ:

—Շա՞տ ցաւ էք զգում, զաւակս, կարեկցութեամբ հարցրեց նա:

Մարթան խիստ զարմացաւ:

—Ո՛չ, տիկին, ընդհակառակն,—ես շատ լաւ եմ. առաւօտեան, ճշմարիտ է, շատ վատ էի, բայց քնելուցս յետոյ՝ լաւ եմ—ինձ մինչև անգամ թւում է, թէ այսօր երկար ժամանակ կարող եմ նստել: Միայն ինձ շարունակ այնպէս է թւում, թէ մառախուղ է, կարծես օրը մթնում է:

Նա մի քանի րոպէ լռեց, յետոյ ասաւ.—Պարոն Ալֆրէդ, խնդրեմ տուէք ինձ այստեղ Յակոբի պատկերը. այժմ այստեղից չեմ տեսնում: Շնորհակալ եմ. որքան ուրախ եմ, որ այս պատկերը նկարեցիք ինձ համար: Իսկ այժմ մօտնե՞րդ է մատիտը:

—Այո՛, Մարթա. ուզո՞ւմ էք մի բան նկարեմ ձեզ համար. ձեռատետրս էլ մօտս է:

—Այո՛, ես ուզում եմ, որ Յակոբը ունենայ իմ պատկերը:

Եւ մեծ դժուարութեամբ բարձրացաւ անկողնի մէջ: Ալֆրէդը ուղղեց նորա բարձը և դողդոջուն ձեռքերով սկսաւ նկարել թղթի վրայ նորա դէմքի գծագրութիւնը: Նորա աչքերը արտասուքով լցւում էր, երբ մտածում էր Մարթաի կրած տանջանքների մասին և թէ գուցէ շուտով էլ մեռնի: Բայց հէնց որ նկարեց նորա գունատ այտերի սկզբնական գծերը, հանգստութիւնը նորից վերադարձաւ նորան. իւր բոլոր ուշքը նուիրեց այդ գործին, որպէս զի, ինչքան հնար է, լաւ կատարէ հիւանդի ցանկութիւնը: Համարեա մի ամբողջ ժամ կատարեալ ուշադրութեամբ և աշխատանքով պարապեց, որից յետոյ մայրը, որ նայում էր նորա

նկարչութեան, ձեռքը դրաւ նորա ուսին և ասաւ:

—Այդքանն էլ բաւական է, Մարթան արդէն յոգնեցաւ: Պատկերը շատ լաւ է. էլ եթէ շարունակես կը փչացնես. կարող ես տանը վերջացնել և մինչև անգամ դորա արտատիպը վեր առնել. Մարթաին ցոյց տուր, տեսնենք կը ճանաչէ՞:

—Բոլորովին նման է ինձ, աղաղակեց օրիորդը:—Յակոբը այժմ էլ երբէք չի մոռանայ ինձ: Խեղճ տղա՛ն, որքան թշուառ կը լինի, երբ ես կը մեռնեմ. սակայն դուք կը հոգաք նորա մասին, տիկին, և երբեմն երբեմն կը յիշեցնէք նորան Աստծու էութիւնը: Ես կամեցայ, որ նա այսօր այստեղ մնայ, որովհետև զգացի, որ այս դրութեան մէջ պէտք է ընկնէի, բայց մեծ մայրս ուղարկեց նորան և այժմ այլևս երբէք չեմ տեսնի նորան:

Հէնց որ այս խօսքը վերջացրեց, ներս մտաւ Լաուրան, բերելով իւր հետ Յակոբին, որ ահից չէր ներս մտնում, յիշելով պառաւի տուած սպառնալիքը կրակխառնով ծեծելու:

—Մարթա, ահա Յակոբը, ասաւ Լաուրան,—ճանապարհին պատահեցայ և հարցրի իւր լացի պատճառը: Ինձ պատասխանեց թէ դուք կամեցել էք որ սա ձեզ մօտ մնայ, իսկ մեծ մայրը դուրս է արել և պատուիրել է առանց երկու շիլլինգ բերելու չը վերադառնալ տուն. հետս փող ունէի, ես տուի սորան երկու շիլլինգ, այնպէս որ այժմ կարող է ձեզ մօտ մնալ մինչև երեկոյ. գո՞հ էք:

Մարթաի գունատ կերպարանքը մի թոյլ ժպիտով պայծառացաւ:

—Շնորհակա՛լ եմ, շնորհակա՛լ, աղաղակեց նա:—Դուք չէք կարող երևակայել, թէ ինչ մեծ բան է դա ինձ համար: Ես մեռնո՛ւմ եմ, մնա՛ք բարեաւ: Դուք

ամէնքդ շատ քաղցր էիք վարւում ինձ հետ, նմանե-ցէք ուրեմն, խնդրեմ, խեղճ Յակովբիս էլ:

Նա ոյժ չունէր փոխարէնը գրկելու իր եղբօրը, որ հեկեկալով վրայ ընկաւ նորա անկողնին ու գրկեց նորան:

—Բարեխօս եղիր, շշնջաց նա,—և այն ժամանակ ես երջանիկ կը լինեմ երկնքում: Դու գիտես, թէ որոնք են քո պարտականութիւնները,—լաւ կատարիր բոլորը: Իմ սիրելի, անգին եղբայրս, մնաս բարեաւ. երբ և իցէ դարձեալ ինձ հետ կը լինես:

Նա նայեց իր շուրջը. ամէնքը արտասուալից աչքերով շրջապատել էին նորան և գլխները ծռել: Նա կրկնեց թոյլ ձայնով.—Հոգացէք Յակովբիս մասին:

Եւ նորա աչքերը փակուեցան. կարծես թէ քնեց: Այդ միջոցին Թռչնիկը երգեց: Ալֆրէդը կամեցաւ լռեցնել նորան, բայց Մարթաի շրթունքները շարժուեցան.

—Երգիր, երգիր, շշնջաց նա:—Ո՛հ, գեղեցիկ երկնային աշխարհ:

Կլարան թեքուեցաւ նորա շնչառութիւնը լսելու և երբ գլուխը բարձրացրեց՝ տիկին Մագգիին նշան տուաւ, որ Լաուրային դուրս տանէ:

Երբ դաստիարակչուհին դուրս տարաւ օրիորդին, Կլարան ծունկ չոգելով անկողնի մօտ ասաւ.

—Ամէն բան վերջացաւ, որդիք,—աղօթենք Աստծուն սորա հոգուն հանգիստ շնորհելու համար:

Ամէնքը ծունկ չոգեցին: Թռչնիկը սկսաւ քաղցր եղանակով երգել, կարծես ուղեկցում էր նորա հոգուն երկինքը թռչելու ժամանակ . . . .

. . . .

Անարդարութիւն կը լինէր չ'ասել, որ այրի Գարնէ-տը, երբ տուն եկաւ ու թոռան միմիայն անշունչ դիակը տեսաւ, սաստիկ վշտացաւ: Նա գիտէր, որ վերջինիս

մեռնելով ինքը զրկւում է զանազան ընկերութիւններէ տուած նպաստի մեծ մասից և իր բարձրաձայն ողբա-լով կարծում էր, թէ կարող էր կարեկցութիւն զար-թեցնել դէպի ինքը:

Կլարան 'ի հարկէ չը խաբուեցաւ սորանով, բայց այնուամենայնիւ աշխատում էր քաղցր խօսքերով հան-գստացնել պառաւին: Յետոյ սկսաւ մխիթարել Յակով-բին, որ դեռ էլի չոգած էր հանգուցեալի գլխատակին, համարեա անզգայացած շատ տխրութիւնից: Նա կա-րողացաւ վերջապէս պառկացնել նորան անկողնի մէջ, ուր և քնեց, յոգնած բարոյական յուզմունքից:

Արդէն բոլորովին լոյս էր, երբ նա զարթեցաւ Թռչնիկի ճռուողելու ձայնից: Թռչնիկը նստել էր Մար-թաի մազերի մէջ և աշխատում էր նորա ուշադրու-թիւնը դրաւել, կտուցով խփելով նորա այտերին, ինչ-պէս որ սովորաբար անում էր առաջ: Յակովը վերա-ռաւ նորան ձեռքին և սկսաւ ձեռքը քսել փափուկ փետուրների վրայ:

—Խեղճ Թռչնիկ, դու էլ ուրեմն սիրում էիր սո-րան, ասաւ նա: Բայց Թռչնիկը փախաւ նորա ձեռքից և նորից մտաւ Մարթաի անկողինը:

Քանի որ դիակը սենեակումն էր, Թռչնիկը չը թո-ղեց նորան միայնակ և թաղելուց յետոյ էլ սկսաւ որո-նել ամբողջ սենեակի մէջ, տխրութեամբ ճռուողելով:

—Գնա կորիր, անիծեալ Թռչուն, ձանձրանալով նորանից գոչեց այրի Գարնէտը:—Գնա դուրսը ինչքան ուզում ես ճչա:—Եւ Թռչունին դուրս անելով օդանցքի միջից՝ ամուր փակեց:

Յետոյ խողանակները Յակովբի ձեռքը տալով՝ դուրս արաւ նորան տանից ու ասաւ.—Կորիր աշխատե-լու, ծոյլ. այժմ էլ ոչ ոք չի կարող յորդորել քեզ պա-րապ մնալու,—ձրիակեր անպիտանին թաղեցի:

Նոյն գիշերը Յակովբը սաստիկ յոգնած լինելով այնպէս խոր քնեց, որ անգամ չը լսեց, թէ ինչպէս մէկը թխթխկացնում էր լուսամուտը: Առաւօտը նա տեսաւ լուսամտի արտաքին տախտակի վրայ մեռած թռչնիկին, որ բոլորովին սառել էր ցրտից: Հաւատարիմ թռչնիկը ցանկացել էր մտնել իւր բարեկամի սենեակը, իսկ երբ ներս չէին թողել, չէ հեռացել այնտեղից, այլ մնացել է այնտեղ, ուր և մեռել էր ցրտից ու սովածութիւնից:

ԳԼՈՒԽ ԻԲ.

ԱՌԱՋԻՆԸ՝ ՅԵՏԻՆ

Մարթաի մահից յետոյ Կլարան սկսաւ միջոց որոնել, թէ ինչպէս Յակովբի համար կօշիկ սրբելուց աւելի դժուար ու օգտակար պարապմունք գտնէ, որպէս զի ազատ միջոց չունենայ և չը սովորէ թղթախաղ, պանդոկներ չը գնայ և այլն: Կամեցաւ որ և է մէկ արհեստաւորին տալ, բայց այրին ամէն անգամ ուղղակի ընդիմանում էր այդ բանին և մեզ արդէն յայտնի է, թէ ինչ պատճառով: Բացի դորանից նա սուտ խաբում էր, թէ խօսք է տուել Մարթաին, որ ամենևին չի բաժանուի Յակովբից և որ միայն մահը կարողէ քանդել այս խոստմունքը:

Ճար չը կար, Կլարան ստիպուած էր առժամանակ զիջանել: Միայն բաւականացաւ նորանով, որ թոյլտուութիւն ստացաւ, որպէս զի սա արևը մայր մտնելուց յետոյ իսկոյն գնայ իւր մօտ և ամէն երեկոյ սովորցնում էր կարդալ, գրել և համարել և այդպէս մինչև մի յարմար դէպք լոյս կ՚ընկնէր, նորան կրթում էր իւր ճաշակով:

Խօսելու ժամանակ Կլարան տալիս էր լաւ խորհուրդներ և աշխատում էր զուարճացնել նորան, որ շատ դժուար չէր, որովհետև թէպէտ և Յակովբը դեռ չէր հանգստացել Մարթաին կորցնելու պատճառով կրած յուզմունքից, բայց այսպէս էր սկսում մտաբերել նորան.—Ես քեզ հետ խօսելիս՝ նորա հետ էլ եմ խօսում, ասում էր նա Կլարաին:—Մեծ մայրս ամենևին չէր սիրում ոչ նորան և ոչ ինձ և այժմ մինչև անգամ մտքովն էլ չէ անցկացնում նորան:

Մի անգամ նա բերեց իւր քրոջ պատկերը, որ նկարել էր Ալֆրէդը և խնդրեց տ. Մօլլօյին, որ պահէ իւր մօտ, մինչև իւր մեծանալը:—Եթէ ես այս պատկերը տանը թողնեմ, ասաւ նա,—մեծ մայրս կը խլէ ինձանից. այսօր առաւօտ ուզեցաւ կրակը ձգել, որովհետև ես սորան նայելով լաց էի լինում: Նա ասում է, թէ միայն հարուստ մարդիկ պէտք է լաց լինեն, իսկ աղքատները, դորա փոխանակ, պէտք է հաց ճարեն:

Կլարան փակի տակ դրաւ պատկերը և Ալֆրէդը շատ շատ խնդրում էր նորանից գզրոցի բանալին՝ տեսնելու համար այն: Նա ծնում էր տղայի գլխում ամբողջ շարք մտածմունքներ ու յիշողութիւններ: Մարթան ապրեցաւ միայն տասնևվեց տարի և արդէն շատ տանջուեցաւ, թէպէտ և երբէք ոչ ոքին վատութիւն չէր արած: Այժմ նա մեռաւ և նորա փոքրիկ եղբայրը մնաց մենակ, մի չար պառաւի իշխանութեան տակ, որ չէ թէ միայն ամենևին չէր հոգում նորա մասին, այլ, ընդհակառակն, մինչև անգամ արգելում էր նորան մի արհեստ սովորելու:

Ո՞րքան տխուր բաներ են սոքա և, անկասկած, աշխարհս լիքն է այսպիսի դիպուածներով. ամէն քայլափոխում կարելի է տեսնել դոցա և շատ անգամ ոչնչով չի կարելի օգնել: Այս բոլորը կշռադատելով Ալֆ-

րէդը մտաբերեց ծերունի Պասմօրի խօսքերը. Թէ ինչու համար է նորան Աստուած 16 տարուայ կեանք տուել այս աշխարհում, կամ թէ մի քանի մարդիք նախախնամութիւնից նշանակուած է որ չար լինեն:

Բայց սակայն ճշմարիտ էր ծերունին:

—Ո՛չ, ճշմարիտ չէ, շշնջում էր Ալֆրէդին մի գաղտնի ձայն, որ ստիպում էր թունդ բաբախել նորա սիրտը և ցրում էր նորա գլխից բոլոր կասկածներն ու տարակուսանքները: Ճշմարիտ է, Մարթան տանջուեցաւ, միայն միթէ նորա կարճ կեանքը լիք տանջանքներով էր լցուած: Ի՞նչ սիրով էր խօսում նա իւր խղճուկ անկողնում մեռնելիս, իւր մանկութեան, ծնողների քնքշութիւնների, կանաչ մարգագետինների մասին, որոնց յիշողութիւնը նորա դէմքին մինչև անգամ հիւանդութեան տանջանքների մէջ էլ հրեշտակային ժպիտ էր ցոլացնում: Երբ մարդ սիրում է, ուրեմն և երջանիկ է. իսկ Մարթան սիրում էր եղբօրը իւր քնքոյշ սրտի բոլոր զօրութիւնով: Մարթան սիրում էր աստղերն ու լուսամուտի մօտից անցնող ամպերը. Նա սիրում էր նոյնպէս և քե՛զ, բարի փոքրիկ տղայ,—քեզ, որ ազատ ժամերին գնում էիր զբաղեցնելու նորան, հրաժարուելով խաղերից ու զուարճութիւններից: Նա սիրում էր Աստծուն, որ անկասկած տարաւ նորան Իւր մօտ. Նա երբէք չէր տրտնջում, որ այդ Աստուածը ստեղծել էր նրան: Նա մայր էր իւր փոքրիկ եղբօր համար, որի սրտի մէջ աշխատում էր մտցնել բարութեան և կեանքի փորձանքների դէմ պատերազմելու ոյժի սկզբունքները: Նա գիտէր, որ իւր մահից յետ, իւր յիշատակը կը պահպանէ նորան մեղքից: Մի՞թէ մեծ չէ՞ մարդու այսպիսի նշանակութիւնը այս աշխարհում, իսկ նա կատարում էր այս նշանակութիւնը: Իսկ նոյն իսկ քեզ համար նա ոչինչ լաւ բան չարա՞ւ: Նա չը ստիպեց քեզ ամաչել որ

դու տրտնջում էիր կեանքիցդ, երբ նա այնպէս անտրտունջ կրում էր իւր թշուառութիւնը: Մարթան մեռաւ լի հաւատով դէպի Աստուած և դէպի այն բարի մարդիկը, որոց նա խնդրեց հոգալ Ցակոբի մասին: Չկայ մի մարդ, որին Նախախնամութեան ձեռքը որոշած լինի վատ մարդ դառնալու. չկայ մի հոգի, որի մէջ չը զարթնի Աստծու ձայնը և չը հնչէն բարութեան բնական ձայնը և պարտականութեան զգացմունքը: Ճշմարիտ է, երբեմն պարտականութեան կատարումը շատ դժուար է, բայց միշտ հնարաւոր է: Չկայ մի մարդ, կրկնում ենք, որ վատ ստեղծուած լինի: Վատ կարող են դառնալ միմիայն չար մարդիք, իսկ Տէր Աստուած ոչ-ոքին չար չէ ստեղծում—ուրեմն վատ մարդիք մեծ մասամբ իրանք են մեղաւոր:

Պատկերին նայելով Ալֆրէդը ինքն էլ զարմացաւ—և 'ի զուր չէր նորա զարմանքը—այնպէս լաւ էր նկարել: Կարծես ինքը Մարթան կենդանի առաջին կանգնած էր. բոլորովին նորա տխուր գեղեցիկ բերանն էր, նորա նիհար այտերը, բարակ քիթը, բութ կզակը, նորա մեծ մեծ, խոր ընկած, բարձր մտածութեամբ լիք աչքերը—որոնք կարծես իրան էին նայում: Մի՞թէ ճշմարիտ իւր ձեռքով էր նկարած: Շատ անգամ նկարում էր իւր մօրը, մինչև անգամ ծերունի Պասմօրին, բայց միշտ աւելի ծաղրանկար էր ստանում, քան թէ իսկական պատկեր, մինչդեռ Մարթայի պատկերից լաւը չէր կարելի պահանջել: Քանի քանի անգամ փորձել էր ամենաընտիր մատիտներով ամենալաւ թղթի վերայ արտանկարել ազատ ժամանակ այդ պատկերից, բայց ամէն անգամ աւելի վատ արտատիպ էր ստանում, քան թէ կոպիտ թղթի վերայ շտապով գծագրած բնագիրը:

Անշուշտ այն օրը ինձանում մի բան կար, որ

օգնում էր ինձ աշխատելիս և որ այժմ չէ գալիս մօտս, մտածում էր նա:

Մի անգամ—իւր այս մտածմունքները հաղորդեց մօրը, որ ժպտալով ասաւ նորան.

—Այն օրը լաւ էիր աշխատում նորա համար, որ քեզ, այսպէս ասած, առաջնորդում էր խորին զգացմունքը. բայց դա կարող էր միայն պատահական լինել և, բացի դորանից, քո աշխատութեան մէջ անշուշտ շատ սխալներ կան, որ դու չը հասկանալով, չես էլ նկատում: Որպէս զի լաւ նկարել սովորես, պէտք է շատ և ուշադրութեամբ օրինակես, որ վրձինը արագութիւն և ազատութիւն ստանայ: Այժմ դու մինչև անգամ չես էլ կարող արհեստագէտ դառնալ, որովհետև սորա համար պէտք է վարժեցնես քո խելքն ու միտքը: Ուշադրութեամբ պարապիր գիտութիւններով և դու կը տեսնես, թէ ինչքան շատ բան կիմանաս, այնքան—եթէ միայն յիրաւի քեզանում տաղանդ կայ—աւելի լաւ կը նկարես: Միայն ձիաները կառքի ետևը չը լծես. այժմ լաւ նկարել ցանկանալը՝ մի և նոյն է թէ առանց խոնարհումները գիտենալու ցանկանաս լատիներէն վիպասանութիւններ շարադրել:

Ալֆրէդը պահեց պատկերը և սկսաւ նկարել: Ազատ ժամանակ նորա սիրելի պարապմունքն այս էր և նա վաղուց արդէն ուզում էր թոյլտուութիւն խնդրել մօրից մի քանի դասեր վերցնելու նկարչութիւնից, բայց վախենում էր, որ ծանրաբեռնէ նորան, մանաւանդ որ առանց այդ էլ շատ քիչ եկամուտ ունէր:

—Ի՞նչ լաւ բան է նկարիչ լինելը, մտածում էր նա:—Աւելի լաւ, որ դորա համար հարկաւոր է ուսում առնել, որովհետև նշանակում է, որ գեղարուեստը միևնոյն ժամանակ և գիտուն մարդ է:

Գարունն անցաւ, եկաւ ամառը, նորա հետ էլ

օգոստոսի արձակուրդները: Այս անգամ քեռի Զէտտերտօնը չը գնաց տարեկան հանդէսին, որովհետև չէր ցանկանում Ալֆրէդին տեսնել և իւր ազատութիւնը բռնաբարել տալ: Բայց եթէ որ նա ներս թափանցէր Սեսիլիայի սրտի մէջ, կը տեսնէր, որ վախենալու բան չը կար: Սեսիլիան տեսնում էր, որ Ռօբէրտը մարդ չէ դառնում և կարծում էր, որ առանց հարստութեան բանի պէտք չէ նա, այս պատճառով էլ քեռու հարստութիւնը անհրաժեշտ էր համարում նորա համար: Նա այժմ հրաժարւում էր ուրիշին օգնելու համար այդ հարստութիւնը վատնել:

—Ամէն բան արի, ինչ որ ձեռքիցս եկաւ, պէտք է նաև որդուս շահերի վրայ մտածեմ. ես մեղաւոր չեմ, որ քեռիս կամակոր է, ասում էր նա ինքն իրան, վրդովուած ուսուցիչների տուած շարունակ աննպաստ տեղեկութիւններից Ռօբէրտի մասին: Վերջինս միայն մի մրցանակ ստացաւ անգլիական լեզուից, մինչդեռ Ալֆրէդը վերադարձաւ տուն, հազիւ կարողանալով տանել իւր յաղթանակները: Այս անգամ մրցանակների թիւը հաւասարապէս մեծ էր ինչպէս մօր, այնպէս էլ Պասմօրի համար: Տղան կատարեց իւր ասած խօսքը:

ԳԼՈՒԽ ԻԳ.

ԿՆԱՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒԻԼԸ:

Երկու բարեկամ տղայոց ճանապարհները քանի գնում հեռանում էին միմեանցից: Դեռ մինչև այդ ժամանակ նոքա ուսումնարանում պատահում էին միմեանց, բայց, ինչպէս յետոյ կը տեսնենք, շուտով այդ էլ վերջացաւ: Սկզբում Ռօբէրտը մասնաւոր ատելութիւն էր զգում դէպի Ալֆրէդը, որ նոյն չափով

բարձրանում էր դատաստանը, որչափ որ նա ինքը իջնում էր. բայց, մոլութիւնից ատեցող և վրէժխնդիր բնութիւն չունենալով, նա շուտով զարկեց նրան և մինչև անգամ անկեղծ սրտով ատաւ.

—Լաւ որ այս խեղճը այդպիսի յառաջադիմութիւն է անում, որովհետև ապագայում սրա ապրուստի միակ միջոցը ուսումն է:

Եւ սկսաւ մտածել, թէ ինչ կարող է տալ փողը մարդուս, նաև այն զուարճութիւնների մասին, որ պէտք է վայելէր և որոց համն արդէն առել էր փողի շնորհիւ: Ճանապարհորդութիւնը, օտար երկրներ տեսնելը, գիտունի պէս Կօլիզէյի և Ալգամբրի մասին խօսելը, Կօլէնս—Գարդէնեան օպէրական խումբը՝ Բրիստելեանի հետ համեմատելը—այս բոլորը այնպիսի զուարճութիւններ են, որ կոպէկներով զգուշութեամբ տնտեսութիւն անելու սովորած մարդը երբէք չի փորձել:

Բայց միթէ ճշմարիտ դոքա ամէն ժամանակ զուարճութիւններ են: Ես խիստ կասկածում եմ, սիրելի ընթերցողներ: Որպէս զի զուարճութիւնը կատարեալ լինի, պէտք է գիտութիւն ունենալ, պէտք է լուսաւորուած մարդ լինել. տգէտը դժուար թէ կարողանայ այդ զուարճութեան համն առնել: Ճաշակը դէպի գեղեցիկը, ճանաչել ազնիւը, ամէն տեսած ու լսած նոր բանից մի տպաւորութիւն դուրս բերելու ընդունակութիւնը—այս բոլորը մատչելի են միայն նորան, ով որ շատ է աշխատել իւր և գիտութեան վերայ: Երկու տարի երեքամսեայ արձակուրդների ժամանակ Ռօբէրտը քեռու հետ ճանապարհորդեց արտասահման և տեսաւ բազմաթիւ արձաններ, պատկերներ, շինութիւններ, կենդանագիրներ և այլն, բայց այս բոլորը խառնիխուռն դասաւորութեամբ կուտակուեցաւ նորա յիշողութեան մէջ: Պէտք է ասել սակայն, որ ոչ ոք չէր առաջնորդում նորան: Պ. Չէստէրտօնը լոկ այն պատճառով էր ճանապարհորդում, որ այդ բանը „ընդունուած էր“ հարուստ մարդոց մէջ, և այդ ճանապարհորդութիւնից միայն գործնական օգուտներ էր քաղում: Նա վաճառում էր օտարերկրեայ արհեստների վրայ իւր բամբակը, ծանօթանում էր երկրի արդիւնաբերական հարստութիւնների, վաճառականութեան ընթացքի և ուրիշ բաների հետ: Իսկ արուեստի ու գիտութեան հետ ամենևին ոչինչ հաշիւ չունէր:

—Գեղարուեստները, սովորաբար ասում էր նա,—հարուստ են, մինչև որ սենեակները պատկերներով ու կիսարձաններով զարդարելը մօդա է. մօդան կ'անցնի—նոցա արուեստն էլ փոշի կը դառնայ, որովհետև նոքա միանգամայն ոչինչ օգուտ չեն բերի:

Տիկին Միտլտօնը իւր սրտում համաձայն չէր այս կարծիքին, բայց ոչինչ չէր խօսում, որ չը լինի թէ բարկացնէ քեռուն:

Նա չը կարողացաւ մտածել, թէ ինչ կը լինէր Ռօբէրտի հալը, եթէ քեռին յանկարծ կամակորելով զրկէր նորան ժառանգութիւնից: Պարզ տեսնում էր, որ իւր որդին կորցնում է աշխատելու ընդունակութիւնը և միմիայն պէտքական է նորաձև հիւրասենեակներում ցցուելու: Աւելի խոհուն բնաւորութիւն ունեցող մայրը, 'ի հարկ է, այդպէս անվրդով չէր նայի բանին, բայց Միսիլեան բաւականին թեթևամիտ էր: Նա շատ սիրում էր իւր որդուն, միայն իւր ձևով. նորան ցանկանում էր բաղդաւորութիւն և այս բոլոր բաղդաւորութիւնը տեսնում էր պ. Չէստէրտօնի հարստութեան մէջ:

Ռօբէրտը գեղեցիկ էր, վայելչակազմ և բաւական սրամիտ. շատ պատուական ձի նստել գիտէր և գեղեցիկ

էլ պարել: Այս բոլորը խոստանում էր նորան յառաջադիմութիւն, եթէ մտնէր դիպլոմատիքական կորպուսը կամ զինուորական ծառայութեան մէջ. կարելի էր յուսալ նաև, որ այդպիսի յատկութիւններով կարող էր մի հարուստ և գուցէ ջահել աղջկայ հետ կապուել: Այսքանը բաւական չէ՞ր միթէ:

Մի անգամ (նոր ուսումնական տարուայ սկզբից մի քանի շաբաթ անց) Ալֆրէդը ուսումնարանից վերադարձաւ սաստիկ շփոթուած: Մայրը չը հարցրեց պատճառը, որովհետև գիտէր որ մի այսպիսի պատասխան կը ստանար.

—Է՛հ, ոչինչ չը կայ, կանցնի:

Այլ սպասեց, մինչև որ ինքը բացանի բանը, բայց սկսաւ սովորականից աւելի ուշադրութիւն դարձնել նորա վրայ:

Ճաշից յետոյ եկաւ պ. Պասմորը: Ի դէպ այստեղ ասենք, որ ծերունին բոլորովին փոխուեցաւ այն ժամանակուանից, երբ մենք ճանաչեցինք նորան: Նա սկսաւ հագնուիլ բոլորովին մաքուր, մարդոց մօտից անցնելով անէծք չէր թափում բերանից և որ գլխաւորն է, դուրս հանեց իւր բառարանից բազմաթիւ անպատշաճ բառեր ու ոճեր, որոնցով առաջ առատութեամբ շաղ էր տալիս իւր կծու նկատողութիւնները: Բայց սակայն չը թողեց գեղեցիկ ասացուածներով իւր խօսակցութիւնը զարդարելու սովորութիւնը: Մինչև անգամ նա հանաքով ասում էր, թէ դոցա գործածութիւնը չափազանց օգտակար է, որովհետև այդ դէպքում Կլարան մի չորրորդ դասատան աշակերտից լաւ կը ծանօթանար լատիներէնի հետ: Եւ արդէն հազիւ էր արտասանում կծու յանդիմանութիւններ մարդկութեան դէմ, իսկ երբ ասում էր, երբէք չէր մոռանում յիշել նաև բացառութիւնները: Կլարան

ինչպէս և իցէ համոզեց նորան, որ թոյլ տայ իրան խանգարելու նորա տան պէնատի (*) հանգստութիւնը, որ շարունակ պատերազմում էր թոզի հետ և հանգիստ չէր տալիս սարդերի ամենաթաղուն դարաններին:

Այնուհետև համոզեց նորան ուղեղից շինած կալբասը և կաթը փոխել առաւել սննդարար կերակրի հետ, որի շնորհիւ արտաքին տեսքի հետ լաւացաւ նաև ծերունու առողջութիւնը: Այս անգամ նա որ եկաւ՝ թևի տակ երեք մեծ կտոր փայտ ունէր բռնած, որովհետև, ինչպէս նա ասաւ, չէր ցանկանում ուրիշի փայտով ձրի տաքանալ: Փայտերը դարսեց վառարանի մէջ, ինքն էլ մօտը նստաւ և կրակխառնիով ուղղելով սպասում էր, որ Ալֆրէդը աւարտէ իւր պարապմունքը: Որից յետոյ նոքա սովորաբար կարդում էին մի քան Կեսարից կամ Հերոդոտից:

Սակայն Ալֆրէդը այդ երեկոյին վերջին խնդիրը վճռելուց յետոյ այլ ևս կլասիքական գրուածների ընթերցանութեան անձնատուր չեղաւ, այլ դրիչը վայր ձգեց և հառաչելով ասաւ.

—Այն մարդիք, որոնք միջոց ունեն ճանապարհորդելու, պէտք է որ շատ բաղդաւոր լինեն:

—Ի՞նչ պատճառով, հարցրեց պ. Պասմորը:

—Այն պատճառով, որ նոքա տեսնում են զանազան քաղաքներ, տէրութիւններ, յիշատակարաններ, թանգարաններ և այլն: Ռօբէրտ Ձէստէրտօնը նոր է վերադարձել Իտալիայից և այսօր մեզ շատ հետաքրքիր բաներ պատմեց: Նա տեսել է Հռոմ, Նէապօլիս,

(*) Հռովմէական չաստուած է տան պահպանութեան և հովանաւորութեան համար.

Ծ. Հ. Թ.

Վեզուվը, Պոմպէյի աւերակները, Ֆլօրէնցիան, Վենետիկը, ահա այս բոլորը:

Ալֆրէդը չափազանց ոգևորուած էր, բայց նորա ձայնը տխրութիւն էր արտայայտում: Տիկին Մօլլօյն գունաթափուեցաւ: Ծերունի Պասմօրը վեր թռաւ տեղից:

—Փառք քեզ Աստուած, գոչեց նա ունկնդիրքը շարժելով,—վերջապէս ներկայ սերնդի մէջ էլ, որ ամբողջապէս բաղկացած է չիմարներից և աւազակներից, գտնուեցաւ մի պարզ միտք: Ա՛խ, ներեցէ՛ք, տիկին, բայց ձեր որդին համբերութիւնից հանեց ինձ: Դու խօսում ես Նէապօլսի մասին, ուր շոգից կարելի է տապակուել, Վեզուվի մասին, որին մօտենալը նոյնքան հաճելի է, ինչպէս և հինգհարիւր գրվանքայ վառօդին, Վենետիկի մասին, ուր ամենևին կառք չը կայ, Հռոմի մասին, ուր կը թաղուես ցեխի մէջ, իսկ ինքդ Լօնդօնի հետ էլ ծանօթ չես: Այսպէս ուրեմն դու ցանկանում ես ճանապարհորդել: Շատ գեղեցիկ, ես էլ կ՚օգնեմ քեզ այդ բանի մէջ: Ես քեզ կը ման ածեմ ինձ հետ ամէն օր երկու երկու ժամ և չեմ թող տայ քեզ, մինչև դու չես ասի, որ աշխարհիս երեսին Լօնդօնից լաւ տեղ չը կայ: Դու ի՞նչ կասես.—ոչի՞նչ. բայց ես գիտեմ ինչ որ մտածում ես: Դու երևակայում ես, թէ արդէն շատ լաւ ծանօթ ես Լօնդօնին, երկու տարի ապրած լինելով այստեղ. բայց սխալւում ես, սիրելիս, ամենևին ծանօթ չես.—և ես կապացուցանեմ, որ ճշմարիտ եմ ասում:

—Իսկ ինձ կը տանէ՞ք ձեզ հետ, հարցրեց տիկին Մօլլօյն, արդէն բոլորովին հանդստանալով, որովհետև տխրութեան ամպիկը անյայտացել էր Ալֆրէդի դէմքից:

—Ի հարկէ, պատասխանեց Պասմօրը և այդ պատիւ կը համարեմ ինձ: Այսօր երեքշաբթի է, ուրեմն

հինգշաբթի օրից կը սկսենք: Էհէ, սա կամենում է ճանապարհորդել, ուրեմն թող գայ ինձ հետ թափառէ. մանաւանդ որ այդ ճանապարհորդութեան ժամանակ ոչ նաւաբեկութեան երկիւղ կը լինի, ոչ ձիուց վայր ընկնելու, ոչ շոգեկառքը գծից շեղուելու և այլն: Գուցէ դու կարծում ես, վրայ բերաւ նա դառնալով Ալֆրէդին,—թէ ես քեզ միմիայն Լօնդօնը կը ցոյց տամ. ոչ. ես քեզ ցոյց կը տամ ամբողջ աշխարհը, այն էլ մինչև անգամ շատ հեռու չը գնալով այստեղից:

Տ. Մօլլօյն ժպտաց. նա արդէն ամէն բան հասկացաւ: Ալֆրէդն էլ ծիծաղեց ծերունու խստութեան վերայ, բայց դեռ բան չը հասկացաւ:

Միւս օրը նա պատահմամբ մտաւ ծերունու սենեակը և գտաւ նորան յատակի վերայ նստած գրքեր քրքրելիս, որոնք այնքան շատ էին, որ չէին տեղաւորւում սեղանի վրայ. շուրջը թափած էր հաստավոր հատորներ, որոնք խօսում էին զանազան արուեստների, գիտութիւնների, ճանապարհորդութիւնների, ճարտարապետութեան, բնական պատմութեան, աշխարհագրութեան և այլ նիւթերի մասին: Պ. Պասմօրը տաք կպաւ գործին, ինչպէս որ սովորութիւն ունէր միշտ, երբ ցանկանում էր ուրիշներին օգնել: Գրքերի վերնագրերը կարդալով Ալֆրէդը փոքր առ փոքր սկսաւ ծերունու դիտաւորութիւնը հասկանալ և սրտանց ցանկանում էր, որ շուտ գայ հինգշաբթին: Վերջապէս հասաւ ցանկացած օրը: Մայր ու որդին ճաշում էին, երբ պ. Պասմօրը դուռը բաղխեց և հպարտ հպարտ ներս մտաւ սենեակը, թևի տակ մի ահագին սև թղթակալ բռնած:

—Հայդէ, գոչեց նա,—պատրաստ էք: Դասերը պատրաստե՞լ էք: Այսօր մենք պէտք է ճանապարհ

ընկնենք. միայն ինչ տեղից սկսենք: Ես ամէն բան ունիմ, ասաւ ու մատով խփեց թղթակալին:—Ո՞ւր էք կամենում. Եգիպտոս, Յունաստան, Իսպանիա, Իտալիա թէ Ասորեստան:

—Ասորեստան, ծիծաղելով ասաւ Ալֆրէդը:—Սա պէտք է որ շատ հետաքրքրական ճանապարհորդութիւն լինի. Ասորեստանը շատ քչերին է յայտնի:

—Է՛հ, թող քո խօսքը լինի, պատասխանեց Պաստօրը և թղթակալը բաց արաւ:—Այստեղ կայ նորա քաղաքների, բնակիչների և ամէն տեսակ հնութիւնների լիակատար նկարագրութիւնը: Երկու գիշերուայ մէջ մենք այնպէս լաւ կը ծանօթանանք Ասորեստանի հետ, որ կը կարծես թէ Շամիրամի հպատակներ լինենք: Կարո՞ղ ենք սկսել:

—Իսկոյն, պատասխանեց տ. Մօլլօյն, սեղանը հաւաքելով,—բայց որտեղից ձեռք բերիք այդքան տեղեկութիւնները:

—Լոնդոնում ամէն բան կարելի է ձեռք բերել, եթէ միայն մարդ չը ծուլանայ քրքրել ինչպէս հարկն է: Ես գնացի Բրիտանական թանգարանը և այնտեղ ինձպէս մի ծերունի պրօֆէսօր բարեկամիս օգնութեամբ թղթակալս լցրի գրքերով, նկարներով, արձաններով օրինակներով և այլն: Ես ձեզ ցոյց կը տամ ամբողջ աշխարհը, նոր էլ, հին էլ. մինչև անգամ յետոյ կարող եմ ծանօթացնել ձեզ, եթէ միայն կը կամենաք, անդրջրհեղեղեան աշխարհի հետ:

Ալֆրէդն էլ այդ էր ուզում: Այդ օրուանից նա այլ ևս չէր նախանձում Ռօբէրտի ճանապարհորդութիւններին: Մինչև անգամ մէկ օր, պատմութեան դասին, նա զարմացրեց ուսուցչին և ընկերներին, երբ ֆրանսիայի մասին խօսելիս կարողացաւ պարտխատեան գանէր շինող ճարտարապետի անունը տալ և նկարել

նորա ձեռը: Իսկ Ռօբէրտը, որ նախապէս տեսել էր նորա, ոչինչ ուղիղ բան չը կարողացաւ ասել նորա վերաբերութեամբ:

ԳԼՈՒԽ ԻԴ.

ԱՅՐԻ ԳԱՐՆԷՏԻ ՆԵՐԹՆԱԿԸ:

Ալֆրէդը արագ կերպով աճում էր և զօրանում: Դժուար է երևակայել, թէ ինչպիսի զուարճութիւն է զգում մօր սիրտը, որ իւր ամուսնու մահից յետոյ սեպհական աշխատանքով պահել է և մեծացրել իւր միակ զաւակը, երբ ձեռքը դնելով նորա գլխին՝ ասում է.

—Շուտով դու ինձանից բարձր կը լինես, սիրելիս:

Որդին մեծացաւ, արդէն տասնեչորս կամ տասնուհինգ տարեկան հասակում համարեա երիտասարդ է հաշւում: Մնաք բարեաւ մօր ձեռքով կարած համեստ շորեր. այժմ արդէն պէտք է դերձակին պատուէր տալ: Մնաք բարեաւ—այն պարզ կօշիկներ, որոնք այնպէս արժանագին են և լաւ էլ սազում են տղայոց. պէտք է փոխել մաշուղի հետ: Տարուայ վերջին թևերն ու անդրավարտիքը նեղանում են, հարկաւոր է նորից կարել կամ փոխել: Ահա թէ ինչ պատճառով լապտերը վառ է երկար ժամանակ մօր սենեկում, թէ ինչու անխոնջ աշխատում է նա մինչև որ լաւ կը յոգնի, համարեա հանգիստ չը տալով իրան: Տղան արդէն նոյնքան թանգ արժէ, ինչպէս և տղամարդը, բայց չէ վաստակում և դեռ երկար ժամանակ ոչինչ չը պէտք է աշխատի: Փող է հարկաւոր նորա կրթութեան, նորան աշխարհք հանելու համար, շատ անգամ վրդովւում է մարդ, թէ մի՞ գուցէ վատ օրինակը ստիպէ նորան ուղիղ ճանապարհից շեղուել,—և այս վերջինը պարզա-

պէս տանջանք է բերում մայրերին: Բացի մեր բոլոր ասածներից՝ Կլարային երբեմն երբեմն վրդովում էր զարմէալ մի միտք. Նա մտածում էր այն Հարստութեան մասին, որ մերժել էր. ամէն մի զրկանք, որ կրում էր որդին, տանջանքով յիշեցնում էր նորան այդ բանը: Դասերը շատ էլ յուսալի աղբիւր չէին ներկայացնում նորան, մանաւանդ ամառը, երբ Համարեա բոլորովին ցամաքում էր այդ աղբիւրը, որովհետև աշակերտների մեծ մասը քաղաքից դուրս էին գնում: Բացի դասերից նա պարապում էր արտագրելով, Թարգմանութիւններ անելով, կարով և առՀասարակ ամէն կերպով աշխատում էր, որ Ալֆրէդը չը զգայ աղքատութեան դառնութիւնը: Իսկ որդին չէր էլ մտածում, թէ ինչու Հետզհետէ գունատւում էր նորա դէմքը և արծաթագծւում էր նորա փափուկ ու խիտ մազերը, որոնցով ինչպէս յաճախ զմայլում էր նա:—Ինչ գեղեցիկ պառաւ ես դառնում, մայրիկ,—ասաւ նա փաղաքշելով: Կլարան փոքր ինչ տխրած ժպտաց. Ալֆրէդը շատ կին էր տեսել նորա տարիքով, որոց աւելի փոքր էր կարծում Հասակով, օրինակ, Մէռիլլայլին, որ եկաւ դոցա մօտ նոր տարի օրը և որ քառասունՀինգ տարեկանից աւելի չէր Թւում: Այս բանը, 'ի Հարկէ, ամենևին չէր վրդովում Կլարային. „Թող իմ դէմքս պառաւի", մտածում էր նա, „միայն թէ ոյժերս ինձ մնան, որոնք այժմ, կարծես, դեռ չեն Թուլացել":

Նա սկսաւ ծանր կերպով մտածել Ալֆրէդի ապագայի մասին: Սա արդէն տասնևՀինգ տարեկան էր և մի երկու երեք տարուց յետոյ պէտք է իւր Համար մի պարապմունք որոշէր, որից կախուած կը լինէր նորա կեանքը: Եթէ նա առանձին ընդունակութիւն ունենար որևէ մի գործի մէջ, մայրը ուրախութեամբ կ'օգնէր նորան այդ շաւիղը մտնելու, որովհետև մարդուս

Համար ոչինչ առաւել լաւ բան չըկայ, քան Թէ Հետևել իւր կոչման: Բայց Ալֆրէդը միևնոյն ընդունակութիւն էր ցոյց տալիս, ինչպէս կլասսիքական, նոյնպէս և բնական գիտութիւնների մէջ և միատեսակ սիրով պարապում էր երկուսով էլ: Ճշմարիտ է, նա մի առանձին սէր ունէր դէպի նկարչութիւնը, որի Համար անշուշտ ամէն բանից ձեռք կը վերառնէր, բայց այս սէրը, Կլարայի կարծիքով, ոչինչ փախճանի չէր Հասցնի: Նա լաւ էր նկարում, մինչև անգամ նշանաւոր նկարիչ էր Հասակին նայելով՝ նորա նկարները այժմ արդէն գեղարուեստական մտածողութեան և տաղանդի սերմ էին կրում:

—Մի Թողնէք ձեր եռանդը, դուք մեծ յառաջադիմութիւն կունենաք, մի անգամ ասաւ նորան պրոֆէսօրը, տեսնելով նորա աշխատութիւնը:—Սակայն այս արուեստը կը տանէ նորան ապաՀովութեան կեանքի մէջ, կամ մինչև անգամ կը տանէ նորան լոկ միայն օրական Հացը: Աւելի լաւ էր չը մտածել դորա մասին: Բայց այնուամենայնիւ չը կարողացաւ արգելել նորան պատկերաՀանդէսին այցելելը, ուր չափազանց սիրում էր գնալ:

Կլարան զուարճանում էր որդուն ուրախ, զուարթ ու բաւական տեսնելով և նորա սիրտը ուրախութեամբ բաբախում էր, երբ Ալֆրէդը կանգնելով մի որևէ նշանաւոր աշխատութեան առաջ, արտայայտում էր իւր Հիմնաւոր դատողութիւնները:

Այն ինչ Յակոբը շարունակ դեռ կօշիկ էր սորւում: Այս նորա պարապմունքն էր, բայց 'ի Հարկէ ոչ կոչումը: Ջնայելով սորան, չէր կարելի ասել, Թէ նա անՀոգ էր իւր պաշտօնը կատարելում. Նա բարեխիղճ էր և չը կամենալով ձրի փող ստանալ, ոչ կօշկաներկ էր խնայում և ոչ խոզանակ: Բացի դորանից նա վարպետ էր

իւր արհեստի մէջ և այնպէս ընտելացած էր այդ արհեստի մէջ, որ մեծ զուարճութիւն էր զգում ցեխոտ կօշիկները հայելու պէս մաքրելով։ Ամէն բանին կարելի է ընտելանալ, ընթերցող, եթէ կամքը ստիպում է․ բայց նորա գլխով, բացի այդ ստոր աշխատանքից, ՚ի հարկէ, անցնում էին նաև ուրիշ մտածմունքներ։ Այն օրուանից, երբ կարդալ սովորեց, ագահութեամբ հաւաքում էր ամէն մի տպած թերթ և միատեսակ հետաքրքրութեամբ կարդում էր սկզբից մինչև վերջը, լինէր այն լրագրի կտոր, թէ յայտարարութիւն կամ հրաւիրական տոմսակ և այլն։ Յակովբը այդպիսի թղթերով լցնում էր գրպանները և ամբողջ ազատ ժամանակը գլուխը քաշ գցած կարդում էր։ Սա աւելի լաւ էր, ՚ի հարկէ, քան թէ փողոցի տղայոց հետ թղթախաղով և զանազան փչացնող խաղերով պարապելը, բայց ունէր նաև իւր վատ կողմը. տղան միշտ չէր կարող սևը սպիտակից որոշել, ուստի և երբեմն վատ գրուածների կարդալը կարող էր վնասակար ազդեցութիւն ունենալ նորա վերայ։

Մի անգամ Յակովբը գնալով տ. Մօլլօյի մօտ, մի թերթ հանեց գրպանից, որ Ալֆրէդը իսկոյն ձեռքիցը խլեց։

—Պարոն Ալֆրէդ, ինձ տուէք, աղաղակեց նա ձեռքը մեկնելով դէպի նա։—Ես դեռ չեմ կարդացել, բայց հաւատի եմ, որ դորա մէջ շատ հետաքրքրական բաներ պէտք է լինին։

Այդ թուղթը „Ռօբինզօն Կռուզէի“ մի թերթ էր և երբ Ալֆրէդը տուաւ նորան կարդալու այդ հետաքրքիր գիրքը՝ Յակովբը ուրախութիւնից թռչկոտաց։—Ես հինգ րոպէն միանգամ ձեռքերս կը լուանամ, ուրախ ուրախ ասաւ կօշիկ սրբողը։

Տիկին Մօլլօյն Յակովբի՝ գրպանից հանած ամէն

մի թերթը գտնելով՝ ձգեց վառարանի մէջ և արգելեց նորան այդպիսի թերթեր հաւաքելը փողոցում, իսկ դորա փոխանակ ինքը խոստացաւ գրքեր տալ նորան։ Առհասարակ տիկինը, որքան կարող էր, հոգում էր նորա կրթութեան մասին և այս հոգացողութեան շնորհիւ Յակովբը տասնևերեք տարեկան հասակում համարեա նոյնքան գիտէր, որքան գիտէին նորա հասակակից տղաները, որոնք շարունակ յաճախում էին ժողովրդական ուսումնարանը։ Այդ ժամանակներում նորա համար մի բաւական բաղտաւոր դէպք տեղի ունեցաւ։

Մի երեկոյ Յակովբը տուն դառնալով չը գտաւ այնտեղ այրի Գարնէտին։ Ի զուր սպասեց նորան մինչև կէս գիշեր—և վերջապէս առանց ընթրելու պառկեց քնեց։ Հետևեալ առաւօտն էլ չ'երևեցաւ պառաւը, այնպէս որ խեղճ տղան շփոթուած գնաց որոնելու նորան հարևանների մօտ։ Մի պառաւ կին ասաւ նորան, թէ ինքը եղել է իւր հիւանդ աղջկայ մօտ հիւանդանոցում և այնտեղ տեսել է այրի Գարնէտին։—Փողոցում ընկած էր եղել, ասաւ պառաւը,—և վերցրել են տեսել որ երակներից մէկը պատռուել է, որպիսի հիւանդութիւնը շատ յաճախ է պատահում նորա հասակում, մանաւանդ արբեցողներին։

Խեղճ տղան, աչքերն արտասուք լցուած, որովհետև ինչ և իցէ էլի սիրում էր իւր տատին, չնայելով որ սա անդադար ծեծում էր նորան, գնաց հիւանդանոց։ Այրին ճանաչեց թոռանը և մեծ դժուարութեամբ կարողացաւ հետևեալ խօսքերն ասել.—ոչ ոքին չը թոյլ տաս, որ իմ ներքնակիս ձեռք տան։—Երեկոյեան մօտերքը նա մեռաւ։

Յակովբը տխուր սրտում վերադառնալով տուն՝ մտաբերեց հանգուցեալի խօսքերը և գնաց յայտնելու

այդ բանը տիկին Մօլլօյին: Կլարան գնաց տղայի հետ և քանդելով ներքնակը՝ գտաւ նորա մէջ հին բրդեայ գուլպայի մէջ փաթթած արծաթ և ոսկի քառասուն ֆունտ ստեռլինգ արժողութեան: Պառաւը փախենալով այդ փողերը հաւաքել էր իւր կեանքի վերջին տարիների համար: Այսպիսով Յակովբը գումարատէր դառաւ:

Այժմ նա այնքան փող ունէր, որ կարող էր վարձ տալ ցանկացած արհեստը սովորելու համար: Տիկին Մօլլօյն և Պասմօրը համաձայնեցան խնամակալ լինել նորան և նրանից հարցրին, թէ ինչ արհեստ է կամենում սովորել. նա պատասխանեց, թէ ցանկանում է „գիրք շինել“: Որովհետև այս խօսքերով նա անշուշտ գրքեր հեղինակելու ցանկութիւն չէր յայտնում, ուստի նորան տուին տպարան: Այն օրը, երբ նա, թղթեայ գլխարկը ծածկած, բերեց ծերունի Պասմօրին իւրան շարելու յանձնած՝ Շէքսպիրի լիակատար հրատարակութեան առաջին սրբագրութեան թերթը, իւր վիճակը չէր փոխի թագաւորի դրութեան հետ:

Նա այնպէս լաւ էր կատարում այս նոր պարտականութիւնը, որ գերազանցում էր իւր բոլոր ընկերներին և միանգամայն գրաւել էր տպարանատիրոջ ուշադրութիւնը, որ միանգամ ասաւ նորան.—շարունակիր այդպէս, սիրելիս, և կը դառնաս փառաւոր տպագրապետ:—Յակովբն այդ վայրկենին մտաբերեց Մարթային և շշնչաց ինքն իրան. „նա գոհ կը լինի ինձանից, այժմ նա երջանիկ է երկնքում“:

ԳԼՈՒԽ ԻԵ.

ՏԻԿԻՆ ՄՕԼՂՕՅԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ։

Մինչև որ Ռօբէրտը մի կերպ քաշ էր գնում իր ընկերներից անյառաջադէմների հետ տակաւին նախկին դաստիարակի առաջնորդութեան ներքոյ, Ալֆրէդը իր անխոնջ աշխատութեամբ և ծերունի Պասմօրի օգնութեամբ նորա նախկին տեղը բռնեց, այսինքն, անցաւ դասատան գլուխը: Երկու տղայք՝ էլ բարեկամ չէին միմեանց. նոցա կեանքի եղանակը տարբեր էր. բայց այնուամենայնիւ յարաբերութիւնները մօտ էր միմեանց: Ռօբէրտը ուրախ էր և սրամիտ և նորա կատակները դուր էին գալիս Ալֆրէդին, որ սրտով ցաւում էր նորա ծուլութեան վերայ: Ռօբէրտն էլ, թէպէտև աշխատելու ընդունակութիւնը կորցրել էր, բայց եղբօր պէս յարգում էր վերջինիս և շատ անգամ խորհուրդներ էր հարցնում նորան: Երկուսն էլ արդէն տասն և վեց տարու մօտ էին:

Այդ միջոցին մի դէպք պատահեցաւ, որ յաջողութեամբ պսակեց Ադոլֆ Լևդֆիշի աշխատութիւնները: Նա պսակուեցաւ մի Օստ—Ինդիացի վաճառական պ. Պօուէրի այրու հետ, որ թէպէտև ջահել չէր, բայց շատ հարուստ էր: Սա գալով Լօնդօն՝ մի յանձնարարական նամակով գնաց պ. Չէստէրտօնին, որի տանը և՛ գտաւ Ադոլֆին, որ յափշտակուելով նորա հարստութեամբ՝ իր սրտին մօտիկ համարեց նորան:

Այդ պատճառով Ռօբէրտը այդ ուսումնական տարին մենակ վերջացրեց իր պարապմունքները, իսկ հետևեալ արձակուրդին մեծ վարպետութեամբ համոզեց քեռուն, թէ իր կլասիքական զարգացումը այն-

քան մեծ է, որ արդէն ուսումը վերջացնելու և աշխարհք մտնելու ժամանակն է. պ. Չէստէրտօնը, որ, ինչպէս գիտենք, նորանից աւելի քիչ սէր ունէր դէպի ուսումն ու ուսումնականները, բոլորովին համաձայնեցաւ, չնայելով Սէսիլիայի մի փոքրիկ ընդդիմութեանը, և Ռօբէրտը տասն և եօթ տարեկան հասակում վերջնականապէս թողեց ուսումնարանը:

Հետևեալ երկու տարին Չէստէրտօնի ընտանիքը շատ և մինչև անգամ չափազանց շատ ճանապարհորդեց: Սկզբում Սեսիլեան սիրում էր մնափառ ընկերութիւններ, բայց շուտով այնքան ձանձրացաւ սորանից, որ զարհուրում էր երբ տեսնում էր քեռուն այնպէս ժիր և զուարթ: Շատ անգամ ժպիտը բերանին հարցնելով նորան թէ ինչպէս էր գիշերն անցկացրել, սրտանց ցանկանում էր, որ քեռին գանգատուէր յօդացաւից և այդ օրը տանը մնար: Բայց ծերունին, ինչպէս ինքը ասում էր, երկաթից էր ձուլուած և չը գիտէր թէ ինչ ասել է մրսել կամ յոգնել:

—Դէհ, սիրելի բարեկամ, ասում էր նա,—շուտ պատրաստուիր, նախաճաշից առաջ փոքր ինչ պէտք է զբօսնենք, որ ախորժակներս բացուի կամ թէ.—Սէսիլիա, չը մոռանաս, որ այսօր կէսօրից յետ մի քանի այցելութիւններ պէտք է անենք: Յոյս ունիմ, որ պարահանդէսի շորերդ այսօր երեկոյեան համար պատրաստ կը լինին: Մենք այսօր փոքր ինչ վաղ պէտք է ճաշենք, որ իր ժամանակին հասնենք օպէրան,— և այլն: Այսպիսի մթնոլորտի մէջ էր ապրում Սէսիլեան:

Յակովբը անդադար առաջ էր գնում իւր արհեստի մէջ և դառաւ մի օրինաւոր գրաշար, իսկ Լաուրան առաջուայ երեխայական ուռուցիկ դէմքը ընդունել էր այժմ մի փառաւոր կերպարանք, նա այժմ մի չափահաս օրիորդ էր: Տիկին Մագդլին սիրում էր նորան դեռ

երեխայ անուանել, սորա հակառակ նա հաւաքեց իւր ցած ընկած խոպոպները և մի նոր ձևով սանդրեց ու սկսաւ հագնել երկայն շորեր: Ովքեր ցանկանում էին նորան շողոքորթել՝ Լաուրա անուան տեղ կանչում էին օրիորդ Պօունտէրբի, որ մեծ զուարճութիւն էր պատճառում նորան: Այս երկու տարիները Կլարան շատ ծանր անցկացրեց: Նա հազար ու մի բան էր մտածում թէ որդու ապագայի և թէ նորան վերջապէս մի որոշեալ ճանապարհին կանգնեցնելու անհրաժեշտութեան մասին: Այս բանը շատ մեծ ներգործութիւն ունեցաւ նորա առողջութեան վերայ: Այն աստիճան նիհարացաւ, որ ձեռքերի ոսկորներն էին մնացել, այտերը ներս ընկան և երբեմն երբեմն գործի ժամանակ յոգնելուց քունը տանում էր: Իսկ Ալֆրէդը, շարունակ առաջին տեղը բռնած դասատան մէջ, այնպէս էր նկարում, ինչպէս պետական համալսարանի մի ուսանող, լաւ ձի հեծնել գիտէր, ինչպէս մարդաձի, լողում էր ծովապետ Ուէբի պէս և մենամարտում էր ինչպէս Անջէլօն: Այն օրը, երբ նա ստացաւ ճարտարութեան Բակկալավրի (*) աստիճան, մայրը լուռ ու մունջ գրկեց նորան և արտասուալից աչքերով խնդրեց Աստուծուն, որ նա արժանացնէ իրան տեսնելու իւր որդուն մի ընտիր և հաստատուն ճանապարհի վերայ:

Այդ երեկոյեան, թատրոնից վերադառնալուց յետոյ (պ. Պասմօրը խնդրել էր, որ 'ի պատիւ Ալֆրէդի յաջողութեան գնան „Վիլհէլմ տէլլ“ օպէրան

(*) Լօնդօնում կայ մի հաստատութիւն, ուր երիտասարդ մարդիք վարժւում են ֆիզիքական աշխատութեանց մէջ: Տարեկան հարցաքննութեան ժամանակ նոցանից առաջինը ստանում է Ճարտարութեան Բակկալավրի աստիճանը:

տեսնելու), նոքա երկար բարակ խօսակցութիւն ունեցան ապագայի մասին: Կլարան բացատրեց նորան իւրաքանչիւր պարապմունքի օգուտները և վնասները. խորհուրդ տուաւ չ'ընտրել այնպիսի պարապմունք, որ շատ և թեթև աշխատութեամբ ձեռք բերած վաստակով խաբում է մարդուն, այլ այդ դէպքում առաջնորդ ունենալ սրտի յօժարութիւնն ու այն ճշմարտութիւնը, որ մարդ պէտք է աշխատէ իւր կարողութեան չափ օգտակար լինել հասարակութեան: Սկզբում նա շփոթուած, վրդովուած էր խօսում, բայց շուտով հանդարտացաւ և զուարթացաւ, տեսնելով որդու իմաստուն և ազնուութիւն արտայայտող աչքերը, որոնք սիրալիր քնքշութեամբ նայում էին նորան:

Երբ մայրը քաշուեցաւ իւր սենեակը, Ալֆրէդը դեռ երկար ժամանակ արթուն մնաց, որովհետև խորհում էր և կշռում մօր առածները: Նա տատանւում էր և հասկանում էր, թէ, արդարև, ժամանակ էր իւր համար մի ասպարէզ ընտրելու. բայց ի՞նչպիսին: Նորան գրաւում էր զինուորական համալսարանը, բայց այնտեղ հարկաւոր էր երեք տարի ժամանակ և այդ երեք տարուայ ընթացքում անկարող պէտք է լինէր օգնել իւր մօրը. այս վերջին հանգամանքը անշուշտ հարկաւոր էր աչքի առաջ ունենալ, որովհետև տիկին Մօլլօյն, երևում էր, որ հանգստանալու պէտք ունէր, թէպէտ և պնդում էր հակառակը: Վատ չէր լինի նոյնպէս, եթէ բժշկութիւն սովորէր և աշխատէր այն քաղաքում, ուր հօր յիշատակը անշուշտ բազմաթիւ այցելուներ կը տար նորան,—բայց սա էլ երկար պատրաստութիւն էր պահանջում: Շատ յաճախ նա մտածում էր նկարչի վրձինի մասին, առաւելապէս այն դէպքից յետոյ, երբ մի գեղարուեստ տեսնելով, թէ ինչպիսի ճաշակով որոշում էր նա գոյներն ու

ստուերները, ասաւ նորան, թէ կարողէ լինել նշանաւոր նկարիչ գոյների. սակայն արուեստը շատ և շատ ուշ է փող տալիս մարդուն, նշանակում էր, որ 'ի սէր իւր մօր այդ էլ պէտք է թողնէր:

—Ամէնից յարմար բանը, որ ես կարող եմ անել, վճռեց նա վերջապէս,—այն է, որ մտնեմ մանկավարժական ճեմարան: Ես կարող եմ մի տարուայ մէջ պատրաստուել այնտեղ մտնելու համար և այնուհետև արդէն ոչինչ ծախս չի ունենայ մայրս ինձ վերայ, որովհետև այնտեղ ուսանում են արքունի հաշւով: Երեք տարուց յետոյ կ'աւարտեմ այնտեղ ուսումս և յետոյ ինձ կը նշանակեն ուսուցիչ մի որև է փոքրիկ քաղաքում, ուր մենք կ'ապրենք միասին: Գաւառներում ամէն բան աժան է և իմ ռոճիկը բոլորովին բաւական կը լինի, այնպէս որ մայրս էլ աշխատելու և հոգսերով ծանրաբեռնուելու կարիք չի ունենայ: Ի՜նչ հիանալի բան է, երբ մարդ իւր մտքերն ու գիտեցածը հաղորդում է ուրիշին և զգում է, որ օգուտ է բերում մարդոց: Յետոյ, գուցէ, անուն էլ հանեմ, գուցէ փոխադրեն ինձ մի որև է բարձրագոյն ուսումնարան, դասեր տան և այլն: Այո, այո, վճռուած բան է— ընտրում եմ մանկավարժական ասպարէզը և հէնց վաղը առաւօտ կը յայտնեմ մտադրութիւնս իմ մօրը:

Հետևեալ առաւօտ նա բաւական ուշ զարթնեց և ժամացոյցին նայելով՝ ծիծաղեց ու ասաւ.

—Արդէն ինն ժամն է. լաւ եմ պատրաստւում մանկավարժական ճեմարանի համար: Բայց մօրս ձայնը չէ լսում, գնամ զարթեցնեմ նորան: — Ասաւ և շուտով շորերը հագնելով՝ բաղխեց մօր սենեակի դուռը. պատասխան չը կար. երկրորդ և երրորդ անգամ էլ բաղխեց բաւական սաստիկ, սակայն լռութիւնը չ'ընդհատուե-

ցաւ։ Փոքր ինչ վախեցած՝ մատների ծայրերի վրայ ներս մտաւ սենեակը։

Կլարան անշարժ պառկած էր անկողնում և, ըստ երևոյթին, չէր նկատում նորան։ Նա մօտ վազեց, ձայն տուաւ, ձեռքից բռնեց,—բայց ոչինչ պատասխան չը ստացաւ. մայրը տաքութեան մէջ էր։ Մեծ դժուարութեամբ աչքերը բանալով դարձեալ իսկոյն փակեց, կարծես թէ լոյսը վնասակար էր նորա համար, գլուխը բռնեց ձեռքերով, կարծես թէ ցաւը սաստկանում էր։ Ալֆրէդը չափազանց վրդովուեցաւ և վազեց պ. Պասսմօրի մօտ, որ հիւանդին տեսնելուն պէս իսկոյն իր սպասաւորին ուղարկեց հարևան բժշկի ետևից։

Սա մի երիտասարդ տղամարդ էր. Նայելով տիկին Մօլլօյին, ինքն էլ խիստ շփոթուեցաւ, ապսպրեց սառը բարձիկներ գլխին կպցնելու համար, մի տեսակ դեղերի խառնուրդ և յայտնեց իր ենթադրութիւնը, թէ հիւանդը ուղեղի բորբոքում պէտք է ունենայ։ Այդ օրը խոստացաւ կրկին գալ։ Նա շատ յաճախ էր այցելում, ամէն անգամ մի նոր բան էր գրում, բայց ոչ ցնորքը և ոչ էլ ջերմը չը պակասեցաւ։ Վերջապէս, մի շաբաթ անցնելուց յետոյ, պ. Պասսմօրը մէկ լաւ հայհոյեց բժշկին, էշ անուանելով նորան և սառնութեամբ հարցրեց նորան—թէ արդեօք գիտէ՞ որպիսի հիւանդութիւն է բժշկել աշխատում։ Էսկուլապի (*) երիտասարդ աշակերտը ստիպուեցաւ խոստովանել, թէ նորան դեռ ոչ մի անգամ չէր պատահած նոյնանման դէպք։ Ծերունին չը կարողացաւ զսպել իրան, մի լաւ հայ-

(*) Էսկուլապը հին ժամանակները բժշկութեան չաստուած էր։

Ծ. Հ. Թ։

հոյեցին միմեանց, այնուհետև ինքը գնաց մի նշանաւոր բժշկի ետևից։ Ճանապարհին ինքն իրան մտածում էր.

—Նա ժամանակով իմ լաւ աշակերտներից մէկն էր և կարծեմ յարգում էր իր ուսուցչին։ Նորա ծնողները աղքատ էին և ես յաճախ ձրի էի դաս տալիս իրան. բայց այժմ առաջուայ այդ բարի տղան նշանաւոր բժիշկ է դառել, իսկ ոչինչ այնքան չէ փչացնում մարդուն, որքան բաղտաւորութիւնն ու փառքը։ Այո, ես համարեա համոզուած եմ, որ երբ առաջարկեմ նորան ձրի բժշկել այս խեղճ կնօջը, ճանապարհ պէտք է ցոյց տայ ինձ։ Ամենևին չէի համարձակուի առաջարկել, եթէ որ ինձ համար լինէր այդ օգնութիւնը հարկաւոր։

Ծերունի Պասսմօրը դարձեալ կասկածանքով վերաբերուեցաւ դէպի մարդկային բնութիւնը և դարձեալ սխալուեցաւ, որովհետև մի կէս ժամից յետոյ արդէն վերադարձաւ իր նախկին աշակերտի հետ կառքով, որ ջերմ սիրով սեղմելով նորա ձեռքը, շնորհակալութիւն արաւ իրան մտաբերելու համար։

Նոր բժիշկը արդարև վարպետ էր իր գործի մէջ։ Նա հարց ու փորձ արաւ պ. Պասսմօրին ոչ թէ հիւանդի վերայ ունեցած խնամքի, այլ նորա տկարութեան պատճառի մասին։ Հարցուփորձ արաւ տիկին Մօլլօյի պարապմունքի և կեանքի եղանակի, բնաւորութեան և այլ բաների մասին։ Այնուհետև հիւանդին նայելով ասաւ, թէ հիւանդութիւնը վտանգաւոր է, բայց թէ ինքը յոյս ունի բժշկել նորան։ Նա գալիս էր ամէն օր և աշխատում էր ազատել հիւանդին մահուան ճանկերից։ Կլարան երկու շաբաթ շարունակ ուշքի չեկաւ. մի առաւօտ աչքը բացաւ և խիստ զարմացաւ, որ Ալֆրէդը կանգնած էր նորա սենեկում։

Նա փորձեց վերկենալ, բայց իսկոյն և ետ թուլացած ընկաւ բարձի վերայ: Ալֆրեդը մօտեցաւ և ուրախութիւնից գրկեց մօրը:

—Այստեղ ինչ ես շինում, թոյլ ձայնով հարցրեց նորան մայրը—բայց շուտով ուշքի եկաւ և ասաւ.

—Ա՜խ, ես հիւանդ էի, իմ խեղճ տղաս. ամսի քանիսն է այսօր:

—Օգոստոսի 18-ն է, սիրելիս: Դու հիւանդ էիր, մայրիկ, մինչև անգամ ինձ էլ չէիր ճանաչում. բայց այժմ լաւ ես, չէ՞:

—Օգոստոսի տասնևութը՞, զարհուրելով գոչեց նա,— իսկ իմ թարգմանութիւնը պէտք է պատրաստ լինի Սեպտեմբերի 1-ին: Խեղճը նորից փորձեց բարձրանալ, բայց ՚ի հարկէ, չը կարողացաւ և մի կէս ժամից յետոյ ցնորքն ու ջերմը նորից բռնեցին նորան:

—Իմ թարգմանութիւնը, իմ թարգմանութիւնը, շշնջում էր նա:—Բժիշկը իմանալով թէ բանն ինչումն է, շատ շփոթուեցաւ:

—Մի անգամ էլ որ այդպէս սաստկանայ հիւանդութիւնը՝ կորած է, ասաւ նա հաստատ համոզուած իւր ասածների մէջ:

—Աւարտած է, դարձաւ նա հիւանդին, երբ սա նորից ասաւ սրտաբեկ ձայնով.—իմ թարգմանութիւնը, թարգմանութիւնս:

—Աւարտա՞ծ է. ո՞վ ձեռքով, գոչեց Կլարան:

—Իմ ձեռքով, պատասխանեց Ալֆրեդը, նկատելով բժշկի տուած նշանը:

—Քո՞ ձեռքով. ախ, իրա՞ւ, չէ՞ որ դու գերմաներէն գիտես. ինչ լաւ, որ դու մտածել ես այդ:

—Պէտք է շարունակէք խաբել, ապա թէ ոչ, կրկնում եմ, նա կը մեռնի,—ասաւ բժիշկը Ալֆրեդին, երբ սա ճանապարհ էր դնում նորան պատշգամբի մօտ:

Ալֆրեդը ահ ու դողով մտածում էր, թէ ինչ անէ, եթէ մայրը ցանկանայ տեսնել թարգմանութիւնը:

—Իսկ ինչ վնաս, եթէ աշխատեմ աւարտել. չէ՞ որ լաւ գիտեմ գերմաներէն, մտածեց նա,—և հանեց պահարանից թարգմանութիւնը:

—Տասներկու օրուայ մէջ կէս—հատորը վերջացնել՝ անկարելի է, ասաւ նա:—Բայց անշուշտ հարկաւոր է վերջացնել: Պէտք է ամէն բան անել, ինչ որ ուժերը թոյլ են տալիս:

Նա, որ երբէք սովորած չէ եղել խիստ վճռականութեամբ արտաբերել „հարկաւոր է“ խօսքերը, հազիւ թէ կարողանայ հասկանալ, թէ որ աստիճան կամքի ուժ են զարթեցնում դոքա: Ալֆրեդը սկսաւ աշխատել և շուտով տեսաւ, որ գործը աւելի հեշտ էր իւր կարծածից. որքան առաջ էր գնում, այնքան աւելի յաջող էր գնում բանը, և ամէն օր աւաւել և աւաւել համոզւում էր, որ թարգմանութիւնը կը վերջանար նշանակած ժամանակին:

Բարեբաղդաբար տիկին Մօլլօյն՝ էլ ոչինչ չը հարցրեց թարգմանութեան մասին և չը պահանջեց տեսնելու: Թէպէտ նա ուշքի եկաւ, բայց շատ թոյլ էր և յաճախ նորա կերպարանքից և համարեա երեխայական ժպիտից կարելի էր եզրակացնել, թէ հիւանդութիւնը, գոնէ առժամանակ դադարացրել էր նորա գլխում մտաւոր գործունէութիւնը:

Օգոստոսի 31-ին Ալֆրեդը արդէն տարաւ բոլորովին պատրաստ թարգմանութիւնը հրատարակչին, որ յօժարութեամբ յանձնեց նորան մի ուրիշ գրքի թարգմանութիւն: Արդէն օրական հացը վաստակած էր:

ԳԼՈՒԽ ԻԶ.

«ՄՆԱՍ ԲԱՐԵԱՒ — ՄԵԾ ԱՊԱԳԱՍ»

Մինչեւ սեպտեմբերի կէսը Կլարան արդէն կարողանում էր, որդու օգնութեամբ, ման գալ սենեակում եւ ժամանակն անց էր կացնում բազկաթոռի վերայ նստած՝ լուսամուտի մօտ, որ ծերունի Պասսմօրը ամէն օր զարդարում էր թարմ ծաղիկներով: Տաք եղանակին լուսամուտը բաց էին անում եւ հիւանդը ականջ էր դնում թռչունների երգելուն մօտակայ պարտէզում եւ շնչում էր աշնանային թարմ օդ:

Ալֆրէդը, որ դարձեալ երջանիկ եւ հանգիստ էր առաջուայ պէս, բռնում էր նորա ձեռքը, անդադար համբուրում էր, կարծես յուսալով, թէ այդպիսով կը պարգեւէ այդ ձեռքերին նախկին պարարտութիւնը: Հիւանդի դէմքը շատ նիհար էր եւ գունատ,—բայց այս գունատութիւնը առաւել լաւ է, քան կարմիր, վառվռուն տեսքը ջերմախտի, որ այնչափ երկար ժամանակ այրում էր նորա այտերը... Մահուան ձեռքից արդէն բանի կերպով յափշտակուած էր, մնում էր մի միայն թուլութիւնը, որ գրաւում էր դէպի ինքը որդու բոլոր քնքշութիւնը: Հիւանդութիւնը փոխեց որդու եւ մօր յարաբերական դրութիւնը. այժմ վերջինս ունէր հոգացողութեան եւ հոգատարութեան կարիքը:

Ալֆրէդը զգում էր, որ մայրը այժմ առաւել թանգ էր իւր համար, քան առաջ եւ համարեա մի տեսակ սրբազան ուրախութեամբ լցւում էր նորա սիրտը, երբ մտածում էր, թէ ինքը էլ արդէն երեխայ չէ եւ թէ օգնում է նոյն իսկ իւր մօրը:

—Ի՜նչ լաւ բան է կեանքը, ասաց Կլարան, ժպիտը երեսին նայելով իւր որդուն.—Համարեա թէ բոլորովին առողջ եմ զգում ինձ: Գնա մէկ Պասսմօրին այստեղ կանչիր, դեռ մինչեւ հիմի շնորհակալութիւն չեմ արել նորան ինձ վերայ ունեցած խնամքի, կրած նեղութիւնների, մինչեւ անգամ նաեւ այն ծաղիկների համար, որ այն աստիճան փայփայում էր ինձ համար:

Ալֆրէդը գնաց եւ զարմանալով տեսաւ, որ ծերունու մօտ նստած է բժիշկը եւ տաքացած խօսում է նորա հետ. երկուսի դէմքերն էլ տխուր էր:

—Շատ լաւ ժամանակ եկաք, բարեկամ, ասաց նորան բժիշկը,—ձեզ համար անհրաժեշտ է իմանալ այն բանը, ինչ որ այժմ մենք խօսում էինք: Ես ձեզ ճշմարիտը կ'ասեմ: Բանը նորանումն է, որ ձեր մայրը, ինչպէս տեսնում էք, առողջանում է, բայց դորանից դեռ չէ հետեւում, թէ նա շուտով կարող է իւր նախկին գործերով պարապել: Վախենում եմ, որ դեռ շատ ամիսներ անցնեն, մինչեւ որ մտաւոր աշխատութեան ընդունակութիւնը վերադառնայ նորան: Երեւում է որ հիւանդութիւնից առաջ նորա մտաւոր ուժերը երկար ժամանակ ու զօրեղ կերպով լարուած են եղել: Այսպէս ուրեմն, եթէ ցանկանում էք, որ ձեր մայրը բոլորովին առողջանայ, չը պէտք է թոյլ տաք որ աշխատէ, այլ պէտք է մի կերպ ուրախ եւ թեթեւ բաներով զբաղեցնէք:—Բժիշկը խօսքը կտրեց, փոքր ինչ մտածեց եւ յետոյ քնքշութեամբ շարունակեց.

—Ներեցէք ինձ, եթէ ես խառնւում եմ մի գործի մէջ, որ ինձ չէ պատկանում, բայց ինձ թւում է, թէ ձեր մօր միջոցները, իմ ասած պայմանները կատարելու պատճառով, չեն թոյլ տայ ձեզ շարունակել ձեր ուսումնարանական պարապմունքները, ուստի մնում է

որ մտնէք մասնաւոր կամ արքունի ծառայութեան մէջ: Եթէ թոյլ կը տաք որ կարողացածիս չափ, օգնեմ ձեզ այդ գործում, շատ ուրախ կը լինեմ:

—Շնորհակալ եմ ձեզանից, բժիշկ, տխրութեամբ պատասխանեց Ալֆրէդը,—այդ մասին, ճշմարիտ ասած, պէտք է փոքր ինչ մտածել. եթէ հարկաւոր եղաւ, ես օգուտ կը քաղեմ ձեր մտերմութիւնից:

Բժիշկը դուրս գնաց պ. Պասմօրի հետ միասին:

Ալֆրէդը անշարժ ու լուռ ու մունջ նստած մնաց աթոռի վերայ: „Մնաք բարեաւ՝ մանկավարժական ճեմարան և մեծ ապագաս“ ասում էր նա իւր մտքում — „պէտք է ձեռք բերել փող և փող, որ կարողանամ պահել ինձ և մօրս“:

—Ահա՛ քո գլխարկը, ընդհատեց նորա մտածմունքը Պասմօրի ձայնը, որ արդէն վերադարձել էր,— ես մօրդ ասացի, որ դու գնացել ես զբօսնելու: Եւ իրաւ, գնա, շունչ քաշիր. իսկ ես մինչև կը խօսեմ նորա հետ մի որ և է բանի:

—Ի՞նչպիսի տեղ կարող եմ գտնել, գլուխը ջարդում էր Ալֆրէդը, ծառատունկում զբօսնելիս, ուր առաջ շատ յաճախ լինում էր իւր մօր հետ: Այդ տեղերը յիշեցրին նորան իւր մանկութեան օրերը և մի ծանր ախ քաշեց, „ինչ լաւ բան է երեխայութիւնը“ մտածեց նա: Մտաբերեց իւր բարեկամ Ռօբէրտին, որին յաճախ պատահում էր այժմ զարդարած ձիու վերայ մանգալիս, մտաբերեց պ. Չէստէրտօնին, որ այն աստիճան ատում էր աղքատ ազգականներին և վերջապէս մտաբերեց Յակովբին, որ տպարանում երբէք շիլլինգ էր ստանում և որ զարմանում էր, թէ ինչո՞ւ այդքան շատ են վճարում իրան: Այսպիսի մտածմունքներում խորասուզուած էր նա, երբ մի հարուած ուսին հանեց նորան մտածմունքներից: Նորա առաջ կանգնած էր

մի երկտասարդ տղայ իւր նախկին աշակերտական ընկերներից:

—Ի՞նչ կայ, դեսպա՞ն էք գնում, թէ ինչ է, աղաղակեց նա:—Երեք անգամ ողջունեցի, բայց դուք ամենևին ուշադրութիւն չը դարձրիք ինձ վերայ: Ո՞ւր էք գնում այդպէս յօնքերը կիտած:

—Ներեցէ՛ք, մտածմունքի մէջ էի և չեմ նկատել ձեզ: Ինչո՞վ էք պարապում ուսումնարանից դուրս գալուց յետոյ:

—Իսկոյն տեղափոխուեցայ Լօնդօնի այն ծայրը, որ առաւել մօտ է իմ գործին:

—Ի՞նչ—գործի՞ն: Ես կարծում էի, թէ մեր ուսումնարանից անցել էք մի ուրիշ ուսումնարան:

—Ո՛չ, ինձ անհնար էր ուսումն աւարտել: Հայրս մեռաւ, ուստի և մեծ եղբայրս համալսարանը թողեց և մտաւ մի նոտարի գրասենեակ գործակատարի պաշտօնով. նորա ռոճիկը չէր բաւականանում ինձ, երկու քրօջս, մօրս և իրան, այնպէս որ ինքս էլ ստիպուեցայ մտնել նոյն պարոնի գրասենեակը, ում մօտ որ ծառայում է եղբայրս: Մենք թէ և յոյս ունենք, որ լաւ օր տեսնենք, բայց այժմ էլ աղքատ չենք ապրում. և բացի դրանից այս էլ կայ, որ այդ ճանապարհով, ինչպէս նաև ուրիշ բոլոր ճանապարհներով, կարելի է մի լաւ ապագայ պատրաստել:

—Այս՝ ճանապարհով կարելի է նոյնպէս լաւ ապագայ պատրաստել, ինչպէս նաև ուրիշ բոլոր ճանապարհներով, մտածեց Ալֆրէդը:—Հէնց դիցուք բոլոր ճանապարհներով կարելի չը լինի, բայց այնուամենայնիւ ես կը փորձեմ:

Նա մեկնեցաւ ընկերից և ուղղակի գնաց պ. Պունօէրբի մօտ: Նախասենեակը մտնելով՝ նա ձեռքով թափ տուաւ գլխարկի վրայի թոզը և ուղղեց փող-

պատը, որովհետև ամէն նօտարները սիրում են մաքրութիւն:

Պ. Պօւնսէրլին շատ քաղաքավարութեամբ ընդունեց նորան և հարցրեց տիկին Մօլլօյի առողջութիւնը:

—Մայրս համարեա առողջացած է, պարոն, այժմ նորան հանգստութիւն է հարկաւոր, պատասխանեց Ալֆրէդը:—Բայց հանգստութիւնը պէտք է խաղաղ լինի և երկարատև, այնպէս որ բժիշկը խորհուրդ է տալիս նորան միքանի ամիս գործ չը շինել: Ինչպէս ձեզ յայտնի է, մենք հարուստ չենք—այստեղ Ալֆրէդի ձայնը դողդողաց—և մինչև այժմ համարեա միայն մօրս աշխատանքով էինք ապրում: Իսկ այժմ ստիպուած եմ ինքս աշխատել և եկել եմ խնդրել ձեզանից, որ մի տեղ տաք ինձ ձեր գրասենեակում:

Նօտարը վատ մարդ չէր, բայց նորա հպարտութիւնը մասամբ յագենում էր, երբ նորան խնդիրներով դիմում էին այնպիսի մարդիք, որոնք սկզբում մերժած էին նորա առաջարկութիւնը: Այս պատճառով կարեկցական ձայնով ասաց նորան.

—Ա՛յ, տեսնո՞ւմ էք, սիրելիս, եթէ ձեր մայրը սորանից վեց տարի առաջ չը մերժէր իմ առաջարկութիւնը և դուք ինձ մօտ լինէիք, այժմ արդէն բաւական փողի տէր կը լինէիք:

—Մայրս ոչինչ չի ասել ինձ դորա մասին, բայց երևի այն ժամանակ մտածած կը լինէր ուրիշ ճանապարհ պատրաստել ինձ համար: Իսկ այժմ ես դուրս եմ եկել ուսումնարանից և . . .

—Լա՛ւ ձեռք ունիք: Աշակերտները առհասարակ վատ են գրում ուսումնարանում: Փորձի համար արտագրեցէք այս երեսը: Տողերի միջի հեռաւորութիւնը և լուսանցքի չափը նշանակեցէք, չը մոռանաք որ

վերնագիրը բոլորագրով պէտք է գրել և առհասարակ ամէն բան կանոնաւոր լինի:

Բարեբաղտաբար, Ալֆրէդը արտագրեց պարզ և գեղեցիկ և չնայելով, որ շատ անհանգիստ էր զգում իրան պ. Պօւնսէրլի ներկայութեամբ, բայց և այնպէս շատ լաւ կատարեց բոլոր արտաքին ձևերը. նա մտաբերեց մօրը և աւելի պինդ սեղմեց գրիչը ձեռքի մէջ:

—Շատ լաւ է, ասաց նօտարը, համեմատելով պատճէնը բնագրի հետ: Այժմ ցոյց տուէք ձեր շնորհքը հաշուէգիտութեան մէջ:

Ալֆրէդը արագ սկսաւ հաշուել և արագ ու ճիշտ տաել գումարները:

—Լա՛ւ, լա՛ւ, գոչեց նօտարը:—Մենք ձեզ իսկոյն և եթ տեղ կը տանք: Իսկ օտար լեզուներ էլ անշուշտ կը գիտենաք, որովհետև ձեր մայրը շատ լաւ գիտէ:

—Այո՛, գիտեմ կարդալ և գրել գերմաներէն և ֆրանսերէն:

—Շատ գեղեցիկ. մէկ այս Փարիզի և Մայնցի նամակները թարգմանեցէք:

Թարգմանելիս նայեց պ. Պօւնսէրլին և հաճութեամբ կրկնեց.—հիանալի է, հիանալի,—իսկ երբ ամբողջ թարգմանութիւնը կարդաց, ասաց նորան.—առ այժմ այսքան էլ բաւական է. ես ձեզ կընդունեմ իմ գրասենեակս և որովհետև մեծ համարմունք ունիմ ձեր բարեխղճութեան մասին, ուստի այժմէն իսկ նշանակում եմ ձեզ վեց ֆունտ ստերլինգ ամսը: Այնուհետև՝ Աստուած ողորմած է:—Ալֆրէդը սրտանց շնորհակալութիւն արաւ նորան և խնդրեց, որ իւր պարտականութեան կատարումը սկսէ մի շաբաթից յետոյ: Այսքան միջոցը անհրաժեշտ հարկաւոր էր նորան մօրը խնամելու համար:

Երբ դուրս գնաց փողոցը, նորա գլխի մէջ սկսան հաւաքուել տխուր մտածմունքներ: Նոտարի մօտ գործակատար: Մնաս բարեաւ—ազատութիւն, մնաք բարեաւ—գիտութիւն և պրոֆէսօրական ամբիոն: Մեծ բանաստեղծների հեղինակութիւնները կարդալու փոխարէն՝ նա պէտք է այժմ արտագրէր չորուցամաք և ձանձրացնող գործեր. այնպէս բարձր թռչելուց յետոյ ի՜նչ ստոր տեղ նստել տնկուած էր նա: Նոտարի՜ գործակատար: Այս երկու խօսքերը գերեզմանական ձայնով հնչում էին նորա սրտում:

Բայց նա այրաբար յետ մղեց այս մտածմունքները և մի ներքին ձայն հանգստացրեց նորան: „Դու կատարեցիր քո պարտքը", շշնջաց նորան ձայնը" և կատարեցիր շատ լաւ: Ի՞նչ տարբերութիւն կարող է լինել պրոֆէսօրի, գեղարուեստի և նոտարի մէջ, երբ նոքա կը կանգնեն Արարչի առաջ: Նոցանից ամէն մէկը ունի անմահ հոգի և միմիայն այս հոգու յատկութիւնը որոշում է նոցա միմեանցից: Մի՛ տրտնջար քո արած զոհաբերութեանդ համար,—դու երջանիկ ես"—Այո, Ալֆրէդը, արդարև, նորից շուտով զուարթացաւ և երջանիկ էր: Նորա հոգին լցուած էր հանգստութեամբ և իւր պարտքը խղճմտանքով կատարած լինելու զգացմունքով,—իսկ ի՞նչ կարող է աւելի ախորժելի լինել քան հանդարտ խղճմտանքը:

ԳԼՈՒԽ ԻԵ.

Պ. ՊՕՈՒՆՍԷՐԲԻԻ ԳՐԱՍԵՆԵԿՈՒՄ:

Մի քանի ժամանակ Ալֆրէդը չասաց մօրը, ինչ որ արել էր: Վախենում էր, թէ մի գուցէ սաստիկ վրդովուի, երբ տեսնէ իւր կազմած բոլոր նախագծները

ոչնչացած անողորմ կարիքի առաջ: Բայց այնուամենայնիւ հարկաւոր էր ասել և միանգամ ինքը մայրը պատճառ տուաւ ասելու, հետևեալ խօսքերով.

—Այժմ ես բոլորովին առողջ եմ, ուստի և մենք դարձեալ կարող ենք 'ի միասին խորհուրդ անել քո ապագայի մասին: Շուտով ես դարձեալ կ'սկսեմ իմ պարապմունքս. իսկ դո՞ւ ինչ ես մտադիր անել այս տարի:

Ալֆրէդը իւր բոլոր ոյժը հաւաքեց և բռնելով մօր ձեռքը՝ պատասխանեց.

—Լսի՛ր, աղնիւ մայրիկս, այժմ արդէն հաւատում ես ինձ, չէ՞: Ուրեմն տես ինչ կասեմ քեզ: Հիւանդութիւնդ խիստ թուլացրեց քեզ, բայց իմ ոյժերս աւելացրեց. այո, այժմ դու երեխայ ես և այս պատճառով պէտք է թոյլ տաս ինձ, որ խնամեմ և փայփայեմ քեզ—ուրիշ խօսքով, ես այժմ պէտք է աշխատեմ մեզ երկուսիս համար, ինչպէս առաջ դու էիր անում: Անհրաժեշտ հարկաւոր է, որ դու մի լաւ հանգստանաս, այնպէս է ասում բժիշկը. մի չնչին յոգնածութիւն կարող է նորից ջերմախտ կամ տենդ պատճառել քեզ, իսկ ես չեմ ցանկանում, որ դու դարձեալ հիւանդանաս: Մայրը գլուխը շարժեց ու ասաց.

—Խեղճ տղաս, միթէ կարծում ես, որ կարող ենք ամսական հինգ փունտ ստերլինգ թոշակովս ապրել: Դու ինչո՞վ կարող ես օգնել: Քո հասակի տղայք շատ փող չեն կարող վաստակել:

—Իմ տարիքի մարդիք կարող են քիչ ու շատ փող վաստակել և այդ կապացուցանեմ նորանով, որ արդէն մտել եմ պ. Պօունսէրբիի մօտ ու այժմ տարին եօթանասուն երկու փունտ ռոճկով: Աւելացրու սորա վերայ և՛ այն փողերը, որ կը ստանամ գիշերները թարգմանութիւններ անելով—որովհետև ես քեզ դեռ շատ ժամանակ չեմ թոյլ տայ, որ գրիչ վերցնես ձեռքդ—

և կը տեսնես, որ այդ գումարը մեզ բաւական է, դեռ այս էլ մի կողմ թողնենք, որ էլ սովորած չենք լինի միմեանցից բաժանուել: Այն ինչ եթէ մտնէի մանկավարժական Ճեմարանը, դու պէտք է մենակ ապրէիր և այդ ինձ համար անախորժ կը լինէր—իսկ քեզ համար: Գնա, գուցէ, բարկանաս ինձ վերայ, որ այս բանը մտածել եմ և արել առանց քեզանից խորհուրդ հարցնելու: Բայց, մայրիկ, դու երկար միջոց հիւանդ էիր, իսկ ժամանակ կորցնել անկարելի էր:—Ներո՞ւմ ես ինձ:

Նա տեսաւ, թէ ինչպէս մօր ձեռքերը դողում էր իր ձեռքերի մէջ և չը համարձակեցաւ նայել նորա երեսին: Եւ երբ, վերջապէս, աչքերը բարձրացրեց, տեսաւ, որ մայրը խիստ գունաթափ էր և արտասուքը հեղեղի պէս թափւում էր նորա աչքերից:

—Քաջ եղիր, սիրտ առ, մայրիկ, շշնջաց նա:

—Այժմ դո՛ւ ես ինձ տալիս, սիրելի, ազնիւ տղաս: Ես չեմ մերժում դէպի ինձ ունեցած սիրոյդ այս նոր ապացոյցը և ներողութիւն եմ խնդրում, եթէ ես որպէս և իցէ ծանրութիւն եմ քեզ համար: Ես խիստ շատ եմ մտածել քո պայծառ ապագայի մասին,—գուցէ և շատ պահանջող էի: Նախախնամութիւնը դաս տուաւ ինձ—երկուս էլ պէտք է քաջութեամբ տանենք: Դու կանես ամէն բան, ինչ որ կարող ես,—դո-բանում ես համոզուած եմ. դու մի ազնիւ ու լաւ զաւակ ես, իսկ այդ մինչև անգամ առաւել լաւ է, քան թէ մեծ մարդ լինելը:

Մի քանի րոպէ շարունակ երկուսն էլ լուռ էին: Յետոյ Կլարան, արտասուքը սրբելով, հարցրեց.—Իսկ ե՞րբ պէտք է դնաս պ. Պօւնաէրրէլի մօտ:

—Վաղը չէ միւս օր:

—Լա՛ւ, խոստանում եմ քեզ, որ ինչքան կարողեմ

կաշխատեմ, որ շուտ ուժի գամ: Դու դեռ շատ մեծ չես և եթէ Աստուած կամենայ դեռ ամէն բան վերջացած չէ:

—Իհարկէ, ոչ. ես մտածում էի մանկավարժական Ճեմարան մտնել. այդ դեռ մինչև քանիչորս տարեկան հասակը կարելի է, նշանակում է որ դեռ ժամանակ շատ ունիմ և անշուշտ Պաստօրն էլ չի մերժի իւր օգնութիւնը ինձանից:

—Այդ ամէնը արդէն յայտնել ես նորան:

—Ոչ, առաջ կամեցայ քեզ պատմել, բայց այժմ կ'երթամ և կը խօսեմ նորա հետ:

Եւ գնաց, թողնելով իւր մօրը երկու տարբեր զգացմունքների ազդեցութեան տակ. նա մխիթարւում էր տեսնելով որդու հաստատ վճռականութիւնը և քաջութիւնը և միևնոյն ժամանակ շատ ծանր էր նորա համար մտածել, թէ բոլոր յոյսը ոչնչացած էր: Ինքը լաւ զգում էր, որ, ներկայ դրութեան մէջ, իր միտքը չէր կարող ծանր աշխատանք տանել և անտրտունջ հնազանդեցաւ ժամանակաւոր անգործութեան, վախենալով, թէ մի գուցէ նոր հիւանդութիւնը բոլորովին ծանր բեռ դարձնէ իրան որդու համար:

Պ. Պաստօրը, երբ լսեց Ալֆրէդի որոշումը, առաջ հեղեղի չափ անէծք դուրս թափեց բերանից, իսկ այս գեղեցիկ վարժութիւնից յետոյ քաղցրութեամբ գրկեց իւր աշակերտին և դասեց նորան հին ժամանակներում որդիական անձնուիրութեան օրինակ տուած բոլոր անձանց թւում: Այնուհետև գովասանական խօսքեր շաղ տուաւ տ. Մօլլօյի մասին, ասելով, թէ այնպիսի կնոջ համար, ինչպիսին է նա, դժուար է ասել չէ թէ միայն շատ բան, այլ նոյն իսկ ինչը հարկն է, որովհետև նա արել է որդու համար այն ամէնը, ինչ որ կարող էր անել աշխարհիս մայրերից կատարելատիպը: Յետոյ

սպառնաց մահու հարուած տալ նորան, ով կը համարձակէր ասել, թէ Ալֆրէդը այդպէս վարուելով հերոսութիւն չէ արել և, վերջապէս, պայման դրաւ, որ ամէն երեկոյ կը կարդայ նորան որ և իցէ լաւ հեղինակից մի մի գլուխ, որպէս զի նա չը կորցնէ ճաշակ դէպի գեղեցիկը „այդ անխնայ դատապարտական մեքենայութեանց խաօսի“ մէջ:

Միւս առաւօտ պ. Պուանսէրլին մտաւ գրասենեակը ճիշտ այն ժամին Ալֆրէդի հետ միասին, որին ծանօթացրեց գլխաւոր գործակատարի հետ և խնդրեց վերջինիս ծանօթացնել նորեկին տան ամէն կարգ ու կանոնի հետ:

Մեր կեանքի ամէն անխուսելի, մի և նոյն ժամանակ անհաճոյ փոփոխութիւնների մէջ, նոր վիճակի առաջին օրը, որքան էլ ծանր լինէր նա, մարդս դժբաղդ չէ լինում, որովհետև չէ ունենում մտածելու ժամանակ, այլ տարուած է լինում բոլոր ույժը գործ դնել իւր նոր պարտաւորութիւններին ու վիճակին ընտելանալու համար:

Ալֆրէդը, նստելով սեղանի առաջ, անչափ ցանկութիւն զգաց իւր գործի բոլոր կարգ ու կանոն և ձևերը ուսանելու, այնպէս որ ժամանակ չունէր մինչև անգամ իւր շուրջը նայելու, ուստի և երեկոյին նա կարողացաւ մօրը պատմել լոկ իւր արածը, բայց տեսածները չէ:

Բայց մի քանի օրից յետոյ, երբ արդէն ուշադրութիւնը բացառապէս իւր գործի մէջ կենդրոնացնելու անհրաժեշտութիւնն անցաւ և արդէն միւս գործակատարների պէս մեքենայաբար կատարում էր իւր գործը, կարողացաւ ուշադրութիւն դարձնել նաև ամբողջ հաստատութեան վերայ: Եթէ նա չունենար հաստատ վճռականութիւն և համբերութիւն, ան-

շուշտ տխուր ներգործութիւն կը թողնէր նորա վերայ այդ ոչ բոլորովին լուսաւոր սենեակը, ուր կարգով շարուած էին սեղանները, որոց առաջ վիզը ծռած նստած էին մարդկային դաժան կերպարանքներ, որոնք ճռճռացնում էին սովորական գրչով թղթի վերայ, կամ քրքրում էին հաստափոր օրինագրքերը: Ո՛ր կողմ էլ նայէիր, ամէն տեղ գրիչ, թուղթ և հին գրքեր էր թափած: Աշխատողների դէմքերը ամենևին կենդանի չէին որ և է պայծառ մտածողութեամբ, որովհետև ամէն բան, ինչ որ նոքա շինում էին, բոլորովին մեքենական, բոլորովին ծանօթ էր նոցա: Զարմանալի չէ, որ չափահաս նօտարները այնքան թերահաւատութեամբ են վերաբերում դէպի մարդկութիւնը, որովհետև նոցա բոլոր կեանքը անցնում է նոտարանում, որ օգնեն վերջինիս մի կէսին, մշտապէս գրաւոր վէճ ունենալու միւսի հետ:

Բայց Ալֆրէդը որոշեց անտարբերութեան անձնատուր չը լինել և կամենում էր, որ, ինչ էլ որ լինի, երեկոները ուրախ և զուարթ դէմքով մտնէ իւր մօր փոքրիկ սենեակը: Նա այսպէս էր դատում, թէ՝ ակամայ գործ շինելը նոյն է նշանակում թէ ամենևին չէ շինում: Ուստի ուշադրութիւն չը դարձնելով սենեակի անշունչ առարկաներից ստացած անախորժ տպաւորութեանը, որոշեց մտնել նորա մէջ աշխատող մարդկանց և մեծ զարմանքով տեսաւ, որ նոցանում առաւել կենդանութիւն կար, քան որքան կարծում էր ինքը, դատելով արտաքին տեսքից:

Այն սենեկում, ուր նա պարապում էր (նորա մօտ կար և մի ուրիշ սենեակ — գրադարան), կային երեք գործակատար և մի ծառայող տղայ, որի անունը ոչ ոք չը գիտէր, որովհետև ամէնքը նորան “կապիկ” էին կանչում, նորա զարմանալի թռոյցների և ծամած-

ութիւնների համար, առանց որոց չէր կատարում ոչ մի պատուէր։

Գլխաւոր գործակատարը մի ծերունի մարդ էր, որ մտադիր էր շուտով Թողնել ծառայութիւնը և քաշուել քաղաքից դուրս. այդ նպատակով մի տուն շինեց այնտեղ գեղեցիկ վտակի ափին։ Շաբաթ օրերը նա գնում էր այնտեղ իւր բանուորներին տեսնելու և աճեցնելու իւր այգին, որ նորա մտածողութեան սիրելի առարկան էր։ Երկրորդ գործակատարը—պարոն Կէմպբէլլը բոլորովին չափած ձևած էր այդ պաշտօնի համար. նա ծառայել էր այնտեղ քսան և հինգ տարի և երևակայում էր, Թէ ինքը շուտով մի նոյնպիսի նոտար պէտք է դառնայ, ինչպէս էր պ. Պօունաէրլին։ Նա չափազանց վեհանձն տեսք ունէր և խօսակցութեան մէջ աշխատում էր գործ դնել երևելի խօսքեր ու դարձուածներ։

Երրորդ գործակատար Դանիօլը մի ուրախ երիտասարդ էր և լայն կարմիր դէմք, մուգ մազեր, ուրախ մեծ մեծ աչքեր, լիքը այտեր ու փոքրիկ ծիծաղկոտ բերան ունենալու բաղդն ունէր։ Չը նայելով որ մեծ եռանդ ունէր աշխատելու, նա ամէն բանի մէջ ցանկանում էր գտնել իւր ընտիր բաժինը և ծաղրում էր ամէնին ուրախ և սրամիտ, բայց անմեղ զուարճախօսութեամբ։

Ալֆրէդը բարեկամացաւ Դանիօլի և Կէմպբէլլի հետ և շուտով գոհ մնաց սորանից։ Երևաց, որ նոր բարեկամները երկուսն էլ իրանց գործին նայում էին փոքր ինչ բարձրից, Թէպէտև տարբեր տեսակէտից։

—Ա՛չ տեսնում էք, վսեմութեամբ ասաց Կէմպբէլլը, գրիչը ամրացնելով ականջի ետև և աջ ձեռքը դնելով բաճկոնակի մէջ,—չարաչար սխալւում էք, երբ մեր գործը միօրինակ էք անուանում։ Իրաւացի—սա, այսպէս ասած, գլխաւոր մեքենան է ներկայ հասարակութեան։ Մենք գործ ունինք ամէն բանի և ամէնքի

հետ. մենք փոխադրում ենք արդարութեան չաստուածին, որին օգնութիւն էին խնդրում հները. մենք մարդկութեան գործավարներ ենք։ Գեղարուեստի և ճարտարապետութեան ոչ մի օրինակը (նորա խօսքը զանազան շինութիւնների մասին էր), բնութեան ոչ մի զմրուխտը (նորա խօսքը անտառների և մարգագետինների մասին էր) չեն կարող մէկ ձեռքից միւսը անցնել՝ առանց գործը մեր ձեռքովն անցկացնելու։ Մենք—նախնիքների կտակների հաւատարիմ պահապաններ ենք, մենք գնում ենք ձեռք ձեռքի տուած Կուպիդօնի և Գիմէնէյի (*) հետ, պատրաստում ենք բանալիներ ամուսնական կապերի համար։—Դէհ, այժմ կարո՞ղ էք գտնել այնպիսի մարդիկ, որոնք մեզանից շատ գործ լինեն շինել։

—Շատ բարձր գնացիք, ընդհատեց նորա խօսքը Դանիօլը։—Մեզ այստեղ զբաղեցնում է չէ Թէ այն, ինչ որ մենք շինում ենք, այլ այն, ինչ որ տեսնում ենք։ Աչքերը և ականջները բաց արէք և կը տեսնէք այն կատակերգութիւնը, որ խաղացւում է այս տան մէջ։ Ահա տասը տարի է որ նայում եմ նորան և լաւ հասկացել եմ ամէն բան. կարող եմ մինչև անգամ ցոյց տալ ձեզ գլխաւոր դերասաններին։ Նոտարի գրասենեակը երբէք Օլիմպիայի բարձրութիւն չէ, այլ պարզ մի [illegible]։

(*) Սիրոյ և ամուսնութեան չաստուածներ Հռոմէացւոց մէջ։

Մ. Հ. Թ.

ԳԼՈՒԽ ԻԸ.

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԼԱՊՏԵՐԻ ՄԷՋ:

—Կատարեալ ձմեռ է, պարոններ, ասաց պարոն Կէմպբէլլը, հոկտեմբերի մի ցուրտ առաւօտ մտնելով գրասենեակը: Պալատական դռնապանը չէր կարող սառանից երևելի ձևով իմաց տալ Նորին կայսերական մեծութեան գալը:

—Ձեր կարծիքով այժմ ձմեռ է, զարմացած խօսեց Գանիկօնը,—սա մի չնչին ցուրտ է, որի մասին խօսել էլ չարժէ:

Այդ րոպէին զանգը քաշեցին: Գանիկօնը գնաց տեսնելու թէ ով է եկողը:

—Ահա, ասաց նա վերադառնալով,—ահա այն պարոններն են, որոց պատկերը կատարեցինք մենք անցեալ տարի: Տեսնում էք—այս չաղ տիկինը և բարձրահասակ պարոնին: Սոցա որ նկարենք, մի հիանալի ծաղրանկար կը դուրս գայ: Նա...

Եւ յանկարծ կանգնեց, որովհետև այն զոյգը, որի մասին խօսում էր, մտաւ սենեակը: Պ. Կէմպբէլլը խնդրեց նոցա որ սպասեն, մինչև իմաց կը տան պ. Պօւոնաքըլլին:

Նորեկ տիկինը, երևի թէ, ամենևին պ. Կէմպբէլլի կարծիքի չէր եղանակի մասին, որովհետև ծանր շունչ քաշելով և իր ասղնէգործ թաշկինակով հովհարելով՝ ատանից այլևայլութեան նստաւ մի աթոռի վերայ, որ ողորմ ճռճռոց հանեց նորա ահագին ծանրութեան տակ:

Մօտն էլ նստաւ իր ուղեկիցը և աչքերին դնելով

ապակու կտորտանքը՝ փոքր ինչ արհամարհական ձևով սկսաւ նայել գործակատարներին:

Այդ միջոցին Ալֆրէդը գլուխը վեր քաշեց. այցելուն նկատելով նորան՝ չափազանց զարմանալով գլուխը յետ գցեց և կարծես մի բան մտաբերեց:

—Լսեցէք, մադամ, ասաց նա վերջապէս,—առաջ որտեղ եմ տեսել ձեզ, հմ: Գլուխս գրաւ կը դնեմ, որ մենք առաջ միմեանց տեսած պէտք է լինենք:

—Շատ անգամ ուսումնարանի զաւանը, ուր ես ուսանում էի, պ. Ախլէֆէշ, անտարբեր պատասխան տուաւ Ալֆրէդը:

—Ա՛խ, այո, այո. Ճշմարիտ է,—դուք իմ բարեկամ Չէստէրտօնի ընկերն էիք: Բայց սակայն, ի՞նչ էք շինում այստեղ, անշուշտ այս պաշտօնի համար չէիք ուսում առնում, այնպէս չէ՞:

—Հանգամանքները ստիպեցին ինձ այստեղ մըտնել, ասաց Ալֆրէդը և էլ չուզելով խօսքը երկարացնել, նորից սկսաւ իր պարապմունքը:

Շուտով ներս մտաւ պ. Պօւոնաքըլլին և մի առանձին քաղաքավարութեամբ ներս հրաւիրեց այդ երջանիկ ամուսիններին իր առանձնասենեակը:

Դոքա եկել էին մի նշանաւոր գործի համար: Իրանց ամուսնութեան առաջին տարին անց էին կացրել ճանապարհորդութեան մէջ: Մտն էին եկել Վենետիկ, Վիեննա, ձմեռն անց էին կացրել Նէապօլսում, իսկ ամառը Պետերբուրգում: Բայց տիկինը յագնել էր ճանապարհորդելուց և ցանկանում էր մնալ Լօնդօն և ունենալ իր մօտ հիւրանոց. ուստի և յանձնեց նոտարին գտնել մի յարմարաւոր բնակարան և յոյս յայտնեց, թէ նա կարողէ այս առաջարկութիւնը լաւ կատարել, որովհետև առատ վարձատրեց դորա համար:

Երբ երկու ամուսինները գնացին, Գանիկօնը բա-

ւական շատ սրախօսութիւն արաւ նոցա մասին. բայց Ալֆրէդը լուռ մնաց այդ բոլորին: Նա մինչև անգամ վշտացաւ, որ նրան ճանաչեցին և վիրաւորուեցաւ այն ձևերից, որով վարուեցաւ նորա հետ Ռօբէրտի նախկին դաստիարակը:

„Ահա քեզ ապուշ մարդ“, մտածեց նա, „որ չը գիտեմ թէ ինչու նրան անհամեմատ բարձր է համարում ինձանից“: Այս մտածմունքը ցրուելու համար, իւր բոլոր ուշադրութիւնը հաւաքեց և խորասուզուեցաւ իւր գործի մէջ. այդպէս ուշք ու միտքը հաւաքած պարապում էր, երբ աւագ գործակատարը երևեցաւ դռներում և ասաւ.

—Կառավարիչը կամենում է Մօլլօյին, գերմաներէնից թարգմանելու բան ունի:

Ալֆրէդը վերկացաւ տեղից և գնաց առանձնասենեակը բոլորովին հանգիստ, որովհետև առաջին անգամը չէր արդէն: Բայց, երբ մտաւ այնտեղ, յանկարծ չափազանց կարմրեց: Այն պարոնը, որին հարկաւոր էր իւր ծառայութիւնը, նոյն մարդն էր, որ մերժեց ուսումնարանում տալ նորան մրցանակը, այսինքն պ. Չէստէրտօնն էր:

—Պարոն Մօլլօյ, բարութիւն արէք, թարգմանեցէք այս: Այստեղ ինձ մօտ գրեցէք, որովհետև խնդրոյ պատասխանն էլ պէտք է գրէք, ասաւ նորան նոտարը:

Ալֆրէդը գլուխ տուաւ, նամակը վեր առաւ և նստաւ սեղանի առաջ: Նա տեսաւ, որ պ. Չէստէրտօնի աչքերը յառած էր իւր վերայ: Հօրեղբայրը թէև սկզբում ոչինչ ուշադրութիւն չէր դարձնում նորա վերայ, բայց երբ պ. Պօունդէրբին նորա անունը տուաւ, իսկոյն անունից ճանաչեց իւր բարեկամին: Ի՞նչ մտածեց արդեօք, տեսնելով նորան այդտեղ՝ ուսումնարանում ու-

նեցած այնքան փայլուն յառաջադիմութիւններից յետոյ: Գուցէ մտածում էր, թէ բոլորովին կը մերժէ, եթէ Ալֆրէդը դիմէ նրանից օգնութիւն խնդրելու, ախր չէ՞ որ ամենևին չէր սիրում իւր աղքատ բարեկամներին:

Ալֆրէդի հպարտութիւնը զարթեցաւ, երբ մտածեց դորա մասին. շուտով աւարտեց թարգմանութիւնը և ստոյգ յուզուած դրութեամբ կանգնեց իւր հօրեղբօր առջև, սպասելով նոր հրամանին:

Ծերունին նամակը կարդալիս գաղտնի կերպով նայում էր Ալֆրէդին: „Գեղեցիկ տղայ է“, մտածեց նա, „համարեա նոյնքան գեղեցիկ, ինչպէս Ռօբէրտը, միայն սա ինձ աւելի աշխոյժ է թւում: Ես հաւատում եմ, որ սա սիրում է աշխատութիւն և, ճշմարիտն ասած, սա այնպէս շուտ չէր հնազանդուի, ինչպէս նա. բայց միևնոյն ժամանակ սա անշուշտ աւելի քիչ փող կը ծախսէր: Անկարելի է հաւատալ, թէ ինչ մեծ գումարներ է վատնում Ռօբէրտը: Երեսուն մարդով վագր որսալը աւելի աժան կը նստէր ինձ, քան ինչքան ծախսում է նա մի օրուայ մէջ էպսօմեան ձիարշաւների վերայ: Այս երիտասարդները ամենևին փողի յարգը չը գիտեն“:

Նա յետ տուաւ նամակը Ալֆրէդին:

—Շնորհակալ եմ ձեզանից, ասաւ նա,—շատ լաւ է: Կարո՞ղ էք թարգմանել իմ պատասխանս գերմաներէն: Ես կը թելադրեմ ձեզ:

—Պատրաստ եմ, պարոն, պատասխանեց Ալֆրէդը սառը քաղաքավարութեամբ:

„Սա հպարտ է“, մտածեց պ. Չէստէրտօնը: „Կարող էր գոնէ յիշել, որ ես իւր հօրեղբայրն եմ“:

Մենք կարող էինք յիշեցնել պ. Չէստէրտօնին, որ ինքը երբէք նորան ազգական չէ համարել: Նա թելադ-

րեց նամակը, Ալֆրեդը գրեց գերմաներէն և տուաւ նորան: Պարոնը կարդաց, շնորհակալութիւն արաւ իւր բարեկամին նեղութիւն տալու համար, մի քանի հաճոյական խօսքեր ասաւ նորա գիտութեան վերաբերութեամբ և մինչև անգամ այնպիսի ձև ընդունեց, իբր թէ կամենում էր ձեռք տալ, բայց Ալֆրեդը գիտութեամբ չը տեսնելու տալով իրան, գլուխ տուաւ և իսկոյն դուրս գնաց:

„Սքանչելի տղայ է“, մտածեց հօրեղբայրը, նայելով նորա ետևից: „Նորա համար, անշուշտ, ձանձրալի տեղ է այս: Զարմանում եմ, թէ ինչպէս է ընկել այստեղ: Երևի մայրը փող չէ ունեցել ուսման վարձ տալու. եթէ այդպէս էր, ինչու ուրեմն չէ գրել ինձ:

Բայց նա թողեց այս մտածմունքները իւր մէջ և պ. Պօւնսէբբեից հեռանալիս, ոչ մի նշան չը ցոյց տուաւ, թէ ճանաչել էր Ալֆրեդին:

Կախարդական լապտերի մէջ տեսարանները փոխւում էին մէկը միւսից յետոյ: Դեռ չորս ժամը չէր անցել, իսկ Գանիօկը արդէն ցոյց տուաւ Ալֆրեդին մի զառամեալ կին, որ ամէն տարի փոխում էր իւր կտակը. Գանիօկը այժմ արտագրում էր արդէն եօթներորդը: Յետոյ պատմեց նորան մի վաճառականի պատմութիւն, որ ամէն տեսակ անարդար ճանապարհներով ձեռք էր բերել հարիւր հազար ֆունտ ստեռլինգ և այժմ տալիս էր իւր աղջկան, որը պատրաստւում էր ամուսնութեան միջոցով մտնել մի ընտանիքի մէջ. Ալֆրեդը այժմ արտագրում էր ժառանգութեան պայմանները: Գանիօկը սկսել էր արդէն մի երրորդ պատմութիւն, երբ մտաւ մի տիկին և հարցրեց պ. Պօւնսէբբին: Բայց յանկարծ զարմացած բացականչեց.

—Ալֆրեդ, դուք գործակատար էք այստեղ: Ի՞նչ է պատահել ձեզ, սիրելիս,—ո՞ւր է ձեր մայրը:

—Մայրս այժմ շարունակ տանը նստած է, տիկին Լիտըլտօն, պատասխանեց Ալֆրեդը,—մի շատ վտանգաւոր հիւանդութիւնից յետոյ նա տակաւին հանգստութիւն է վայելում:

—Տէ՛ր Աստուած. Խե՜ղճ Կլարա. իսկ ես բոլորովին ոչինչ չեմ իմացել: Մենք նոր վերադարձանք ճանապարհորդութիւնից և բացի դորանից, չափազանց զբաղուած եմ,—իմ կեանքը կատարեալ տանջանք է:—Է՛հ, դո՞ւք ինչպէս էք այստեղ ընկել:

—Ես մտայ այստեղ, որ մայրս կարողանայ հանգստանալ և հոգս չը քաշէ փող ձեռք բերելու համար:

Մէտիլլիան սաստիկ կարմրեց:—Ինչու ինձ չը գրեցիք, հարցրե՜ց նա, աւելի մօտենալով Ալֆրեդին:—Ես շատ բաղդաւոր կը լինէի, եթէ որ և իցէ բանով կարողանայի օգնել ձեզ: Կլարան շատ լաւ գիտէ իմ սիրտը և մտերմաբար չէ վարուել, որ չէ յիշել ինձ: Շատ ցաւալի է, որ դուք այնպէս գեղեցիկ սովորում էիք և յանկարծ թողել էք ուսումնարանը: Խնդրեմ ասէք ձեր մօրը, որ կարող եմ տալ ձեզ մի որ և է ուսումնարան:

—Շնորհակալ եմ ձեզանից, տիկին Լիտըլտօն, բայց հաւատացէք, որ մենք օգնութեան կարօտութիւն չունինք: Իմ հասակի մարդ ինքը պէտք է հաց վաստակէ և երջանիկ պէտք է համարէ իրան, եթէ կարողանայ առանց ուրիշի օգնութեան կառավարուել: Ես բոլորովին գոհ եմ իմ վիճակից:—Նա ողջունեց վիրաւորուած Մէտիլլիային և շարունակեց իւր պարապմունքը:

ԳԼՈՒԽ ԻԹ.

ՄԱՐԴԻՔ ԱՆՓՈՓՈԽ ՉԵՆ ՄՆՈՒՄ։ ՊԱՐԱՀԱՆԴԻՍԸ ՄԻՇՏ ՋՈՒԱՐՃՈՒԹԻՒՆ ՉԷ ԲԵՐՈՒՄ։

Երկու տարի էր, որ Ալֆրէդը ծառայում էր նօտարի գրասենեակում, բայց արդէն համարեա բոլորովին ընտելացած էր այն կեանքին, որ վարում էր. երբեմն մինչև անգամ բաւականութիւն էր զգում իւր պարապմունքից։ Օրինակի համար, երբ պ. Պօւնտէրբին շնորհակալութիւն էր անում նորան գործը լաւ կատարելու համար, նա զգում էր թէ լսում է ուսուցչի ասած այս խօսքերը „ձեր գրաւոր վարժութիւնը շատ լաւ է, Մօլլօյ, մեզ միայն մնում է որ գովենք“։ Նա չէր պարծենում սորանով, որովհետև գիտէր, որ պարտական է անել այն ամէնը, ինչ որ պահանջւում է մարդկային ուժից. բայց, 'ի հարկէ, նորան դուր էր գալիս այդ խօսքերը։ Ուրախանում էր նաև, որ ընկերները քաղաքավարութեամբ էին վարւում իւր հետ և նուիրում էին իրանց ուշադրութիւնը. զգում էր, որ իրան սիրում էին և յարգում, իսկ մայրը միշտ աշխատում էր, որ նա տեսնէ գնահատել լաւ մարդոց կարծիքները։ Ուստի և Ալֆրէդը չէր ափսոսում այն ժամերը, որ անցկացնում պ. Պօւնտէրբիի գրասենեակում։

Ընթերցողներս հեշտութեամբ կը հասկանան, սակայն, թէ նա աւելի քիչ էր ափսոսում այն ժամերը, որ անցկացնում գրասենեակից դուրս։ Երեկոյեան հինգ ժամին նա վերադառնում էր տուն։ Իւր նախկին երկու սենեակի փոխարէն արդէն վարձել էր դարձեալ երկու սենեակ, միայն այլ ևս ոչ թէ հինգերորդ յարկում, այլ երրորդում մի և նոյն տան մէջ։ Սանդուղի

գլխի դուռը միշտ բաց էր լինում և մօրքաղցրիկ դէմքը՝ տեսնելուն պէս ժպտում էր նորան։ Նա նստում էր բազկաթոռի վերայ որդու մօտ, մինչև սորա հանգստանալը, իսկ յետոյ ճաշէր տալիս։ Ճաշելուց յետ Ալֆրէդը դարձեալ փոքր ինչ աշխատում էր, իսկ այնուհետև դուրս էր գնում մօր հետ զբօսնելու, միանգամայն բաղդաւոր և գոհ, որ բռնում էր նորան ձեռքից և մանածում։ Գիշերը անցկացնում խաղաղ և հանգիստ իրանց փոքրիկ, բայց շատ քան պարունակող սենեակում և Ալֆրէդը երբէք մինչև անգամ մտքովն էլ չէր անցկացնում աշխարհի աղմկալից զուարճութիւնները։ Նա գրում էր իրան տուած գործերը կամ թարգմանում էր մի բան և երբեմն երբեմն գլուխը վեր էր քաշում, որ աչք աչքի գայ իւր սիրելի մօր հետ։ Ծերունի Պատմօրը սովորաբար քրքրում էր գրքերը, որոնելով առաւել հետաքրքիր տեղեր հարկաւոր եղած ժամանակ կարդալու համար։ Երբեմն Կլարան նստում էր դաշնամուրի մօտ և նուագում էր մի բան Ալֆրէդի սիրած եղանակով։ Տասն և մէկ կամ տասներկու ժամին ծերունիները սովորաբար գնում էին քնելու։

Լապտերը վառւում էր սենեակում առաջուայ պէս պայծառ, բայց այնտեղ մնում էր միմիայն որդին, որ աշխատում էր մօր համար։ Նա յոգնում էր, երբ աշխատանքները ծանրանում էին, բայց երջանիկ էր։ Երբ երեխայ էր և հիւանդ կամ թոյլ ժամանակ խնամում էին նորան, երջանիկ էր համարում իրան, իսկ այժմ և առաւել բաղդաւոր էր զգում, որ քաջ էր. նա զգում էր մի սրբազան հպարտութիւն և աշխատում էր ու մենամարտում կարիքի հետ նորա համար, ում որ սիրում էր բոլոր սրտով։ Կլարան առողջանում էր, գոնէ այդպէս էր թւում։ Նա ստացաւ նախկին ուրախութիւն և ոյժը իւր փոքրիկ տնտեսական գործունէութեան հա-

մար. սակայն մտաւոր աշխատանք դեռ չէր կարողա-
նում կատարել և երբ փորձեց, խիստ գլխացաւ զգաց:
Ալֆրեդը սովորաբար կակուղ կակուղ նախատում էր նո-
րան դորա համար և զբաղեցնում էր ուրախ զուարճա-
խօսութիւններով, որպէս զի նորա միտքը ազատէ ծանր
մտածմունքներից, որ վնասակար էր նորա համար: Այս-
պիսի զուարճաբանութիւնները միշտ նորանով էին վեր-
ջանում, որ մայրը սրտալի ծիծաղում էր, երբ Ալֆրեդը
պատմում էր Դանիօլի կատակները և սրախօսութիւն-
ները, միևնոյն ժամանակ ծաղրելով և նորա կօշտու-
թիւնը և կամ կրկնելով նշանաւոր Կէմպբէլլի ծաղրելի
ոճերը: Այսպիսի դէպքերում մայրը ասում էր.—„Իմ
ողորմելի գլուխը հիւանդութիւնից յետոյ շատ թոյլ է,
բայց հաւատով եմ, որ կը լաւանայ. միայն շուտ թէ
ուշ,—այդ կարող է միայն նախախնամութիւնը որոշել:
Այսուամենայնիւ շատ գոհ եմ Աստուծոյ հիւանդու-
թեանս համար, որովհետև դա կատարեալ տղամարդ
դարձրեց որդուս:“

Ռօբէրտը, ՚ի հարկէ, իւր բարեկամ Ալֆրեդի
կեանքը ձանձրալի կեանք էր համարում: Ինքը անց էր
կացնում իւր օրերը առաւել ախորժելի տեղերը և այն
էլ այնպէս, որ մէկ օրը միւսի նման չէր լինում: Ճըշ-
մարիտ է, երբեմն ձանձրանում էր պարապութիւնից և
վճատակելուց, կամ որ և է մէկ աններելի յանցանքի
կամ վատնողութեան համար ընկնում էր քեռու անա-
խորժ յանդիմանութիւնների տակ. բայց հօ մարդ միշտ
չի կարող բաղդաւոր լինել, ուստի և Ռօբէրտը շուտով
մոռանում էր այդ ամէնը և նոյնը դարձեալ կրկնում:
Սակայն մի անգամ քեռին այնպէս խօսեց իւր ժա-
ռանգի հետ, որ սա չափազանց վախեցաւ:

Այս բանը պատահեցաւ առաւօտեան: Նախըն-
թաց երեկոյեն Ռօբէրտը գիշերը ուշ վերադարձաւ տուն

և ջարդուած ու յոգնած ներս մտաւ քեռու մօտ, երբ
որդէն վաղուց նախաճաշը մօտ էր տարած, այն էլ
ծառան էր զարթեցրել, թէ չէ էլի քնած կը լինէր:
Պ. Չէստէրտօնն ու Սէսիլիան նստած էին սեղանի
առաջ:

—Այս ի՞նչ բան է, պարոն պատուելի, որ սպասել
էք տալիս մեզ, բարկացած գոչեց պարոնը:—Ինչո՞ւ
այդպէս ուշ վերադարձաք գիշերը: Մէկ ինչ որ լաւ բան
եմ լսել քո մասին:

—Իմ մասի՞ն, գոչեց Ռօբէրտը:

—Դեռ զարմանում էլ ես: Մտածիր հօ չե՞ս որ
խաբես ինձ: Ես շատ լաւ գիտեմ, թէ ինչ պատուական
ընկերութեան մէջ էիր դու գիշերս. ոչինչ չե՞ս լսել
Բարտօնի մասին:

—Այո, քեռի՛ս, Բարտօնը մի շատ նշանաւոր մարդ
է. ես պատահմամբ ծանօթացայ նորա հետ:

—Յիրաւի նշանաւոր է. նշանաւոր աւազակ է:
Նա երեկ երեկոյեն ժողովարանում տարել է քեզանից
քսան և հինգ ֆունտ ստէրլինգ, ուր ճաշից յետոյ
գնացիր դու քեզպէսի մի յիմարի հետ: Խօսք չունիմ,
պատուական մարդոց հետ ես ծանօթանում:

Ռօբէրտը կարմրեց վարդի պէս:

—Ահա քո քսան և հինգ ֆունտը, գոչեց պ.
Չէստէրտօնը, շպրտելով բանկի տոմսակը սեղանի վե-
րայ:—Քո նշանաւոր ծանօթը—գրպան կտրող խարդախ
թղթամոլ է, իսկ դու, երկրպագիմոջ յիմար, չես էլ
նկատել, որ նա ամբողջ ժամանակ խաբել է քեզ: Բա-
րեբաղդաբար ուրիշ մարդիկ քեզանից լաւ են տեսնում:
Այնտեղ գտնուած ոստիկանութեան անդամներից մէկը
նկատել է նորան, իմացել է, որ վաղ բռնուած է եղել
աւազակութեան համար, ուստի և նորից բռնել է:
Այսօր առաւօտ նա ուղարկել է ինձ փողերը և պա-

պրել է թէ չիմարացրել են քեզ և այնպէս տարել են այդ փողերը քեզանից: Նայիր, չիմարի վերջը շատ վատ է լինում: Եթէ երբ և իցէ թէկուզ մի անգամ տեսել եմ քո անունը որ և է դատաստանական գրութեան մէջ, իմ ձեռքովս կը խեղդեմ քեզ: Ես իմ փողերը ժառանգութեամբ չեմ ստացել նախնիքներիցս, այլ ինքս եմ վաստակել և այն, պարզ բան է, ազնւութեամբ. ուստի և ցանկանում եմ, որ այդ փողերը նոյնպէս ազնւութեամբ ծախսուեն, լաւ իմացիր ասածս: Դէհ, այժմ նստիր նախաճաշիր, ես չեմ կամենում որպէսի և իցէ բացատրութիւն լսել քեզանից, առանց այդ էլ շատ ժամանակ կորցրի քեզ վերայ:

Ռօբէրտը նստաւ սեղանի առաջ բարկացած քեռու և դողացող մօր մէջ տեղը: Չնայելով որ տեսակ տեսակ ճոխ և համեղ կերակուրներով լի էր սեղանը, բայց չի կարելի ասել, թէ նա ախորժակով նախաճաշեց:

Այդ օրը ամբողջ շատ վատ դրութեան մէջ էր նա. ամենևին աչքին բան չէր գալիս, ամէն բան սուր և ձանձրալի էր թւում նորան: Երեկոյին հրաւիրեցին ընթրիքի, գնաց որ կարելի է սիրտը բաց անէ, բայց այնտեղ էլ ոչինչ բաւականութիւն չը գտաւ:

— Տէս, մտածեց նա, յոգնած և ձանձրացած վերադառնալով տուն,— մի անգամ էլա չը կարողացայ տանել: Ա՛խ, եթէ ազատ կը լինէի:— Բայց ինչից և ինչու համար էր ուզում այդ ազատութիւնը,— դժուար թէ կարողանար ասել:

Ալֆրէդ Մօլլօյի կեանքի խաղաղ ընթացքը խանգարուեցաւ մի պարահանդէսով: Այն օրից յետոյ, երբ նաւաստիի շորերով ազատեց Մօկօ-կապիկը և ծանօթացաւ հօրեղբայր Չէստէրտօնի հետ, ոչ մի անգամ պարահանդէս չէր գնացած: Այս երկրորդ պարահան-

դէսը, ուր ներկայ պէտք է լինէր, տրուեցաւ նոյն սենեակներում և նոյնպէս, ինչպէս և առաջին անգամ, 'ի պատիւ Լաուրա Պօւնսէբբիի ծննդեան նշանաւոր օրուայ:

Լաուրան արդէն տասնեւվեց տարեկան էր և երբեմն պարծենում էր իբրև տանտիկին:

Այո, քաղցր էր սրտին մի ընկերուհու կազմած պարահանդէսը հօր հետ թևակցած մտնելը և լսել „օր. Պօւնսէբբի" խօսքերը, բայց հազար անգամ աւելի քաղցր է, երբ հէնց ինքն է պարահանդէսի կազմողը, ինքն է ընդունում հիւրերին, տղամարդկանց ծանօթացնում օրիորդների հետ — մի խօսքով, երբ ինքն է հանդիսի թագուհին և խաղում է գլխաւոր դերը: Ուստի և Լաուրան թոյլտուութիւն խնդրեց տասնեւվեց տարեկան հասակում իւր ծննդեան օրը կազմել պարահանդէս և, 'ի հարկէ, թոյլտուութիւնը ստացաւ: Ասում եմ — 'ի հարկէ, որովհետև պ. Պօւնսէբբին երբէք և ոչ մի բան չէր բացասում իւր աղջկան: Նա էր իւր իդէալը և կարծում էր, որ աշխարհիս երեսին նորանից բարեսիրտ, քնքոյշ և հրաշալի ոչ ոք չը կար. նորան զուարճութիւն պատճառելու համար պատրաստ էր ընդ հուր և ընդ ջուր անցնել:

Ամէն մարդ ցանկանում է և որոնում բաղդաւորութիւն թէ իւր և թէ նոցա համար, որոց սիրում է, ուստի և մենք պէտք է զարմանայինք, թէ ինչու աշխարհումս երջանիկ մարդոց թիւը շատ մեծ չէ,— ճշմարիտ չէ՞, սիրելի ընթերցողներս: Բայց արի տես, որ երջանկութիւնը որոնում են այնտեղ, ուր չը պէտք է որոնել: Ամէն ծնօղ անկասկած սիրում է իւր որդւոց, բայց եթէ նոցա սէրը անմիտ սէր է, այդպիսի սէրը ամենևին օգուտ չի բերի որդւոց: Որ ինչ է Ռօբէրտը երջանիկ լինի, Սէսիլիան ուրախութեամբ ընդունեց

մի և նոյն առաջարկութիւնները, որ Կլարան մերժեց Ալֆրէդի բարեբաղդութեան համար. բժը նոցանից ճշմարիտ էր: Լաուրայի երջանկութիւնը ապահովելու համար պ. Պօունսէբրին անդադար աշխատում էր, դարձնելով իւր փողերը անկնանեք և փոխառութեան տոմսակներ: Նա հաւատացած էր, որ իւր աղջիկը մի հիանալի ընկերութիւն կը կազմէր և հասարակական բարձր դիրք կը բռնէր: Ցանկանում էր, որ բարձր ձայնով զարմանք յայտնէին իւր աղջկայ ընթրչ գեղեցկութեան, նորաձև հագուստների վերայ, խօսէին նորա երաժշտական տաղանդի մասին, նկատէին նորա խելքը ևայլն: Ճշմարիտ էր դատում նա:—Տիկին Մօլլօյն մը-տածելով դորա մասին՝ գլուխը շարժում էր, բայց, 'ի հարկէ, չէր խառնւում բանի մէջ, որովհետև հիւան-դանալուց յետոյ դադարեց Լաուրային դաս տալուց և շատ ուշ ուշ էր տեսնւում նորա հետ:

Չի կարելի ասել, թէ պ. Պօունսէբրին շատ սը-խալւում էր տ. Մօլլօյի դատողութիւնն ընդհանուր հա-մար: Լաուրան իւր հասակի համեմատ շատ լաւ կըր-թուած էր և, Կլարայի ազդեցութեան տակ, նորա միտքն ու զգացմունքը լաւ և կանոնաւոր կերպով զարգացած էր: Պ. Պօունսէբրին տեսնում էր այս և որանից շնորհակալ էր Կլարայից: Բայց օրիորդի բոլոր ընկերուհիները վերջնական կրթութեան համար մտան բարձրագոյն վարժարան, ուր թէպէտ և գիտութիւն-ները շատ հարևանցի էին անցնում, բայց սորա փոխա-րէն զարգացնում էին ճաշակն ու աշխարհավարու-թեան ձևերը:

Լաուրան էլ տրուեցաւ նոյն տեղ և երկու տա-րուայ մէջ սովորեց այնտեղ մի քանի ճարտար խօսքեր, հասարակութեան մէջ վարուել, նոյնպէս և հագ-նուել, խօսել, ման գալ, ողջունել մեծ մարդոց պէս (դեռ

մեծ բաղդաւորութիւն է, որ չէր սովորել մեծ մարդոց պէս մտածել): Այս պատճառով արտաքին կողմից նա չէր զանազանւում իւր բարձր շրջանի ընկերուհիներից և կարողանում էր վարուել հետները: Յաճախելով նոցա մօտ և ընդունելով նոցա իւր մօտ, նա փոքր առ փոքր սեպհականացրեց նաև նոցա մտքերը, այն-պէս որ սկսաւ մեծ նշանակութիւն դարձնել, թէ ինչ են խօսում իւր վերայ աչքաւոր մարդիք և սովորեց ամենադատարկ, անպտուղ պարապմունքներով ժամա-նակ անցկացնելու մեծ արհեստը: Այսպիսով, ուրեմն, նա բոլորովին պատրաստուեցաւ այն երջանկութեան համար, որ հայրը կամենում էր վայելել տալ նորան:

Պարահանդէսից մի քանի օր առաջ պ. Պօուն-սէբրին պաշտօնական ձևով մտաւ գրասենեակը և հրա-ւիրեց բոլոր գործակատարներին:

Պէտք է խոստովանել, որ Ալֆրէդը հիացած էր այս հրաւիրելու վերայ: Նա դեռ չէր հասկացել, թէ ինչ մտքով վերջին երկու տարիները Ռօբէրտը ասում էր, թէ պարը—մի ծանր բեռն է, որ տանտէրերը դը-նում են երիտասարդների ուսին: Բայց դորանից, քէֆը գալիս էր, երբ մտածում էր, թէ դարձեալ պէտք է Լաուրայի հետ ընկեր լինի—Լաուրայի, որ այնպէս սի-րելի էր պարի շրջերում, այնչափ գրաւիչ էր և կարեկից դէպի հանգուցեալ Մարթան: Ալֆրէդը երբեմն երբեմն տեսնում էր նորան և նկատում էր, որ առաջուանից առաւել գեղեցկանում է: Ներում էր նորան՝ ուշ ուշ այցելելու համար, որովհետև, մտածում էր թէ գե-ղահաս աղջիկը միշտ չի կարող իւր ուզածը անել, թողնենք այդ էլ—ինչու պէտք է նա փոխուած լի-նէր: Չէ որ ոչ ինքը, ոչ էլ իւր մայրը չէին փոխուել: Այս պատճառով ուրախ դէմքով և զուարթ ձայնով միևնոյն օրը հաղորդեց իւր մօրը նոտայի հրաւէրը:

—Փողը ինչ սիրտս բաց կանեմ, ասաւ նա,—բայց յանկարծ տխրեցաւ:—Ոչ, չեմ կարող գնալ, գոչեց նա: —Ամենևին չեմ մտածել շորի մասին, ես փրակ չունիմ:

—Տեսնենք, կարելի է մի բան գտնենք, ասաւ մայրը:

Եւ սկսաւ քրքրել հանդերձարանը. հենց վերև արկղից հանեց մի կապոց, որի մէջ աւշան էր լցրած ցեցից պահպանելու համար: Նորա միջից հանեց տղամարդի տեսակ տեսակ շորեր, ՚ի թիւս որոց նաև մի փրակ:

—Սա բոլորովին նոր է ասաւ նա,—հայրդ միմիայն երկու անգամ է հագել և ես զգուշութեամբ պահպանեցի, մտածելով, որ գուցէ երբևիցէ քեզ պէտք կը գայ:

Ալֆրեդը էլ երկար սպասել չը տուաւ. փրակը լաւ եկաւ իրան, որի համար հոգւով չափ ուրախացաւ: Շորերը մէկ մէկ տեսնելիս մայրը հետը ծիծաղում էր, հետոն էլ լաց լինում, երբեմն անցեալը յիշելով, երբեմն էլ մտածելով ներկայի մասին:

Մենք շատ անգամ ծաղրում ենք, թէ ինչպէս գեղահաս օրիորդը հանդիսաւոր կերպով հագնում է իւր առաջին պարի շորերը. բայց դա շատ էլ արդարացի չէ, որովհետև նա այն ժամանակ իւր արտաքին տեսքի մասին աւելի շատ չէ հոգում, քան թէ այն երիտասարդը, որ առաջին անգամ հագնում է այսպէս ասած, „տղամարդի շորերը“: Երիտասարդը զննում է իւր կօշիկները, անդրավարտիքի ձևը, ձեռքերի երկայնութիւնը, բաճկոնակի օձիքը, օսլայած շապկի պնդութիւնը և մի ամբողջ ժամ չարչարւում է սպիտակ փողպատի վերայ և աշխատում է այնպէս կապել, որ հանգոյցը ընտիր ճաշակով լինի:

Բայց Ալֆրեդը անձնատուր չէր այդ բոլոր քըն-քշութիւններին, ուստի և շուտով գոհ մնաց իւր շո-

րերից: Բայց երբ պարահանդէս գնաց, յետոյ միայն նկատեց, որ իւր փրակը հին տեսակի էր եղել: Թէպէտև բոլորովին լաւ էր կանգնած իրան և ընտիր կարուած էր, միայն արդէն տասը տարի առաջ էր կարած և այնուհետև դերձակները նշանաւոր փոփոխութիւն էին արել ձևի մէջ: Ալֆրեդը յանկարծ իմացաւ այս բանը. պատահմամբ հայելու մէջ հին ձևի փրակով մի պարոն տեսաւ. այդ պարոնը հենց ինքն էր: Այդ վայրկենին կարծես մահու հարուած տուին նորան:

—Ձեր գործակատարներին էլ էք հրաւիրել հա՛, ասաւ մէկը նորա կողքին. Ալֆրեդը իսկոյն ճանաչեց ձայնը:—Սա, կարծեմ, նոյն երիտասարդն է, որ այնպէս լաւ գերմաներէն գիտէ, չէ՞:

—Այո, նա է՞, պատասխանեց պ. Պուռնիէրբին:—Կը կամենա՞ք, որ ծանօթացնեմ ձեզ հետ:

Թէ ինչ պատասխանեց պ. Ջէստէրտօնը, Ալֆրեդը չը լսեց, որովհետև ծածուկ հեռացաւ, վախենալով, թէ մի գուցէ որ և է վիրաւորական խօսք լսէ այս հարուստ մարդու բերանից, որ այնքան արհամարհում էր իւր խեղճ ազգականներին: Եւ խառնուելով բազմութեան մէջ կանգնեց դահլիճում:

Այդ միջոցին երաժշտութիւնը նուագեց առաջին կադրիլի նախերգանքը, բայց Ալֆրեդի սիրտը չը բացուեցաւ: Այս պարը նորան էր խոստացել Լաուրան, բայց ինչպէս կարող էր համարձակուել այսպիսի փրակով կանգնել նորա առաջ—պարահանդէսի թագուհու, տան տիկնոջ, գեղեցկուհու առաջ, որի հետ պարելու պատիւը այնպէս անյագ ցանկանում էին բոլոր երիտասարդ մարդիք: Ի՞նչպէս կարող էր տանել այն ամէն ծաղրածութիւններն ու նկատողութիւնները, որոնք տեղի կունենային նորա շորերի վերաբերութեամբ: Իսկ միւս կողմից, եթէ չը մօտենար Լաուրային, ինչ կը

մտածէր սա: Կարող էր եզրակացնել, որ մնացած է իրան. ինչ կոպտութիւն և անքաղաքավարութիւն կը լինէր: Ամենևին չը կարողացաւ որոշել, թէ ինչ պէտք է անէ և մեքենայաբար ահուդողով մօտեցաւ այն աթոռին, որի վերայ նստած էր Լաուրան: Սա ոտքի կանգնեց և կարծես աչք էր ածում մէկին: Այնուհետև դարձաւ մի գեղեցիկ և վայելչակազմ երիտասարդին և ասաւ.

—Չեմ կարող, արդէն ուրիշին եմ խոստացել: Վերջապէս եկաք, պ. Մօլլօյ, շտապեցէք, արդէն պարի առաջին պատկերը թողել ենք:

Եւ ընդ առաջ գնաց Ալֆրեդին, բռնեց նորան ձեռքից և դուրս տարաւ: Այն երիտասարդը, որին նա բացասեց, հրաւիրեց առաջին իսկ պատահող օրիորդին և կանգնեց նորա դիմաց (vis-à-vis): Այդ երիտասարդը Ռօբէրտն էր:

Նորա ընկերուհին մի պառաւ օրիորդ էր մեծ մեծ դուրս ցցուած ատամներով:

—Ո՞վ է այս օտարոտի երիտասարդը, որ պարում է օրիորդ Պուննաքրբիի հետ, հարցրեց նա:—Ո՞րտեղից լոյս ընկաւ սա:

—Այստեղի գործակատար է, պատասխանեց Ռօբէրտը.—Ինչու էք օտարոտի անուանում դորան:

—Մէկ նայեցէք, ինչպիսի հագուստ ունէ, ճիշտ Մաթուսաղայի ժամանակուայ շոր է,—և մի կուշտ ծիծաղեց:

Ռօբէրտը ժպտաց քաղաքավարութեամբ, բայց նորա կարեկցական հայեացքը, որ ձգեց Ալֆրեդի վերայ, առաւել խորը խոցեց սորա սիրտը, քան թէ ժպիտը: Ալֆրեդը չէր ցանկանում որ կարեկցութիւն ցոյց տան իրան:

Լաուրայի ձայնը փոքր ինչ նստացրեց նորա յուզ-

մունքը: Օրիորդը հարցրեց նորա մօր առողջութիւնը, ներողութիւն խնդրեց, որ երկար ժամանակ չէր գնացել նորա մօտ և խոստացաւ շուտով այցելել: Այնուհետև նոքա յիշեցին նախկին օրերը և ուրախ ուրախ սկսան խօսել իրանց մանկութեան մասին: Լաուրան Յակոբի մասին էլ տեղեկութիւններ հարցրեց և շատ շարժուեցաւ, երբ լսեց, թէ ինչպէս սիրալիր հիւրարական էր տուել Մօկօն:

Ի՞նչ հեշտութեամբ են փոխարինւում տպաւորութիւնները երիտասարդ սրտերում: Ալֆրեդը, երբ Լաուրային տանում էր իւր տեղը, երջանիկ էր համարում իրան, կարծես թէ պալատական դերձակի կարած շոր ունենար հագած և էլ ամենևին չէր ուզում պարահանդէսից դուրս գնալ: Բայց, մանաւանդ, սիրտ չէր անում համաձայնել առաւել գրաւիչ օրիորդների հետ կադրիլ խաղալու, իսկ դորա փոխարէն կատարում էր իւր պարտաւորութիւնը իբրև տանտիրոջ գործակատար, որովհետև պարում էր այն ամէն պառաւ օրիորդների հետ, որոնք չար բաղդի վճռով „պատերի զարդերն“ էին կազմում պարի ժամանակ:

Սակայն, նա իր կամքի հակառակ կամեցաւ մի անգամ էլ պարելու հրաւիրել օրիորդ Լաուրային: Ուստի գնաց գտնելու: Տեսաւ, որ հովհարելով խօսում էր Ռօբէրտի հետ: Ալֆրեդը մօտ գնաց և խնդրեց առաջին իսկ պարին ընկերանալ իրան:

—Արդէն ընկեր ունիմ, կարմրելով և փոքր ինչ շտապելով պատասխանեց նա:

Ալֆրեդը գլուխ տուաւ և հեռացաւ. բայց երբ վալսը սկսուեցաւ, պատահմամբ նորից կանգնեց Լաուրայի դէմ, որ դեռ ևս նստած էր:

—Ո՞ւմն էք խոստացել այս վալսը, հարցրեց նորան Ռօբէրտը:

—Դիցուք հէնց ձեզ, եթէ կամենաք, ասաւ նա և ցած ձայնով աւելացրեց.—կարծեմ էլ բաւական էր, որ խաղացի նորա հետ, իսկ վալսը—դա խիստ նկատելի է: Նորա մեղը չէ, որ այդպէս վատ է հագնուած, խեղճ տղայ. շատ պատուական երիտասարդ է, բայց դա դեռ բաւական չէ, որ ես մասխարա դարձնեմ ինձ:

Ասաւ և ձեռքը մեկնեց դէպի Ռօբէրտը և երկուսը միասին սկսան պարել: Ալֆրէդը էլ չը կարողացաւ մնալ—և գնաց տուն:

Երբ կամաց սենեակը մտաւ, մայրը ձայն տուաւ նորան.

—Լաւ ժամանակ անցկացրիր, հարցրեց որդուն, երբ սա նստաւ նորա անկողնի մօտ:

—Այո շատ լաւ. բայց միայն սիրտս չէ տալիս ընկերութեան մէջ: Աւելի լաւ կանէի, եթէ քեզ մօտ մնայի. մեր սեպհական երեկոները աւելի են դուր գալիս ինձ, քան թէ պարահանդէսները:

Մայրը նայեց երեսին և հառաչեց. „մի անախորժ բան է անցել սորա գլխին", մտածեց նա, բայց ոչինչ չասաւ և համբուրեց նորան նոյնպիսի քնքշութեամբ, ինչպէս համբուրում էր նորա տղայութեան ժամանակ:

ԳԼՈՒԽ Լ.

ՄԻ ՈՒՐԻՇ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ:

Ալֆրէդը շատ ուշ զարթեցաւ միւս առաւօտ. արեգակը պայծառ լուսաւորում էր. թռչունները ուրախ երգում էին և նորա մայրը անկողնի մօտ նստած սպասում էր որ վերկենայ: Նա ձեռքին մի նամակ ունէր բռնած:

—Նայիր, հոգիս, ինչ է գրում տիկին Ռէնդը, կապիտանի կինը, որ մեզ հարևան էր Դիլում: Իմ դաշեակը, խեղճ Էլիզան մեռել է. կարծեմ կը յիշես նորան: Ափսոս, շատ սիրում էր մեզ, կը ցանկայի գոնէ մի անգամ էլ տեսնել նորան:

—Այո, մայրիկ, ես էլ կուզէի: Նա շատ քաղցր էր վարւում ինձ հետ դեռ ևս այն ժամանակ, երբ օրը երեք բլուղ էի վիճացնում աւազի մէջ: Շուտ շուտ գովում էր քո բարեսրտութիւնը երեխայ ժամանակ և հազարաւոր անեկդօտներ էր պատմում քո երեխայութիւնից:

—Նա կտակ է գրել և կարծեմ իւր բոլոր սեպհականութիւնը թողել է ինձ, ընդ ամէնը—երկու հարիւր յիսուն փունտ ստերլինգ: Բայց տիկին Ռէնդը գրում է, թէ իմ գնալը անհրաժեշտ է, որովհետև պէտք է քանի մի բան կարգի դնել և ծախել փոքրիկ տնակը: Նա առաջարկում է ինձ որ մնամ այնտեղ. այժմ բանը միայն նորա մէջ է, թէ կը թողնի՞ քեզ պ. Պօունտէրլին:

—Այսօր առաւօտն և եթ կը խնդրեմ: Ա՜խ, ինչ լաւ է որ էլի Դիլ մնանք: Ես հաւատացած եմ, որ ծովային օդը շատ լաւ ազդեցութիւն կունենայ քեզ վերայ: Տուր ինձ իմ վերարկուն, մայրիկ, վաղէվաղ կերթամ գրասենեակը և գուցէ հէնց այսօր ճաշից յետոյ ճանապարհ ընկնենք:

Պ. Պօունտէրլին շատ գոհ էր Ալֆրէդից, ուստի և հէնց իսկոյն համաձայնեցաւ: Մի ամիս ժամանակով արձակուրդ տուաւ նորան և շնորհաւորեց ժառանգութիւն ստանալը, որ, թէպէտև փոքրիկ—բայց այնուամենայնիւ կարող էր ծառայել իբրև "մի փոքրիկ բուն ապագայ ձուաների համար. միշտ փոքրից են սկսում":

Երբ Ալֆրէդը մնաս բարեաւ էր ասում նօտարին, ներս մտաւ Լաուրան, քաղաքավարութեամբ ողջունեց երիտասարդին և հարցրեց տիկին Մօլլօյի առողջութիւնը. Նա մտքումն էլ չէր անցկացնում, թէ Ալֆրէդը կարող էր լսել նորա խիստ խօսքերը անցեալ երեկոյեան: Ալֆրէդը սառնութեամբ պատասխանեց նորա ողջունին. անցեալ գիշեր, շատ մտածելուց յետ, որոշել էր թէ այլապէս չի կարող վարուել իւր նախկին օրերի բարեկամի հետ, բայց միայն իբրև իւր մեծաւորի աղջկայ հետ: Լաուրան նայում էր նորա ետևից մի տեսակ տխուր զգացմունքով. „Վեզարը մարդուն աւելորդ չէ դարձնում“ ասաւ նորան իւր խիղճը—„եթէ դու պարում էիր բաղմաթիւ երիտասարդների հետ, որոնք ամէնքը միասին չարժեն այս խեղճ գործակատարին, որ վատ ձևի փրակ ունենալու պատճառով այնպիսի անարգար բացառութիւն ստացաւ քեզանից“:

Գրասենեկում թէպէտև ուրախացան Ալֆրէդի ժառանգութեան վերայ, բայց ցաւեցին նորա բացակայութեան համար: Կէմպբէլը խօսեց ծովային յաւերժահարսանց մասին, իսկ Գանիօլը խնդրեց Ալֆրէդին, որ մի կողով ծովային խեցգետին բերէ իւր համար:

—Ի՞նչ կը լինի իմ հալը, եթէ շատ ուշանաք, ասաւ նա,—չը գիտեմ, թէ ում պէտք է հաղորդեմ իմ կրիտիքական նկատողութիւնները այն գործերի մասին, որ ես արտագրում եմ: Խօսքը անցնէք ասեմ; դուք գիտէք, որ դուցէ մենք շուտով գրենք մեր կառավարչի աղջկայ հարսանեկան դաշնաթուղթը. ես աշխատում եմ:

—Ճշմարիտ էք ասում, հարցրեց Ալֆրէդը փոքր ինչ շփոթուած:

—Ես երեկ երեկոյեան իմացայ, շարունակեց Գանիօլը,—կարծեմ նորան ցանկանում էր տանել մի հարուստ ռուս—իշխան, որ համարեա կէս—թագաւորու-

թեան տէր է. բայց կառավարիչը չէ ուզում նորան Լօնդօնից դուրս թողնել: Իսկ այժմ ասում են, թէ պ. Չէստէրտօնին է տալիս, գիտէք, այն պարոնի ազգականին. նորա քեռին լաւ կարողութեան տէր է:

Ալֆրէդը սիրով ձեռք տուաւ բոլոր գործակատարներին և շտապով դուրս գնաց գրասենեկից, կամ ուղեկից ունենալով „կապիկի“ ծիծաղաշարժ թռիչքները, որին տուաւ վեց պէնս շաքարահաց ուտելու:

—Անշուշտ ծովային օդը կը զուարթացնէ ինձ, մտածում էր նա, աշխատելով ցրուել տխուր մտածմունքները:

Ճանապարհորդները բարեյաջող կերպով հասան Դիլ, ուր կապիտանի կինը դիմաւորեց նոցա քաղաքից դուրս: Նա հիացած էր, որ Ալֆրէդը այնպէս լաւացել էր, մեծացել և նման էր իւր հօրը. բայց մի առանձին տխրութեամբ բայց յարգանքով համբուրեց Կլարայի գունաթափ այտերը և ախ քաշեց, երբ տեսաւ նորա դեռ ևս խիտ ալեքանման ծամերի մէջ բազմաթիւ սպիտակ մազեր:

Առաջին օրերը այնքան ուրախ չանցկացրին, որովհետև հարկաւոր էր գնալ գերեզմանատուն, եկեղեցի և այն ամէն տեղերը, որոնք յիշեցնում էին Կլարային անցեալը և շարժում էին այն յիշատակները, որ ժամանակը թաղել էր նորա հոգու խորքի մէջ: Բայց նա թոյլ չէ տուաւ, որ բոլորովին նորոգուեն վէրքս, չը թողեց, որ տրտմութիւնը պատէ իրան՝ որդու սիրու համար:

Այս պատճառով շուտով հանդարտեցաւ և սկսաւ, ինչպէս առհասարակ լինում է, այդ մտածմունքների մէջ առաւել հանգիստ մխիթարութիւն որոնել, քան թէ տխրութիւն. Նորա առողջութիւնը արագ կերպով վերականգնում էր ծովային օդի բարերար ազդեցու-

թեամբ. նորա տունը, որ շատ շուտ յօգնում էր Լօնդօնի քաղաքատակի վերայ. այժմ հեշտութեամբ փոփոխւում էր ծովեզրեայ աւազի վերայ: Մի շաբաթից յետոյ նախկին ույժերը բոլորովին վերադարձաւ և գլխացաւը էլ չէր տանջում նորան:

—Երախտապարտութիւնս նորից յետ եկաւ, ասում էր նա Ալֆրէդին: Շատ անգամ բարձրանում էին նոքա մի որ և է բլուր, ուր բացւում էր նոցա առաջ մի գեղանկար տեսարան և Ալֆրէդը, մօրը նստացնելով մի յարմար տեղ, ինքը անձնատուր էր լինում իւր սիրած պարապմունքին—նկարչութեան, որով հազարից միանգամ յաջողում էր պարապել գրասենեկում զբաղմունքից ազատ ժամանակ: Այժմ նա „արձակուրդի“ մէջ էր—և նորա նկարչական ձեռատետրը լցուեցաւ դաշտերի նկարներով, որոց մէջ կար իջևաններ, նաւահանգիստներ, ժայռեր, շոգենաւեր, ձկնորսական նաւակներ, ծովը փոթորկի ժամանակ, ծովը արևը ծագելու կամ մայր մտնելու ժամանակ և այլն: Մօր սիրտը ուրախութեամբ լցւում էր, երբ տեսնում էր որդու յառաջադիմութիւնը, ուրախութիւնը և դէպի ինքը ունեցած սէրը:

Մի անգամ Ալֆրէդը մենակ գնաց նկարելու և մայրը, օգուտ քաղելով նորա բացակայութիւնից, փորձ փորձեց մի քանի երես թարգմանել այն գրքից, որ տարել էր իւր հետ: Կարող էք իմանալ նորա ուրախութեան չափը, երբ տեսաւ, թէ իրան կապող կաշկանդող բոլոր կախարդները ջախջախուած էին. նորա միտքը պարզուեցաւ բոլորովին և առաջուայ պէս կարողանում էր առանց յոգնելու աշխատել:

Երեկոյեան, երբ Ալֆրէդն եկաւ, հանդիսաբար ցոյց տուաւ նորան իւր աշխատութիւնը:

—Իմ գլխի անցքը կախարդական առակի պէս

բան է, ասաւ նա,—երկու տարի շարունակ կախարդուած էի, իսկ այժմ դարձեալ ազատ եմ: Իմ ազատողը պէտք է վարձատրուի. նա այնչափ հոգս քաշեց իմ մասին, որ ես դարձեալ կարող եմ գրաւոր աշխատութեան ձեռնարկել և այսպիսով աւելի միջոց կը տամ նորան նկարչութեամբ պարապելու: Մենք առաջներս դեռ շատ երջանիկ օրեր ունենք, սիրելիս:

Տիկին Մօլլօյին մինչև Լօնդօն վերադառնալը կարծես տաս տարուայ կեանք աւելացաւ:

Մինչև որ նա ծովի ափին վերականգնում էր իւր առողջութիւնը, պ. Չէստէրտօնի ցաւը հետզհետէ աւելի ու աւելի սաստկանում էր ձախ ոտի բութ մատի մէջ: Սկզբում չէր տրտնջում, բայց քանի գնում համբերութիւնը հատնում էր և ծառաները, մինչև անգամ անզգայ Մագիլիադն էլ շատ լաւ հասկացան:

'Ի զուր տեղը Սէսիլեան աշխատում էր մոռացնել տալ նորան ցաւը, իսկ Ռօբէրտը տանը չափազանց ձանձրանալով, քանի կարող էր շուտ շուտ հեռանում էր այնտեղից: Վերջապէս հիւանդութեան նշանները մեծացան, ցաւը տարածուեցաւ առաջ միւս մատների մէջ, իսկ յետոյ ոտի տակը և ամբողջ ոտը վարակուեցաւ ցաւով. էլ ամենևին կասկած չը կար, որ ծերունին բռնուել էր ոտնացաւով, որ շուտով սկսաւ գործ դնել իւր իշխանութիւնը:

Սէսիլեան, թէպէտ տխուր էր քեռու հիւանդութեան համար, բայց ուրախ էր, որ գոնէ շատ մանգալուց յետոյ կարող էր այժմ հանգստութիւն վայելել:

Կարո՞ղ էք ինձ ասել, թէ ինչն է հանգստութեան անբաժան ընկերը—խօսքս այն հանգստութեան մասին է, որ ցանկանում էր Սէսիլեան: Եթէ չէք կարող, ես կ'ասեմ ձեզ. դորան ասում են ձանձրոյթ, անգործութիւնից յառաջացած խոնջութիւն, որ ստիպում է շա-

րունակ յօրանջել և ժամացոյցին նայել: Ահա հենց այս ձանձրութիւնը, որի հետ առաջ հիւր գնալիս էլ ծանօթ էր, այժմ տիրել էր նորան իրանց տան այն շքեղազարդ սենեակում, ուր մահճակալի վերայ պառկած էր քեռին և բարձր ու ձանձրալի կերպով տրտնջում էր իւր հիւանդութիւնից:

Պճնասիրութեան տանից ընկած ժամանակ նա շատ էլ չէր վախենում այս թշնամուց, որովհետև կարծում էր, թէ յոգնութիւնից է առաջ գալիս դա և միշտ հանգստութեամբ հեռացնում էր իրանից. բայց այժմ հիւանդի սենեակում սանձարձակ տիրապետում էր ձանձրութիւնը: Սէսիլեայի գոգը բռնեց, երբ գլխի ընկաւ, թէ արդէն խիստ ընտելացել է այդ փուչ և սնոտի կեանքին: Էլ հագնուելու, այցելելու և փոխադարձաբար ընդունելու իւր մօտ, մասնակցելու պարահանդէսներին, խնճոյքներին, զբօսնելու, թատրոն գնալու և այլ տեղեր յաճախելու հարկ չը կար: Ինչով կարող էր ուրեմն անցկացնել իւր օրը առանց այս ամէնը կատարելու, երբ վերջին ութ տարին բոլորովին մոռացել էր ամէն տեսակ մտաւոր և օգտակար աշխատանք: Մինչև անգամ ձեռագործն էլ էր մոռացել. փորձեց ասեղնագործով զբաղուել, բայց այդ էլ դէն ձգեց. սկսաւ գործել—սա էլ ձանձրացրեց. գիրք առաւ ձեռքին, բայց տասներորդ երեսը չաւարտած՝ յետ ծալեց,—ամէն բանի յետ էլ այսպէս վարուեցաւ: Գիշերները վերջ չունէին կարծես. իւր ձանձրոյթը, միանալով պ. Չէս-տէրտօնի ձանձրութեան հետ, վերին աստիճանի էր հասնում. Սէսիլեան նորան ուրախացնելու համար՝ աշխատում էր ուրախ ձևանալ և ատում էր.

—Կը կամենա՞ք սատրինջ խաղալ, քեռիս:

—Տասն անգամ միևնոյն բանը կրկնել ես ինձ այսօր, պատասխանում էր նա:

—Կամենա՞ք երեկոյեան լրագիր կարդամ:

—Մի և նոյն յիմար բանը կը լինի, ինչ որ առաւօտուայ բերածն էր:

—Ընթերցարանից մի քանի նոր գրքեր են ուղարկել մեզ:

—Է՛հ, նոցա մէջ էլ միշտ նոյն բաներն են լինում գրած, աշխարհիս մէջ ոչինչ նոր բան չը կայ:

Այնուհետև Սէսիլեան նստում էր բազկաթոռի վերայ, իսկ քեռին դարձեալ պառկում էր և երկուսն էլ չիմանալով թէ ինչ խօսեն, զարմանում էին, որ չէին կարողանում զբաղեցնել միմեանց:

Երբ հիւանդը փոքր ինչ լաւ էր լինում, ինքն իրան խօսում էր Ռօբէրտի վերայ, որի միակ մտածմունքը այն էր, թէ ինչպէս առաւել ուրախ անցկացնէ իւր ժամանակը, առանց ամենևին հոգս քաշելու քեռու մասին: Այդպիսի դէպքերում Սէսիլեան երկիւղից դողում էր: Դեռ բացի դորանից նորա սրտից արիւն էր կաթում, երբ մտածում էր որդու պարտքերի մասին, որ ստիպուած էր լինում վճարել ինքը. բայց ինչ պէտք է լինէր Ալֆրէդի հալը, եթէ ոչ մայրը, ոչ էլ քեռին չը կարողանային հսկել նորա վերայ: Մի քանի ամիս շարունակ Սէսիլեան նկատում էր, որ իւր որդին շատ քիչ էր լսում իրան և որ ինքը էլ ոչինչ ազդեցութիւն չունէր նորա վերայ. իսկ ինչ կը լինէր սորա վերջը: Նա սիրում էր մօրը, բայց սորա խորհուրդներն ու յանդիմանութիւնները չէր ընդունում, միմիայն ձանձրանում էր նորանից: Մէկ ժամանակ մօր մտքովն անցաւ, թէ այնպիսի մէկ օրիորդ, ինչպէս օրինակ Լաուրան, կընտելացնէր նորան ընտանեկան կեանքին և կը մեղմացնէր նորա բնաւորութիւնը. այս նպատակով մօտիկ ծանօթացաւ նորա հետ: Սէսիլեայի այսպիսի վարմունքն էր, որ

15

պատճառ տուաւ Գանիօկի առած լուրը տարածուելուն: Գ. Գօունաքըրին արդէն չէր լինում Սէսիլեայէն, որովհետև քէֆը գալիս էր, երբ աշխատում էին տանել իւր աղջկայ ձեռքը. բայց նա այդպէս շուտով համաձայնուողը չէր: Նա ունէր իւր հիմնաւոր հաշիւները: Նա շատ լաւ գիտէր, թէ այն լիճը, որ ամէն գարնան ջրով չէ լցւում, շատ շուտ ցամաքում է և թէ այն մարդիք, որոնք սովոր են այդպէս շռայլութեամբ փող վատնել, առանց վաստակելու շնորհք ունենալու, շուտով հասնում են իրանց քսակի յատակին: Բացի դորանից, Ռօբէրտը դեռ անչափահաս էր. պ. Գօունաքըրին հիմնական յատկութիւնները գերադասում էր արտաքինից, իսկ հիմնական յատկութիւններ, նորա կարծիքով, կարող էր ունենալ միայն քառասուն տարեկանից յետ մարդը: Այսպէս ուրեմն նա մտքումը դրել էր ապագայում միմիայն քառասունից յետ տարիք ունեցող մարդուն տալու իւր աղջկան, ուստի և ամենևին չէր շտապում բաժանուել նորանից:

Իսկ ինչ վերաբերում է իրան Ռօբէրտին, նա ամենևին չէր համակրում մօր գաղափարներին. չէր էլ մտածում պսակուելու վերայ: Եւ եթէ պսակուէր, անշուշտ նորա կինը աւելի մեծ ազդեցութիւն չէր ունենալ նորա վերայ, քան թէ ունէր մայրը այժմ: Ինչպէս բնական է ամէն թոյլ բնաւորութեան, նա ամէն մի բանի խորհուրդը մի մի յարձակում էր համարում իւր անկախութեան վերայ և կամակորութեամբ մերժում էր և ասում.—Ես այնքան յիմար չեմ, որ թոյլ տամ ձեզ ինձ ճնշելու:

Բայց, 'ի հարկ է, նորան այնուամենայնիւ ճնշում էին, միայն դարձեալ կոյր մարդիք, որպիսին էր օրինակի համար, մեր ծանօթ Ադոլֆ Լիւդփիշը:

Այս պարոնը գերմանացի ընդունակութիւն ունէր

մի բանի մէջ—այն է փող վատնելու մէջ, այնպէս որ կնոջ տարեկան եկամուտը չէր բաւականանում նորա ծախսերին: Զարմանալի ճարպկութեամբ ստիպում էր իւր նախկին աշակերտին մասնակցել իւր քէֆերին և բաւական ճարպիկ խորամանկութեամբ վճարել էր տալիս նորան ծախսի կէսը, իսկ երբեմն նաև բոլորը: Արժանամեծար տիկին Լիւդփիշը ստիպուած էր դառնութեամբ զիջել և ցաւել իւր նախկին խաբուած յոյսերի վերայ. նա սկսաւ հասկանալ, թէ իւր մարդը ոչ թէ իրան, այլ իւր փողերն էր ուզել:

Եւ մխիթարւում էր նորանով, որ հագնում էր ծխածանի ամէն տեսակ գոյնի շորեր. բայց դերձակուհիների հաշիւները ամենևին չէին հաշտեցնում նորան մարդու շռայլութեան հետ: Այս պատճառով նոցա մէջ սկսաւ մտնաւոր խռովութիւններ, որոնք, ինչպէս յայտնի է, բաղդաւորութիւն չեն առաջ բերում:

Բացի դորանից առանձին երջանկութիւն չէր վայելում նաև մէկը, այն է Լաուրա Գօունաքըրին: Նորա մտքից չէր գնում Ալֆրէդի անտարբեր և սխուր կերպարանքը իրանից բաժանուելու ժամանակ: Ինչից ստիպուած փոխուել էր սա, քանի որ առաջ քաղաքավարի և գրաւիչ էր պարահանդէսում: Չը լինի՞ թէ լսել էր իւր խօսքերը: Կամ, գուցէ, մէկ ուրիշը հաղորդել էր նորան: Այո, պէտք է, որ այդպէս եղած լինէր: Նա բարկացած էր իւր վերայ և արդարացի կերպով: Երևի մայրն էլ իմացած կը լինէր և տանջւում էր որդու պատճառով, որի հպարտութիւնը այդպէս անպատուած էր լոկ այն պատճառով, որ նա աղքատ էր, իսկ այս աղքատութեան պատճառը Լաուրան շատ լաւ գիտէր: Լաուրան երևակայում էր, երբև թէ տիկին Մօլլօյն սրտում է, գուցէ և լաց է լինում և ասում է.
—Ինչպէս փոխուել է իմ Լաուրան, փոքր ժամանակ

նա այնպէս բարի սիրտ ունէր։—Այսպիսի երևակայական տեսարաններով խիստ յուզուեցաւ Լաուրան։

—Ճշմարիտ է, մտածում էր նա,—փոխուել եմ. առաջ ամենևին այդպիսի բան չէի անի։ Ինչո՞ւ ես այսպէս փուչ և չար աղջիկ դառայ։ Ինձ թւում է, ինչպէս ես այժմ կարծում եմ, որ շատ անգամ վիրաւորել եմ մարդոց, անխորհուրդ վճիռներ կարդալով նոցա մասին։ Էլ ամենևին չեմ ցանկանում այդպէս վարուել։ Յոյս ունիմ, որ տիկին Մօլլօյն չի բարկանայ ինձ վերայ. որ գայ թէ չէ, իսկոյն կերթամ մօտը։

Լաուրայի բերած անպատուութիւնը Ալֆրէդին այնպիսիներիցն էր, որ յաճախ տալիս են մէկ մէկու մանաւանդ երիտասարդ մարդիկ։ Բայց նորա բարի սիրտը, որ յուզուած էր երիտասարդ տղայի համր և տաքն յանդիմանութիւնից, ստիպեց նորան ուշադրութեամբ նայել իւր շուրջը և նկատել իւր շրջանի մարդոց ոչնչութիւնը։ Այնուհետև, երբ առաջին անգամ տիկին Մօլլօյին տեսաւ, առաջուանից աւելի մեծ քընքշութիւն և համակրութիւն ցոյց տուաւ նորան և ուրախութեամբ նկատեց, որ Ալֆրէդը ոչինչ չէր խօսել նորա հետ պարահանդէսում տեղի ունեցած անցքի մասին։ Տիկին Մօլլօյն սրտառուչ շնորհակալութեամբ պատասխանեց իւր նախկին աշակերտուհուն այդպիսի քաղցրիկ յարաբերութեան համար և այս շնորհակալութիւնը ստիպեց Լաուրային առաւել խիստ լինել իւր անձին վերաբերութեամբ։ Այդ ժամանակուանից նա սկսաւ առանձին զգուշութեամբ վերաբերուել դէպի ուրիշները և ուրիշների իւր մասին խօսեցածներից որոշում էր ճշմարիտն ու անկեղծը դատարկ խորամանկութիւնից։ Երջանիկը նա է, ով որ կարող է այսպէս օգուտ քաղել իւր սխալներից։

ԳԼՈՒԽ ԼԱ.

ԱԼՖՐԷԴԻ ՆԿԱՐՉԱԿԱՆ ՁԵՌԱՏԵՏՐԸ։

Գիւղից վերադառնալուց մի քանի օր յետոյ, Ալֆրէդն ու իւր մայրը նստած էին Ճաշի ծերունի Պասսմօրի ընկերակցութեամբ, որ այժմ միշտ նոցա մօտ էր լինում, իբրև թէ վարձատրութիւն մի ամսեայ բաժանուած լինելու համար,—երբ ներս մտաւ Յակոբը շնորհաւորելու նոցա գալուստը։

Նա արդէն ահագին մարդ էր և չը նայելով, որ դեռ նոր էր տասնևութ տարին լրացել, կարող էր պարծենալ իւր գեղեցիկ բեղերով և մօրուքով։ Ալֆրէդի ու նրա մօր շնորհիւ Յակոբը իւր արհեստի համեմատ կրթութիւն ունէր և բացի դորանից այլ. Պասսմօրը իւր բարեկամների բացակայութեան ժամանակ պարապ չը նստելու համար, սովորցրել էր նորան յունարէն կարդալ, այնպէս որ Յակոբը գլխաւոր գրաշարներից մինը եղաւ և տպարանում մեծ գին էին տալիս նորան։

Ողջունելով նոցա և ուրախանալով տիկին Մօլլօյի առողջ տեսքի վերայ, նա թոյլտուութիւն խնդրեց Ալֆրէդից որ տեսնէ նորա վերջին նկարները։ Ալֆրէդը տուաւ նորան իւր ձեռատետրը։

Յակոբը, թերթելով ձեռատետրը, հիանում էր ամէն քայլում, բայց երբեմն շփոթուած նայում էր ժամացուցին. վերջապէս նա ակամայ և կարծես ցաւելով վայր դրաւ ձեռատետրը։

—Գնալուս ժամանակն է, ասաւ նա,—արդէն գործի կանգնած կը լինեն։ Ցաւում եմ, որ չը կարողացայ տեսնել ինչպէս հարկն էր,—ինչ գեղեցիկ նկարներ են։

—Եթէ կամենում ես կարող ես հետդ տանել և տանը տեսնել, պատասխանեց Ալֆրեդը:

Յակովը ուրախացած շնորհակալութիւն արաւ, ձեռատետրը դրաւ թևի տակ և գնաց:

Մի ժամից յետ ջանասիրութեամբ վերջացրեց իւր գործը, մտածելով թէ ինչ զուարճութիւն պէտք է ունենար նկարչական ձեռատետրը տեսնելիս, որ դրել էր իւր առջևի սեղանի վերայ: Այդ միջոցին պ. Սամպսոնը տպարան եկաւ:

Պ. Սամպսոնը երևելի փորագրող էր պողպատի վերայ և մեծ յարգանք էր վայելում բոլոր գլխաւոր հրատարակիչներից. Նա շուտ շուտ գալիս էր տպարանը իմանալու, թէ ինչպէս է փոխադրւում իւր աշխատութիւնը թղթի վերայ: Այս անգամ շատ վատ տրամադրութեան մէջ էր:

Իւր գործի մասին խօսելուց յետոյ, արդէն պատրաստւում էր գնալու, սակայն գլխաւոր գործավարը առաջը կտրեց և տուաւ նորան մի քանի թերթ բան ու տառ.

—Ցո՞ւտ կը տաք մեզ սորա մնացած մասը, գործը արդէն երկու շաբաթ կանգնած է:

Պ. Սամպսոնը սաստիկ բարկութիւնից չէր իմանում ինչ անէր:

—Միթէ ես չը գիտեմ: Այս գեղարուեստները բոլորը խօսք ունին տուած միմեանց. մի մի անծանօթ հանճարներ են, որոց հասարակութիւնը թոյլ է տալիս վերընկնել մի անկիւնում. իսկ երբ նոյն հասարակութիւնը գործ է տալիս նոցա, յետ են դարձնում: Լաւ մարդիկ են, խօսք չունիմ:

—Բայց միթէ ոչ ոք յանձնառու չէ լինում նկարել:

—Ո՛չ ոք: Երեք շաբաթ առաջ այս գործը յանձնեցի մի գեղարուեստի. Նա շատ լաւ դուրս բերեց մի նկարը.

բայց յետոյ ծուլացաւ: Գնացի նորա տուն, բայց չը գտայ այնտեղ. մի տոմսակ էր թողել, որի մէջ գրում էր, թէ դուրս է գնում քաղաքից, ուստի և չի կարող այժմ գործը շարունակել: Ահա՛ թէ բանն ինչումն է:

—Ի սէր Աստծու, ասաց գործավարը,—ափսոս է որ այսպիսի սքանչելի բանը փչանայ. անկարելի բան է, պէտք է անպատճառ յանձնել մի ուրիշ գեղարուեստի, որ վերջացնէ այդ պատկերը:

—Բայց ո՞ւմ. այժմ ամէնքը զբաղուած են և բացի դորանից, ոչ ոք այնպէս լաւ չի կարող դուրս բերել, ինչպէս այն ծոյլ անպիտանը, որ այսպիսի նեղ դրութեան մէջ գցեց ինձ:—Այս որ ասաւ նա մեքենայաբար սեղանի վրայից վեր առաւ Ալֆրեդի ձեռատետրը և բացարաւ: Յանկարծ նա զիջաւ բարկութիւնից:

—Էհէ՜, էհէ՜, և ինչքան հոգի, ազատութիւն ու. ոյժ կայ մէջը: Նայեցէք, խնդրեմ, այս մակոյկներին և մէջը նստած նաւաստիներին: Իսկ ամպերը, այս ամպերը. անշուշտ մի նշանաւոր նկարչի մտքի ծնունդ է: Քաղաքի փողոցը, լուսաւորութիւնը սքանչելի է. նկարչական կանոնները կատարած են գեղեցիկ կերպով: Երդւում եմ ազնւութեանս վերայ, որ սորա նկարողը գիտէ մասնաւոր գործ անել: Դուք հօ չէ՞ք այդ գեղարուեստը, հա՞:

—Ո՛չ. ոչ. ես ո՞ւր, դորա նկարողն ուր. վրայ բերաւ Յակովը, որին ուղղած էր հարցը:

—Ուրեմն ո՞վ է, հա՞:

—Մի երիտասարդ պարոն, որ ամէն բան գիտէ և որ այնպիսի սիրտ ունի, պ. Սամպսո՛ն, որ շատ հազիւ է պատահում ձեզ: Նա այս նկարել է իւր զուարճութեան համար, բայց մասնագէտ գեղարուեստ չէ:

—Հա՛, մասնագէտ չէ՞: Բայց ո՞վ է, ի՞նչ մարդ է:

—Գործակատար է նոտարի մօտ, պատասխանեց Յակովբը:

Պ. Սամպսոնը բերանը ծամածռեց այնպիսի մի չար ժպիտով, որ պատիւ կը բերէր նոյն իսկ Մեֆիստոֆէլին:

—Նոտարի գործակատա՞ր. այսպիսի տաղանդ և նոտարի գործակատա՞ր: Ցնորուե՞լ է նա, թէ ինչ բան է: Կամ դուցէ մի վայրենի հայր կունենայ, որ մագաղաթներից մաքուր պատկերը կը գերադասէ նկարելուց, հա՞:

—Ո՛չ մէկը և ոչ միւսը. պատասխանեց Յակովբը և պատմեց պ. Սամպսոնին Ալֆրեդի ամբողջ պատմութիւնը:

Պատմելու ժամանակ փորագրողը շուտ շուտ բեղերը կրծում էր բարկութիւնից և առհասարակ երևում էր, թէ շատ շարժուած էր երիտասարդ մարդու վիճակից: Յետոյ ձեռատետրը գրպանը դրաւ ու ասաւ.

—Ես կը վերցնեմ այս ձեռատետրը: Մի՛ վախենաք, շատ զգոյշ կը պահեմ. իմանում եմ սորա յարգը: Վերոյիշեալ երիտասարդը, որին ես այսօր և եթ կ՚այցելեմ, անշուշտ գոհ կը մնայ ինձանից: Ասում էք, որ նա հինգ ժամին է վերադառնում, այնպէս չէ՞: Լաւ: Տուէք ինձ նորա հասցէն: Նոտարի գործակատա՞ր: Ես այս ձեռատետրը ցոյց կը տամ հրատարակիչ Նօէլին և կը տեսնէք, թէ հետևանքը ինչ կը լինի:

Ճիշտ հինգ ժամին պ. Սամպսոնը, Ալֆրեդի ձեռատետրը թևի տակ բռնած, ճեմում էր այն տան սալայատակի վերայ, ուր որ կենում էր տ. Մօլլօյն, և նայում էր ամէն անցուդարձ անողի երեսին, կարծես ուզում էր ճանաչել նոցա մէջ իւր ցանկացած երիտասարդին: Վերջապէս տեսաւ մի բարձրահասակ, արեգակից թխացած երիտասարդ, որ ներս

մտաւ յիշեալ տանը. իսկոյն գնաց ետևից և հասաւ նորան սանդուխների մօտ:

—Պ. Մօլլօյն դո՞ւք էք:

—Այո՛, ես ինքս եմ, պատասխանեց Ալֆրեդը:

—Կը ցանկայի մի բանի մասին խօսել ձեզ հետ: Ես, խնդրեմ իմանաք, „Նօէլ և ընկ." գլխաւոր փորագրող Սամպսոնն եմ:

—Ալֆրեդը գլուխ տուաւ և խնդրեց այցելուին ներս մտնել սենեակը:

—Պարո՛ն, սկսաւ պ. Սամպսոնը, նախ և առաջ քաղաքավարութեամբ մի խոնարհ ողջոյն տալով տիկին Մօլլօյին,—ես եկել եմ մի գործ առաջարկելու ձեզ Նօէլի և ընկերութեան կողմից: Մենք ունենք մի քանի կիսատ նկարներ, որ մեր նկարիչը հրաժարուեցաւ վերջացնել. չէ՞ք կամենայ փոխարինել նորան: Այս ձեռատետրը, շարունակեց նա, ցոյց տալով վերջինը,—երաշխաւորում է, որ դուք աշխատելով „Նօէլի և ընկերութեան" փիրմի համար, երբէք ոչ գործ կը պակասի ձեզ և ոչ փառք:

Ալֆրեդը եօթներորդ երկինքն էր վերացած. Նա յանձն առաւ կարճ ժամանակուայ մէջ վերջացնել նկարները: Երբ պայմանները կապեցին, պ. Սամպսոնը դարձեալ հետը տարաւ ձեռատետրը:

—Ես պէտք է վերադարձնեմ այս ձեռատետրը գրաշարին, ասաւ նա ժպտալով,—որ անշուշտ մեծ անհանգստութեան մէջ կը լինի:

Նկարները աւարտուեցաւ և Ալֆրեդը այնպէս լաւ կարողացաւ ըմբռնել իւր նախորդի նկարչութեան եղանակը, որ ներդաշնակութիւնը նկարների մէջ երբէք չը խախտուեցաւ: Պ. Նօէլը այն աստիճան գոհ մնաց նորանից, որ իսկոյն և եթ ուրիշ գործ տուաւ և այսպիսով Դիլ գնալուց մի տարի անց Ալֆրեդը արդէն

յայտնի էր ամէն հրատարակիչներին. գործ անընդհատ ստանում էր: Փառքի և հարստութեան ճանապարհը բաց էր նորա առաջ:

Գրասենեկում անցած պարապ ժամերը այժմ շատ փոքր էին թւում նորան բոլոր պատուէրները կատարելու և դեռ բացի դորանից, Ալֆրեդը կամենում էր բոլորովին նուիրուել իւր արհեստին: Պ. Պունսէրբին հոգւով չափ ցաւում էր, որ ձեռքից թողնում էր այդպիսի գործակատարին, որի տեղը լցնելը թեթև բան չէր, մանաւանդ օտար լեզուների թղթակցութիւնների վերաբերութեամբ: Բայց, ինչպէս մի բարի մարդ, նա ուրախացաւ այդ երիտասարդի յաջողութեան վերայ և ցանկացաւ նորան ամենայն յաջողութիւն—և բարեկամաբար հեռացան միմեանցից:

Հետևեալ շաբաթ օրը Ալֆրեդը Ռիչմօնդում հրաժարական ճաշ տուաւ իւր պաշտօնակիցներին: Նա զարմանալով տեսաւ, որ հրաժարական տալիս նոքա համարեա նոյնքան տխրեցան, որքան և իւր առաջին անգամ նոտարի գրագրատունը մտնելիս: Մարդս ամէն բանի ընտելանում է, մի անգամ էլ կրկնում ենք մենք:

Սակայն այս տխրութեան զգացմունքը երկար չը տևեց. ինքնուրոյն աշխատելու ուրախութիւնը ամէն բան չքացրեց: Ալֆրեդը շուտով մի փոքրիկ առանձնարան վարձեց նոյն տան մէջ. նա ցանկանում էր գեղարուեստութեամբ պարապել: Ծերունի Պասսմօրը, առաջուայ պէս գրաւուելով երիտասարդի յառաջադիմութեամբ, խնդրեց իւր բարեկամ գեղարուեստութեան ծեր պրօֆէսօրին մի քանի գործնական դասեր տալ նորան. Ալֆրեդը աշխատում էր հազուագիւտ եռանդով: Կլարան արդէն բոլորովին առողջացած իւր հիւանդութիւնից՝ նորից սկսաւ դասեր տալ և թարգմանութիւններ անել, որ այժմ աւելի էր յաջողում նո-

րան, քան թէ առաջ, որովհետև Ալֆրեդը տնտեսական գործերը յանձնեց նոր վարձած սպասուհուն:

Նա կամենում էր, որ իւր մայրը քնքոյշ պահէ մատները, որոնց վերայ հիանում էր ինչպէս երեխայ: Շատ երջանիկ ժամեր էին անցկացնում նոքա, միասին աշխատելով առանձնարանում, ուր նստած էր լինում նաև Պասսմօրը, որ չը կամենալով առանց մի որ և է օգուտ տալու մնալ, շատ անգամ ինքը ձևանում էր իբրև օրինակ, որից Ալֆրեդը վերցնում էր իւր նըկարների ձևերը:

ԳԼՈՒԽ ԼԲ.

ԵՐԿՈՒ ՊԱՏԿԵՐ:

Նոյեմբերի 30-ին պ. Պունսէրբիի ծննդեան տօնն էր. Լաուրան վաղուցուանից սովորութիւն ունէր մէկ պատուական ընծայ պատրաստել հօր համար: Բայց տանը արդէն շատ բան կար իւր ձեռքով շինուած. բարձեր, փոքրիկ գորգեր, տեսակ տեսակ հիւսուածքներ և այլն—այս ամէնը աղջկայ տուած պարգևներն էին հօր անուանակոչութեան, ծննդեան, նոր տարուան, զատկին և այլ օրերին: Ուստի նա խնդրեց տ. Մագգիին տանել իրան պ. Մօլլօյի մօտ, որից կամենում էր խորհուրդ հարցնել:

Կլարան առանձնարանումն էր: Լաուրան ներս մտաւ այնտեղ, փոքր ինչ լռեց, նայեց Ալֆրեդի նըկարներին, սկսաւ խաղալ վրձինի հետ և յանկարծ տեսնելով պ. Պասսմօրի պատկերը՝ աղաղակեց.

—Ահա, իմ ուզածը գտայ: Պ. Մօլլօյ, կարե՞ղ էք արդեօք հասցնել մի պատկեր մինչև Նոյեմբերի 30-ը:

—Կարող եմ, եթէ ում պատկերը որ պէտք է նը-կարեմ, կը կամենայ շնորհ բերել ինձ մօտ:

—Շատ լաւ: Կուզէք հէնց իմ պատկերը նկարեցէք հօրս ծննդեան տօնի համար: Դա շատ հաճելի կը լինի թէ ինձ և թէ նորա համար:

Ալֆրէդը փոքր ինչ յուզուեցաւ: Նկարել մատաղ օրիորդի պատկերը, նորա փափուկ կնարձանը (կլանը), պայծառ կարմիր այտերը, փափուկ ոսկեթել մազերը—ինչ փորձանք էր: Ալֆրէդը վախենում էր, թէ գուցէ չը կարողանայ գլուխ բերել այդ աշխատութիւնը և մի և նոյն ժամանակ անյագ ցանկութեամբ ուզում էր մի փորձել:

—Ոչինչ չէք ասում, համաձայն էք թէ չէ, ասաւ նա, վերջապէս, փոքր ինչ շփոթուած:

—Դեռ ես մտածում եմ, օրիորդ Պօունսէրբի. շատ դժուար առաջարկութիւն է:

—Ի՛հ, փորձեցէք—այնպէս խելօք կը նստեմ որ:

—Լաւ, կը փորձեմ. միայն խնդրեմ, եթէ բան է չը յաջողեց, չը ծաղրէք ինձ:

—Խօսք եմ տալիս, պատասխանեց Լաուրան հան-դարտ ձայնով:

Ալֆրէդը նայեց նորան, կարմրացած այդ խօսքերը արտասանելու ձևի վերայ: Օրիորդը խիստ կարմրեց և աչքերը արտասուքով լցրեց: Խեղճ աղջիկը կարծեց, թէ Ալֆրէդը ցանկանում էր յանդիմանել իւր փառասէր պատասխանի համար: Ալֆրէդը հասկացաւ նորա դրու-թիւնը և գնահատեց նորա զգացմունքը: Լաուրայի այդ մտածմունքը ցրուելու համար նա սկսաւ խօսել, թէ ինչ մեծութեան պէտքէ լինի պատկերը, ո՞ր շրջանով պէտքէ հանէ, և թէ ո՞ր ժամերին աւելի յարմար է նկարել: Որոշուեցաւ անմիջապէս միւս օրը սկսել:

Ալֆրէդի յաջողութիւնը սպասածից շատ աւելի

եղաւ և պ. Պօունսէրբին իւր ծննդեան օրը կանգնած էր երկու, կիսած խնձորի պէս մէկմէկու նման, թարմ ժպտածիծաղ դէմքերի մէջ տեղը: Նորա հիացումը վերջ չունեցաւ, երբ իմացաւ թէ ով էր նկարել պատկերը: Գեղարուեստը երեք տարի կացել էր իւր գրասենեկում—միևնոյն է, թէ իւր մօտ էր սովորել նկարչութիւնը: Լաւ առատ վարձատրեց նորան, մօր հետ միասին ճաշի հրաւիրեց և ծանօթացրեց նշանաւոր մարդկանց հետ, որոնք նոյնպէս ցանկացան իրանց պատկերներն ունե-նալ:

Պատկերը կախեցին հիւրասենեկում ամէնից աչքի ընկնող տեղը, այնպէս որ ամէնքը կարողացան տեսնել, 'ի թիւս որոց և պ. Ջէստէրտօնը: Եթէ պ. Պօունսէր-ին պարծենալով պահում էր իւր հովանաւորութեան տակ երիտասարդ արուեստաւորին, ինչ դրութեան մէջ կարող էր լինել նոյն իսկ նորա հօրեղբայր պ. Ջէստէր-տօնը: Նորա զգացմունքը շատ բազմատեսակ էր: Որով-հետև սիրում էր ու յարգում հաստատամիտ բնաւո-րութիւնը, ուստի և մի տեսակ հպարտութեամբ հա-մակրում էր Ալֆրէդին, որ սեպհական ոյժերով ապա-գայ էր պատրաստել իւր համար. բայց մի և նոյն ժա-մանակ վիրաւորւում էր, որ Ալֆրէդը չէր դիմել իւր հովանաւորութեան և անտարբեր ձևացաւ, երբ նա փորձեց մօտենալու իրան և այնպիսի դիրք բռնեց, իբրև թէ չէ հասկանում նորա միտքը: Բացի սորանից, կարծես թէ ցաւում էր, որ սկզբում այնպէս կոպիտ էր վարուել հետը և, զարմանալի բան, կարծես քիչ էլ ա-մաչում էր: Նորա համար ուրախութիւն էր ասել, թէ „դա իմ բարեկամն է“—և ստանալ այն գովեստները, որ շռայլում էին պատկերի համար. բայց մի և նոյն ժամանակ վախենում էր թէ հարցնեն.—եթէ այդպէս է, ինչո՞ւ ուրեմն երբեմն երբեմն չենք տեսել ձեր տանը:

Իսկ այժմ բոլորովին համոզուած էր որ Ալֆրէդը նորա մօտ գնացողը չէր, եթէ մինչև անգամ հրաւիրէր էլ։

Նա այս բանը կամեցաւ իմանալ Սէսիլիայի միջոցով, բայց սա խուլ մնաց նորան վերաբերեալ ամէն տեսակ խօսք ու զրոյցին և առհասարակ ամենևին ցանկութիւն չէր ցոյց տալիս՝ հօրեղբօրը Ալֆրէդի հետ հաշտեցնելու։ Պ. Չէստէրտօնը երբ ոտացաւից թեթևացաւ, մի քանի բան լսեց Ռօբէրտի վատնող շռայլութեան մասին, որ Սէսիլիան զգուշութեամբ ծածկում էր, նորա հիւանդութեան ժամանակ. զարհուրելի էր այդ միջոցին քեռու բարկութիւնը։

—Զուրն եկել է ինձ տարել, եթէ Ռօբէրտին ժառանգութիւնից զրկէ, մտածում էր Սէսիլիան։—Ի՛նչ պէտք է լինի այն ժամանակ մեր հալը։

Նա հայհոյում էր որդուն, որ համբուրում էր նրան ու խոստանում էր ուղղուել, բայց իսկոյն էլի առաջուայ ճանապարհով էր գնում։ Նա բոլորովին փչացած չէր, բայց չէր կարողանում նրան զսպել և դորա հետ միասին չունենալով որոշ պարապմունք, հեշտութեամբ ենթարկւում էր այն փորձանքներին, որոնք շրջապատում են բոլոր անգործ մարդոց։ Նա չէր սիրում քեռուն և սորանից անձնատուր չէր նորան, որի համար, սակայն, շատ մեղաւոր էր հէնց ինքը պ. Չէստէրտօնը, որ ոչ մի առանձին սէր և համակրութիւն էր ցոյց տալիս դէպի իւր քեռորդին, ոչ էլ չը նայելով իւր բոլոր զայրոյթին, հայրական խնամք և անհրաժեշտ խստութիւն ունէր։ Ռօբէրտը կարծում էր թէ շատ յարմար է քեռու առատաձեռնութիւնից օգուտ քաղել և ինքն նրան ասում էր, որ եթէ նա չը վճարէր իւր ծախսերը, իբրև թէ դրամով անարգար կերպով վիրաւորում էր իւր ինքնասիրութիւնը։

Պ. Չէստէրտօնը ճշմարիտ որ ակամայից էր վճա-

րում նորա արած մեծամեծ ծախսերը, բայց նա էլ ունէր իւր պատճառները։ Երբ որ նա Ռօբէրտին որդեգրեց, ամենևին մտքով էլ չանցկացրեց, թէ այնքան թանգ պէտք է նստէր նրան։

—Իմ ժամանակ, ասում էր նա, երիտասարդ մարդիք բաւականանում էին այն գումարի տասներորդ մասով, որ այժմ Ռօբէրտին հերիք էլ չէ գալիս։—Նա մոռանում էր, որ իւր ժամանակը նաև տունը, ծառան, ձիաները և առհասարակ ամէն բան—այժմեանից շատ աւելի աժան էր. այս պատճառով նորա եկամուտը, որ Կալկաթայում կարող էր երևակայական գումար համարուել, Լօնդօնում միայն միջակ կարողութիւն էր հաշւում։ Պ. Չէստէրտօնի հարստութիւնը կազմուած էր վարելահողերից և այն մասը գումարից, որ պահվում էր պ. Պօունսէրբիի մօտ։ Չը կամենալով ձեռքից թողնել մի որ և է շահաւոր ընկերութեան մասնակցելու յաջող դէպքը, նա իւր փողերի մի մասը դարձրեց ակցիաներ։ Նոտարը շատ չէր հաւատ ընծայում այդ ընկերութիւններին և շատ անգամ այս միտքը յայտնում էր պ. Չէստէրտօնին, բայց սա միշտ արհամարհում էր նորա խորհուրդները, նրան խիստ փորձուած կարծելով վաճառականական գործերում։ Այն ինչ շնորհակալութեամբ ընդունում էր պ. Պօունսէրբիից խորհուրդներ Ռօբէրտի վերաբերութեամբ. քեռին բաւականին նշանաւոր գումար յատկացրեց երիտասարդին ծախսելու համար, այն պայմանով միայն, որ էլ պարտք չանէ. այս ճանապարհով նա յոյս ունէր, թէ կը սովորցնէ խելացի կերպով վարուել փողի հետ։ Ռօբէրտը տեսնելով, որ նշանակած գումարը շատ և շատ բաւական է նրան, ազնիւ խօսք տուաւ կատարել այն պայմանը, որ պահանջում էր նրանից։

Պ. Չէստէրտօնը լոկ կէսով չափ հաւատաց իւր

ժառանգի խոստումին և թէպէտև նրանց նորա նախ-կին սխալները, բայց և այնպէս մի առանձին տհա-ճութիւն և անբաւականութիւն էր զգում դէպի նա:

Մէկ ազգական տղայից այսպէս սառելով, բնա-կանաբար ձգտումն էր զգում նա դէպի միւսը, և մի անգամ, երբ Ալֆրէդը նստած էր իւր գործին, առան-ձնարանի դուռը բացուեցաւ և Մագդղինան ժպտա-լով հարցրեց, թէ կարո՞ղ է պ. գեղարուեստը ընդու-նել իւր պարոնին:

Ալֆրէդը համաձայնեցաւ, որովհետև այդ օրը նա մենակ էր: Եթէ որ մայրը մօտը լինէր, չէր ընդունի հօրեղբօրը,—„որովհետև" ասում էր նա ինքն իրան „եթէ հօրեղբայրս անքաղաքավարի վարուէր հետը, ես ստիպուած պէտք է դուրս անէի նորան":

Երևում էր, որ Ալֆրէդը շատ էլ չէր հաւատում իւր հօրեղբօրը:

Բայց սխալւում էր: Պ. Զէստէրտօնը մտքով էլ չէր անցկացրել անքաղաքավարի վարուել և ցաւում էր, որ էլ չը պատահեցաւ այն հայեացքին, որ այն-պէս յուզեց նորան շատ տարի առաջ համալսարանի դահլիճում: Նա տաք տաք շնորհաւորեց երիտասարդ նկարչին, որ օր. Պօւնսէբէրի պատկերը յաջողութեամբ նկարել էր, նայեց պատից կախած պատկերներին և գնեց նոցանից երկուսը, կրկնապատիկ և եռապատիկ աւելի գին տալով Ալֆրէդի առաջարկածից և, վերջա-պէս, խնդրեց երիտասարդին, որ նկարէ իւր պատկերը: Նա ցանկանում էր հանուել հնդկական ձև շորերով (որովհետև ատում էր սև շորերը), նաև կանգնած Մագդղինագը արևելեան հագուստով:

Ալֆրէդը ընդունեց առաջարկութիւնը:

Սկզբում նա փոքր ինչ ալեկոծուեցաւ պ. Զէս-տէրտօնի զննողական հայեացքից, որ, կարծես, աշխա-

տում էր թափանցել նորա սրտի մէջ. բայց միտքը դրաւ անծանօթի պէս վարուել նորա հետ: Ուստի ան-տարբերութեամբ և լուռ ու մունջ գլուխը կախած սկսաւ պարապել: Բայց հետզհետէ նրան կատարեալ գեղարուեստ, հետաքրքրուեցաւ իւր նկարչութեան գա-ղափարով և որպէս զի լաւ ըմբռնէ նորա ամէն տեսակ արտայայտութիւնը և պատկերը առնել կենդանի դուրս բերէ, ոչ թէ միայն պատասխանում էր պ. Զէս-տէրտօնի հարցերին, այլ և ինքը աշխատում էր մի տեսակ կենդանի խօսակցութեան մէջ ձգել նորան, որ սքանչելի կերպով կարողացաւ յաջողեցնել:

Պ. Զէստէրտօնը հիացած էր երիտասարդի վերայ և նորա մտքով էլ անցաւ միև նոյն բանը, ինչ որ առաջ մտածեց պ. Պօւնսէբէրին, թէ "ափսոս, որ Ալֆ-րէդը չէ նորա ժառանգը:

Այդ բոլոր ժամանակ Կլարան ամենևին ոտք չը դրաւ առանձնարանը:

Պատկերը պատրաստ էր սկզբնական բացման համար և պ. Զէստէրտօնը, ինչպէս նաև Կլարան, իրանց պատկերները տեսան արուեստահանդէսում:

Պ. Պօւնսէբէրին հիանում էր, տեսնելով թէ ինչ մեծ բազմութիւն էր հաւաքւում իւր աղջկայ պատ-կերի առաջ և լսելով այսպիսի ձայներ.„ Ինչ չքնաղ դէմք„ "Ինչ սքանչելի աչքեր„ "Ինչ հրաշալի մազեր„ "չը գիտե՞ք թէ ով է„:

Ալֆրէդը, որի անունը մինչև այդ ժամանակ շատ քչերին էր յայտնի, ձմեռուայ վերջին օրերն ամէնքին ծանօթ էր:

Առաւօտից մինչև լաւ մութն ընկնելը ամբոխը խռնւում էր պ. Զէստէրտօնի պատկերի առաջ և գործին հմուտ մարդիք զարմանում էին նկարի գեղեցկութեան և կատարելութեան վերայ. նոքա գովում էին մա՜ն-

բամանութիւնները, որոնք ցոյց էին տալիս, թէ արուեստագէտը տաղանդ ունէր նոյնպէս լաւ ըմբռնելու և փոխանցելու անշունչ առարկաների առանձնութիւնները, ինչպէս և շնչաւորներինը: Եւ երբ նրա աչքը դարձնում էին Լաուրա Պօունսէբըլի զուարթ, վարդագոյն և ժպտածիծաղ դէմքին, նրա գովասանքը կրկնապատկւում էր և մինչև երկինքն էին բարձրացնում նկարչին, որ այնչափ հմուտ էր այդպիսի տարբեր աշխատութիւնների մէջ:

Ալֆրէդը այդ տարի վարձատրուեցաւ շքանշանով և այնքան պատուէրներ էր ստանում, որ ոյժ չէր ներում կատարելու: Պատուէր տուողներից միայն մէկին կը յիշենք—այն է Ռօբէրտի նախկին դաստիարակին, որ ցանկանում էր ունենալ իւր պատկերը հին ծիրանի վերարկուով հանած:

ԳԼՈՒԽ ԼԴ.

ԵՐԿՈՒ ԳԻՒՂԱԿԱՆ ՏՆԱԿՆԵՐ:

Պ. Կեմպբէլը շարունակ ծառայում էր դրասենեկում և սպասում էր, մինչև որ աւագ գործակատար պ. Գալլովէյի մահը կամ հրաժարականը միջոց կը տային նորան առաջին տեղը բռնել: Բայց նա մի բարի քրիստոնեայ էր, ուստի և չուզենալով իւր մերձաւորի մահը, բաւականանում էր միմիայն այս հարցով, թէ շուտ պէտք է աւագ գործակատարը քաշուէր իւր ամառանոցը—ամէն անգամ, երբ վերջինս մտնում էր սենեակը, ողջունում էր նորան և նստում էր աթոռի վերայ միշտ մի և նոյն ժամանակ մի րոպէ ոչ յետ ոչ առաջ:

Անցնում էին օրեր և ամիսներ, իսկ Գալլօվէյն մտքով անգամ չէր անցկացնում պաշտօնը թողնել: Նորա տան շինութիւնը, պէտք է ասել, բաւական երկար տևեց, որպէս զի նորա ապագայ բնակիչները յօդացաւով չը տանջուէին. Բայց տանտէրը միայն շաբաթ և կիւրակի օրերն էր գնում այնտեղ: Մարդուս յատուկ է արհամարհել իւր ունեցածը և ցանկանալ չ'ունեցած բանը: Շատ տարիներ էր որ պ. Գալլօվէյն հոգւով մարմնով ցանկանում էր մի փոքրիկ սպիտակ երկյարկանի տնակ շինել, առջևից երեք լուսամուտներով և մի համեստ պարտիզով, լցուած տանձի ծառերով և վարդի թփերով: Եւ ինչ խիստ տնտեսութիւն էր անում, որպէս զի բաղդ ունենայ այսպիսի պալատում ապրելու: Ականջները սրած ունէր, թէ որտեղ է մի կտոր հող ծախւում և խորհուրդ էր անում բազմաթիւ ճարտարապետների և պարտիզպանների հետ տան շինութեան և այգին աճեցնելու մասին: Բայց երբ էլ ոչինչ արգելք չունէր այդպիսի մի տուն շինելու և իւր միջոցներով ապրելու, հազարաւոր պատճառներ գտաւ դորա դէմ: Շատ տարիներ նա աջ ձեռքն էր պ. Պօունսէբըլի. ինչպէս ուրեմն կարող էր սա կառավարուել առանց նորան: Բացի դորանից նա շատ էլ պառաւ չէր և այս պատճառով մեղք էր համարում զրկել նոտարին իւր ծառայութիւնից, քանի որ դեռ երկար ժամանակ կարող էր աշխատել: Բայց գլխաւոր պատճառն այն էր, որ վախենում էր թէ մի գուցէ անգործութիւնից ձանձրանայ: Պ. Գալլօվէյն փիլիսոփայ էր: Իւր պարապման ժամանակ դրասենեկում նա խիստ հետազօտում էր տարբեր տեսակի մարդոց և հանգամանքները և ցաւում էր թողնել այս „կախարդական լապտերը":

Իբրև ժողովրդին ծանօթ մարդ, նա, երբ լսեց թէ

ինչ ահագին գումար էր նշանակել պ. Չեմբերսոնը Ռօբէրտի համար, խորհրդաւոր կերպով ունքը վեր-քաշեց և ասաւ.—որքան շատ փող ունենայ, այնքան աւելի պահանջ կը զգայ ծախսելու:—Պ. Պօունտէրբին նկատեց, որ այս խօսքը բոլորովին անարդար չէր:

Պ. Գալլօվէյն ամենեւին չը զարմացաւ—ոչ այն ժամանակ, երբ Ռօբէրտը ուրախ ուրախ եկաւ նրան նշանակած գումարի առաջին քառորդը ստանալու, ոչ էլ երբ բաւական սառնութեամբ ստացաւ երկրորդը: Նա չ'ապշեցաւ նոյնպէս ոչ երիտասարդի տրտում կեր-պարանքի վերայ երրորդ քառորդը ստանալու ժամա-նակ, ոչ էլ նորա երկայնացած կերպարանքի վերայ, երբ ստանում էր չորրորդը: Վերջապէս տեսնելով երի-տասարդի տխուր կերպարանքը, երբ չորրորդ տարուայ սկզբին գնացել էր փող ստանալու, նա այն եզրակա-ցութեան հասաւ, որ Ռօբէրտի ստացած փողերը խո-կոյն պէտք է տուէին պարտքի մէջ: Այդ էլ բաւա-կան չէ, նա մինչեւ անգամ աչքերը չը չռեց այն ժա-մանակ, երբ Ռօբէրտը առաջին քառորդը ստանալուց մի ամիս անց գնաց այս գլխից ստանալու երկրորդ քառորդը: Այդ մի ամսին Ռօբէրտը կառավարուել էր մօրից խնդրած փողերով:

Բայց երկրորդ քառորդը ստանալու համար երի-տասարդը ոչ թէ դրամատնակը գնաց, այլ ուղղակի պ. Գալլօվէյի մօտ: Ռօբէրտը կարծում էր թէ անշուշտ կը յաջողի, եթէ նորանից մասնաւոր կերպով խնդրէ, ուստի մէկ շաբաթ օր ճանապարհ ընկաւ դէպի նորա դաստակերտը քաղաքից դուրս: Երբ գնաց, տեսաւ, որ աւագ գործակատարը զբաղուած էր վարդի թփերով: „Այս լաւ է", մտածեց նա, „այժմ գտնեմ սորա թոյլ կողմը"—այս պատճառով նա հիացած և իբրև քաջ հմուտ սկսաւ գովել—Gloire de Dijon Geant des Batailles.

Պ. Գալլօվէյն հիացած էր Ռօբէրտի բուսաբանու-թեան գիտութեան վերայ և բաւականաչափ տաք խօսքեր շռայլեց նորան: Բայց երբ երիտասարդը, սիրտ առնելով, սկսաւ հեռուից և շատ նուրբ շրջաբերու-թեամբ խօսքը բերեց այն „չնչին գործի" մասին, ինչի համար որ գնացել էր, իրաւաբանի դէմքը սառն և քաղաքավարի դէրք ընդունեց: Նա ամենեւին չ'ընդ-հատեց հիւրի խօսակցութիւնը, միայն վերջի վերջոյ սորա ճարտար խօսակցութեան հետեւանքը մի նոյն-պիսի զրօ եղաւ գրպանում, ինչով էլ որ գնացել էր:

Նոյն վայրկենին, երբ Ռօբէրտը, անախորժ պա-տասխան ստացած, այնուամենայնիւ քաղաքավարի կերպով ողջունում էր պ. Գալլօվէյին, կամաց բացուե-ցաւ մի ուրիշ դուռ, հարևան պարտէզի դուռը: Հէնց որ պ. Գալլօվէյն փակեց իր դուռը, միւսը առաւել բացուեցաւ և մի մարդ գլուխը ներս կոխեց այնտեղից:

Դա մի կարճահասակ և նիհար մարդ էր, որի գլխաւոր նպատակը կարծես այն էր, որ աշխատէ որ-քան կարելի է քիչ տեղ բռնէ,—սկզբում մի ոտը առաջ դրաւ, յետոյ միւսը, կատուի պէս նայեց իր շուրջ, առանց աղմուկ հանելու դուռը կողպեց և քսան քայլ հեռաւորութեամբ սկսաւ գնալ Ռօբէրտի ետևից:

Շուտով նա յետ դարձաւ տուն և եթէ պ. Գալ-լօվէյն քաւթարինէ կենդանին լինէր, որ, ինչպէս ամէն-քին յայտնի է, քարէ պատէ միջից անգամ կարողա-նում է բան տեսնել,—կը տեսնէր, որ իր հարևանը ուշ գիշերով յիշատակարանի մէջ գրում էր հետևեալ նկատողութիւնը.

„Ռօբէրտ Չեմբերսոն—միակ ժառանգ իր հա-րուստ քեռու, որ բաւական ծեր է. գործը ուշադրա-կան է և զգուշութիւն է պահանջում:"

Աւելի սովորութիւնից, քան թէ անհրաժեշտու-

թեան համար, պ. Գոլլօվէյի հայեացը նախազգու-
շացնում էր ինքն իրան, որովհետև, եթէ կարողանա-
յինք նայել նորա հեռաւոր անցեալին, կը տեսնէինք,
թէ չէր եղած ոչ մի աննշան գործ, ընդհակառակն եղած
էին շատ նշանաւոր գործեր, որոնցում նա անզգոյշ
վարուած չէր:

Բայց սակայն ինչ գործի տէր էր նա: Ինքը իրան
կոչում էր փաստաբան, բայց նորա հետ գործ ունե-
ցողները այդ տիտղոսը վերակոչում էին „վաշխառու“
անունով: Նա Լօնդօնում ունէր բազմաթիւ գաղտնի,
բայց խորամանկ թղթակիցներ, որոնք տալիս էին նորան
այն ամէն կարելի տեղեկութիւնները, որոնք միայն
հարկաւոր էին նորան: Պ. Պօտտօբիտը—այս էր նորա
անունը—հաս հաս գիտէր այն ամէն հարուստ երի-
տասարդների ճիւղագրութիւնը, որոնք ապրում էին ու-
նեցած միջոցներից աւելի ճոխ և միշտ պատրաստ էր
օգնել նոցա փող հարկաւոր եղած ժամանակ անհնա-
նշահասէր ձևացնելով իրան: Փոխարինաբար փող էր
տալիս նոցա, փոխում էր ապահովագրերը, երբ ցանկա-
նում էին և միշտ առանց որ և է պահանջողութիւն
անելու. այլ պարտքը կարող էին վճարել, երբ ժա-
ռանգութիւնները կը ստանային: Միմիայն իր բարե-
րարութեան փոխարէն ինքն իրան վարձատրում էր
յարմար տոկոսիքով: Այսպիսի փոխատուութեան հե-
տևանքը միշտ այն էր լինում, որ նորա ճանկն ընկնող
միամիտները սկզբում ուրախանում էին, երբ պարտք էին
վերցնում նորանից, իսկ յետոյ սաստիկ ցաւում էին,
երբ որ վճարում էին այս պարտատիրոջ, որ յանկարծ
մի տեսակ անսովոր խստապահանջ էր դառնում և եր-
բէք չէր բաց թողնում իր որսը:

Հաստատապէս կարելի է ասել, որ պ. Պօտտօբիտը
իր բացակայութեան բոլոր ժամանակը անց էր կաց-

նում տեղեկութիւններ հաւաքելով Ռօբէրտի մասին:
Վերջինիս գաղտնիքը նա իմացաւ, ականջ դնելով գիհի-
ցանկից, որ բաժանում էր նորա այգին պ. Գոլլօվէյի
այգուց (պ. Պօտտօբիտը այստ ժամերը անց էր կացնում
պարտիզպանութեամբ):

Նա որոշեց, որ հարկաւոր չէ գործը յետաձգել և
շուտով միջոց գտաւ ծանօթանալու Ռօբէրտի հետ.
այնուհետև առաջարկեց նորան իր քսակը յայտնի
պայմաններով, որոնց հետ էլ երիտասարդը չաշխատեց
ծանօթանալ ինչպէս հարկն է: Այդ օրուանից Ռօբէրտը
էլ փողի համար նեղութիւն չէր տալիս ոչ մօրը, ոչ էլ
քեռուն և պ. Զէստէրտօնը ուրախանում էր, մտածե-
լով թէ իր ժառանգը խելքի է եկել. և միևնոյն ժա-
մանակ պարծենում էր ինքն իրան, որ կարողացաւ իր
իմաստութեամբ չափաւոր գումար նշանակել իր ժա-
ռանգի ծախսի համար:

Ժամանակը անցնում էր. փոխատուութիւնը շարու-
նակւում էր, պարտամուրհակները հետևում էին մէկը
միւսին և մի բաղդաւոր օր պ. Պօտտօբիտը տեսաւ, որ
Ռօբէրտը պարտական է իրան չորս հազար ֆունտ
ստեռլինգի մի գումար:

Վաշխառուին այնպէս էր թւում, թէ պ. Զէս-
տէրտօնը խիստ երկայնակեաց մարդ է, բայց այնու-
ամենայնիւ շարունակ սպասում էր, քաջ գիտենալով,
որ այս աշխարհում ոչ ոք անմահ չէ:

Ռօբէրտը, թէպէտև չը գիտէր իր պարտքի ճիշտ
թիւը, բայց և այնպէս աշխատում էր աւելի չը բարդել,
իսկ արդէն սովոր լինելով անմիտ ապրելուն, չը կարողա-
ցաւ միանգամայն ձեռք վերցնել, այլ սկսաւ այնու-
հետև պարտքեր վերցնել խանութներից: Ամէն տեղ
վարկը անպակաս էր. քեռու հարստութիւնը բաւական
երաշխաւորութիւն էր:

Այսպիսով պ. Չէստէրտօնը մինչև անգամ չը գիտէր էլ թէ մէկի փոխարէն մի քանի ժառանգներ էին դուրս եկել նրան:

Նա որքան տանջւում էր ծերունին իւր հարուստ անցովը: Երբ հիւանդութիւնը ստիպեց նորան տանը նստել, էլ ո՛ւր կարող էր մի անձ գտնել, որ իւր սիրով թեթևացնէր նորա տանջանքները: Ժառանգը համարեա մօտը չէր, նա միայն իւր գլխի հոգսն էր քաշում: Երախտապարտները ամէնքը մէկ տեսակ են: Բայց գանգատուելու ի՞նչ կար: Ինքը ջահել ժամանակ ուրախութիւն չէ՞ր արել, ինչ է: Մագլդլագը միշտ նորա մօտն էր լինում սովորական կոյր անձնուիրութեամբ, որի համար լսելը—հնազանդուիլ էր նշանակում. բայց նորան բաւական չէր այսպիսի հնազանդութիւնը, նա ինչ որ մի ուրիշ բան էր ուզում: Գուցէ Սէսիլեան կարող էր տալ նորա ուզածը: Աւա՜ղ. Սէսիլեան ինքն էլ էր թշուառ: Նա շարունակ ինքն իրան յանդիմանում էր որդու բարոյապէս ընկնելու համար, որին ինքն էր փորձանքի մէջ գցել: Սէսիլեան կրկնապատկեց իւր հոգացողութիւնները քեռու մասին, բայց երբէք չը կարողացաւ ոչ սիրել նորան, ոչ էլ նորան հասկացնել, թէ սիրում է: Հանաք էր անում, ծիծաղում էր նորան զբաղեցնելու համար, բայց այդ ծիծաղը կեղծ էր, իսկ ձայնը թախծութիւն էր արտայայտում: Թէ տանը և թէ հասարակութեան մէջ նա լոկ ուրախութեան դիմակ էր կրում, բայց քեռին չէր խաբւում սորանով:

Այդ բոլոր ժամանակ Ալֆրէդն ու իւր մայրը շատ բաղտաւոր էին: Ալֆրէդը ուզում էր մի առաւել յարմարաւոր տեղ տուն վարձել, բայց մայրը չէր ցանկանում բաժանուիլ ծերունի Պասմօրից, որ մտքովն անգամ չէր անցկացնում բաժանուիլ իւր բարեկամներից: Սակայն համաձայնեցաւ վարձել աւելի յարմար սե-

նեակներ երկրորդ յարկում, ուր և փոխադրուեցաւ մի պատուական առանձնասենեակ Ալֆրէդի համար: Նեղ օրից ազատուել էին վերջացել: Կլարան քաղում էր այժմ իւր աշխատանքի պտուղները. նա կատարել էր ամէն բան, ինչ որ պահանջւում է մօրից. արդէն մարդ էր շինել իւր որդուն:

Երբ նոքա թև թևի տուած մտնում էին հրաւիրանաց դահլիճը, ուր այժմ յաճախ էին հրաւիրւում, մայրը հպարտանում էր որդու տաղանդով և գովասանութիւններով, որ լսում էր ամէն կողմից: Որդին հպարտանում էր իւր մօրը տուած յարգանքով, որ այնպէս բարեսիրտ, յարգելի և չնայելով նորա սպիտակ մազերին, տակաւին մի գեղեցիկ կին էր: Ամէն հասակ իւր սեպհական գեղեցկութիւններն ունի և երբ առաջին, երիտասարդական գեղեցկութիւնն անցնում է, լաւ մարդու դէմքին երևում է նորա պայծառ հոգու տիպը: Միտներդ չէ՞ գալիս, որ երբեմն մի որ և է հասակաւոր կին տեսնելիս՝ ակամայ ասած լինէք „ա՜հ, ինչ գեղեցիկ պէտք է եղած լինի սա առաջ“: Իսկ մենք կարող էինք ձեզ պատասխանել, թէ „երբէք այդպէս գեղեցիկ եղած չէ“:

Կլարան այժմ յաճախ պատահում էր հօրեղբօրը հասարակութեան մէջ և մինչև անգամ խօսում էր հետը, որովհետև քաղաքավարի էր վարւում թէ իւր և թէ Ալֆրէդի հետ: Բայց արտաքուստ թւում էին իբրև հասարակ ծանօթներ և հասարակութիւնից մինչև անգամ ոչ ոք չէր էլ կարծում թէ դոքա ազգականներ կարող էին լինել: Նոցանից մէկը պէտք է սառը կոտրէր. բայց մէկը ասում էր թէ „շատ հպարտ կին է“, իսկ միւսը, թէ „իմ բարեկամութեան կարիքը չէ զգում“:

Սէսիլեան ողջունում էր իւր ազգականուհուն, ձեւաց

միմեանց առողջութիւն էին հարցնում, իսկ այնուհետեւ էլ ոչինչ չէր խօսում հետը:

Ռօբէրտը, երբ գնում էր հանդէսները, սովորաբար կանգնում էր դռան մօտ և անտարբերութեամբ նայելով իւր շուրջ, աշխատում էր ձանձրացած ձեւացնել իրան, որպէս զի կարծեն, թէ երաժշտութիւնից, պարից և խօսակցութիւնից և առհասարակ այդպիսի հանդէսներից միանգամայն զզուած է: Հազիւ երբեմն ակամայից ստիպուած մի շուրջ էր անում հանդէսի թագուհիներից մէկի հետ, և դարձեալ մենակ կանգնում էր դռան մօտ: Ալֆրէդը, որ 'ի հարկէ, էլ հին ձեւի փրակ չունէր հագած, ընդհակառակ մեծ ուշադրութիւն էր գտնում պարի մէջ, մանաւանդ երբ պարում էր Լաուրաի հետ: Իսկ սա միշտ երկու երեք կադրիլ պահում էր նորա համար և համարեա նոյնչափ էր պարծենում նորանով, ինչքան որ տ. Մօլլօյն: Երեւի այն պատճառով, որ իւր աղջկայ պատկերը Ալֆրէդի փառքի սկիզբը դրաւ, պ. Պօունաբըրին միշտ սիրով ձեռք էր տալիս նորան և անուանում էր „իւր ընտիր երիտասարդ բարեկամը": Իսկ պ. Պասմօրի խելքը գնում էր, երբ լսում էր խելացի մարդկանց խօսակցութիւնները Ալֆրէդի գեղարուեստական հանճարի և մարդկային արժանաւորութեանց մասին: Այս գովասանութիւնների մի ամենաչնչին մասը նա վերաբերում էր իրան,—նա, որ տ. Մօլլօյից յետոյ ամէնքից աւելի բարերար ազդեցութիւն ունեցաւ նորա բնաւորութեան վերայ և սովորեց խելացի և ազնիւ կերպով վարուել ամէն բանի մէջ:

ԳԼՈՒԽ ԼԴ.

ԱՆԿՈՒՄՆ:—ՓՈՐՁԱՆՔ:

—Նորութիւն լսե՞լ էք, պարոններ, ասաւ պ. Կէմպըէլլը, աչքը դարձնելով լրագրից:—Նիւտօնքրօֆի հանքերի ընկերութիւնը սնանկացել է և գանձապահը փախել է, գանձն էլ հետը տարել:

—Մէջը բան եղե՞լ է, հարցրեց Գանիօկը:

—Ի հարկէ. ասում են որ ընկերութեան մասնակից են եղել նշանաւոր վաճառականներ:

—Յոյս ունիմ, որ մեր կառավարիչը խառը չի լինի նոցա մէջ:

—Ո՛չ, իսկ պ. Ջէստէրտօնը, գործի յաջողութիւնը անտարակուսելի համարելով՝ դրել էր գանձարանի մէջ շատ նշանաւոր գումար:

—Գիտեմ. ես լսեցի, որ առանձնասենեակում խընդրում էր պ. Պօունաբըրին որքան կարելի է շատ առնել այդ ընկերութեան ակցիաներից: Պ. Պօունաբըրին համոզում էր չառնել, բայց նա չը լսեց նորա խորհրդին:

—Այո, ցաւալի է. խաղի փողից մի մեծ գումար կորաւ:—Եւ Գանիօկը անտարբերութեամբ սկսաւ պարապել, իսկ պ. Կէմպըէլլը նորից աչքը տնկեց լրագրին:

Նորութիւնը շատ արագ տարածուեցաւ քաղաքի մէջ և ճաշի մօտերքին ամբողջ Լօնդօնը գիտէր, որ Նիւտօքրօֆեան ընկերութիւնը սնանկացել է. աւելացնում էին նաև, թէ այդ սնանկութիւնից մեծ վնաս է կրում նաև պ. Ջէստէրտօնը: Այս լուրը հօտով իմացան նաև Ռօբէրտի պարտատէրերը և հետեւեալ օրը պ. Ջէստէրտօնը ստիպուեցաւ ընդունել իւր նախասենեակում մի

գերձակ, մի կօշկակար, Հիւրանոցի կառավարչին և մի քանի ուրիշ վաճառական մարդիք, որոնք ներկայացրին նորան բաւականին մեծ գումարի հաշիւներ, ստորագրած իւր ժառանգի ձեռքով:

Դժուար չէ երևակայել ծերունու բարկութիւնը, որ առանց այդ էլ վրդովուած էր իւր կարողութեան նշանաւոր մասը կորցնելու պատճառով: Մարդ ուղարկեց Ռօբէրտի ետևից, որ խելքը սրա Թախկացու տանից դուրս: Սէսիլեան վախենալով, թէ մի գուցէ վերջնական անջատում լինի քեռու և ժառանգի մէջ, ինքը խորհուրդ տուաւ որ թախ կենայ: Պ. Չէստէրտօնը ման եկաւ բոլոր սենեակները, սկսաւ կանչել Ռօբէրտին, հայհոյել, չանդիմանել և անիծել այն օրը, երբ որդեգրեց նորան: Վերջապէս զարհուրելի կատաղութիւնից անզգայ վայր ընկաւ իւր ազգականուհու ոտների մօտ, որ ահից քիչ էր մնում մեռնէր: Նորան վեր առան գետնից, պառկացրին անկողնի մէջ և ուղարկեցին բժշկի ետևից: Բժիշկը եկաւ, ուշքի բերաւ նորան, բայց ասաւ, թէ ծերունին չի վերկենայ տեղից, որովհետև ամբողջ ձախ կողմը կաթուածահար է եղել:

Մինչև որ Սէսիլեան և Մագդալենան խնամում էին հիւանդին, Ռօբէրտը անցուդարձ էր անում մի և նոյն սենեակի դրան մօտ և չէր համարձակւում ներս մտնել, այլ սպասում էր, որ տեղեկութիւններ ստանայ մօրից: Իսկ Հարիւր լեզուեան ձայնը իւր բանին առաջ էր տանում: Պ. Պօստօբլիտը ամենևին չը շփոթուեցաւ, երբ կարդաց Նիւտօբէրգի ընկերութեան սնանկութեան լուրը, որովհետև գիտէր, որ պ. Չէստէրտօնը ամբողջ կարողութիւնը դրած չէր ընկերութեան գանձարանում. բայց երբ լսեց պարոնի կաթուածահարութեան և անկողին մտնելու լուրը, այդ միջոցին արդէն ականջները սրեց:

—Եթէ ճշմարիտ էն ասում, մտածեց նա, թէ պ. Չէստէրտօնը զրկում էր իւր ազգականին ժառանգութիւնից, այն ժամանակ ձեռքերս պէտք է լուանամ փողից էլ, շահից էլ: Երկիւղից ու բարկութիւնից նորա դողը բռնեց, ուստի և խոկոյն թողեց իւր տնակը և գնաց տեսնելու Ռօբէրտին:

Մտաւ վերջինիս սենեակը. գորգը բոլորովին ծածկեց նորա քայլերի ձայնը, այնպէս որ մեր երիտասարդը յետ նայեց ու տեսաւ, որ վաշխառուն արդէն կանգնած է իւր առջև:

—Պ. Պօստօբլիտ, աղաղակեց նա:

—Այո, սիրելի պարոնս, ես եմ: Լսեցի ձեզ պատահած դժբաղդութեան լուրը և եկայ խօսելու մեր փոքրիկ գործի մասին:

Ռօբէրտը տեղն ու տեղը սառած մնաց և ահով նայում էր իւր այցելուին: Իսկ սա շարունակեց:

—Ինձ պատահեցաւ միևնոյն բանը, ինչ որ միշտ կարող է ամէնքին էլ պատահել—ինձ հարկաւոր է փող, շատ հարկաւոր է. ուստի եկայ ձեզ մօտ, յուսալով, թէ դուք բարի կը լինէք և չէք մերժի վճարել ինձ այն գումարը, որ արժան համարեցիք փոխ առնել ինձանից:

Ասաւ և Ռօբէրտի առաջ դրաւ մի շատ գեղեցիկ գրած հաշիւ: Երիտասարդը մեքենայաբար վեր առաւ թուղթը և կարդաց

Մայիսի 8-ին—200 փունտ ստէրլինգ.
Յուլիսի 15-ին—300 „ „
Հոկտեմբ. 10-ին—350 „ „
և այլն և այլն և այլն:

Նա ուշադրութիւն չը դարձրեց թուերին, այլ շտապով աչքը դարձրեց գումարի վերայ. տեսաւ որ 4,400 փունտ ստէրլինգ էր:

—Անկարելի է, դոռաց նա:

—Գումարը ճիշտ է դուրս բերած, քաղաքավարի գլուխ տալով պատասխանեց պ. Պօստօբլոը,—չեմ կարծում, թէ սխալուած լինեմ գումարելիս: Կարծեմ ձեր ձեռքով են գրած այն բոլոր մանր մունր գումարները, որ ես պատիւ ունեցայ փոխ տալ ձեզ:

Ռօբէրտը պատասխան չը տուաւ:

—Պ. Պօստօբլօ, առաւ նա երկար լռութիւնից յետոյ:—Պէտք է իմանաք, որ մի այսպիսի ժամանակ ես չեմ կարող ձեռք բերել այդ գումարը: Համբերեցէք, անշուշտ կը վճարեմ, երբ կարող եմ. դուք միշտ ասել էք, թէ վճարելու ժամանակը նշանակութիւն չունի ձեզ համար և թէ կարող էք սպասել:

—Այո, մինչև որ դուք կը ստանաք ժառանգութիւնը. բայց եթէ քեռին զրկէ ձեզ ժառանգութիւնից, այն ժամանակ ի՞նչ անէ ինձպէս մի խեղճ մարդը: Ես ձեզ տուել եմ այն ամէնը, ինչ որ խնայել եմ իմ ծերութեանս համար. և 'ի հարկէ, չէք կամենայ վնասել մի խեղճ մարդուն, որ ծառայութիւն է մատուցել ձեզ:

—Բայց այդ անազնւութիւն է. այդ բոլորովին վաշխառուի գործ է, աղաղակեց Ռօբէրտը, չը կարողանալով զսպել իրան:—Դուք իրաւունք չունէք պահանջել ինձանից:

—Օհօ, երիտասարդ, եթէ այդպէս է, ես իսկոյն կը բանտարկեմ ձեզ պարտապանների բաժնում: Ինչպէս որ փողերս ընդունեցիք կարիք ժամանակ, այժմ էլ պէտքէ ընդունէք պայմանները: Անմիջապէս ներողութիւն կրեցէք միջոցներ գտնել պարտքդ հատուցանելու համար. պարտք առէք ձեր բարեկամներից, կամ ումից որ կուզէք, իսկ եթէ վաղը այս ժամանակ չը ստանամ ես իմը, իսկոյն կը դիմեմ պ. Չէստէրտօնին. ինձ համար միևնոյն է, առողջ է նա թէ հիւանդ:

Մինչև վաղը ժամանակ եմ տալիս լսում էք: Լաւ օյին կը լինի ճշմարիտ, եթէ նա զրկէ ձեզ ժառանգութիւնից նախ քան կը վճարէք ձեր պարտքը և այնպէս մեռնի:

Եւ դուրս գնաց սենեկից առանց մնաս բարեւ տալու իր պարտապանին, որ գլուխը կախ անզգայացած կանգնած էր տեղնուտեղը: Զարմ հազար չորս հարիւր ֆունտ զարհուրելի գումարը չէր հեռանում նորա մտքից. այլ թւում էր, թէ այդ գումարը որ կողմ նայում էր, ամէն տեղ գրուած էր, երբ մահուան վճիռ: Եթէ պ. Պօստօբլոը այդ պարտքը պ. Չէստէրտօնից պահանջէր, ի՞նչ կը լինէր Ռօբէրտի հալը: Բարկութեան առաջին կատաղութիւնն անցնելուց յետոյ, ծերունին կարող էր ներել միւս պարտքերը, բայց այն պարտամուրհակը, որ ակնյայտնի ստորագրած էր ժառանգութիւնը ստանալու ժամանակ փողերը հատուցանելու պայմանով, հանաք բան չէր: Ի՞նչ կը լինէր Ռօբէրտի հալը, եթէ իրաւ քեռին զրկէր նորան ժառանգութիւնից: Մնում էր մի յաջող ելք գործին, այն է, եթէ քեռին, նախ քան կը փոխէր իւր կտակը, յանկարծ մեռնէր կաթուածից: Ռօբէրտը երեսը ծածկեց ձեռքերով. այդ վայրկենին նա մի տեսակ ատելութիւն զգաց դէպի իւր անձը, նորա համար, որ սրտով ուզեց այն մարդու մահը, որ այդքան բարիքներ էր տուած իրան:

—Ես փող կը գտնեմ: Ինչ ուզում է լինի, պէտք է ձեռք բերեմ, աղաղակեց նա յուսահատական վճռողութեամբ:

Ասաց և ձայն տուաւ ծառային, հագնուեցաւ ու ճանապարհ ընկաւ դէպի իւր համխօսների տները: Ինքը շատ անգամ փող էր տուած նոցա փոխարինաբար, մի քանիսը մինչև անգամ դեռ էլի պարտ էին

այդ ժամանակ: Կարող էին ուրեմն չ'օգնել: Այս յուսով սիրտ առած նա փոքր ինչ հանդարտուեցաւ:

Բայց երկար չը տևեց այս հանգստութիւնը: Այն երիտասարդները, որոնք իրանց կեանքը քէփ անելով են անցկացնում, դեռ իրանց պէտքերը հոգալու համար էլ չեն ունենում փող, ուր մնաց բարեկամի կարիքի համար: Համարեա թէ ամէնքն էլ մեծ պատրաստակամութիւն և անձնուիրութիւն ցոյց տուին. նոքա յուսահատուած էին, որ չէին կարողանում օգնել նորան, բայց ցաւակցաբար այդ րոպէին ոչ մէկի գրպանում մի կոպէկ չը կար:

Մէկը տարուել էր թղթախաղի մէջ. միւսը դեռ նոր էր վճարել ձիարշաւի համար դրած ձիու փողը. երրորդը կարասիք էր գնել առանձնատնակի համար. չորրորդը նշանուած էր, ուստի բոլոր ունեցածը վատնել էր ընծաների վերայ,—և այլն և այլն:

Իսկ որոնք փող էին պարտ Ռոբէրտին, վիրաւորուեցան. երբէք այդպիսի արարմունքի յոյս չունէին նորանից:

Դժբաղդ երիտասարդը ընդամէնը երկու հարիւր փունտ ստերլինգ էր հաւաքել, երբ գնաց իր նախկին դաստիարակ պատուելի Ադոլֆի մօտ, որին թողել էր ամէնից վերջին, գիտենալով, որ շատ բան չի կարելի սպասել նորանից:

Պ. Լիւդվիգը ճաշին հրաւիրած էր ուրիշ տեղ և ասել էր, թէ երեկոյին ուշ կը վերադառնայ:

—Դարձեալ կը գամ, ասաց Ռոբէրտը սպասաւորին, ձեռքից չը թողնելով այս վերջին յոյսն ու ապաւէնը: Նա դարձաւ տուն, ճաշեց մին մենակ, որովհետև Սէսիլիան չը կարողացաւ հիւանդին մենակ թողնել և սկսաւ ծխել, որ գոնէ սորանով ժամանակ անցկացնէ մինչև երեկոյ:



Ինքն իրան մտածում էր, թէ ի՛նչքան փող կարող էր տալ Ադոլֆը։ Թէպէտև, Ճշմարիտն ասած, նա էլ երբեմն ամենևին փող չէր ունենում, բայց ունէր տարեկան եկամուտ և բացի դորանից մի՛թէ չէր կարող մայր գումարից փոխ տալ իւր բարեկամին։ Ռօբէրտը պէտք է ասել, որ շատ շատ փող էր փոխ տալիս Ադոլֆին, անշուշտ նա էլ անտարբեր չէր մնայ դէպի նորա թշուառ դրութիւնը։ Այո՛, անպատճառ կը տար փող, բայց այնքան կը տա՞ր, որ բաւականացնէր պ. Պօստօրնտին։ Մնացածը որտեղից գտնէր։ Ռօբէրտը, 'ի հարկէ, մի քանի կտոր ոսկեղէն և ակնեղէն ունէր, բայց դոցա էլ միշտ չնչին գին են տալիս, երբ տեսնում են, որ շտապով հարկաւոր է ծախել, իսկ փոխառուն միւս առաւօտը պէտք է գար։

Տասնևմէկ ժամը լրանում էր, երբ Ռօբէրտը գնաց Ադոլֆի մօտ։

Ադոլֆը դեռ չէր վերադարձել. ուստի սպասեց նորան։ Վերջապէս կէս գիշերին Ադոլֆը եկաւ։ Նա մեծ կարեկցութիւն ցոյց տալով ասաւ, թէ կարող չէ ոչինչ բանով օգնել, որովհետև այդ օրը ահագին գումար տարուելուց յետոյ հազիւ միայն մի քանի փունտ ստեռլինգ էր մնացել նորա գրպանում։ Իսկ նորա, կամ աւելի ճիշտ, նորա կնոջ մայր գումարի մասին խօսք անգամ չէր կարող լինել, որովհետև կինը առանց այդ էլ շատ անբաւական էր իւր մարդուց շռայլ վատնողութեան համար։ Այսպիսով Ադոլֆը իւր բոլոր ճարտարութիւնը գործ դնելով կարեկցութիւն յայտնելու նախկին աշակերտին, այնուամենայնիւ ոչինչ փող չը տուաւ նորան։ Ռօբէրտը կէս գիշերին յուսահատուած գնաց նորանից։ Նա սկսաւ անգիտակցաբար վազել փողոցներում։ Ո՞ւր գնար. ի՞նչ անէր. վերադառնա՞ր քեռու տուն, որ միւս օրը խայտառակ կերպով արտաք-

ռուէր այնտեղից։ Ո՛չ, աւելի լաւ էր որ էլ ամենևին չը գնար այնտեղ. պէտք էր մի տեղ թաքչել վաշխառուի երեսից։

—Եթէ փախչեմ, այն ժամանակ ինչ կամենայ թող անի։ Գոնէ ես չեմ տեսնի։ Գրպանումս ունեցած փողով կարող եմ փախչել Ամերիկա և այնտեղ հարստութիւն ձեռք բերել—շատերը այդպէս են անում։ Բայց մա՛յրս։ Օ՛հ, խեղճ մայրս, երբ մեր խաղաղ երկրում երջանիկ ապրում էինք, ո՞վ էր մտածում, թէ երբ և իցէ այս օրը պէտք է քաշէինք։

Այդ միջոցին նա անցնում էր մի նեղ ու մութ փողոցում, ուր բոլոր խանութները արդէն փակ էին։ Նորա ոտին ինչ որ դէմ ընկաւ։ Թեքուեցաւ և վեր առաւ։

—Քսակ է, ասաւ նա ինքն իրան և սիրտը սկսաւ թունդ բաբախել—ինքն էլ չը գիտէր թէ ինչու։

Ձեռքում պինդ սղմելով քսակը, լոյս էր որոնում, որ կարողանար տեսնել, թէ մէջը ինչ կայ։ Վերջապէս փողոցի ծայրին Ռօբէրտը տեսաւ մի լուսաւորուած պատուհան և վազեց այնտեղ։ Դա մի փոքրիկ սրճանոց էր, մէջը դատարկ։ Խանութի առաջ նստած կինը համարեա թէ քնած էր, իսկ ծառան դանդաղ կերպով աթոռներն էր կարգաւորում։ Ռօբէրտը ներս մտաւ և սուրճ ու երեկոյեան լրագիր խնդրեց։ Երբ մօտ բերին, գլուխը կարդալուն տուաւ, որ ոչ ոք ուշադրութիւն չը դարձնէ իր վերայ, թէպէտ ծառայի աչքին էլ չէկաւ, և բացարաւ քսակը։ Տեսաւ որ բոլորովին լիքն է թղթերով. Ռօբէրտը մէկ նայելով ճանաչեց որ անգլիական բանկային դրամատոմսեր էին դոքա։ Դողդողալով հանեց բոլորը և նայեց քսակի բոլոր բաժինները։

Ո՛չ մի նամակ, ո՛չ մի այցատոմս և առհասարակ ոչ մի կտոր թուղթ չը կար, որ կարողանար լոյս

գցել այն չորս հազար ֆունտ ստէրլինգի տիրոջ անուան վերայ, որ նա վեր առաւ Լօնդօնի քարայատակից։

Չորս հազար ֆունտ. պ. Պօստօբետը այսչափ գումարը ստանալով, անշուշտ, կը համաձայնէր մնացածի համար սպասել և պատռել այն ատելի պարտամուրհակը։ Ռօբէրտը, կարծես տենդի մէջ էր, նորից դողդոջուն մատներով փողը դարսեց քսակի մէջ և գըրպանը դնելով՝ առջևի բոլոր կօճակները կապեց։ Սրճի փողը վճարելուց յետոյ՝ նա դուրս գնաց փողոց։ Նորա մտածմունքը խառնշփոթ էր և ինքն էլ չէր իմանում թէ ինչ է անում. ամենևին չէր մտածում ոչ մի բանի վերայ։ Երբեմն զգում էր ջերմութիւն, երբեմն ցուրտ, երբեմն մի տեսակ վայրենի ուրախութիւն, կարծես թէ ազատւում էր մի ծանր վտանգից։ Նա գնում էր դէպի տուն, ճանապարհը հազիւ թէ կարողանում էր որոշել, իսկ ոչ ոք չը կար, որ ցոյց տար նորան. ամէն տուն լռած էր ու փակած։

Վերջապէս իմացաւ թէ ինչ տեղ է ինքը. շատ հեռու էր քեռու տանից, այն էլ քաղաքի մի այնպիսի թաղում, որ կեանքումը չէր էլ տեսած։

Ուրեմն դեռ շատ ճանապարհ ունէր գնալու, իսկ գիշերը մօտենում էր իր վախճանին. արևելքումը երկինքը կարմրին էր տալիս. Ռօբէրտը դեռ երբէք դուրսը չէր եղած այդպիսի ժամանակ։

Շատ չ՛անցաւ, ամառնային առաւօտեան թարմ օդը հնչեց նորա երեսին. նա սկսաւ խելքը գլուխը հաւաքել. տեսաւ որ խիստ յոգնած է։ Ժամանակ առ ժամանակ ձեռքով շօշափում էր քսակը, վախենալով թէ մի գուցէ կորցնէ, ինչպէս որ կորցրել էր նորա տէրը։ Սակայն ո՛րպիսի մտածման մէջ պէտք է լինէր վերջինս, Ռօբէրտը չէր մտածում։

Այլ շարունակ գնում էր: Յունիսեան հիանալի առաւօտը մի առանձին կենդանութիւն ունէր. մօտակայ եկեղեցու գմբէթը պայծառ փայլում էր գորշ—կապտագոյն երկնակամարի տակը: Ռօբէրտը սկսաւ արդէն մտածել քսակի տիրոջ վերայ:

—„Խեղճը, ինչպէս պէտք է անցկացնէր այս գիշեր: Բայց քսակում չորս հազար ֆունտ պահողը հարուստ մարդ պէտք է լինի: Սակայն քսակում ինչի՞ էր պահել այսքան փողը: Անպատճառ երեկուայ ձիարշաւին տարած պէտք է լինի: Բայց դորանից, անկարելի է տիրոջը գտնել, որովհետև այստեղ հասցէն չը կայ. ամէն ոք, ուրեմն, ով որ էլ գտնէր, իրաւունք ունէր պահել իր համար: Ո՜ւֆ, հիանալի բան է: Միանգամից որ ազատուիմ Պօստօրնոի ճանկերից, երդւում եմ, որ չափաւոր կ՚ապրեմ և երբէք պարտք չեմ անի:

Մէկ, երկու, երեք—չորս ժամը զարկեց եկեղեցու ժամացոյցը և այդ ձայնը ահեղ դատաստանի օրուայ կոչումից աւելի զարհուրելի թուաց Ռօբէրտին:

„Հանգիստ քնեցէք, ովքեր մաքուր խիղճ ունէք", թւում էր, թէ ասում է զանգը: „Ուրախ ուրախ վերկացէք, ազնիւ աշխատաւորնե՛ր և խնդրեցէք Աստուծոյ օրհնութիւնը ձեր գործերի վերայ: Գործի կացէք խաղաղութեամբ, բայց վստահ, նաև դուք—մեղաւորներդ, որոնք զղջմամբ կանգնել էք Ճշմարիտ Ճանապարհի վերայ. աշխատեցէք բարի գործերով քաւել այն չարութիւնը, որ արել էք. վախեցէք դուք, մեղքի շաւղով մանեկողներ, որովհետև գիշերները կը կտրուի ձեր քունը և խղճի խայթը ուղեկից կը լինի ձեզ ձեր բոլոր կեանքում: Ձեզ համար—չը կայ աշխարհ ու երջանկութիւն,—սոքա էլ երբէք գործ չունէին ձեզ հետ:

Այս ամէնը խղճի ձայնը ասաւ Ռօբէրտին:

Յանկարծ նորա գործած յանցանքները իրանց բոլոր մեծութեամբ խստութեամբ բացուեցան նորա առաջ և թւում էր, թէ բոլոր զանգերը զարկում են և սպառնում նորան ու մեղադրում. մինչև անգամ մի տեղից ականջին հասաւ „գող" բառը և երկիւղից սկսաւ վազել, ինքն էլ չիմանալով թէ ուր:

Լոնդօնը արթնացաւ. Ռօբէրտին սկսան պատահել այգեպաններ, որոնք շտապում էին դէպի Կովէնտ—Գարդէն, կաթնավաճառ կանայք, որոնք գիւղից էին գալիս. ճնճղուկները ճռճռում էին. ձիաները խրխնջում. շները վազվզում էին ուրախ ուրախ հաչելով մէկ մէկու: Անցորդները միմեանց հանդիպելիս՝ „բարի լոյս" էին ասում միմեանց:—Ո՜րքան երջանիկ են նոքա ամէնքը, մտածում էր Ռօբէրտը: Անցուդարձ անողները զարմանալով էին նայում նորան. երբէք քաղաքի այդ մասում դեռ այդպիսի մի մարդ չէին տեսած առաւօտեան հինգ ժամին: Իսկ նա հէնց գնում էր ու գնում:

Վերջապէս հասաւ պ. Չեստէրտօնի տուն: Բայց զանգը չը քաշեց: Մտաբերեց քեռու հետևեալ խօսքերը. „եթէ երբ և իցէ քո անունը տեսնեմ որ և է դատաստանական թղթի վերայ, իմ ձեռքովս կը խեղդեմ քեզ:"

—„Գող" ասաւ նա ինքն իրան—„այո, ես գող եմ: Ե՞ս եմ գողը, ե՛ս: Բայց մի՞թէ կարելի բան է: Սակայն ի՞նչ պէտք է անեմ: Մի քանի ժամից յետոյ զարհուրելի Պօստօրնոը այստեղ կը լինի և եթէ վճարեմ նորա պարտքը այն քսակի փողերով.... բայց, չէ՛, չեմ կարող":

Նա շուռ եկաւ ու գնաց, դէպի որ կողմ քաշում էին իր ոտները: „Տա՛ր, տար տո՛ւր ոստիկանութեան" շարունակ ձայն էր տալիս նորան խիղճը:

„Այո՛, կը տամ", մտածում էր նա, „բայց եթէ այդպէս վարուեմ—կորած եմ։ Ի՞նչպէս ուզում եմ, որ ամենեւին չը գտնէի։ Ա՛խ, ո՞վ պէտք է օգնէ ինձ։"

Եւ աչքերը բարձրացրեց դէպի երկինքը, կարծես թէ օգնութիւն էր խնդրում այնտեղից, երբ նորա աչքին ընկաւ պատի վերայ գրուած փողոցի անունը։ Յանկարծ, կարծես թէ մի բան միտն ընկաւ, բոլոր ուժով սկսաւ փախչել դէպի փողոցի միւս ծայրը, մեծ զարմանքի մէջ թողնելով վաճառականներին, որոնք նոր էին բաց անում իրանց խանութները։

Այդ վայրկենին մի լուսամուտ բաց եղաւ—դա Ալֆրէդի առանձնասենեակի լուսամուտն էր։ Դեղաբուեսը շնչում էր առաւօտեան թարմ օդ և երգում էր մի սիրուն երգ։ Նա զարմանալով տեսաւ, թէ ինչպէս էր վազում Ռօբէրտը սալայատակի վերայ, բայց մինչև որ մի բան կը մտածէր, ազգականը արդէն նորա առանձնասենեակումն էր։

—Վեր առ, ա՛ռ քեզ մօտ լինի, աղաղակեց Ռօբէրտը շնչասպառ ձայնով, քսակը դնելով Ալֆրէդի ձեռքը։—Ազատիր ինձ խայտառակութիւնից։ Չը գիտեմ, թէ ինչ է անցնում իմ գլխով։ Տէր Աստուած, ես կը ցնորուեմ։

ԳԼՈՒԽ ԼԵ.

ՆԱՄԱԿ ՀՆԴԿԱՍՏԱՆԻՑ։

Մինչև որ պ. Չէստէրտօնը հիւանդ պառկած էր անկողնում, տխուր տրտում մտածելով Ռօբէրտի վարքի և իւր անձնական անյաջողութեան մասին, մի նոր աղբիւր տանջանքի, դոցանից շատ աւելի զօրեղ, բերում էր նորան նամակաբերի թղթարկղը։

Այս աղբիւրն էր Հնդկաստանից մի նամակ, որ արծաթէ սկուտեղ վերայ դրած առաւօտեան ութը ժամին մօտ տուին նորան։ Սէսիլեան երկար անքնութիւնից յոգնած, քնած էր բազկաթոռի վերայ։

—Այդ ի՞նչ է, հարցրեց հիւանդը թոյլ ձայնով։

—Հնդկաստանից մի նամակ, ասաւ Մագլըլագը և տուաւ իրան։

—Չեմ կարող բանել, ասաւ ծերունին, 'ի զուր աշխատելուց յետոյ,—վարագոյրը վեր քաշիր, ծրարը բաց արա և այնպէս բանէ նամակը, որ կարողանամ կարդալ։

Մագլըլագը հնազանդեցաւ. բայց պ. Չէստէրտօնը լոկ խառնի խուռն տողեր տեսաւ թղթի վերայ։

—Աչքիս լոյսն էլ է պակասել, յուսահատուած աղաղակեց նա—Սէսիլեա՛, խնդրեմ մէկ այս նամակը կարդա՛։

Սէսիլեան, յանկարծ զարթնելով քնած տեղից, նամակը վեր առաւ և առանց հասկանալու թէ ինչ է անում, կարդաց հետեւեալը.

„Կալկաթա։

„Տէր, մի տխուր և ծանր լուր պէտք է հաղորդեմ ձեզ. մի մեծ տարաբաղդութիւն պատահեցաւ—ամբողջ գործարանդ այրուեցաւ։ Մեր գործ դրած բոլոր միջոցները, որպէս զի կարողանանք կրակը հանգցնել, ոչինչ հետեւանք չունեցան և բոլոր շինութիւնները կրակին զոհ գնացին։ Պ. Դաշը (սա պ. Չէստէրտօնի ընկերն էր) առանց ուշադրութիւն դարձնելու մեր խորհրդին, որոշեց փորձ փորձել մի քանի թղթեր ազատելու կրակից. նորա փորձը, ծանր է ասելը, կեանքի գին ունեցաւ նորա համար։ Ամէն բան կորցրինք, բացի մեքենաներից և բռդի մի մասից, որ թէպէտ վնասուած է, բայց կարելի է պէտք ածել։ Սակայն և այնպէս ոչ ոք սիրտ չէ ա–

նում գործը սկսել նորից, որովհետև դորա համար մեծ փող է հարկաւոր: Կասկած չը կայ, որ միմիայն ձեր ներկայութիւնը կարող է ազատել այն հաստատութիւնը սնանկութիւնից: Մեր մասնատէրերը և անթիւ գործաւորները համոզուած են, որ դուք կը վճարէք ինչ որ նրանց հասնելու է: Այս տարաբաղդութիւնը պատահեցաւ ամսի վերջին և նոցանից շատերը նրանց բոլոր փողերը դրած էին գանձարանի մէջ. ինչպէս որ երեւում է առաջարկուած վկայաթղթերից:

Անհամբերութեամբ սպասում եմ ձեր գալուն և համարձակւում եմ հաւատացնել ձեզ, թէ ամէն բան արած է, ինչ որ կախուած էր ինձանից:

մնամ—և այլն և այլն:“

Սէսիլիան սկզբում ոչինչ չէր հասկանում կարդացածից, բայց երբ իմացաւ նորա բովանդակութիւնը, իսկոյն ուզեցաւ դադարեցնել կարդալը, բայց պ. Չէստէրտօնի յանկարծակի հրամանը ստիպեց շարունակել: Իսկ երբ վերջացրեց՝ յուսահատուած գլուխը քաշ արաւ, երբ յանկարծ լսեց Մագիդխադի ձայնը.

—Տէրս ուշաթափուած է, աղաղակեց նա զարհուրած:

Եւ իրաւ ուշաթափուած էր. բայց շուտով ծերունին ուշքի եկաւ, որպէս զի կատարելապէս կարողանայ արտայայտել իւր բարկութիւնն ու յուսահատութիւնը:

—Ես մի թշուառ մարդ եմ: Դեռ ժառանգ էլ էր հարկաւոր ինձ, ժառանգ: Իմ ժառանգը ծաղրական յիմարի մէկն է. իմ հարստութիւնը ոչնչացած է:

Նա մի քանի րոպէ լռեց, կարծես թէ նուաղած էր, այնուհետև շարունակեց.

—Սնանկ. նամակի մէջ յիշուած է նաև սնանկութիւնը: Քանդուեցայ, անպատուեցայ, խաբուեցայ, սա արդէն չափազանց շատ է, չափազանց: Մագիդխադ,

իսկոյն մենք պէտք է ճանապարհ ընկնենք դէպի Հնդկաստան. օգնիր վերկենամ:

Ի՞նչ վերկենար. խեղճը շարժուել էլ չը կարողացաւ. կաթուածը կարծես շղթայակապ արաւ նորա բոլոր անդամները: Տեսնելով որ ուժից ընկած է, լռեց և աչքերը փակեց. արտասուքը հոսում էր նորա խորշոմած այտերի վերայից:

—Տէրս լաց է լինում, աղաղակեց Մագիդխադը, հազիւ զսպելով արտասուքը:

Ծերունին աչքերը բաց արաւ:

—Դու, գոնէ, սիրում ես ինձ, իմ հաւատարիմ Մագիդխադ: Ես քանդուեցայ. ամէն բան վերջացաւ. բայց ես ինձանից յետոյ անուանս անպատուած չեմ թողնի. ամէն պարտք կը վճարուի: Սէսիլիա, ուղարկիր պ. Պօունսէբբիին կանչելու, նա իմ գործերս կարգի կը դնէ: Այս տունը կը ծախեմ, կը հաւաքեմ մնացած փողերս և ամէն պարտք կը տամ թէ այստեղ և թէ արտասահման. ես ուզում եմ, որ մեռնելուցս առաջ վերջացնեմ ամէն բան:

—Ա՛խ, քեռի ջան, քեռի, տանջուելով աղաղակեց Սէսիլիան,—ներիր Ռօբէրտին, ներիր մեզ երկուսիս:

—Ռօբէրտի՞ն. բայց, այո, նորան կարող եմ ներել, բաղտը առանց այդ էլ պատժեց նորան: Գնա, կանչիր, ուզում եմ նորան ասել, որ նա է ժառանգս իմ մահից յետ: Ես ուզում եմ, որ նա իմանայ, թէ ոչինչ չէ մնում նորան իմ մահից յետոյ—ոչինչ: Գնա:

Սէսիլիան շտապեց Ռօբէրտի սենեակը. ամբողջ քսանևչորս ժամ չէր տեսած նորան, որովհետև չէր կարողացել մենակ թողնել քեռուն. բոլոր սենեակները մանեկաւ,—նա խոստացել էր թէ տանից դուրս չի գնայ, մինչև որ մայրը ներողութիւն չի ստանայ նորա համար,—բայց ոչ մի տեղ չը գտաւ:

—Ո՞ւր է Ռօբէրտը, հարցրեց նորա ծառային:

—Չը գիտեմ, տիկի՛ն. դուրս գնաց: Անցեալ գիշեր տասնեւմի ժամին գնաց. այնուհետեւ էլ չեմ տեսել:

—Ի՞նչ, տասնեւմէկ ժամին գնա՛ց: Տասնեւմի ժամին մո՞ւր տեսար նորան: Ինչո՞ւ ինձ իմաց չը տուիր, երբ այսօր առաւօտ տանից դուրս էր գնում:

—Պ. Ռօբէրտը, տիկի՛ն, ինչ որ երեկ տասնեւմէկ ժամին դուրս գնաց, էլ տուն չի վերադարձել:

Սէսիլիան շփոթուած վերադարձաւ պ. Չէստէրտօնի մօտ, որից չը կարողացաւ ծածկել իւր անհանգստութիւնը: Ռօբէրտի անյայտանալու լուրը զարթեցրեց ծերունու մէջ համակրութիւն դէպի իւր ժառանգը: Նա սկսաւ մեղադրել իրան աւելորդ խստութիւն գործ դնելու համար. գուցէ թշուառ երիտասարդը փախած լինի ներողութիւն ստանալուց յոյսը կտրելով, մտածում էր նա. գուցէ կողոպտել են նորան, սպանել և գետը գցել: Երեւակայութիւնը սկսաւ պատկերացնել ծերունու առաջ այն ամէն թշուառութիւնները, որոնք կարող էին պատահել Ռօբէրտին, և դա աւելի մեծացրեց տենդի նշանները:

Այս բոլոր կարծիքները, որ արտայայտում էր թոյլ, ընկճուած ձայնով, կտրտեցին Սէսիլիայի առանց այդ էլ հիւանդ սիրտը, որ այժմ աւելի մեռածի նման էր, քան թէ կենդանու: Այդ միջոցին ծառան յայտնեց, թէ մի կին է սպասում:

—Ոչ ոքին տեսնել չեմ կարող, ուզում էր ասել նա, բայց, պատկերը տեսնելով, յանկարծ աղաղակեց.—Կլարան է,—և շտապեց ընդունելու հիւրին:

—Մեր տա՛նն է, ասաւ Կլարան, գրկաբաց գնալով նորա առաջ:

Սէսիլիան հեկեկալով գրկեց իւր բարեկամուհուն.

նորա խղճուկ, ճմլուած սիրտը նորից կենդանութիւն ստացաւ և մի անգամ դարձեալ ազատ շունչ քաշեց, կարծես մէկը նորա նախկին խաղաղ կեանքից մի կաթիլ լցրեց նորա հոգու մէջ:

—Արի ինձ հետ, արի, ասաւ նորան, քաշելով Կլարային դէպի պ. Չէստէրտօնի անկողինը:

—Բեռլի, ասաւ նա, Կլարան այստեղ է. նա գտել է Ռօբէրտին:

—Կլարա՛, շշնչաց հիւանդը, իմ անգին Կլարա. իսկ Ալֆրէդն ուր է:

—Ալֆրէդն իսկոյն կը գայ, հօրեղբայր, վրայ բերաւ տ. Մօլլօյն,—եթէ կը կամենաք—Ռօբէրտին էլ հետը կը բերէ:

—Գնա՛ և շուտ բեր նորան. սիրելիս:

—Մագեդլադը կերթայ, ասաւ հնդիկը և շտապով դուրս գնաց սենեկից:

Երբ նա երկու երիտասարդների հետ յետ դարձաւ, Կլարան կանգնեց հիւանդի անկողնի մօտ և պատմեց նորան Ռօբէրտի կրած տանջանքները նախընթաց քառասնեչորս ժամուայ մէջ: Նա ամէն կերպ աշխատում էր ներողութիւն ստանալ երիտասարդի համար, բոլոր մեղը ձգելով թէ խորամանկ Պօստօբլէի վերայ, որ այնպէս խաբել էր նորան և թէ Ադոլֆի վերայ, որ այդպիսի վատ ճանապարհի վերայ էր կանգնացրել: Պատմեց նաև Ռօբէրտի կրած բոլոր մտատանջութիւնը, քանի որ առանց գլխացաւութեան կարող էր նա պարտքերից ազատուել, անպատիժ սեպհականելով ուրիշի փողերը և նորա այն մեծ արժանաւորութիւնը, որ թէպէտև հանգիստ դրութեան մէջ չէր, բայց և այնպէս կարողացաւ յաղթել այդ փորձութեանը:

Ալֆրէդը սկզբում սառը ընդունելութիւն ցոյց տուաւ, շարունակեց նա, որովհետև չը գիտէր, թէ ինչ

էր պատահել խեղճին և չէր իմանում, թէ ինչու՞ համար էր Ռօբէրտը եկել իւր մօտ, մինչդեռ երբէք բարեկամաբար չէր վարուած իւր հետ: Բայց երբ իւր եղբայրակիցը պատմեց ամէն բան և յայտնեց կատարեալ զղջում, այն ժամանակ Ալֆրէդը սկսաւ մխիթարել նորան և խորհուրդ հարցրեց այդ մասին ինձանից: Ես մտածեցի և յանձն առաւ փորձ փորձել հաշտեցնելու ձեզ հետ այս զղջացող մոլորուած որդուն: Կարծեմ ներում էք, չէ՞: Ես երաշխաւոր եմ լինում, որ սա կուղղուի:

—Դու էլ պէտք է գիտենաս, թէ ինչ ես անում, Կլարա—դու էլ, որ այդպիսի պատուական որդի մեծացրիր, որի վերայ ամէնքը զարմանում են, որին ամէնքը յարգում են: Եթէ դա լինէր իմ ժառանգը, ես հանգիստ կը մեռնէի. դա կարող է աշխատել. դա աղքատութիւնից չէ վախենում: Բայց այն թշուառ երիտասարդը,—ի՞նչ կը լինի նորա հալը: Դու դեռ ամէն բան չը գիտես. իմ գործարանը այրուեցաւ, իմ ընկերը փչացաւ: Ես—միայն ես—պէտք է վիզս առնեմ բոլոր վնասը, այնպէս որ իմ մահից յետոյ էլ ոչինչ չէ մնում:

—Նա կուղղուի, նա կաշխատէ, հօրեղբայրս. Ալֆրէդը կօգնէ նորան, հաւատացնում եմ ձեզ. մենք 'ի միասին ուղիղ ճանապարհի վերայ կը կանգնացնենք նորան: Ո՞ւր է նա:

Կլարան նշանով հասկացրեց և Ռօբէրտը, որ կանգնած էր դռան ետև, մօտեցաւ անկողնին, ծունկ չոգեց և ձեռքերով ծածկեց երեսը: Քեռին մի քանի րոպէ լուռ ու մունջ նայեց նորան:

—Ռօբէրտ, ասաւ նա վերջապէս,—դու չանպատուեցիր իմ անունս. շատ լաւ. իսկ մնացածը ներում եմ քեզ:

Եւ երբ Ռօբէրտը սրտի զղջմամբ և արտասուալից

աչքերով սկսաւ համբոյրներ դրոշմել քեռու անզօր ձեռքերին, սա զարմացաւ և ասաւ.

—Ի՞նչ, դու էլ զգացմունք ես ունեցել:

Զգացմունք: Աստղ. պ. Չէստէրտօն. քո զարմանքը դատապարտութիւն է քեզ համար: Եթէ դու հայրութիւն անէիր այդ երիտասարդին, առաւել հոգս կը տանէիր դորա մասին. եթէ փոքր ինչ ուրիշ աչքով նայէիր և չը համարէիր լոկ անուանդ և հարստութեանդ ժառանգը, աւելի յաճախ դորա սրտի հետ կը խօսէիր, քան թէ ականջների և այն ժամանակ, հաւատացնում եմ քեզ, նորա սիրտը—որ նոյնպէս փափուկ է, ինչպէս նաև ամէն մատաղ սիրտ—լոկ մի անգամ չէր բացուի քո առաջ, ինչպէս որ այսօր անակնկալ կերպով բացուեցաւ քեզ համար:

Ալֆրէդը միացաւ իւր ազգակցի հետ: Պ. Չէստէրտօնը երկար ժամանակ ախորժելով ծխում էր նոյա. այնուհետև աչքը դարձրեց դէպի Կլարան ու Սէսիլիան:

—Ես երջանիկ եմ, ասաւ նա:—Քանդուած, հիւանդ եմ և մեռնում,—բայց ամենայնիւ այժմ երջանիկ եմ:

—Կարողջանաս տէր, պէտք է ասրես, ասաւ Մագլդխադը, մօտենալով անկողնին, որպէս թէ դորանով կամենում էր ցոյց տալ, թէ ինքն էլ նոյն գերդաստանի անդամ է համարում իրան:

—Իմ բարեսիրտ Մագլդիւդ, ձայն տուաւ պ. Չէստէրտօնը:—Կլարա. երբ ես մեռնեմ, չը բաժանուէք տրանից: Կլարա, Ալֆրէդ, երանի իմանայիք թէ ինչպէս էի ցանկանում, որ դուք ինձ մօտ լինէիք, երբեմն իմ որդիք,—բայց հպարտութիւնը արգելում էր ինձ առաջին քայլն անել. վախենում էի, որ ինձ չը բամբասեն, ուստի և օտարի պէս էի վարւում ձեզ հետ:

Այդ րոպէին ներս մտաւ Ջէմսը—Ռօբէրտի ծառան:

—Ներքեւը մի մարդ հարցնում է ձեզ, տէր, այն մարդը, որ երեկ եկաւ պ. Ռօբէրտի մօտ:

—Եթէ պ. Պօստօբլոն է, պատասխանեց պ. Չէստէրտոնը,—ասա, թէ նա գործ կունենայ իմ նոտարի հետ, որի ետեւից իսկոյն մարդ եմ ուղարկում:

Պատուէրը ճշտութեամբ տեղ հասաւ և Ջէմսը նախասենեակում պատմում էր, թէ երբէք այնպէս շփոթուած մարդ չէ տեսել, ինչպէս այն փոքրիկ ծերունին պ. Չէստէրտոնի պատասխանը լսելուց յետոյ:

—Է՛հ, քսակն ուր է, հարցրեց պ. Չէստէրտոնը Ռօբէրտին,—պէտք է ոստիկանութեան յանձնել:

—Արդէն յանձնուած է, հօրեղբայր, վրայ բերաւ Ալֆրէդը,—եւ յայտարարութիւնը այդ կորստի համար այսօր առաւօտ տարածուեցաւ ամէն կողմ, այնպէս որ, երբ ես քսակը տարայ ոստիկանարան, ոստիկանը շատ ուրախացաւ և ասաւ, թէ փողի տէրը իսկոյն իւր մօտ է եղած: Դա մի վաճառական է, որ իւր բոլոր կարողութիւնը ծախել է և այդ փողերով մտադիր է եղել արտասահման տեղափոխուել և առեւտուրով պարապել: Իւր բոլոր կարողութիւնը քսակի մէջի փողն է եղած, այնպէս որ այդ կորցնելուց յետոյ ինքը և իւր ամբողջ գերդաստանը հացի աղքատ պէտք է մնային: Յայտարարութիւնը տալու ժամանակը խեղճը կսկծից հազիւ է կարողացել ձայն հանել: Այժմ նորան հեռագրեցին և անշուշտ արդէն ապահոված կը լինի:

ԳԼՈՒԽ ԼԶ.

ԶԱՆԱԶԱՆ ԳՈՐԾԵՐ.

Թէպէտև պ. Պօւնսէրբին շատ հարուստ չէր, բայց դորա փոխարէն անշուշտ բոլոր նոտարներից խե-

լացի և ճարտար էր, այնպէս որ պ. Չէստէրտոնի գործը ուրիշի ձեռք չէր կարող անցնել: Նա եկաւ հիւանդի սենեակը, որ խորհրդակցէ մի քանի պայմանների մասին: Չէստէրտոնը նշանաւոր յիշողութիւն ունէր—հիւանդութիւնը չէր ներգործել ուղեղի վերայ. Նա իսկութեամբ բացատրեց բոլոր փաստերը և հաղորդեց անհրաժեշտ տեղեկութիւնները: Երեւեցաւ, որ միքանի թղթեր վաճառելուց գոյացած փողը չէ թէ միայն բաւական էր Ռօբէրտի և Կալկաթայում դրուած պարտքերը վճարելու, այլ մինչև անգամ աւելանում էր նա և մի գումար, որ անհրաժեշտ էր կալուածական գործը նորոգելու համար: Բայց այստեղ մի դժուարութիւն կար. հարկաւոր էր, որ պ. Չէստէրտոնը պահպանէր իւր հաստատակամութիւնը և ինքը սկսէր ղեկավարել նոր գործերը: Բայց նորա ոյժը շատ դանդաղ էր յետ գալիս. ձախ ձեռքը բոլորովին թուլացած էր, աջն էլ դեռ նոյնպէս թոյլ էր, այնպէս որ մինչև անգամ վախենում էր, թէ էլ երբէք չի կարող առանց գաւազանների կամ Մագդղխադի օգնութեան մանգալ: Անշուշտ հարկաւոր էր ծախել մնացած մեքենաներն էլ փողի կարօտութեան պատճառով և թողնել միանգամայն գործարանը նորոգելու մտադրութիւնը: Եւ այսպէս երեկուայ միլլիոնատիրօջ մնացել էր լոկ մի գումար, որ բերում էր տարին մօտ հինգ հարիւր փունտ ստէրլինգ,—և սոյն այս գումարով պէտք է ապրէին ինքը, իւր ազգակցուհին և Ռօբէրտը:

—Ա՜խ, գոնէ Ռօբէրտի վերայ կարողանայի յոյս դնել, հառաչեց ծերունին:

Ալֆրէդը առ ժամանակ թողեց իւր նկարչութիւնը: Ամէն անգամ, երբ հօրեղբօր սենեակում չէր լինում, անց էր կացնում պ. Պօւնսէրբիի մօտ, որին օգնում էր Չէստէրտոնի վկայաթղթերը կարգի դնելու և

կամ Ռօբէրտի հետ դուրս էր գնում չը գիտեմ որտեղ, ուր մնում էր բաւական ժամանակ և որտեղից վերադառնում էին յոգնած, թոլոտած և շորերը սև բծերով կեղտոտած:

Մի առաւօտ Ալֆրէդը կանչեց մօրը իւր սենեակը և ասաւ:

—Նստիր, մայրիկ, և պատրաստուիր, որ խորհուրդ պէտք է հարցնեմ քեզանից: Քո գլուխը պէտք է ինձ:

—Դու էլ ինչ շուտ շուտ ես օգուտ քաղում իմ փթած գլխից, պատասխանեց նա,—հը՛, էլի պատկերների մասին կը լինի:

—Ո՛չ, ես նկարում եմ միայն մի փոքրիկ պատկեր, որ հետո կը վերցնեմ, որովհետև կարճ ժամանակով պէտք է բաժանուեմ քեզանից:

—Ինձ ուզում ես թողնել, աղաղակեց Կլարան: Որդին ծունկ չոգեց մօր առաջ և նորա ձեռքերը ծածկեց իրանների մէջ:

—Հանգիստ կաց, մայրիկ, առանց քո համաձայնութեան չեմ գնայ. բայց հաւատացած եմ, որ դու թոյլ կը տաս: Գիտես բանն ինչումն է. մեր հօրեղբայրը Հնդկաստան գնալու կարողութիւն չունի. ես ուզում եմ, որ նորա փոխարէն գնամ և աշխատեմ ազատել նորա հարստութեան մի մասը:

—Դո՞ւ: Բայց չէ՞ որ դու ոչինչ հասկացողութիւն չունիս այդ գործերի մասին:

—Է՛հ, 'ի զուր ես այդպէս մտածում: Երևակայիր, վերջին երկու ամիս շարունակ աշխատեցի այդ գործի վերայ Ռօբէրտի հետ միասին, որ հոգւով մարմնով անձնատուր եղաւ գործին: Գործնականապէս նա աւելի յաջողեցաւ, բայց դորա փոխարէն ես աւելի լաւ ծանօթ եմ այդ գործի առևտրական և իրաւաբանական մասերին: Հանաք բան չէր իմ երեք տարուայ ծառայութիւնը պ. Պօունսէբրիի գրասենեկում: Այն պարոնը, որ հօրեղբօրը յայտնել է պատահած թշուառութիւնը, ինչպէս ասում են, մի շատ ազնիւ ու գիտուն մարդ է. մեր վարժութիւնը նա կը լրացնէ,—բայց ինքը մենակ ոչինչ չի կարող անել, որովհետև անուն, հեղինակութիւն չունի: Այնտեղ հարկաւոր է Չէստէրտօնը, քեռին լինի թէ քեռորդին այդ միևնոյն է: Այսպէս ուրեմն, եթէ քո կողմից ոչինչ արգելք չը կայ, առաջին իսկ գնացող շոգենաւով կերթամ: Ես կօգնեմ Ռօբէրտին Կալկաթայում, և երբ գործը կը ստանայ իւր հին ընթացքը, կը վերադառնամ այստեղ: Է՛, ուրեմն համաձայնում ես:

Նա աշխատում էր պատասխանը իմանալ մօր դէմքից. սա ընդմիջմամբ աչքերը բարձրացրեց Լաուրայի պատկերին, որ կախ էր արած պատից: Ալֆրէդը հասկացաւ նորա միտքը:

—Հասկանում եմ, ասաւ նա,—միտքդ այն է, թէ ինչու ես ցանկութիւն չեմ յայտնում նորա հետ ամուսնանալու: Բայց ինչպէս կարող եմ իմանալ, թէ ինչ կայ նորա սրտում: Ինչպէս ինձ հետ էր պարում, այնպէս էլ Ռօբէրտի հետ, դեռ գուցէ աւելի յօժար սրտով նորա հետ. և եթէ նորան գերադասում է ինձանից, այդ դէպքում ինձ մի նոր տանջողական պատճառ էլ է ներկայանում, որ օգնեմ նորա բարօրութեան: Ես երբէք այնպէս չեմ հարստանալ, որ կարողանամ պ. Պօունսէբրիի աղջկայ հետ պսակուել:

Կլարան պինդ գրկեց իւր որդուն:

—Ես համաձայն եմ, ասաւ նա,—դու կատարեալ մարդ ես: Դու աշխատելու ցանկութիւն ունիս և չես վախենում արգելքներից. ուրիշների բարօրութեան համար դու մոռանում ես քո երջանկութիւնը: Գնա,

հոգիս, գնա՛. տես այս օտարոտի աշխարհը նաև քեզ անծանօթ բնակիչներով. քո տաղանտի համար այդ էլ օգտակար է. Թող Աստուած օգնէ քեզ պատաելու այն հարստութեան մնացորդը, որ կարող էր քեզ պատկանել: Զարմանում ես, ինչ է: Այո՛, այժմ արդէն կարող եմ գաղտնիքը բանալ քեզ. Հօրեղբայրդ կամենում էր միայն մի ժառանգ ունենալ (այն միջոցին դու դեռ տասներկու տարեկան էիր) և առաջարկեց վիճակ ձգել քո և Ռօբէրտի մէջ:

—Եւ վիճակը չընկաւ ինձ, աղաղակեց Ալֆրէդը:— Ես մի նոյնպիսի մարդ եմ, ինչ էլ որ Ռօբէրտն է, մայրիկ և գուցէ հարստութիւնից փչանալով իմ վերջը աւելի վատ լինէր, քան նորանը: Ի՞նչ բարեբաղդութիւն է, որ ես մնացել եմ միայն քո սեպհական որդին:

—Վիճակով չը վճռուեցաւ, տղա՛ս. ես ինքս վճռեցի այդպէս: Վախեցայ, թէ հարստութիւնը չը փչացնէ քեզ. հօրդ խօսք էի տուել, որ ոչ ոքի ձեռին չեմ գցի քո կրթութիւնը,—և ահա այս պատճառով վիճակ չը հանեցի քեզ համար: Դորա համար քեզանից ներողութիւն չեմ խնդրում, որովհետև տեսնում եմ, որ սրտիդ խորքում արդարացնում ես ինձ և շնորհակալութիւն ես անում:

—Եւ դորա՛ համար ես աղքատութիւն և տաժանակիր աշխատանք ընտրել: Ուխտդ կատարելու համա՛ր ես ուրեմն զոհել առողջութիւնդ, և մինչև անգամ ամբողջ կեանքդ: Ա՛խ, մայրիկ, մայրիկ, քեզանից լաւ մայր աշխարհում չի լինի:

—Եթէ ես վարձատրութեան կարիք ունենայի, այսօր իսկ կարող էի լիապէս ստանալ, ասաւ Կլարան, չը կարողանալով արտասուքը խեղդել՝ որդու սիրալիր համբոյրներ ստանալու ժամանակ:—Դու էլ քո կողմից

յոյս ունեցիր, սիրելիս. նշանաւոր գեղարուեստ դառնիր և պարզ ու վստահ նայիր ապագայիդ:

Հետևեալ շաբաթ Ալֆրէդն ու Ռօբէրտը ուղևորուեցան դէպի Կալկաթա, տանելով իրանց հետ պ. Չէստէրտօնի ջերմաջերմ օրհնութիւնն ու ցանկութիւնը գործի յաջողութեան համար: Նախկին միլիօնատէր Չէստէրտօնի մեծ տունը արդէն ծախուեցաւ և էլ մեծ բնակարանի կարիք չունենալով (որովհետև առանց ուրիշի օգնութեան նա մինչև անգամ տեղից շարժուել չէր կարողանում) տեղաւորուեցաւ Սէսիլիայի և Մագդալինայի հետ մի փոքրիկ բնակարանում նոյն տան մէջ, ուր կենում էր Կլարան:

—Շատ ուրախ եմ, որ ձեր հօրեղբայրը տեղափոխուեցաւ այստեղ, ասաւ պ. Պասսմօրը Կլարային, երբ նա Սէսիլիային նոր տան կարգի գցելն օգնելուց յետոյ, գնաց նորա մօտ:—Այժմ դարձեալ կարող եմ ձեզ տեսնել. ապա թէ ոչ վերջին վեց շաբաթ գիշեր ցերեկ բոլորովին մենակ եմ անցկացրել, կարծես բռնուած էի բանտի մէջ և արդէն սկսում էի առաջուայ պէս մարդատեաց զգալ ինձ: Միթէ արդարութիւն է ձեր կողմից ինձպէս մէկ հին բարեկամին թողնել մի սրտնջող մարդու պատճառով, որ երբ աղքատացաւ, այն ժամանակ ճանաչեց ձեզ բարեկամ:

—Ես հարկաւոր էի նորան, ժպտոն երեսին պատասխանեց Կլարան,—և բացի դորանից, ազնիւ բարեկամս, դուք այնչափ սիրում էք զանազան գեղեցիկ ասացուածներ, որ անշուշտ կը յիշէք աւետարանի խօսքերը, թէ „երկնքում մէկ ապաշխարող մեղաւորի վերայ աւելի ուրախութիւն է լինում, քան իննսուն և ինն արդարների, որոց հարկաւոր չէ ապաշխարութիւն:“

Ծերունի Պասսմօրը շատ ծանր կերպարանք ընդունեց:

—Այո, ճշմարիտ էք ասում, ասաց նա,—վաղն և եթ կխնդրեմ ծանօթացրէք ինձ ձեր հօրեղբօր հետ և ես շատ շատ կերթամ և ժամանակ անցկացնել կը տամ նորան: Անպատճառ նա սիրով կը պատմէ իւր գլխի անցքերը և հաւատացէք, որ ապագայում այնքան գնացող եկող չի ունենայ: Մարդկային բնութեան մէջ շնորհակալութիւն ասած բանը չը կայ:

Sequitur fortunam ut semper, et odit damnatos.

Պ. Պասմօրը շատ խրատացի էր իւր ենթադրութեան մէջ. միայն նա էր, որ չէր ձանձրանում, պ. Չեստերտօնի հետ ժամանակն անցկացնելիս, և որովհետև կլոր չափ պարապ էր, ուստի, չնայելով որ ատում էր լրագիրները, այնուամենայնիւ ամէն օր օրական մօտ երկու ժամ անց էր կացնում ընթերցարանում, որ աւելի շատ նորութիւններ հաւաքէ: Եւ այդ բոլորը հաղորդելով հիւանդին, փոխաբերական ձև էր տալիս նոցա և այս բանը միջոց էր տալիս ամբողջ պատմութիւններ կազմել նոցանից: Իսկ երբ պ. Չեստերտօնը կարողացաւ ձախ ձեռքը գործածել, ծերունի Պասմօրը, որ իւր ամբողջ կեանքում այնպէս էր զգւում թղթախաղից, ինչպէս որ թուրքը խոզի մսից,—մի քանի տեսակ խաղեր սովորեց յատկապէս այն նպատակով, որ թեթևացնէ „այս տանջող ծերունու“ (ինչպէս փոքր ինչ առաջ անուանել էր ինքը պ. Չեստերտօնին) տանջանքը:

Բայց մի մարդ էլ կար, որ չէր թողնում այդ „կամակոր բաղտի զոհերին“, ինչպէս ասում էր պ. Կեմպբէլը,—դա Պօունտէրբի նոտարն էր: Կարելի է ներել նոցա, որոնք կը զարմանան այս բանիս վերայ, որովհետև վերջինս իրօք յամառ երկրպագու էր „ոսկէ հորթին“:

Բայց ամէն բանից առաջ նա հայր էր, իսկ Լաուրան սիրտը ոչ մի տեղ չէր գտնում, բացի այն փոքրիկ

րիկ փողոցից, ուր կենում էր Կլարան: Շատ անգամ գլխացաւ պատճառելով, հրաժարւում էր պարահանդէս գնալուց և հօրը քաշ էր տալիս ծերունի Չեստերտօնի բնակարանը, ուր, ինչպէս հաւատացնում էր նա, տ. Ափտլտօնի թէյն զարմանալի կերպով օգնում էր նորան: Եւ երբ խմում էր մի բաժակ այս հրաշալի թէյից, հօրը ստիպում էր թղթախաղի նստել, իսկ ինքը, թեքընկնելով բազմոցի վերայ տ. Մօլլօյի մօտ, ամբողջ ժամերով խօսում էր նորա հետ բացակայ տղայոց մասին: Այսպիսով նա իմացաւ, որ գործարանը նորից կարգի էր ընկել, որ երկու երիտասարդները մըրցում էին միմեանց հետ ջանասիրութեան և աշխոյժի մէջ, որ Ալֆրէդը ազատ ժամերին վերցնում էր իւր վրձինը և արդէն այնչափ շատ պատկերներ էր նկարել, որ նոցանով կարող էր ծածկել առանձնասենեկի բոլոր պատերը: Լաուրան ուշադրութեամբ լսում էր այս բոլորը: Երբեմն նա նստում էր հօր տեղը թղթախաղի սեղանի առաջ, և այն ժամանակ պ. Պօունտէրբին, թիկունքը դարձնելով վառարանի կողմը, սկսում էր գանգատուել Սէսիլիային Լաուրաից, որ սա միանգամայն մերժում է ամուսնանալու առաջարկութիւնը:

—Երևակայեցէք խնդրեմ, փոքր ինչ առաջ նոյնպէս բացասեց երկու շատ պատուական մարդու. և չեմ հասկանում, թէ էլ ումն է սպասում: Արդէն նա այն հասակումն է, որ իսկ և իսկ մարդու տալու ժամանակն է. գոնէ եթէ մի որ և է հիմնաւոր պատճառ բերէր, իրաւունք կունենար. ապա թէ ոչ ինչ է նշանակում շարունակ նորա տուած այսպիսի պատասխանը „դեռ չեմ ուզում մարդու գնալ“,—պրծաւ գնաց: Ե՛, դուք տաէք, կարելի՞ է այսպէս վարուել:

—Ի զուր էք վրդովւում, պարոն, սովորաբար ասում էր տ. Ափտլտօնը,—դեռ ջահել է. և երբ մարդ-

այդպիսի աղջիկ է ունենում, աշխատում է, ինչքան կարելի է, ուշ մարդու տալ. փառք Աստուծոյ այժմ երջանիկ Հայր էք, այնպէս չէ՞:

—Ի՜ հարկէ, 'ի հարկէ, բայց այնու ամենայնիւ շատ ուրախ կը լինեմ, որ տեսնեմ նորան տուն ու տեղ դառած:

Սէսիլիան ժպտում էր. նորա մտքով ուրիշ բան էր անցնում, բայց ոչինչ չէր խօսում:

Երկու տարի էր որ Ալֆրէդն ու Ռօբէրտը գտնւում էին Կալկաթայում, և կարգի էին դնում գործարանը „Զէստէրսօն և ընկերքին" անունով:

Վերջապէս մի երկտող նամակ աւետեց նորա Ալֆրէդի շուտափոյթ գալուստը, որ խոստանում էր բարեկամներին իւր կարճ ժամանակուայ բացակայութեան փոխարէն վարձատրել երկար և մանրամասն պատմութիւններով այն ամէն բանի մասին, ինչ որ կը ցանկային իմանալ:

ԳԼՈՒԽ ԼԸ.

ՈՐ ՍԿՍԻՈՒՄ Է ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆՈՒՄ ԵՒ ՎԵՐՋԱՆՈՒՄ Է Պ. ՊՕՈՒՆՍԷՐԲԻԻ ՏԱՆԸ.

Կամուրջի վերայ սրստանման գործոց լսւեցաւ, յետոյ մօտից փնչոց լսւեցաւ և վերջապէս երկաթուղու գնացքը մտաւ Լօնդօնի կայարանը: Շոգեկառքերի դռնակները բացւեցան և ճանապարհորդները սկսան դուրս գալ տախտակամածի վերայ:

—Հեռագրին նայելով, այս գնացքով պէտք է գայ, ասաւ ազգու կերպարանքով մի կարճլիկ ծերունի՝ թեւից բռնած շքեղ զարդարուած տիկնոջ, որ, չնայելով

իւր ալևոր մազերուն, դեռ բաւական գեղեցիկ էր և գրաւիչ. նա վրդովուած աչք էր ածում մէկին բազմութեան մէջ:

—Ահա նա, ահա նա,—գոչեց տ. Մօլլօյն և մի վայրկենից յետոյ արդէն որդու գրկումն էր:

—Կամենամք ես կը բերեմ այդ ծրարը, պարոն, մօտ վազեցին հինդ վեց մշակներ Ալֆրէդին, ցոյց տալով մէկ ու կէս սաժէն երկայնութիւն ունեցող մի մեծ կտաւէ ծրար, որ հին ասպետների նիզակի պէս դրած ունէր ուսին:

—Ո՛չ, հարկաւոր չէ, պատասխանեց Ալֆրէդը,— ես ինքս էլ լաւ կը տանեմ:

—Ա՛յդ է քո նկարը, սիրելիս: Շրջանակը պատրաստուած է այն չափով, որ ուղարկել էիր ինձ. շուտով պատրաստ կը լինի:

—Շատ գեղեցիկ: Պատկերը, երբ տուն կերթանք, այնտեղ ցոյց կը տամ: Գեներալ—նահանգապետը գնում էր ինձանից, բայց ես չը յօժարեցայ, որովհետև նշանակել էի ակադեմիայի համար: Ա՜խ, մայրիկ ջան, գիտես թէ որքան շատ շատ մտաբերում էի քեզ այս պատկերը նկարելիս:

—Ա՛յ Մագդլինայը եկաւ ծանրոցդ տանելու:

—Հա, Մագդլինային կը տամ: Վեր առ, բարեկամ, այս ծրարը և աչքիդ բիբի պէս տար, լսում ես: Տար ուղղակի մեր տուն, իմ առանձնասենեակը: Է՛ւ այժմ կառք վարձենք և շտապենք Հօրեղբօր մօտ:

Շատ չանցած Ալֆրէդը նստաւ առօրդայած ծերունու մօտ և մանրամասնաբար պատմեց գործերի դրութիւնը, որոնք շատ լաւ էին առաջ գնում, և Ռօբէրտի կենդանաւորութիւնը, որ բոլոր զօրութեամբ աշխատում էր և առաւելութեամբ բռնում էր իւր հին սխալները: Նոցա խօսակցութիւնը ընդհատեց Մագդլինայը և

յայտնեց, թէ պատկերը զգուշութեամբ հասցրած է իւր տեղը։

—Ես գնամ ծրարը քանդեմ, ասաւ Ալֆրէդը,—յետոյ ամէնքին կը կանչեմ, որ տեսնէք։

Պատկերը ներկայացնում էր մի խումբ հնդիկներ, որոնք կատարում էին սրբազան լուացումը Գանգէսի ջրերում արեւի մայր մտնելու ժամանակ։ Ողբացած ընտանիքը շրջապատել էր տան մի մեռած անդամին ասրա ուղեգնացութեան վերջին վայրը—սրբազան գետի մէջ, ուր կանայք նոյնպէս լուանում էին իրանց որդւոց։ Մի քանիսները ջրով լցնում էին կաւէ մեծ ամանները,—և ովքեր կատարում էին այս գործողութիւնը, դնում էին գլխներին ու այնպէս պարում։ Բրամինները, ճոխ կերպով հագնուած, ձեռքները բարձրացնում էին դէպի երկինքը և Սիվաին կանչում։ Գետի մէջ ցոլանում էր ծիրանեգոյն երկինքը, և մէջը գլխիվայր կանգնած էին ահագին տերևներ ունեցող հսկայաձև ծառեր, որոնք բոլորովին անծանօթ են մեր լայնութեան տակ։ Ամբողջ պատկերը ներկայացնում էր ձևերի ու գոյների մի պայծառ զուգաւորութիւն, որ վսեմ տպաւորութիւն էր գործում մտքի և հոգու վերայ։ Ամէնքը հիացած էին։ Մագդղինան յափշտակուած երեսի վերայ ընկաւ նորա առաջ, կարծես թէ իսկապէս կանգնած լինէր սրբազան գետի ափին։

Կլարան գրկեց իւր որդուն։

—Չէ՞ որ ես ասում էի, թէ կերթաս արտասահման և անշուշտ այդ ճանապարհորդութիւնը օգուտ կը բերէ քո տաղանդին, ասաւ նա։

—Իրաւ ես ասում, վրայ բերաւ Ալֆրէդը,—ուրեմն ներում ես, որ ես գործարանը կարգաւորելու համար նշանակած ժամանակից երկու ամիս աւելի մնացի այնտեղ։ Յոյս ունեմ, որ շրջանակը պատրաստ կը լինի

մինչև ակադեմիայի պատկերահանդէսի բացումը։

Շրջանակը, ուղիղ որ, ժամանակին պատրաստ էր և պ. Չէստէրտօնը իւր ինքնաշարժ բազկաթոռով գնաց պատկերահանդէսին, որ տեսնէ իւր ազգականի արտադրութիւնը և լսէ նորան տուած գովեստները։

Նա կարող էր գոհ լինել։ Հասարակութիւնը միաբերան շռայլութեամբ արտայայտում էր գովեստներ և հիանում էր, և միւս օրն և եթ բոլոր լրագիրները խօսեցին հնդկական այդ նշանաւոր պատկերի մասին։ Իսկ ով պէտք է լինէր դորա նկարողը, եթէ ոչ պ. Մօլլօյն, որ Կալկաթայից վերադառնալիս այնչափ բնական նկարներ էր բերել հետը։ Հետաքրքիր ամբոխը հաւաքւում էր նորա առանձնասենեակում և պատկերահանդէսի վերջը նորա քսակը այնպէս լցուեցաւ, որ կարող էր մի քանի տասնեակ տարիներ լաւ օրինաւոր ապրել։ Ակադեմիայի առաջին շքանշանը ապահովեց նորա փառքը և վերջապէս վարձատրեց նորա աշխատասիրութիւնը։

Սորանից մօտ ամիսուկէս յետոյ պ. Չէստէրտօնը, Կլարան ու Մէսիլլիան հիւր գնացին պ. Պօւնսէրբէի մօտ։ Պ. Չէստէրտօնը, որի գործերը նորից լաւ էին գնում, խօսելով իւր կալուածների վերաբերեալ քանի մի վկայաթղթերի մասին, յանկարծ դարձաւ նոտարին և պաշտօնական ձևով խնդրեց նորա աղջկայ ձեռքը իւր բարեկամ Ալֆրէդի համար։—Օժիտի մասին մի՛ նեղանաք, աւելացրեց նա,—Ալֆրէդը իւր գեղարուեստական արտադրութիւնների լաւ ծախուելու շնորհիւ փառաւոր կերպով կարող է կառավարել իւր ընտանիքը. և բացի դորանից նա ընկեր է Ռօբէրտի հետ վարելահողերի գործի մէջ, իսկ այս վերջինն էլ, ինչպէս գիտէք, շուտով կը հարստացնէ նորան։

Պ. Պօւնսէրբէին շուարած էր։ Նա շատ անգամ

երևակայել էր իր փեսային երբև մի բանկիր կամ որ և է մի նշանաւոր վաճառական, բայց գեղարուեստը երբէք դեռ մտքով չէր անցել:

Չնայելով դորան, երբ լսեց թէ ինչ մեծ մեծ գումարներ էին տուել և առաջարկել Ալֆրէդին պատրաստի պատկերների համար, սկսաւ մտածել, թէ գեղարուեստութիւնն էլ արհամարհած մասնագիտութիւն չէ եղած: Դեռ մի բանով էլ աւելի պէտք էր համարած, որովհետև ոչ ակցիաների ընկնելուց կարելի էր վախենալ և ոչ սնանկութիւնից. բացի դորանից, փառքն էլ մի բան է հաշւում այս աշխարհում, չէ՞, և այնքան էլ վատ բան չէր ասել.—Իմ փեսան մի պատկեր նկարեց, որ գնուեցաւ ազգային պատկերահանդէսի համար (որ չէրաւի այդպէս էլ եղաւ): Պ. Պուոնսէբլեին չափազանց գրաւում էր նաև այն հանգամանքը, որ Ալֆրէդը այն աստիճան սիրում էր նորա աղջկան, որ մինչև անգամ օժիտ էլ չէր ուզում: Այդ առաջին անգամ էր տեսնում նա այդպիսի անշահասէր փեսացու և իր կողմից միտքը դրաւ յետ չը մնալ նորանից վեհանձնութեան մէջ: Ալֆրէդի ու Ռօբէրտի ընկերանալն էլ լաւ ներգործութիւն արաւ նորա վերայ, և բացի այս բոլորից, յիշելով Լաուրայի յարաբերութիւնը Ալֆրէդի մօր տ. Մօլլօյի հետ, նոտարը սկսաւ կասկածել, որ այդտեղ ինչ որ մի գաղտնիք պէտք է լինէր ծածկուած:

—Շուտով ամէն ինչ կը բացուի, մտածեց նա,—տեսնենք այս առաջարկութիւնն էլ կը մերժէ, ինչպէս միւսները արաւ:—Նա թոյլտուութիւն խնդրեց իր աղջկայ հետ խօսելու այդ մասին:

Հինգ րոպէ չանցած նոտարը վերադարձաւ իր մատաղահաս աղջկայ հետ, որ կարմրելով, դեղնելով, լաց ու ծիծաղը հետը միացած՝ ընկաւ Կլարայի գիրկը:

—Ես ձեզ շատ վաղուց սիրում եմ, շշնջաց նա, համբոյրներ դրոշմելով դէմքին:—Այն օրուանից, երբ ես նստած էի վարագուրի ետև, մտածում էի, թէ երջանիկը նա է, ով որ մայր կարող է կանչել ձեզ. ես այն ժամանակ շատ սիրում էի ձեզ, և . . . և . . . նոյնպէս ձեր փոքրիկ որդուն:

Կլարան քնքշութեամբ գրկեց նորան և կամաց հրեց Սէսիլիայի կողմը:

—Սորան էլ գրկիր, ազնիւ աղջիկս: Ինձ և Հօրեղբօրս սա դրդեց, որ պաշտօնական կերպով խնդրենք քո հարսնութիւնը: Եթէ սա չը լինէր ոչ Ալֆրէդը և ոչ ես չէինք սիրտ անի. վախենում էինք թէ բացասութիւն ստանանք:

—Իմ կողմից, երբէք, շտապով աղաղակեց Լաուրան և դուրս սլքուեցաւ ու շուռ տուաւ իր բարկացած դէմքը:

Նոտարը սրտանց ծիծաղեց. միւսներն էլ հետևեցին նորան:

—Լաուրա՛, ասաւ նա,—գուցէ ցանկանում ես քո նոր բարեկամներդ սեղան հրաւիրել. գնա ուրեմն, պատրաստութիւն տես: Մինչև մարդ կ'ուղարկեմ պ. Մօլլօյի ետևից. պ. Չէստէրտօ՛ն, թոյլ կը տա՞ք Մագդղինային, որ գնայ նորան կանչէ:

Պարոնը նշանացի արաւ և Մագդղինան դուրս գնաց:

—Անշուշտ սանդուղի ծայրին կը գտնէ նորան, ծիծաղելով ասաւ վերջինը: Պէտք է որ նորա կարծիքը ճշմարիտ լինէր, որովհետև մի րոպէից յետ Ալֆրէդը արդէն կանգնած էր իր հարսնացուի կողքին:

ԳԼՈՒԽ ԼԸ:

ՎԵՐՋԱԲԱՆ:

Պատմութեանս գործող անձանց ներկայ դրութեան մասին այսքանս միայն գիտեմ:

Յակոբը դեռ կենդանի է և շարունակ նոյնպէս շատ և ազնիւ կերպով աշխատում է: Նա հոգւով չափ սիրում է Մօլլօյի դերդաստանը և սրբութեան պէս պահպանում է այն նկարչական ձեռատետրը, որ հիմք դրաւ Ալֆրեդի հարստութեան և երջանկութեան:

Պ. Պոստօրլսը շարունակում է իւր պարապմունքը ոչ բոլորովին ազնիւ շահասիրութեամբ, բայց այնուհետև, երբ Ռոբէրտի գործը հասարակութեան ուշադրութիւնը դարձրեց նորա վերայ, սկսաւ աւելի զգոյշ լինել և արդէն էլ չի ընկել արդարադատութեան ձեռքը, որ ամէն անգամ ողորմած չէ: Առաջուայ պէս նա մենակ է ապրում և նոյն տանը քաղաքի ծայրին: Անկասկած նա իր մահից յետ շատ փող կը թողնէ, բայց ես չը գիտեմ, թէ ինչ օգուտ պէտք է քաղէ նոցանից թէ այս և թէ այն կեանքում:

Յարգելի Ադոլֆը, իւր կնօջ կարողութեան մեծ մասը վատնելուց յետոյ, ստիպուեցաւ մի տեղ վարձով մտնել: Եւ որովհետև ձիաների գործի հետ լաւ ծանօթ էր, ստացաւ ձիարշաւի ախոռների վերատեսչութիւնը: Իւր ամուսնու հետ յաճախ այնպիսի կծու խօսք ու զրոյց է ունենում, որ ոչ մէկին ոչ էլ միւսին մի առանձին բաւականութիւն չէ տալիս:

Պ. Գալլօվէյն, վերջապէս, քաշուեցաւ իւր ամառանոցը, ուր և սկսաւ եռանդով պարապել վարդերը աճեցնելով: Շատ հաւանական է, որ նա կաղամբ էլ էր աճեցնում, որովհետև պ. Կէմպբէլլը համեմատում

էր նորան Դիոկղետիանոսի հետ: Բայց տակայն պ. Կէմպբէլը գուցէ կամենում է լոկ իւր պատմութեան ուսմամբ հրճուել:

Պ. Գալլօվէյի հեռանալը միջոց տուաւ միւս գործակատարին նորա տեղը բռնելու, բայց ասում են, թէ նա երկար չի մնայ այնտեղ. պ. Պունսէրբին արդէն կարծում է, թէ իր ժամանակը անցել է նոտարի բազմապրաղ պաշտօնը կատարելու և միտք ունի իւր գրասենեակը ուրիշին յանձնել: Հաւանական է, որ պ. Կէմպբէլլը ձեռքից չի բաց թողնի այս դէպքը իւր երազած մտադրութիւնը գլուխ բերելու համար: Նա ինքն էլ քիչ շատ փող ունի, և բացի դորանից յոյս ունի մի մասնաւոր գումար էլ Ալֆրեդից փոխ առնել, որ 'ի պատիւ հին բարեկամութեան երեւի կը տայ, իսկ պ. Պունսէրբին էլ ճանաչելով նորա ազնւութիւնը՝ անշուշտ երկայնամիտ կը լինի: Գանկօկը կը հիանայ, եթէ այս գործը գլուխ գայ, որովհետև այն ժամանակ նա առաջին գործավարի տեղը կը բռնէ:

Երկաթուղիով անցնելիս, գուցէ նկատած լինէք Տվիկէնհամի արուարձանում երկու փոքրիկ սպիտակ տուն: Նոցանից մէկը մի ապակէ սենեկով հիւսիսային կողմից պատկանում է Ալֆրեդին, որ կեանք է վայելում այնտեղ Լաուրայի և իւր մօր հետ,—իսկ միւսի մէջ պ. Չէստէրտօնն ու Սեսիլեան սպասում են Ռոբէրտի գալուն, որ փառաւոր կերպով կարգի է գցել կալուածական գործերը և գրել է, թէ շուտով մի կարճատև արձակուրդ կը վերառնէ հայրենիք գալու համար: Պ. Չէստէրտօնը դժուար թէ կարողանայ ասել,—թէ երկու երիտասարդներից որին աւելի է սիրում,—բայց տակայն նա չէ մտածում այդ մասին, այլ երկուսին էլ հաւասարապէս որդի է կանչում: Նորա և Սէսիլիայի վերջին այն եղաւ, որ չափազանց սիրեցին մէկ-

մէկու և Թէպէտ այժմ միշտ միասին են անցկացնում ժամանակը, բայց արդէն էլ միմեանց ձանձրութիւն չեն լինում և խօսակցութեան համար նիւթ չեն պտրում: Նոցա խօսակցութիւնը բնականապէս դուրս է բղխում նոցա մտքերից, իսկ այդ մտքերը յաճախ Թռչում են Հնդկաստան Ռօբէրտի մօտ: Պ. Չէստէրտօնը պատմում է Սէսիլիային Հնդկաստանի մասին ամէն բան, ինչ որ տեսել է այնտեղ ապրած ժամանակ և դորանից ամենևին չէ ձանձրանում, որովհետև իւր նկարագրած տեղերի և ձևերի մէջ միշտ երևակայում է իւր որդուն, որ դարձեալ կանգնել է ուղիղ ճանապարհի վերայ: Սէսիլեան և ծերունի պարոնը, որոնք կապուած են միմեանց հետ մի ընդհանուր սիրով, ընդհանուր յոյսերով, ընդհանուր յիշատակներով, այժմ երջանիկ են միասին: Փարթամութեան և հարստութեան մէջ անցկացրած տասը մաշող տարիները երազի պէս են յիշում, ծանր երազի պէս, որ անդարձ անցեալ Թողեց իրան յիշատակ:

Իսկ ծերունի Պասսմօրը ինչ եղաւ: Անօգուտ կը լինէր նորան նախկին բնակարանում որոնել, որովհետև վաղուց արդէն ուրիշ կենող կայ այնտեղ: Վերջին օրը, որ անցկացրեց այնտեղ, նա նստած էր իւր սեղանի մօտ արմունկներով ծնկներին յեցած և երեսը ձեռքերով ծածկած, կէս հագնուած և անկարգութեան մէջ: Զանազան իրեր, այն շորերը, որ մի օր առաջ հագել էր Ալֆրէդի հարսանիքին, Թափուած էին չորս կողմը,— և նորա համազգեստը, փողպատը, ձեռնոցները, կարծես, ասում էին. միայնակ ես, միայնակ, այժմ: Խեղճ ծերունու բանը ճշմարիտ որ շատ դժուար էր:

—Ես ապուշ եմ, խօսում էր նա ինքն իրան,— ինչու՞ աշխատեցի նոցա մասին: Նորա՞ համար, որ այժմ նոր չարչարանք պատճառեմ ինձ:

Խեղճը այն աստիճան վշտացած էր, որ չը նկատեց, Թէ ինչպէս դուռը կամաց բացուեցաւ և մէկը ըուիկ քայլերով մօտեցաւ նորան: Եւ այս չը նկատեց, մինչև որ կանացի ձեռքեր—փոքրիկ սիրուն ձեռքեր— չը շօշափեցին նորա ձեռքերը, աշխատելով հեռացնել նորա գլխից: Աչքերը բարձրացրեց: Իւր առաջ կանգնած էին Կլարան, Սէսիլեան և Լաուրան, որոնց ետևից նայում էր Ալֆրէդը:

—Լացէ լինում, աղաղակեց Լաուրան, մատով սպառնալով նորան,—Ալֆրէդ, նայիր, լաց է լինում: Է՛, տեսնում էք, Թէ որ աստիճան է հասցնում մարդուս մարդատեցութիւնը և խորթանալը իւր բարեկամներից: Խոստովանեցէք որ այժմ չէք կարող վայրենի գայլի պէս ապրել: Ես հաւատացած եմ, որ ամբողջ գիշեր չէք քնել:

Պ. Պասսմօրը յիրաւի լաց էր լինում:

—Այժմ, ասաւ Սէսիլեան, տեսնումէք, որ մենք չենք կարող մոռանալ ձեզ. մեր տանը ձեզ համար սենեակ կայ պատրաստուած և եկանք ձեզ տանելու այնտեղ. մենք չուզեցինք հաւատալ, Թէ դուք վճռական կերպով մերժեցիք: Է՛, շուտով հաւաքուեցէք, մինչև որ Ալֆրէդը կառք բերէ. ճաշին այնտեղ պիտի լինինք:

—Բայց ես այնժամանակ իմ գլխի տէրը չեմ լինի, դեռ էլի հակառակում էր Պասսմօրը:

—Այո՛, իմ հին բարեկամս, ասաւ Ալֆրէդը,—բայց այն էլ մտածեցէք, Թէ ինչ երջանկութիւն կը բերէք դուք մեզ: Եւ դեռ ի՞նչպէս կարող եմ առանց ձեր օգնութեան Վիրգիլիոսը ձեռք առնել: Բարեսիրտ ծերունի Վիրգիլիոս: Տեսէք, Թէ ինչ է ասում նա ծաղկող մարգագետինների և բլուրների մասին.

„Locos laetos et amoena vireta“.

Ծերունի Պասսմօրը համաձայնեցաւ:

Բայց երբէք չը փոշմանեց և իր կեանքի վերջին օրերը մի նոր օգուտ էլ տուաւ, այն է աշխատեց յունարէն և լատիներէն լեզուները շուտ և հեշտ սովորելու եղանակը գտնել Ալֆրէդի որդու համար: Եւ հնարը գտաւ վերջապէս, որ ատամները դուրս գան թէ չէ, սկսէ կերակրել նորան Վերգիլիոսով և Հոմերոսով և հիմնում է նորա վերայ, որ եթէ ամենք իրանց որդւոց ֆրանսիերէն և գերմաներէն խօսել սովորեցնում են մայրենի լեզուի հետ միասին, ինչու ուրեմն միևնոյնը չէր կարելի փորձել նաև հին լեզուների հետ:

Իսկ Չէստէրտոնի ժառանգութեան լիակատար պատմութիւնը նա դեռ նոր իմացաւ, որ պատմեց նորան Լաուրան: Սա սիրում է տ. Մօլլօյին իր մօր պէս և յարգում է նորան սուրբի պէս. Նորա ցանկութիւնն էր մի նոր առիթ տալ Ծերունուն զմայլելու Կլարայի վերայ: Այս երկրորդ դէպքն էր, որ արտասուք սրբաց Ծերունի Պատմօրի աչքերից: Սա մեծ յարգանքով համբուրեց Կլարայի ձեռքը և տուաւ նորան յուզուած ու դողդոջուն ձայնով.

—Ես չեմ կարող արտայայտել իմ սրտի բոլոր յարգանքը, որ զգում եմ դէպի ձեզ. այս անգամ պէտք է թոյլ տաք ինձ տալ մի պարգեւութիւն, որ փոխադրուած է ձեր սիրելի գրքից, —այն է.

„Յարգեցէք աշխատութիւնը և յուսացէք Աստուծոյ արդարադատութեան վերայ, —այնուհետև բոլոր մնացածը ինքն իրան կը գայ ձեզ մօտ“:

ՎԵՐՋ

7/XI 1922
Мясникяна

1014

[illegible] ?

[illegible] ?

2013